

ԱԼԵԲՍԱՆՏՐ ՏԻՒՄԱ 19-3



ԲԺՂԿԻ ՄԸ ՅԻՂԱՏԱԿՆԵՐԸ

ԺՕՁԷՑ ՊԱԼՄԱՄՐՕ



ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Կ . ԵԱԶՄԱՃԵՍՆ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ԵԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ



Զվիռնիս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1873

Rec. Shant Simardjian

PK
SRLF
URL
87161
FA D331
v. 6-6

ԺՕՁԷՑ ՊԱԼՍԱՄՕ



ՀԳ

ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ



ԺԱՊՈՒՐ կը լսեր և կը տեսներ՝ ըսինք :

Կը տեսներ որ Անտրէ իւր երկայն աթոռին վրայ պառկեր էր՝ երեսը ապակեոր դրան կողմը դարձուցած , այսինքն ճիշդ Ժիլպէրին դէմը : Այն դուռը գրեթէ կիսեբաց էր : Գիր-

քերով լի սեղանի մը վրայ՝ որ ցոյց կու տար թէ գեղանի հիւանդը միայն այն զբօսանքը կրնար ունենալ , լայն լուսամփոփով փոքրիկ կանթեղ մը դրուած էր որ օրիորդ Գավէրնէյի դիմաց վարի մասը միայն կը լուսաւորէր :

Սակայն երբ երբեմն թիկանցը վրայ կ'երկննար , երկայն աթոռին բարձին կռթնելու համար՝ լոյսը անոր ճակատը կը պատէր՝ որ տանդէլային ներքե կարի սպիտակ և անբիծ էր :

Փիլիպոս նոյն իսկ այն երկայն աթոռին ոտքին վրայ նստած՝ թիկունքը Ժիլպէրին դարձուցած էր . թեք միշտ առ ՚ի շեղ կասլուած և ամեն շարժում արգիլուած էր անոր :

Առաջին անգամն էր որ Անտրէ պառկած տեղէն կ'երնէր . առաջին անգամն էր որ Փիլիպոս սենեկէն դուրս կ'երնէր :

Generated on 2016-09-07 06:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այն ստակալի գիշերէն 'ի վեր իրար չէին տեսեր . սակայն երկուքն իրարմէ լուր կ'առնէին թէ հետզհետէ աղէկնալու վրայ և ապաքինութեան մօտ են :

Երկուքն ալ , որ հազիւ քանի մը վայրկենէ 'ի վեր իրարու քով եկեր էին , ազատօրէն կը խօսակցէին , ինչու որ առանձին ըլլալնին գիտէին , և եթէ մէկն ալ գար՝ դրանը վրայ դրուած հնչակին ձայնէն կրնային իմանալ այն մարդուն գալուստը , բայց Նիգօլ դժուար բաց թողած էր :

Բնականաբար բնաւ մտքերնուն չէր անցներ այն պարազան , և յոյսերնին հնչակին վրայ դրած էին :

Ինչպէս որ ըսինք , ժիլպէր կը տեսնէր և մտիկ կ'ընէր , ինչու որ այն բաց դռնէն կրնար խօսակցութեան իւրաքանչիւր բառն իմանալ :

— Այնպէս որ , կ'ըսէր Փիլիպ , երբ ժիլպէր զարդասենեկի մը դրան ծփուն մէկ վարագոյրին ետևը կը տեղաւորուէր , այնպէս որ աւելի ազատօրէն շունչ կ'առնես , այնպէս չէ՞ , խեղճ քոյրիկ :

— Այո՛ , աւելի ազատօրէն , բայց միշտ թեթե ցաւով մը :

— Իսկ ո՞րտեղ :

— Տակաւին ամենեին ոյժ չունիմ . սակայն այսօր երկու երեք անդամ մինչև պատուհանը կրցայ երթալ : Ինչ աղւոր բան է օդը , ինչ աղւոր բաներ են ծաղիկները : Ինձ կը թուի թէ երբ օդ և ծաղիկ կայ՝ մարդ չմեռնիր :

— Բայց այսու հանդերձ , տակաւին տկար ես , այնպէս չէ՞ , Անտրէ :

— Ո՛հ , այո՛ , ինչու որ ստակալի կերպով ցնցուեցայ : Ուստի դարձեալ կ'ըսեմ , շարայարեց նորատի աղջիկը ժպտելով և գլուխն օրելով , խիստ դժուարաւ կը քայլեմ կարասեաց և սենեկին պատերուն կրթնելով . առանց նեցուկի սրունքներս կը ծռին և ինձ այնպէս կը թուի միշտ որ պիտի իյնամ :

— Օ՛ն , օն , սիրտ առ , Անտրէ . քիչ մ'առաջ ըսած լաւ օդը և զեղեցիկ ծաղիկներդ քեզ կ'աղէկցընեն . և ութ օրէն կարող կ'ըլլաս այցելութիւն տալ տիկինն արքայորդոյն՝ որ այնքան հոգացողութեամբ տեղեկութիւն կ'առնէ քու վրայ , ըսին ինձ :

— Այո՛ , այնպէս կը յուսամ , Փիլիպ . ինչու որ տիկինն արքայորդին արդարև շատ բարեսիրտ կ'երևի իմ մասին :

Եւ Անտրէ գլուխը դէպ 'ի ետեը ձգելով՝ ձեռքը կուրծքին վրայ
դրաւ և գեղա՛նի աչերը գոցեց :

Ժիլպէր դէպ յառաջ քայլ մ'առաւ ձեռները երկնցուցած :

— Ի՛նչ կ'զգաս , քոյր իմ , հարցուց Փիլիպ անոր ձեռքը բռնելով :

— Ջղային դող կու գայ վրաս . և երբեմն արիւնս քունքս կ'ել-
նէ և հոն կը հաւաքուի . երբեմն ալ շլացութիւն կ'ունենամ և
վրաս մարելիք կու գայ :

— Ո՛հ , ըսաւ Փիլիպ մտախոհ դէմքով մը , զարժանալի բան մը
չէ այս . ի՛նչ սոսկալի բաներ եկաւ գլխուդ , և ի՛նչ հրաշալի
կերպով ազատեցար :

— Հրաշալի կերպով , այո՛ , շատ ճիշդ է ըսածդ , եղբայր իմ :

— Բայց այս հրաշալի ազատութեան մասին , Անտրէ , շարա-
յարեց Փիլիպ քրոջը մօտենալով , հարցմանն աւելի կարևորութիւն
տալու համար , գիտե՛ս որ տակաւին քեզի հետ չկրցայ խօսակցիլ
այն աղէտալի պատահարին վրայ :

Անտրէ կարմրեցաւ և դողցես նեղութիւն մը զգաց :

Փիլիպ այն կարմրութիւնը չգիտեց կամ այնպէս ցոյց տուաւ :

— Սակայն ես կը կարծէի թէ , ըսաւ նորատի աղջիկը , իմ դար-
ձիս մասին քու բաղձացած ամեն տեղեկութիւններդ տրուած են .
հայրս ինքը ըսաւ թէ շատ գոհ եղած է այն մասին :

— Անշուշտ , սիրելի Անտրէ , և այն մարդը բոլոր այս գործին
մէջ մեծ փափկութեամբ վարուեցաւ , գէթ ինձ թուածին նայելով .
սակայն իւր բրած պատմութեան շատ կէտերը ինձ ոչ թէ կասկա-
ծելի՛ այլ մութ երևցան :

— Ի՛նչպէս , և ի՛նչ ըսել կ'ուզես , եղբայր իմ , հարցուց Ան-
տրէ կուսական անբծութեամբ մը :

— Այո՛ , անշուշտ :

— Բացատրէ միտքդ :

— Օրինակի համար , շարայարեց Փիլիպ , կէտ մը կար զոր նախ
նշմարած չէի , և ետքէն շատ տարօրինակ երևցաւ ինձ :

— Ո՛րն է այն , հարցուց Անտրէ :

— Նոյն իսկ ազատուելուդ եղանակն է , ըսաւ Փիլիպ : Պատմե՛
ինձ զայն , Անտրէ :



Generated on 2016-09-07 06:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Նորատի աղջիկը գողցես ճիղ մ'ըրաւ :

— Ա՛հ , Փիլիպ , ըսաւ , գրեթէ մոռցած եմ , շատ վախնալուս պատճառաւ :

— Փոյթ չէ , իմ բարեսիրտ Անտրէս , միտքդ եկածները ըսէ :

— Աստուած իմ , է՛հ գիտես , եղբայր իմ , որ Կարս-Մէօսլէն գրեթէ քսան քայլ հեռի իրարմէ զասուեցանք : Տեսայ որ քեզ Գիւլըրիի պարտիզին կողմը քշելով կը տանէին , մինչդեռ զիս Ռուայալ փողոցին կողմը : Պահ մը կըրցայ դեռ ևս քեզ նշմարել , և տեսայ որ անօդոտ ճիգեր կ'ընէիր ինձ հասնելու համար : Թեւերս քեզի երկնցուցած կը դռչէի , «Փիլիպ , Փիլիպ» երբ յանկարծ գողցես մըրիկ մը զիս պատեց , վերցուց և վանդակապատնե-րուն կողմը տարաւ . կ'զգայի այն ալիքը որ զիս պատին կողմը կը մղէր , և որուն դէմ ինքն ևս քիչ մ'ետք պիտի փշրէր . այն վանդակապատնե-րուն վրայ խորտակուողներուն աղաղակները կը լսէի . կը հասկընայի որ իմ ալ կարգս կու դար ջախջախուելու , չքանալու . գրեթէ կրնայի համրել ինձ մնացած ըոպէները , երբ կէս մը յիմար , կէս մը մեռած , ձեռներս և աչերս երկինք վերցուցած , յետին աղօթք մ'ընելու ատենս , մարդու մը այնպէս որ աչքին փայլինը տեսայ՝ որ բոլոր այն բազմութեան վրայ կ'իշխէր կարծես թէ իրեն կը հնազանդէին :

— Եւ այն մարդը Ժօզէֆ Պալսամօ կոմսն էր , այնպէս չէ՞ :

— Այո , նոյն իսկ նա՛ զոր արդէն 'ի Գավէրնէյ տեսած էի , որ ինձ այնպիսի տարօրինակ վախ մ'ազգեր էր հոն . միով բանիւ այն մարդը՝ որ գողցես գերբնական բան մ'ունի պահած իւրներսը . այն մարդը՝ որ աչքս իւր աչերուն , ախնջս իւր ձայնին գերի ըրած է . այն մարդը՝ որ միայն մատը ուսիս դպցընելով բոլոր մարմնոյս սարսուռ ազդեց :

— Շարունակէ , շարունակէ , Անտրէ , ըսաւ Փիլիպ տխրազին դէմքով և ձայնով :

— Լաւ ուրեմն . տեսայ որ այն մարդը այն աղէտալի կոտորածին մէջ այնպէ՛ս կեցած էր՝ որ կարծես թէ մարդկային տառապանքն իրեն չէին կրնար հասնիլ . անոր աչերուն մէջ կարդացի որ կ'ուզէր զիս ազատել , և կրնար ալ . այն ատեն տարօրինակ բան

Generated on 2016-09-07 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մանցաւ վրայէս . որքան խորտակուած , անզօր և կիսամեռ էի՝
զգացի որ վեր բարձրացայ այն մարդուն առջև , այնպէս որ կար-
ծես թէ անծանօթ , խորհրդաւոր , աննկուն զօրութիւն մը զիս վեր
կը վերցընէր , թևերու պէս բաներ կ'զգայի որ կը պրկուէին զիս
դուրս հանելու համար այն զանգեալ մարմիններով լի վհէն՝ ուր
այնքան թշուառներ կը խորդային , և ինձ օդ ու կեանք տալու հա-
մար : Ո՛հ , կը տեսնես , Փիլիպ , շարայարեց Անտրէ տեսակ մը խան-
դով , ստոյգ եմ որ այն մարդուն աչքը զիս այնպէս կը քաշէր : Հասայ
անոր ձեռքէն բռնեցի և ազատեցայ :

— Աւա՛ղ , մրմնաց ժիլպէր , միայն զան տեսեր է , և զիս , զիս
որ իրեն ոտիցը ներքև կը մեռնէի՝ չէ՛ տեսեր :

Եւ քրտնաթոր ճակատը սրբեց :

— Այդպէս եղաւ , հարցուց Փիլիպ :

— Այո՛ , մինչ ամեն վտանգէ զերծ ըլլալու վայրկեանս . այն տ-
տեն , սեպէ թէ բոլոր կեանքս ըրած այն յետին ճիգիս մէջ կեդ-
րոնացեր էր՝ , սեպէ թէ իրօք զղացած վախս իմ զօրութեանս չափն
անցեր էր՝ նուաղեցայ :

— Եւ ժամը քանիին կը կարծես որ տեղի ունեցաւ այդ նուա-
ղումը :

— Քենէ զատուելէս տասն վայրկեան ետք , եղբայր իմ :

— Այնպէս է , յարեց Փիլիպ , գրեթէ կէս զիշեր էր : Ուրեմն
ինչպէս ժամը երեքին վերադարձար : Ներէ ինձ ըրած հարցաքննու-
թեանս համար որ ծաղրաշարժ թուի քեզ թերևս , սիրելի Ան-
տրէ , սակայն ինձ համար պատճառ մ' ունի :

— Շնորհակալ եմ , Փիլիպ , ըսաւ Անտրէ եղբօրը ձեռքը սեղ-
մելով , շնորհակալ եմ : Երեք օր առաջ չսլիտի կրնայի պատաս-
խան տալ քեզի , բայց այսօր — ըսելիքս տարօրինակ պիտի թուի
քեզ — այսօր ներքին աչքս աւելի զօրաւոր է . ինձ կը թուի թէ
իմ կամացս հրամայող կամք մը ինձ կ'ըսէ որ յիշեմ՝ և կը յի-
շեմ :

— Ուրեմն , ըսէ , սիրելի Անտրէ , ըսէ , ինչու որ անհամբերու-
թեամբ կ'սպասեմ : Այն մարդը քեզ իւր բազկացը մէջն առաւ :

— Բազկացը մէջ , ըսաւ Անտրէ կարմրելով : Լաւ չեմ յիշեր :

Generated on 2016-09-07 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գիտցածս սա է միայն, որ զիս բազմութեան մէջէն հանեց. բայց ձեռքն ինձ դպցրնելուն պէս՝ Գովէրնէյ ինձ պատահած արդիւնքը տեղի ունեցաւ վերտին, և հազիւ թէ ինձ դպաւ՝ և ահա կրկին մարեցայ, կամ մանաւանդ սկսայ քնանալ, ինչու որ նուազումը ցաւազին սկզբնաւորութիւններ ունի, բայց այս անգամ քնոյ բարերար ազդեցութիւնները միայն զգացի:

— Յիրաւի, Անտրէ, բոլոր այդ ըսածներդ ինձ այնքան տարօրինակ կ'երեւին՝ որ եթէ քենէ ուրիշ մէկն ըլլար այդպիսի բաներ պատմողը՝ բնաւ չպիտի հաւտայի: Փոյթ չէ, աւարտէ, շարայարեց Փիլիպ ձայնն աւելի այլայլելով ակամայ:

Իսկ ժիլպէր Անտրէի իւրաքանչիւր խօսքը կուլ կու տար, քանի որ ինք գիտէր որ գէթ մինչև հոն Անտրէի ամեն խօսքը ճշմարիտ էր:

— Իսելքս գլուխս եկաւ, շարայարեց նորատի աղջիկը, և արթննալու ատենս՝ ճոխաբար զարդարուած սրահակ մը գտայ ինքզինքս: Սենեկապան կին մը և տիկին մը քովս նստեր էին՝ սակայն բնաւ մտայոյզ չէին երևեր. ինչու որ արթննալու ատենս տեսայ որ բարեսէր ժպիտով մ'ինձ կը նայէին:

— Գիտե՞ս թէ այն ատեն ժամը քանին էր, Անտրէ:

— Կէս զիշերէն ետք կէսը կը զարնէր:

— Ս'հ, ըրաւ երիտասարդը ազատօրէս շունչ աւնելով, շատ լաւ. շարունակէ, Անտրէ, շարունակէ:

— Շնորհակալ եղայ այն կանանց ինձ տարած բազում խնամոց համար. բայց քու մտատանջութիւնդ գիտնալով աղաչեցի որ զիս շուտով տուն վերադարձնեն. այն ատեն ինձ ըսին թէ կոմսը դարձեալ հրապարակը գացեր էր վիրաւորելոց վերտին օգնելու համար, բայց կառքով մը պիտի վերադառնար, և ինք զիս մեր առնը պիտի բերէր: Արդարև, ժամը երկուքին ատենները, փողոցին մէջ կառքի մը ձայնն առի, ապա այն մարդուն ինձ մօտեցած ատեն զգացած դողը դարձեալ զիս բռնեց. դողդոջելով, յապուշ կրթած բազմոցի մը վրայ ընկայ. դուռը բացուեցաւ. զիս ազատողը կրցայ ճանչնալ այն նուաղեալ վիճակիս մէջ, յետոյ երկրորդ անգամն ըլլալով ինքզինքս կորուսի: Անշուշտ այն ատեն զիս իջուցած. կառ-

քը դրած և հոս բերած ըլլալու են : Ահա բոլոր յիշածս ասանք են , եղբայր իմ :

Փիլիպ ժամանակը հաշուեց և տեսաւ որ իւր քոյրն անշուշտ Է-գիւրի-տիւ-Ղուվը փողոցէն Գօք-Հէռօն փողոցն առաջնորդուած էր ուղղակի , ինչպէս որ Լուի ԺԵ. հրապարակէն Էգիւրի-տիւ-Ղուվը փողոցը սարուած էր . և սիրաբար անոր ձեռքը սեղմելով համար-ձակ և ուրախալի ձայնով մ'անոր ըսաւ .

— Հնորհակալ եմ , սիրելի քոյր իմ , շնորհակալ եմ . բոլոր այս հաշիւներն իմինիս կը համապատասխանեն : Տը Սավինեի մարքիզու-հւոյն տունը պիտի երթամ և ինքս շնորհակալ պիտի ըլլամ իրեն : Այժմ յետին խօսք մ'ալ երկրորդական դէպքի մը վրայ :

— Ըսէ :

— Այն սոսկալի պատահարին ատեն ծանօթ դէմք մը տեսնելը կը յիշեմ :

— Ես , ոչ :

— Օրինակի համար , փոքրիկ Ժիլպէրին դէմքը :

— Արդարեւ , ըսաւ Անտրէ յիշողութիւնն արթնցրնելու ջանք ընելով . այո՛ , զատուած ատեննիս , ինէ տասն քայլ հեռի կը գտնուէր :

— Զիս տեսեր է , մըմնջեց Ժիլպէր :

— Հարցընելուս պատճառն այն է որ , Անտրէ , քեզ փնտուելու ատենս խեղճ տղան գտայ :

— Մեռեալներուն մէջ , հարցույ Անտրէ այն կերպ հողատար շեշ-տով զոր մեծերն իրենց ստորնագոյններուն համար կ'ունենան :

— Ոչ , միայն վիրաւորուած էր . ազատեցին , և կը յուսամ թէ կ'աղէկնայ :

— Ո՛հ , աւելի աղէկ , ըսաւ Անտրէ . և ի՛նչ եղեր էր :

— Կուրծքը ճմլուեր էր :

— Այո՛ , այո՛ , քու կուրծքիդ դէմն , Անտրէ , մըմնջեց Ժիլպէր :

— Բայց , շտրայարեց Փիլիպ , ամենէն տարօրինակը , և այն տղուն վրայ քեզի խօսելուս պատճառը սա է որ քու զգեստիդ մէկ կտորը գտայ ցաւէն կարկամած ձեռքին մէջ :

— Տես , արդարեւ տարօրինակ բան :

— Յետին վայրկենին շտեսար զան :

— Յետին վայրկենին , Փիլիպ , այնքան վախով և վշտով , անձնասիրութեամբ , սիրով , գորովով , ցանկութեամբ , լրբութեամբ ահարկու դէմքեր տեսայ՝ որ կարծես թէ տարի մը դժոխք կեցայ . բոլոր այն դէմքերուն մէջ՝ որոնք գողցես սաստապարտելոց հանդէսը թուեցան ինձ՝ կարելի է որ այն բարեմիտ աղուն դէմքն ալ տեսած ըլլամ , բայց բնաւ չեմ յիշեր :

— Սակայն զգեստէդ խլուած կտորը , և իրօք քու զգեստէդ էր , սիրելի Անտրէ , ինչու որ Նիգօլին հետճշդտեցիք եղածը . . . :

— Ինչ պատճառաւ հարցընելդ այն աղջկան ըսելով , հարցուց Անտրէ . ինչու որ միտքը եկեր էր այն տարօրինակ խօսակցութիւնը՝ որ իւր սենեկապանուհւոյն հետ ունեցեր էր ՚ի Գավէրնէյ , մի և նոյն ժիլպէրին վրայ :

— Ո՛հ , ո՛չ : Միով բանիւ , այն կտորը ձեռքն էր . ինչ նշանակութիւն կու տաս ասոր :

— Է՛հ , աղիէ դիւրին ինչ կայ , ըսաւ Անտրէ այնպիսի հանդարտ կերպարանքով մը՝ որ աննկարագրելի հակադասներ մը կ'ընծայէր ժիլպէրի սրտին բախմանցը հետ . եթէ քովս էր այն վայրկենին յորում այն մարդուն նայուածքով գողցես վերցուեցայ , ինձ պլլուած ըլլալու է ինձ հասնող օգնութենէն օգուտ քաղելու համար , նման ծովն իյնողի մը՝ որ լուղորդին դօտիին կը փաթտուի :

— Ո՛հ , ըրաւ ժիլպէր տխուր արհամարհանքով մը , նորաոխ աղջկան այս կարծիքին համար . ո՛հ , ինչ անարգ կերպով կը մեկնուի անձնութիւնս : Այս ազնուական ըսուած մարդիկ ինչպէս կը դատեն զմեզ ժողովրդեան մարդիկս : Ո՛հ , Պ , Ռուսօ շատ իրաւունք ունի , մենք անոնցմէ աւելի արժէք ունինք . մեր սիրտն աւելի մաքուր և բազուկնիս աւելի զօրաւոր է :

Եւ երբ շարժում մը կ'ընէր Անտրէի և իւր եղբօրը խօսակցութիւնը վերստին մտիկ ընելու , որ այն մենախօսութենէն (aparté) պահ մ'ընդմիջեր էր՝ ձայն մը լսեց ետեւը :

— Աստուած իմ , մըմուտ , նախատեսելին մէջ մէկը կայ :

Եւ ժիլպէր նրբանցքին կողմէն քայլերուն մօտիլը լսելով զարդասենեակը սուզեցաւ դրան վարաղոյրը վար ձգելով :

Generated on 2016-09-07 07:00 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Է՛, այն խենդ Նիզուլը հող չէ՞, ըսաւ տը Գավէրնէյ սեսու-
հին ձայնը, որ զգեստին քղանցներովը ժիլպէրին քսուելով՝ աղ-
ջկանը սենեակը մտաւ :

— Անշուշտ պարտէզն է, ըսաւ Անտրէ այնպիսի հանդարտու-
թեամբ մը՝ որմէ կ'իմացուէր թէ բնաւ կասկած մը չունէր երբոր-
դի մը ներկայութենէն. բարի իրիկուն, հայր իմ :

Փիլիպ յարգանօք ոտք ելաւ. սեսուհը նշան ըրաւ անոր՝ որ ե-
ղած տեղը մնայ, և թիկնաթու մ'առնելով տղոցը քով նստաւ :

— Ա՛հ, տղաքս, ըսաւ սեսուհը, Գօք-Հէուօն փողոցէն ՚ի Աէր-
սայլ շատ հեռի է, երբ փոխանակ արքունի կառքով մը հոն եր-
թալու՝ միաձի ուղեկառք մը միայն ունի մարդ. միով բանիւ տի-
կին արքայորդին տեսայ :

— Ա՛հ, ըրաւ Անտրէ, ուրեմն Աէրսայլէն կու գաք, հայր իմ :

— Այո՛, իշխանուհին զիս կանչել տալու բարետիրութիւնն ու-
նեցեր էր, աղջկանս պատահած փորձանքն իմանալով :

— Անտրէ շատ աղէկ է, հայր իմ, ըսաւ Փիլիպ :

— Գիտեմ, և այնպէս ըլլալն ըսի Նորին արքայազն Բարձրու-
թեան՝ որ բարեհաճութեամբ խոստացաւ ինձ թէ քոյրդ կատարե-
լապէս առողջանալուն պէս՝ իր քովը պիտի առնէ ՚ի փոքր Գրիա-
նօն՝ զոր որոշիր է իւր բնակարանն ընելու, և կ'զբաղի իւր ճա-
շակին համեմատ կարգադրելու :

— Ես, ես արքունիք երթամ, ըսաւ Անտրէ երկչոտութեամբ :

— Արքունիք ըսել չէ այն, աղջիկս. տիկին արքայորդին նստո-
ղական ճաշակ ունի. Պ. արքայորդին ևս փայլն ու աղմուկը կ'ան-
արդէ. ընտանեկան կեանք մը պիտի անցընեն ՚ի Գրիանօն. տակայն
Նորին Բարձրութեան տիկին արքայորդւոյն բնաւորութիւնը զխանա-
լովս կ'ըսեմ թէ այս ընտանեկան փոքր ակումբները կրնան վեր-
ջապէս դատաւորական ատեաններէ կամ խորհրդանոցներէ լաւագոյն
ըլլալ: Իշխանուհին բնաւորութեան տէր է, և Պ. արքայորդին ալ
խորագէտ է, ըսուածին նայելով :

— Ո՛հ, միշտ արքունիք ըսել է, մի խաբուիր, քոյր իմ, ը-
սաւ Փիլիպ տխրազին :

— Արքունիք, ըսաւ ժիլպէր ինքնիրեն կատաղի յուսահատու-

Generated on 2016-09-07 07:00 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թեամբ մը . արքունիք , այսինքն գագաթ մը՝ ուր չեմ կրնար հասնիլ , անդունդ մը՝ ուր չեմ կրնար ինքզինքս նետել . ալ Անտրէ չկայ . կորսուած է ինձ համար , կորսուած :

— Հոն բնակելու համար , ըսաւ Անտրէ , ոչ հարկ եղած հարստութիւնն ունինք , և ոչ ալ հոն բնակողին հարկաւոր դաստիարակութիւնը : Ես , խեղճ աղջիկ մը , ինչ պիտի ընեմ այն այնքան մեծաշուք տիկնանց մէջ՝ որոց շլացուցիչ փայլը անգամ մը միայն տեսայ , որոց սնոտի սակայն այնքան շողշողուն միտքը դատեցի : Անձ , եղբայր իմ , մենք շատ մութի մէջ մնացած ենք և չենք կրնար այնքան լուսի մէջ մանել . . . :

Սեպուհը յօնքը պուտեց :

— Դարձեալ կ'ընէք այդ անմիտ խօսքերը , ըսաւ : Ճշմարիտ չեմ հասկընար ինչո՞ւ իմիներս պզտիկցընել կ'ուզեն ինչ որ ինէ կու գայ կամ ինձ կը պատկանի : Մութի մէջ ենք , իրաւ որ դու յիմար ես , օրիորդ . մութի մէջ Դավէրնէյ-Մէզօն-Ռուժ մը , մութի մէջ : Եւ քենէ զատ ո՞վ պիտի փայլի , ըսէ կ'աղաչեմ . . . : Հարստութիւնը . . . : Է՛հ , ամեն մարդ գիտէ արքունեաց հարստութեան ինչ ըլլալը . արքունեաց արևը զայն իրեն կը քաշէ , արքունեաց արևը զայն վերստին կը ծաղկեցընէ . բնութեան մեծ երթևեկ մեքենան է : Ես կործանեցայ , լաւ . դարձեալ պիտի հարստանամ , ահա ըլլալիքն այս է : Թագաւորը իւր ծառաներուն ընծայելու համար ալ դրամ չունի , և կը կարծես որ կ'ամչնամ եթէ իմ սերնդեանս անդրանիկ որդւոյն զօրագունդ մը տան , և օժիտ մ'ալ քեզ , Անտրէ . և կալուածագիր մը տան ինձ , կամ եկամուտներու գեղեցիկ դաշնագիր մը՝ զոր նախաձաշիկիս ատեն սկաւառակիս ներքե գտնեմ . . . : Ոչ , ոչ , խենդերը նախապաշարումներ ունին : Ես նախապաշարում չունիմ . . . : Ասկէ զատ , այդ իմ ինչքս է , ետ կ'առնեմ զայն , թող խիղճերնիդ հանդարտ ըլլայ : Մաքառելու յետին կէտ մը կը մնայ , ձեր դաստիարակութիւնը որուն վրայ քիչ մ'առաջ կը խօսէիր : Բայց , օրիորդ , միտքդ բեր որ արքունեաց մէջ և ոչ աղջիկ մը քեզի նման մեծցած չէ . աւելին կայ . ազնուական նորահաս աղջկանց դաստիարակութեանը հետ , կարի և հաշուոյ վրայ քաջ հմտութիւն ունիս , նուագել գիտես .

Generated on 2016-09-07 07:01 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-g-google

գիւղեր կը նկարես այնպիսի ոչխարներով և կովերով՝ զոր Պէրդէմ* իսկ պիտի հաւնէր . արդ տիկին արքայորդին սաստիկ կը սիրէ ոչխարներ , կովեր և գիւղանկարներ : Գեղեցկութիւն ունիս , թագաւորը անպատճառ պիտի տեսնէ այդ : Խօսք գիտես , այդ ալ Պ. տ'Արդուա կոմսին կամ Պ. տը Բրովանսին համար . քեզ ոչ միայն պիտի նկատեն . . . այլ պաշտեն : Այո՛ , այո՛ , ըրաւ սեպուհը ծիծաղելով և ձեռները շփելով այնպիսի տարօրինակ խնդումի հնչումով մը՝ որ Փիլիպ իւր հօրը նայեցաւ՝ չհաւտալով որ այն խնդումը մարդկային բերնէ մը կ'ելնէր : — Պիտի պաշտեն , ճիշդ բառը գտայ :

Անտրէ աչերը վար առաւ , և Փիլիպ անոր ձեռքէն բռնելով ,
 — Պ. սեպուհը իրաւունք ունի , ըսաւ , ճիշդ ըսածին պէս ես դու , Անտրէ . Վէրսայլ մտնելու համար քենէ աւելի արժանի մէկը չկրնար գտնուիլ :

— Բայց այն ատեն քենէ կը զատուիմ , պատասխանեց Անտրէ :
 — Բնաւ , բնաւ , ընդմիջեց սեպուհը . Վէրսայլ մեծ է , սիրելիս :
 — Այո՛ , բայց Դրիանօն փոքր է , պատասխանեց Անտրէ՝ որ վէս և դժուարամատոյց էր իրեն հակառակ խօսուած ատեն :

— Դրիանօն միշտ բաւական մեծ պիտի ըլլայ Պ. տը Դավէրնէյի սենեակ մը տալու համար . ինձ նման մէկը միշտ տեղ մը կը փնտռէ բնակելու , յարեց այնպիսի համեստութեամբ մը որ կը նշանակէր՝ գիտէ միշտ բնակելու տեղ մը գտնել :

Անտրէ հօրը իւր մօտ բնակելուն վրայ շատ ապահով չըլլալով Փիլիպի դարձաւ ,

— Քոյր իմ , ըսաւ այս վերջինը , դու արքունեաց մասը չպիտի կազմես : Տիկին արքայորդին որ կը բարեհաճի քեզ բարձրացընել , փոխանակ զքեզ մենաստան մը դնելու , ուր քու վճարքդ պիտի ընէր՝ որ և իցէ պաշտօնով մը քեզ իւր քովը պիտի պահէ : Այսօր արքունի սովորութիւնները Լուի Ժ.ի ժամանակին նման խիստ չեն . պաշտօններուն մէջ բաժանմունք և միաւորութիւն կայ . ընթերցու-

*Անուամի պատկերիսմ , ճնեալ 'ի շարչէմ , 1624 Թուականին . աշակերտ Կոյէնի , քաջ գիւղասնկարիչ : Ծ . Թ .

Generated on 2016-09-07 07:01 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
 Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հւոյ կամ հետևորդ կնոջ տեղ կրնաս ծառայել տիկին արքայորդւոյն .
քեզի հետ կը դժագրէ , քեզ միշտ քովը կը պահէ . թերևս եր-
բէք մարդ չպիտի տեսնէ քեզ , բայց անոր համար նուազ չպիտի
վայելես անոր պաշտպանութիւնը և շատ նախանձ պիտի ազդես :
Ահա վախցածդ այս է , այնպէս չէ :

— Այո՛ , եղբայր իմ :

— Քաջ է , ըսաւ սեպուհը . բայց մէկ երկու նախանձոտները
պէտք չէ բանի տեղ դնել . . . : Ուստի շուտով աղէկցիր , Ան-
տրէ , և ես ինքս զքեզ Գրիանօն տանելու հաճոյքը պիտի ունե-
նամ : — Տիկին արքայորդւոյն հրամանն այսպէս է :

— Լաւ , պիտի երթամ , հայր իմ :

— Աղէկ միտքս ընկաւ , շարայարեց սեպուհը , դրամ ունիմ ,
Փիլիպ :

— Եթէ դուք դրամի պէտք ունիք , պարոն , պատասխանեց երի-
տասարդը , ձեզի տալու չափ չունիմ . բայց ընդհակառակը եթէ
դուք ինձ տալ կ'ուզէք՝ կրնամ ըսել թէ ինձ բաւելու չափ դրամ
ունիմ :

— Ճշմարիտ է , դու փիլիսոփայ ես , ըսաւ սեպուհը ծաղու ծի-
ծաղով մը : Իսկ դու , Անտրէ , դու ալ փիլիսոփայ ես , և բան
մը չես ուզեր , կամ թէ բանի մը պէտք ունիմ :

— Կը վախնամ որ կը նեղուիք , հայր իմ :

— Ո՛հ , հոս Գավէրնէյ չէ : Թագաւորն ինձ հինգ հարիւր ոս-
կի տալ տուաւ . . . առ հաշիւ , ըսաւ Նորին Ահափառութիւ-
նը : Գու՛քու զարդարանքդ մտածէ , Անտրէ :

— Շնորհակալ եմ , հայր իմ , պատասխանեց նորատի աղջիկը
ուրախութեամբ :

— Է՛հ , տես սա ծայրայեղը , ըսաւ սեպուհը : Քիչ մ'առաջ
բան մը չէր ուզեր . հիմա Չինաստանի Կայսր մը կրնայ կործանել :
Ո՛հ , բայց փոյթ չէ , ուղէ . գեղեցիկ զգեստները քեզի կը վայե-
լեն , Անտրէ :

Ասոր վրայ , և գորովագին համբոյրէ մ'իտք , սեպուհը սենեկի
մը դուռը բացաւ որ աղջկանը սենեակը իրենէն կը զատէր . և մեկ-
նեցաւ ըսելով ,

— Այն սաղայէլ Նիգօլն ալ հոս չէ որ լոյս բռնէ :

— Կանչեմ, հայր իմ :

— Ոչ, Լա Պրին անշուշտ հոս թիկնաթուռի մը վրայ կը քնանայ .
գիշեր բարի, տղաքներս :

Փիլիպ ևս ոտք ելեր էր :

— Քեզ ալ գիշեր բարի, եղբայր իմ, ըսաւ Անտրէ, շատ
յոգնած եմ: Այն պատահարէն ՚ի վեր սակաւին այսչափ խօսած
չունէի: Գիշեր բարի, սիրելի Փիլիպ :

Եւ ձեռքը երիտասարդին տուաւ զոր եղբայրական սիրով մը համ-
բուրեց, բայց այն եղբայրական սիրոյ կերպ մը յարգանք խառնե-
լով զոր միշտ քրոջը համար ունեցած էր, և մեկնեցաւ նրբանցքին
մէջ այն վարագոյրին քսուելով որուն ետեւը պահուած էր ծիլպէր :

— Կուզես որ Նիգօլը կանչեմ, ըսաւ ըստ կարգի հեռանալով :

— Ոչ, ոչ, գոչեց Անտրէ, առանձին կը հանուիմ. երթաս բա-
րեալ, Փիլիպ :



ԹԻԼՊԻՐԻՆ ՆԱԽԱՏԵՍԱԹԸ

Անտրէ առանձին մնալով աթուռին վրայ ելաւ կանգնեցաւ,
և ծիլպէրի բոլոր մարմնէն սարսուռ մ'անցաւ :

Նորատի աղջիկը կանգուն էր, կճանման սպիտակ ձեռներովը
գլխադրին (coiffure) գնդասեղները կը հանէր մի առ մի, մինչդեռ
զան ծածկող թեթև զգեստը ուսերէն սահելով կը մերկացընէր ա-
նոր այնքան անրիժ և այնքան հրաշագեղ վիզը, դեռ դողդոջող
կուրծքը, և բազուկները՝ որ յանփոյթս գլխուն վրայ բոլորուած,
մէջքին բոլորութիւնը կ'աւելցընէին և աւելի գեղեցիկ տեսք մը
կ'ընծայէին բաղիսդին ներքև դողդացող սլարանոցին :

Թիւլէր, 'ի ծունր, շնչատպառ, արբշիւ, կ'զգար որ արիւնը կատաղարար ճակատը և սիրտը կը զարնէր : Հրաբորբոք ալիքներ շնչափողերէն կ'անցնէին, բոցեղէն ամպ մը աչքին վրայ կ'իջնէր, անծանօթ և տենդային շշուռ մը ականջներուն կը բզզար . կը մօտենար այն վայրագ մոլորութեան վայրկենին՝ որ զմաբոյիկ յիմարութեան անդունդը կը գլորէ : Քիչ մնաց որ Անտրէի սենեկին սեմէն պիտի անցնէր գոչելով :

— Ա՛հ, այո, գեղանի ես, գեղանի՛ ես . բայց այնքան մի փքանար գեղեցկութեանդ վրայ, ինչու որ ինձ կը պարտիս զայն, ինչու որ ես քու կեանքդ ազատեցի՛ :

Յանկարծ Անտրէի գօտիին մէկ կապը խառնուեցաւ . Անտրէ զայրացաւ, ոտքը գետինը զարկաւ, բազմոցի մը վրայ նստաւ զգեստները բոլորովին անկարգ վիճակի մը մէջ, այնպէս որ գոցեց այն թեթև արգելքը բաւական եղած էր անոր ոյժը կտրելու, և կիսամերկ հնչակին լարին ծռելով անհամբեր ցնցում մը տուաւ անոր :

Այն ձայնը Թիւլէրին խելքը գլուխը բերաւ : — Նիգօլ դուռը բաց թողեր էր լսելու համար : Նիգօլ պիտի գար :

Երթայ բարեաւ երազը, երթայ բարեաւ երջանկութիւնը . ուրիշ բան մը չէր այն՝ այլ միայն երևոյթ մը, այլ միայն յաւիտենապէս երևակայութեան մէջ տոչորող, յաւիտենապէս սրտին խորը թաղուած յիշատակ մը :

Թիւլէր ուզեց տնէն դուրս խոյանալ . բայց սեպուհը ներս մտնելու ատեն վրայէն գոցեր էր նրբանցքին դռները . Թիւլէր որ այն արգելքը չգիտէր՝ քանի մը բոպէ անցուց զանոնք բանալով :

Նիգօլին սենեակը մտած ատեն՝ Նիգօլ կը հասնէր : Անոր քայլերուն ներքև պարտէզին աւազը ձայն տալը լսեց երիտասարդը : Հազիւ թէ ժամանակ ունեցաւ ստուերին մէջ անյայտ ըլլալու որպէս զի դեռատի տղջիկը անցնի, որ նախասենեկէն անցաւ դուռը գոցելով, և թռչնոյ մը թեթևութեամբ նրբանցքը խոյացաւ :

Թիւլէր նախասենեակը վազեց և ջանաց դուրս ելնել :

Բայց Նիգօլ վազելու և գոչելու ատենը, « Եկայ, եկայ, օրիորդ, դուռը կը գոցեմ » իրօք դուռը կը գոցէր, և ոչ միայն կրկին դարձուածով կը գոցէր, այլ և այն շփոթութեանը մէջ բանալին գրպանը կը դնէր :

Թիլպէր 'ի զուր փորձեց գուռը բանալու . սքասուհաններուն դիմեց : Պատուհանները երկաթէ վանդակապատոներ ունէին . հինգ վայրկեան խուզարկութենէ ետք՝ Թիլպէր հասկըցաւ որ անկարելի էր դուրս ելնել :

Երիտասարդը գնաց անկիւն մը ծածկուեցաւ , հաստաւ միտքը դնելով որ դուռը 'սիգօլին բանալ տայ :

Իսկ 'սիգօլ իւր բացակայութեան համար պատճառ բռնեց ջերուցին փեղկերը գոցելու գացած ըլլալը , վախնալով որ գիշերուան օդը օրիորդին ծաղիկներուն չփասէ , և վերջապէս Անտրէն հանուեցրնելով անկողին դրաւ :

Արդարև 'սիգօլ խօսած ատեն ձայնը կը թրթուար , ձեռները կը դողային , աճապարանօք կը ծառայէր . բոլոր ասոնք սովորական չէին և յուզմանց մնացորդ մը կը մատնէին . բայց Անտրէ խաղաղ երկինքէն ուր իւր գաղափարները կը սաւառնէին՝ հագիւուրեմն երկրիս վրայ կը նայէր , և երբ նայէր ալ , ստորին արարածները հիւլէներու նման կ'երևէին անոր աչաց :

Ուստի Անտրէ բան մը չգիտեց :

Թիլպէր անհամբերութենէն կ'եռար՝ չորս կողմը գոց ըլլալէն 'ի վեր : Ալ միայն ազատութեան կը տենչար :

Անտրէ 'սիգօլը ճանբեց կարճ խօսակցութենէ մ'ետք որուն մէջ 'սիգօլ խղճի խայթ կրող նաժշտի մը ամեն փաղաքշանքն 'ի գործ դրաւ :

Իւր տիրուհոյն վերմակը ամեն կողմէն գոցեց , կանթեղին լոյսը նուազեցուց , արծաթեայ սկահով կճեայ կանթեղին վրայ եղկացող ըմպելոյն մէջ շաքար դրաւ , ամենամեղմ՝ ձայնովը վայելուչ գիշեր բարի մը մաղթեց տիրուհոյն , և ոտքին մասներուն վրայ կոխելով սենեկէն դուրս ելաւ :

Դուրս ելնելու ատեն ապակեոր դուռը գոցեց :

Ապա , հանգարտ միտք մը կեղծելու համար կէս ձայնով երգելով , իւր սենեկէն անցաւ և պարտիզին դրանը կողմը յառաջացաւ :

Թիլպէր 'սիգօլի դիտարորութիւնը հասկըցաւ , և պահ մը մտածեց թէ փոխանակ ինքզինքը ճանչցրնելու չէր կրնար գուռը կէս մը բացուած ատեն խոյս տալ . բայց այն ստեն պիտի տեսնուէր ա-

Generated on 2016-09-07 07:02 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

աանց ճանչցուելու, գող մը պիտի կարծուէր, Նիգօլ օգնութեան պիտի կոչէր, ինքը ժամանակ չպիտի ունենար պարանը ձեռք ձգելու, և ձեռք ալ ձգէր՝ իւր օգաչու փախուստը պիտի սեսնուէր. ասով իւր բնական տեղը պիտի գիտցուէր և գայթակղութիւն ծագէր, գայթակղութիւն մը՝ որ անշուշտ մեծ պիտի ըլլար այնպիսի մարդոց տունը՝ որոնք այնքան շարակամ էին խեղճ ժիլպէրին:

Ճշմարիտ է որ Նիգօլը կրնար մասնել և վնասել տալ. բայց ինչ կ'ըլլար անկէ: Ժիլպէր չարիք գործած պիտի ըլլար առանց օգտի, մի միայն վրէժինդրութեան համար: Ժիլպէր վրէժ լուծելով գոհունակութիւն զգալու չափ տկարամիտ մէկը չէր. անօգուտ վրէժինդրութիւնը շարագործութենէ աւելի բան մ'էր անոր համար, անմտութիւն մ'էր:

Երբ Նիգօլ ելքին դրան մօտն հասաւ ուր ժիլպէր կ'սպասէր՝ օտ յանկարծ դուրս ելաւ ծածկուած ստուերին մէջէն և ապակիներէն անցնող լուսնին մէկ ճառագայթին մէջ նորատի աղջկան երեւցաւ:

Նիգօլ քիչ մնաց պիտի պոռար, բայց ժիլպէրը ուրիշ մէկը կարծեց, և սոսկման առաջին շարժումէ մ'ետք,

— Ո՛հ, դո՛ւ ես, ըսաւ, ի՛նչ անխոհեմութիւն:

— Այո՛, ես եմ, պատասխանեց ժիլպէր ցած ձայնով, միայն թէ ինձ համար ալ մի պոռար՝ ինչպէս որ ուրիշի մը համար չպիտի պոռայիր:

Այս անգամ Նիգօլ իւր խօսակիցը ճանչցաւ:

— Ժիլպէր, գոչեց, Աստուած իմ:

— Չի գի աղաչեցի որ չպոռաք, ըսաւ երիտասարդը պաղութեամբ:

— Բայց ի՛նչ կ'ընես հոս, պարոն, հարցուց Նիգօլ զայրադին:

— Օ՛ն, ըսաւ ժիլպէր մի և նոյն հանդարտութեամբ, քիչ մ'առաջ զիս անխոհեմ կոչեցիր, և դու այժմ ինէ աւելի անխոհեմ ես:

— Այո՛, արդարև, ըսաւ Նիգօլ, ի՛նչ պարզամիտ եմ որ քեզի կը հարցընեմ թէ հոս ի՛նչ կ'ընես:

— Աւրեմ ի՛նչ կ'ընեմ:

- օրիորդ Անտրէն տեսնելու եկած ես :
- օրիորդ Անտրէն , ըսաւ ժիլպէր մի և նոյն հանդարտութեամբ :
- Այո՛ , որուն սիրահարած ես , բայց երջանկարար նա քեզ չսիրեր :
- Իրա՞ն :
- Միայն թէ զգուշացիր , պարոն ժիլպէր , շարայարեց Նիգօլ սպառնակից եղանակաւ մը :
- Զգուշանամ :
- Այո՛ :
- Ի՞նչ բանէ :
- Զգուշացիր որ քեզ չմասնեմ :
- Դո՞ւ , Նիգօլ :
- Այո՛ , ես , և քեզ վճնտել չտամ :
- Փորձէ՛ , ըսաւ ժիլպէր ժպտելով :
- Կը կարծես որ չե՞մ կրնար ընել :
- Դրապէս :
- Ի՞նչ կրնայ ըլլալ եթէ օրիորդին , Պ. Փիլիպին , Պ. ուսեպ-հին ըսեմ թէ քեզ հոս տեսայ :
- Ըսածդ կրնայ ըլլալ , ոչ թէ զիս կը վճնտեն —՝ փառք Աստուծոյ , ես վճնտուած եմ — այլ զիս երէի մը պէս պիտի վարեն : Միայն թէ , եթէ մէկը վճնտեն՝ Նիգօլը պիտի ըլլայ այն :
- Ի՞նչ , Նիգօլ :
- Ստուգիւ , Նիգօլը — Նիգօլը որուն քարեր կը նետեն պատերուն վրայէն :
- Զգուշացիր , պարոն ժիլպէր , ըսաւ Նիգօլ սպառնական եղանակաւ մը , Լուի Ժե. հրսպարակը , օրիորդին զգեստին մէկ կտուրը գտնուեր է քու ձեռքդ :
- Այնպէս կը կարծես :
- Պ. Փիլիպ իւր հօրն ըսաւ , սակաւին բանէ մը չկասկածիր . բայց եթէ մէկն իրեն օգնէ՝ վերջապէս պիտի կասկածի :
- Ո՞վ պիտի օգնէ իրին :
- Է՛հ , ես :
- Զգուշացիր , Նիգօլ , կրնան նաև կասկածիլ թէ տանդէլ-

ները փուել կեղծելու ատենդ , պատին վրայէն քեզի նետուած քարերը կը ժողվես գետնէն :

— Այդ սո՛ւտ է , գոչեց Նիգօլ :

Ապա , իւր ուրացումը շփշելով ,

— Ասկէ զատ , շարայարեց , տոմսակ ստանալը յանցանք մը չէ , օրիորդին հանուած ատեն հոս մանելու չափ յանցանք մը չէ . . . : Ասոր ինչ պիտի ըսես , պարոն ժիլպէր :

— Պիտի ըսեմ թէ , օրիորդ Նիգօլ , քեզի նման խոհեմ դեռահաս աղջկան մը յանցանք է պարտէզներուն փոքրիկ դուներուն ներքեւ բանալիներ մղելը :

Նիգօլ սարսուեցաւ :

— Պիտի ըսեմ , շարայարեց ժիլպէր , թէ , եթէ ես Պ. տը Դավէրնէյէն , Պ. Փիլիպէն , օրիորդ Անտրէէն ճանչցուելովս , հոս մտնելու յանցանքը գործեցի , չկարենալով դիմանալ այն մտատանջութեանը զոր ինձ կ'ազդէր հին տեարցս առողջութիւնը , և մանաւանդ օրիորդ Անտրէին առողջութիւնը՝ զոր ազատելու ճիգ թափեցի հոն , այնքան ճիգ թափեցի որ , ինչպէս դու ալ կը խոստովանիս , զգեստին մէկ կտորը ձեռքս մնացեր է . պիտի ըսեմ թէ , եթէ ես հոս մաննելու ներելի յանցանքը գործած եմ , դու սոններելի յանցանք մը գործած ես տեարցդ տունը օտարական մը մտցընելով , և երթալով ջերոցին մէջ օտարականը գտնելով ուր ժամ մը անոր հետ անցուցիր :

— Ժիլպէր , ժիլպէր :

— Ա՛հ , տես ինչ է առաքինութիւնը — օրիորդ Նիգօլին առաքինութիւնը , ըսել կուզեմ : — Ա՛հ , քու սենեակդ ըլլալս յանցանք մը կը սեպես , օրիորդ Նիգօլ , մինչդեռ . . . :

— Պարոն ժիլպէր :

— Ալ հիմա ըսէ օրիորդին թէ իրեն սիրահարած եմ . ես պիտի ըսեմ թէ քեզի սիրահարած եմ , նէ ալ պիտի հաւատայ , ինչու որ 'ի Դավէրնէյ իրեն այնպէս ըսիր անմտութեամբ :

— Ժիլպէր , բարեկամս :

— Եւ քեզ պիտի վնտեն , Նիգօլ . և փոխանակ օրիորդին հետ 'ի Դրիստոն տիկին արքայորդւոյն քով երթալու , փոխանակ զեղե-

Generated on 2016-09-13 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քիկ իշխաններու և հարուստ ազնուականներու հետ քծնելու, որ անշուշտ պիտի ընես եթէ տունը մնաս. փոխանակ ասոնց երթաս սիրահարդ պիտի գտնես, Պ. տը Պօզիրը, վարոցաւոր մը, զինուոր մը: Ա՛հ, ինչ գեղեցիկ պիտի ըլլայ այն անկումը, և օրիորդ Նիգօլին փառասիրութիւնը ո՛ւր պիտի հասցընէ զինքը: Նիգօլ, Գաղղիացի պահապան զինուորի մը տիրուհին:

Եւ ժիլպէր քրքիջներ արձակելով սկսաւ երգել,

Գաղղիացի զօրաց մէջ
Ես սիրահար մ'ունէի:

— Գթա, պարոն ժիլպէր, ըսաւ Նիգօլ, այդպէս մի նայիր ինձ: Նայուածքդ ժանտ է և մութին մէջ կը փայլի: Գթա, մի խնդար ալ, խնդումդ ինձ վախ կու տայ:

— Ուրեմն, ըսաւ ժիլպէր հրամայական եղանակաւ մը, բաց դուռը, Նիգօլ, և բոլոր ասոնց վրայ խօսք մ'անդամ մ'ընել:

Նիգօլ դուռը բացաւ այնպիսի սաստիկ ջղային դողով մը՝ որ կարելի էր տեսնուիլ ուտերուն շարժիլը, և գլխուն՝ որ պառաւի մը գլխուն նման կ'երերար:

Ժիլպէր հանդարտօրէն նախ ինքը դուրս ելաւ, և տեսնելով որ նորատի աղջիկը դէպ 'ի ելքի դուռը կ'առաջնորդէ զինքը,

— Ոչ, ըսաւ, ոչ. դու քու միջոցներդ ունիս մարդիկը հոս մտցընելու. ես ալ իմ միջոցներս ունիմ դուրս ելնելու: Զերոցը գնա, գնա գտիր այն սիրուն Պ. տը Պօզիրը որ անշուշտ քեզ կ'սպասէ անհամբեր, և որչափ ատեն որ անոր քով պիտի մնայիր՝ տասն վայրկեան ալ աւելի կեցիր: Քու խորհրդապահութեանդ համար կը շնորհեմ այս փոխարէնը:

— Տասն վայրկեան, և ինչո՞ւ համար տասն վայրկեան, հարցուց Նիգօլ դողդալով:

— Ինչու որ ինձ տասն վայրկեան պէտք է աներևոյթ ըլլալու համար. գնա, օրիորդ Նիգօլ, դնա. և Ղովտի կնոջը նման, ուրուն պատմութիւնը քեզի ըրած եմ 'ի Գավէրնէյ, երբ ինձ ժամագրութիւններ կու տայիր յարդի դէզերուն քով, չըլլայ որ ետեզ գառնաս, ինչու որ աղէ արձանի փոխուելէ աւելի գէշ բան:

Generated on 2016-09-07 07:03 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մը կրնայ պատահիլ քեզի : Գնա , գեղանի հեշտասէր , ալ հիմա գնա . ուրիշ ըսելիք չունիմ քեզի :

Նիզօլ , նուաճելով , ահարեկելով , յաղթուելով ժիլպէրի համարձակութենէն՝ որուն ձեռքն էր բոլոր իւր ապական , գլխակոր ջերոցը հասաւ՝ ուր իրօք իրեն կ'սպասէր զօրական Պօզիրը մեծ մտատանջութեամբ :

Ժիլպէր ևս չտեսնուելու համար մի և նոյն զգուշութիւններն ընելով գնաց գտաւ իւր պատն ու պարանը , որթատունկին և ձողաբարձին օդնութեամբ սանդուխին առաջին յարկին կապարեայ կոնքին հասաւ , և մագլցելով մինչ իւր վերնայարկը գնաց թեթևօրէն :

Երջանկաբար մէկու մը չսլատահեցաւ իւր համբարձման միջոցին . դրայուհիք արդէն պառկած էին և Թէրէզ տակաւին սեղանն էր :

Ժիլպէր Նիզօլին վրայ տարած յաղթանակէն խանդով վառուած բնաւ չէր վախնար խողովակին վրայ սայթաքելէ :

Ընդհակառակը , բաղդին նման սուր ածելի մը վրայէն քայլելու զօրութիւն մը կ'զգար իւր ներսը , մինչ իսկ եթէ այն ածելին փարսախ մը երկայնութիւն ունենար :

Անտրէ ճանբուն ծայրն էր :

Ուստի իւր լուսամուտը վերագարձաւ , պատուհանը գոցեց և տոմսակը պատուեց՝ որուն ոչ ոք հպած էր :

Ապա հեշտօրէն անկողնին վրայ տարածուեցաւ :

Կէս ժամ ետք , Թէրէզ խօսքը բռնելով եկաւ դրանը մէջէն հարցուց թէ ինչպէս է :

Ժիլպէր շնորհակալ եղաւ , քնանալու սաստիկ փափաք ունեցող մարդու մը յօրանջումներով : Ժամ մ'առաջ առանձին մնայ կ'ուզէր , բոլորովին առանձին , մութին և լուութեան մէջ , իւր մտածմունքներովը կշտանալու , սրտով , մաքով , բոլոր անձովը այն լափէզ օրուան անպատում գաղափարները վերլուծելու համար :

Արդարեւ իսկոյն ամեն ինչ անյայտ եղաւ աչքին առջևէն , սեպուհը , Փիլիպը , Նիզօլը , Պօզիրը , և իւր յիշողութեան յատակը միայն Անտրէն աեսաւ կիսամերկ , թևերը գլխուն վերեւ բռնրած , և գնդասեղները մագերէն հանելով :

ՀԵ

ԽՈՏԱՔԱՂՆԵՐԸ

Մեր պատմած եղելութիւնները ուրբաթ իրիկուն տեղի ունեցեր էին . երկրորդ օրն էր որ տեղի պիտի ունենար Լիւսիէնի անտառին մէջ այն շրջագայութիւնը՝ զոր Ռուսօ մեծ զուարճութիւն մը կը համարէր իրեն :

Ժիլպէր Անտրէի 'ի Գրիանօն մերձակայ երթն իմանալէն 'ի վեր ամեն բանի անտարբեր էր . ամբողջ օրը լուսամուտին յեցած անցուցեր էր : Այն օրը Անտրէի պատուհանը բաց թողուած էր , և նորասի աղջիկը տկար և տժողոյն պատուհանին մօտեցեր էր քանի մ'անգամ օդ առնելու համար , և Ժիլպէրի այնպէս թուած էր զան տեսնելու ատեն , թէ նոյն միջոցին ուրիշ բան մը չպիտի խնդրէր Երկինքէն՝ այլ միայն գիտնալ թէ Անտրէ յաւիտենապէս այն փոքրիկ տունը բնակելու սահմանուած էր , թէ ինքը բոլոր կեանքին մէջ տեղ մը պիտի ունենար այն վերնայարկը և թէ օրը երկու անգամ դեռասի աղջիկը պիտի նշմարէր՝ ինչպէս որ այն օրը նշմարած էր :

Այն այնքան բաղձացեալ Վիւրակէն հասաւ վերջապէս : Առջի օրէն Ռուսօ իւր պատրաստութիւններն ըրեր էր . կօշիկներ խնամքով փայլեցուցեր էր , մօխրադոյն զգեստը , թանձրը և բարակը ամենքը միասին դուրս ելեր էին պահարանէն 'ի մեծ յուսահատութիւն թէրէզի՝ որ կը պնդէր թէ բաղէն մը և կտաւէ տառատուկ մ'անգամ շատ էին այնպիսի արհեստի մը համար . բայց Ռուսօ առանց պատասխան տալու , ուզած կերպովը վարուեր էր . ոչ միայն իւր զգեստը՝ այլ և Ժիլպէրինն ալ աչքէ անցուեր էր մեծ խնամքով , և անոնց վրայ արեւցուեր էին անստգտանելի գուլպաներ և նոր կօշիկներ՝ որոնք զարմանք պատճառուեր էին Ժիլպէրի :

Խոտարանին զարդն ալ թարմ էր . Ռուսօ չէր մոռցեր իւր մա-

մուռներու հաւաքածոյն որ դեր մը կատարելու սահմանուած էր :

Ռուսօ տղու մը նման անհամբեր , քսան անգամէն աւելի պատուհանը ելաւ տեսնելու համար թէ անցնող այս ինչ կամ այն ինչ կառքը Պ. տը ժիւսիէօի՛նն էր : Աերջապէս փայլուն ներկուած կառք մը , ճոխաբար համետուած ձիեր , փոշի ցանուած խոշոր կառավար մը տեսաւ իւր տանը առջևը : Իսկոյն վազեց Թէրէզի ըսելու ,

— Ահա՛ եկաւ , ահա՛ եկաւ :

Եւ ժիլպէրին :

— Հո՛ւտ , ժիլպէր , շո՛ւտ : Կառքը մեզի կ'սպասէ :

— Լաւ ուրեմն , ըսաւ Թէրէզ կ'ծու կերպով , քանի որ այդքան կը սիրես կառքով թաւալիլ , ինչո՞ւ չաշխատեցար հատ մ'ունենալու Պ. տը Աօլդէրին նման :

— Օ՛ն անդր , մրմուռաց Ռուսօ :

— Է՛հ , միշտ կ'ըսես թէ անոր չափ տաղանդ ունիս :

— Ես այդպէս բան չեմ ըսեր կը լսես , գոչեց Ռուսօ տանտիկնոջը սրդողելով կ'ըսեմ թէ . . . բան մը չեմ ըսեր :

Եւ բոլոր իւր ուրախութիւնը թուաւ գնաց՝ ինչպէս որ ամեն անգամ կը պատահէր՝ երբ այն թշնամի անունը իւր ականջին կը հնչէր :

Երջանկաբար Պ. տը ժիւսիէօ ներս մտաւ :

Անուշահոտ իւղեր քսուած էր , փոշի ցանուած , դարնան նման թարմ էր . Հնդկաստանի ստուար սաղէնէ եզրաւոր սքանչելի զցեստ մը՝ վշոյ նման մոխրագոյն , շեփորկազոյն մետաքսեայ բաճկոնակ մը , վերջին աստիճանի նուրբ ճերմակ մետաքսէ գուլպաներ և յղկեալ ոսկիէ ճարմանդներ իւր զարդարանքը կը կազմէին :

Ռուսօի սենեակը մտնելու ատեն զանազան անուշահոտութիւններով լցուց՝ զոր Թէրէզ առանց զարմանքը ծածկելու հոտոտեց :

— Ո՛հ , ինչ գեղեցիկ եղեր էք , ըսաւ Ռուսօ քաղցրութեամբ Թէրէզի նայելով և աչքովը իւր պարզ զարդարանքը և տնկագիտանկան մեծահատոր պիտոյքը Պ. տը ժիւսիէօի այնքան փառաւոր զարդարանքին հետ բաղդատելով :

— Բայց ոչ , տաքէն վախճալուս համար է , ըսաւ պճնազարդ անկազէտը :

— Սակայն անտառներուն խոնաւութիւնը : Եթէ ճահիճներուն մէջ խոտ քաղենք , ձեր մետաքսեայ գուլպաները . . . :

— Ո՛հ , ոչ տեղերնիս կ'ընտրենք :

— Իսկ ջրային մամուլները , այսօր չ'պիտի նայինք անոնց :

— Այդ մասին հոգ չունենանք սիրելի շարուեստակիցս :

— Կարծես թէ պարահանդէս և կիներ տեսնելու կ'երթաք :

— Ինչո՞ւ համար տիկին Բնութիւնը մետաքսեայ գուլպայով մը պատուելու չէ , պատասխանեց Պ. աը Ժիւսիէօ քիչ մը շփոթելով . այնպիսի տիրուհի մը չէ՞ որուն համար կ'արժէ որ մարդ զարդարուի :

Ռուսօ ալ դէմ չխօսեցաւ . երբ Պ. աը Ժիւսիէօ բնութիւնը մէջ կը բերէր՝ ինքն ալ այն կարծիքէն էր որ մարդ որքան պատիւ ալ ընէ անոր՝ գարձեալ քիչ է :

Իսկ Ժիւլպէր հակառակ իւր Ստոյիկութեանը , նախանձոտ աչքով մը կը նայէր Պ. աը Ժիւսիէօի : Այն ատենէ 'ի վեր որ այնքան վայելուչ հագուող երիտասարդներ , բնութեան իրենց պարզեւած առաւելութիւնները զարգարանքով աւելցրնելին տեսեր էր , վայելուչ զարդարանայ դուզնաքեայ օգտակարութիւնը հասկըցեր էր , և մտովի կ'ըսէր թէ այն սաղէնը , այն բազիսդը , այն տանդէլաները , անշուշտ իւր դեռատի հասակին ալ հրապոյր պիտի տային , և եթէ անտարակոյս , փոխանակ իւր զգեստներուն , Պ. աը Ժիւսիէօի նման հագուած ըլլար և Անտրէի հանդիպէր՝ Անտրէ իրեն պիտի նայէր :

Տանիմարքացի երկու ընտիր երիվարներու արշաւանքով ճանքայ ելան : Չուէն ժամ մ'ետք տնկագէտները Պուժիվալ կ'իջնէին և Շագանակենիներուն ճանքէն ձախ կողմը կը դառնային :

Այս շրջագայութիւնը , որ այսօր պքանչելի գեղեցկութիւն մ'ունի , դարձեալ այն ատենն ալ գէթ հաւասար գեղեցկութիւն մը ունէր , ինչու որ բլուրին մասը որմէ անցնելու կը պատրաստուէին մեր խուզարկուները , և որ Լօւի Ժ.Պ.ի ատեն արդէն անտառով ծածկուած էր՝ յարատե խնամոց առարկայ մ'եղեր էր վեհագեղաբար յաճախ Մարլի երթալու ախորժեկէն 'ի վեր :

Խորշումաւոր փեճկներով շագանակենիները , ահագին ճիւղերով ,

Generated on 2016-09-07 07:12 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մտացածին ձևերով, որ երբեմն իրենց ուստախիս շրջաբերութեանց (circumsolation) ատեն ծառի մը կոճղին բոլորուող օձին, երբեմն մնագործին տախտակին վրայ տապաստ ընկած և սև արիւն մը փսխող ցուլին կը նմանին. մամուլապատ խնձորենիները, և լայնասուսրած ընկուզենիները, որոց տերևները յունիսի մէջ գեղնադոյն կանաչէ կապուտադոյն կանաչի կը փոխուին. այն մենութիւնը, գեսնին նկարչային անհարթութիւնը որ հին ծառերուն ստուերին ներքէն բարձրանալով երկնից աղօտ կապոյտին վրայ որոշակիւն մը կը գծէ. բոլոր այն զօրաւոր, շնորհալի և մեղամալձոտ բնութիւնը անբացասօրելի յափշտակութեան մը մէջ կը թաղէր Ռուսօն.

Իսկ Ժիլպէր հանդարտ բայց ախուր, բոլոր կեանքը սա մտածման մէջ ամփոփուեր էր.

— Անարէ պարտէզին փոքրիկ տնէն կը մեկնի և Գրիանօն կերթայ:

Այն բլրակին բարձրագոյն կիտին վրայ, որմէ մեր երեք տնկաքաղնները հետի կ'եննէին, Լիւսիէնի քառակուսի շէնքը կ'երևէր:

Այն շէնքին տեսքը, ուստի խոյս տուեր էր, Ժիլպէրի զաղափարներուն ընթացքը փոխեց և նուազ հաճելի յիշատակներ բերաւ անոր միտքը, բայց անոնց մէջ վախ չկար: Արդարև ամենէ ետքը ինքը կը քայլէր, երկու պաշտպան կը տեսնէր առջևը և կ'ըզդար որ զօրաւոր նեցուկ ունէր. ուստի Լիւսիէնի նայեցաւ նման նաւարեկեալի մը որ նաւահանգիստէն կը նայի այն խութին որուն վրայ իւր նաւը խորտակուեցաւ:

Ռուսօ փոքրիկ բահը ձեռքը՝ կ'սկսէր դետինը նայելու. նոյնպէս Պ. տը Ժիւսիէօ ալ. միայն թէ առաջինը տունկ կը փնտռէր, իսկ երկրորդը կը ջանար գուլպաները խոնաւութենէ զերծ պահելու:

- Ի՛նչ հիանալի լեքօթօթիո՞՞ս*, ըսաւ Ռուսօ:
- Զմայլելի, պատասխանեց Պ. տը Ժիւսիէօ. բայց անյնինք թէ որ կ'ուզէք:
- Ա՛հ, տես սա Լեքի՞սի՞ս ֆընէլլան*: Քաղիլու ատենն է, տեսէք:

*Յետակ մը տունկ:

Generated on 2016-09-07 07:12 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-g-google

- Առէք եթէ կ'ուզէք :
- Ա՛Տ, բայց տունի քաղելու ելած չե՞նք :
- Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ . . . : Բայց կարծեմ թէ անդին սարհարթին վրայ աւելի լաւերը կրնանք գտնել :
- Ինչպէս որ կը չաճիք . . . : Երթանք ուրեմն :
- Ժամը քանին է, հարցուց Պ. սը Ժիւսիէօ : Աճապարանօք հագուելուս պատճառաւ ժամացոյցս վրաս առնելու մոռցեր եմ :
- Ռուսօ արծաթէ խոշոր ժամացոյց մը հանեց զրպանակէն (gousset) :
- Ինն է, ըսաւ :
- Արդեօք քիչ մը հանդ չի՞նք, ի՞նչ կ'ըսէք, հարցուց Պ. սը Ժիւսիէօ :
- Ո՛Տ, որքան չէք դիմանար քայլելու, ըսաւ Ռուսօ : Ահա նուրբ կօշիկներով և մետաքսէ գուլպաներով տունի քաղելուն հետեանքը :
- Ինչո՞ւ այդպէս կը խօսիք, թերևս անօթի եմ :
- Լաւ ուրեմն, նախաճաշենք . . . : Գիւղը քառորդ փարսախ մը հեռի է հոսկէ :
- Է՛Տ, այդչափ մի հեռացրնէք :
- Ի՞նչպէս չհեռացրնեմ : Կառքին մէջ ուտելիք ունիք ուրեմն :
- Կը տեսնէ՞ք վարը, այն ծառաստանին մէջ, ըսաւ Պ. սը Ժիւսիէօ ձեռքը հորիզոնին այն կողմը երկնցընելով զոր ցոյց տալ կ'ուզէր :
- Ռուսօ ոտքին մասներուն վրայ կանգնեցաւ, և ձեռքովը աչքը ծածկեց լուսարգելի մը նման :
- Բան մը չեմ տեսներ, ըսաւ :
- Ի՞նչ, այն գեղջիական տանիքը չէ՞ք տեսներ :
- Ոչ :
- Հողմացոյց դրօշով մը և ճերմակ ու կարմիր յարդէ պատերով, կերպ մը հիւղ :
- Այո՛, կարծեմ թէ այո՛, նոր անակ մը :
- Հովանոց (քէօշք) մը, ճիշդ է :
- Ուրե՛մն :

— Է՛Տ, ձեզի խոստացած աղքատիկ նախաձաշս հոն պիտի գտնէք :

— Այնպէս թող ըլլայ, ըսաւ Ռուսօ : Անօթի ես, ժիլպէր : ժիլպէր որ անտարբեր մնացեր էր այն վիճարանութեան միջոցին, և մեքենարար հաւամարդոյ ծաղիկներ կը կտրէր՝ պատասխանեց,

— Ինչպէս որ ձեզ հաճելի կը թուի, պարոն :

— Ուրեմն, երթանք, եթէ կը հաճիք, ըսաւ Պ. տը ժիւսիէօ . ասկէ զատ, տունկ ալ կրնանք քաղել ճանրան :

— Ո՛Տ, ձեր եղբորորդին ձենէ աւելի եռանդուն բնութիւնասէր է, ըսաւ Ռուսօ . Մ՛օնմօրանսի անտաւին մէջ տունկ քաղելու ելլայ անոր հետ : Քիչոր էինք : Հատ աղէկ կը գտնէ, կը քաղէ, կը բացատրէ :

— Մտիկ ըրէ, ան դեռահաս է, անուն պիտի հանէ :

— Ձեր անունը չկրնի որ արդէն մեծ համբաւ ստացած է : Ա՛Տ, քարեկամ, բարեկամ, դուք իբրև սիրող մը տունկ կը քաղէք :

— Օ՛ն, չարդողինք, սիրելիդ իմ փիլիսոփայ . ահա, տեսէք սա գեղեցիկ Բլանֆալօ Տնանֆուր* . ձեր Մ՛օնմօրանսին մէջ ունիք ասկէ :

— Յիրաւի ոչ, ըսաւ Ռուսօ զմայլելով . ՚ի զուր փնտուցի մինչև ցարդ, Դուրնֆօր** վկայ . յիրաւի շատ գեղեցիկ է :

— Ա՛Տ, ի՛նչ գեղեցիկ տնակ, ըսաւ ժիլպէր որ վերջապահէ յառաջապահի անցեր էր :

— Ժիլպէր անօթի է, պատասխանեց Պ. տը ժիւսիէօ :

— Ո՛Տ, պարոն, ներողութիւն կը խնդրեմ ձենէ . մինչև պատքաստուելիդ կը համբերեմ :

— Նաև կերակուրէն ետք տունկ քաղելու ելնելը լաւ արգեցուցութիւն չընէր մարտողութեան, մարդուս աչքը կը ծանրանայ, վրան թուլութիւն կու գայ . ուստի գեռ քանի մը վայրկեան ալ տունկ քաղենք, ըսաւ Ռուսօ . բայց ի՛նչ անուն ունի այդ տնակը :

*Տեսակ մը տունկ :

**Ժօզէֆ Բիդօն տը Դուրնֆօր անուանի տնկագետ մ՛է, ծնեալ յէքս 1656 թուականին եւ մեռեալ 1708ին : Տնկագիտութեան վերամորոգիչներէն մին է : Ծ. Բ.

— Ականատ է անունը , ըսաւ Պ. տը Ժիւսիէօ Պ. տը Սարդի-
նի հնարած անունը միտքն իյնալով :

— Ի՛նչ տարօրինակ անուն :

— Ո՛հ , գիտէք որ գիղերու մէջ այդպիսի մտացածին անուն-
ներ կը գտնեն :

— Որո՞ւ են այս երկիրը , այս անտառը , այս գեղեցիկ հովա-
նաւոր վայրերը :

— Շատ աղէկ չգիտեմ :

— Սակայն տէրն անշուշտ կը ճանչնաք , քանի որ ճաշելու կ'եր-
թաք , ըսաւ Ռուսօ ականջը տնկելով , կասկածելու սկսած ըլլալուն
պատճառաւ :

— Բնաւ . . . կամ մանաւանդ հոս ամենքն ալ կը ճանչնամ .
անտառին պահապանները որ հարիւր անգամ ձիս իրենց անտա-
ռակներուն մէջ տեսած են , և այնպէս գիտեն որ զիս բարեւելով ,
նապատակի խորտիկ մը կամ համեմալ կտցարի կտոր մը հրամայը-
նելով ինձ , իրենց տեարց հաճելի կ'ըլլան . դրացի հողատէրները
կը թողուն որ տանս պէս վարուիմ հոս : Շատ աղէկ չգիտեմ թէ
այս տնակը տիկին տը Միրքուաի՛նն է , տիկին տ'Էկմօնի՛նն է . . .
իրաւ որ մտքէս ելած է . . . : Բայց գլխաւոր կէտը սա է որ ,
սիրելի փիլիսոփաս , և կարծեմ թէ դուք ալ իմ կարծիքս ունիք ,
այսինքն հոն հաց , պտուղ և հաստեայ պիտի գտնենք :

Պ. տը Ժիւսիէօի խօսքերուն պարզամիտ եղանակէն Ռուսօի
ճակտին վրայ գիղուող ամպերը փարատեցան : Փիլիսոփան ոտները
թոթվեց , ձեռները շփեց , և նախ Պ. տը Ժիւսիէօ շաղիւն մէջ
մտաւ : որ շագանակներնե՛րուն ներքէն սողոսկելով փոքրիկ մենարանը
կ'առաջնորդէր :

Անոր ետէն եկաւ Ռուսօ , միշտ տունկ քաղելով :

Ժիլպէր որ իւր կայանը դարձեր էր , ետևուն կ'երթար , Ան-
տրէի և զան տեսնելու միջոցներուն վրայ մտախոհելով երբ
Գրիանօն երթար :





ՓԻԼԻՍՈՓՈՅԻՑ ԸՎԸՆԸՏԸ

Արեք տնկաքաղներուն դժուարաւ ելած քլրակին գագաթը կը բարձրանար դեղջկական փայտերով փոքր տնակ մը, ոստախիտ սիւներով, սրաւարտ պատերով, Գլէմադիդով (տեսակ մը տունկ) և բաղեղով ծածկուած պատուհաններով, որոնք Անդղիական Ճարտարապետութեան, ճշմարիտ ներարերութիւնն (importation) են, կամ մանաւանդ Անդղիացի պարտիզպանաց՝ որք բնութեան կը նմանցընեն, կամ աւելի լաւն ըսելու համար, իրենք իրենց բնութիւն մը կ'ստեղծեն, որով իրենց շինած կարասիներն ու բուսական գիւտերը կերպ մ'այլանդակութիւն կ'ստանան :

Անդղիացիք կապոյտ վարդը հնարած են, և իրենց ամենէն մեծ փառասիրութիւնն եղած է միշտ ամեն ընդունուած դաղափարներուն հակադրութիւնն (antithèse) ունենալ : Անշուշտ օր մ'ալ սև շուշան պիտի հնարեն :

Այն տնակը որ սեղան մը և վեց աթոռ պարունակելու չափ մեծութիւն ունէր՝ աղիւսով յատակուած էր : Այն աղիւսներուն վրայ փսիաթ փռուած էր : Իսկ պատերը շինուած էին դետեզրէն հաւաքուած կայծքարի փոքրիկ միւսիֆոններէ և անդր-Սէքանեան խեցիներէ . ինչու որ Պուժիվալի և Բօն-Մարլիի եզերաց վրայ ծովոզնի (oursin), Սէն-Ժաքի խեցի կամ ուրիշ պաղտակրայ և վարդագոյն խեցլինիը չեն տեսնուիր, այլ ասոնք փնտուելու է 'ի Հարֆլէօր, 'ի Տիէմ կամ Սէնդ-Ատրէսի եզերաց վրայ :

Չեղունը քանդակուած էր : Շոճի ինձորներ, տարօրինակ տեսքով արմեր որո՞ք վայրենի անասնոց ժանտատեսիլ կիսադէմները կը ներկայաւ ընէին՝ գոգցես այցելուներուն գլուխնուն վերևը կախուած էին . ասոնցմէ զատ գունաւոր ապակիներէ կը տեսնուէին, իրենց մանիչագոյն, կարմիր կամ կապոյտ գոյներուն համեմատ, մէկ կող-

մէն Վէզինէի դաշտավայրը կամ անտառը մրրկի մ'ատեն երկնից զգեցած գոյնով, միւս կողմէն գոգցես օգոստոսի արեւիմը հրատապ ջերմութեան ներքե շողշողուն, աւելի վերը պաղ և աղօտ՝ գոգցես զեկտեմբերի սառնամանեօք ծածկուած : Մարդ միայն ընտրել պէտք էր ապակին, այսինքն իւր ճաշակը, և նայիլ :

Այս տեսարանը շատ զբօսցոյց Ժիլպէրը, և ամեն շիզանկիւններէն դիտեց այն ճոխ հովիտը՝ որ Լիւսիէնի բլրակին բարձրէն աչաց առջև կը պարզի, և որուն մէջտեղէն Սէն գետը սողոսկելով կ'անցնի :

Սակայն, դէթ Պ. տը Ժիւսիէօի կարծեացը նայելով, ուրիշ բաւական կարևոր տեսարան մ'էր տնակին մէջտեղը կոսմոս փայտէ սեղանի մը վրայ պատրաստուած գեղեցիկ նախաճաշը :

Մարլիի ընտիր սերը, Լիւսիէնի գեղեցիկ ծիրաններն ու սալորները, Նանդէրի խորտիկներն ու երշիկները որոնք յախճապակիայ պնակի մը վրայ ծուխ կ'արձակէին՝ առանց զանոնք բերող միայն մէկ ծառայ տեսնուելու. որթի տերեւներով պատած գեղեցիկ սակառի մը մէջ գեղածիծաղ տեսքով ելակները, և, ակնախտիղ թարմութեամբ կարագի մը քով, գեղջկական խոշոր թուխ հացը և մանրած ձաւարի ոսկեգոյն հացը՝ որոնք քաղքի բնակչաց տկար ստամոքսներուն խիստ ախորժելի են. ահա Ռուսօ ասոնք տեսնելով զարմացման փոքրիկ ճիչ մ'արձակեց, թէպէտ փիլիսոփայ՝ սակայն պարզամիտ որովայնասէր, ինչու որ որքան պարզ ճաշակ ալ ունէր՝ այնքան ալ ախորժակը սաստիկ էր :

— Ինչ յիմարութիւն, ըսաւ Պ. տը Ժիւսիէօի, հաց և պտուղ, ահա ասոնք էին մեզի պէտք եղածները, և ասկէ զատ, իբրև ճշմարիտ սնկաքաղներ և աշխատասէր խուզարկուներ պէտք էինք հաց ուտել և սալորներն ատամացել՝ առանց թաւուտներուն մէջ որոնելէ և փոսերը պեղելէ գադրելու : Ար յիշե՛ս, Ժիլպէր, Բլէսիս-Բիքէի նախաճաշ, քու նախաճաշը :

— Այո՛, պարոն, այն հացը և կեռասները որ ինձ այնքան համեղ երևցան :

— Ստուգիւ :

— Քաջ է. ահա այնպէս կը նախաճաշեն բնութեան ճշմարիտ սիրահարները :

Generated on 2016-09-07 07:13 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Սիրելի վարպետս , ընդմիջեց Պ. տը ժիւսիէօ , եթէ զեղխու-
թանս համար զիս կը մեղադրես՝ իրաւունք չունիս , երբէք աւելի
պարզ ճաշ մը . . . :

— Ո՛հ , գոչեց փիլիսոփան , դուք ձեր սեղանը կը տփզնէք , Լու-
կուլլոս իշխան :

— Իմ սեղանս , բնաւ , ըսաւ ժիւսիէօ :

— Որո՞նք տունն ենք ուրեմն , կրկնեց Ռուսօ այնպիսի ժպիտով
մը՝ որ թէ իւր բռնազրօսութիւնը և թէ զուարթամտութիւնը կը
յայտնէր , խպլիկներո՞ւ տուն ենք :

— Կամ պայերու տուն , ըսաւ Պ. տը ժիւսիէօ ոտք ելնելով և
տնակին դրանը կողմը մոլոր նայուածք մ'արձակելով :

— Պայերո՞ւ , գոչեց Ռուսօ ուրախութեամբ . օրհնեալ ըլլան
ուրեմն իրենց ասպնջականութեանն համար : Անօթի եմ , ուտենք ,
ժիլպէր :

Եւ թուիս հացէն բաւական մեծկակ շերտ մը կտրելով՝ հացն ու
դանակը աշակերտին տուաւ :

Ապա հացին հօծ միջուկէն խածնելով՝ պնակին մէջէն զոյգ մը
սալոր առաւ :

Ժիլպէր կը վարանէր :

— Կեր նայինք , կեր նայինք , ըսաւ Ռուսօ . կարելի է որ այդ
զգուշաւոր կերպովդ պայերը կը վշտացընես , և կը կարծեն թէ ան-
կատար կը թուի քեզ իրենց խնջոյքը :

— Կամ ձեզի անարժան , պարոնայք , ըսաւ յստակ ձայն մը տնա-
կին դրանը մէջէն՝ ուր թե առ թե տուած տեսնուեցան երկու նորա-
տի և գեղանի կիներ՝ որ ժպիտ 'ի շրթունս նշան կ'ընէին Պ. տը
ժիւսիէօի որ բարեկեցիկ չափաւորէ :

Ռուսօ ետեւը դարձաւ խածած հացը աջ ձեռքը և խածխած
սալորը ձախ ձեռքը բռնած . տեսաւ այն երկու դիցուհիները , կամ
անոնց դեռահասութեանը և գեղեցկութեանն համար այնպէս կար-
ծեց . տեսաւ զանոնք և յապուշ կրթած մնաց՝ բարեկեցիկ և դող-
դոջելով :

— Ո՛հ , աիկին կոմսուհի , ըսաւ Պ. տը ժիւսիէօ , դուք հո՞ն :
Ի՛նչ սիրուն յանկարծական դալուստ :

Generated on 2016-09-07 07:13 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Բարի լոյս , սիրելի սնկաղէտ , ըսաւ երկու կանանցմէ մին ար-
քայավայել ընտանութեամբ մը և շորհով մը :

— Հրաման տուէք որ ձեզի ներկայացընեմ Պ. Ռուսօն , ըսաւ
Ժիլպէրօ փիլիսոփային սև հացը բռնած ձեռքէն բռնելով :

Ժիլպէր , ինքն ալ , այն երկու կանայքը տեսեր և ճանչցեր էր .
ուստի աչերը մեծ մեծ բացած և մահու նման տժգոյն՝ տնակին
պատուհանին կը նայէր հոնկէ վար նետուելու մտօք :

— Բարի լոյս , փոքրիկ փիլիսոփաս , ըսաւ միւս կինը չքացած
Ժիլպէրին , վարդագոյն երեք մատերովը փոքրիկ աստակ մ'իջեցը-
նելով անոր այտին :

Ռուսօ տեսաւ և լսեց . բարկութենէն քիչ մնաց պիտի խեղդուէր .
իւր աշակերտը այն երկու դիցուհիները կը ճանչնար և անոնցմէ
ճանչցուած էր :

Ժիլպէր քիչ մնաց պիտի գէշնար :

— Չէք ճանչնար ուրեմն տիկին կոմսուհին , ըսաւ Ժիլպէրօ Ռու-
սօին :

— Ոչ , ըսաւ սա ապուշ դէմքով մը . կարծեմ առաջին ան-
գամն է որ կը տեսնեմ :

— Տիկին Տիւպարի , յարեց Ժիլպէրօ :

Ռուսօ ոստեց գողցես կարմրած երկաթի մը վրայ կոխածի պէս :

— Տիկին Տիւպարի , գոչեց :

— Նոյն ինքն ես , պարոն , ըսաւ նորատի կինը իւր բոլոր պեր-
ճութեամբը . . . ես որ կարի երջանիկ եմ իմ տունս ընդունելով
և 'ի մօտոյ տեսնելով ժամանակիս ամենէն ականաւոր խորհողներէն
մին :

— Տիկին Տիւպարի , կրկնեց Ռուսօ առանց դիտելու որ իւր զար-
մանքը կ'սկսէր ծանր թշնամանք մ'ըլլալ . . . : Նէ , և անշուշտ
այս տնակը անորն է , անշուշտ նէ է այս նախաձաշն ինձ տուողը :

— Գուշակածնիդ պէս է , սիրելի փիլիսոփաս , նէ և իւր քոյրն
է , շարայարեց Ժիլպէրօ այս մրրկաբեր տարերաց առջև վրդովե-
լով :

— Իւր քոյրը որ Ժիլպէրը կը ճանչնայ :

— Մտերմաբար , պարոն , պատասխանեց օրիորդ . Հօն այն յան-

դգնութեամբ որ ոչ թագաւորին սրանեղուծիւնը և ոչ փիլիսոփայնե-
րուն խանդը բանի տեղ կը դնէր :

Ժիլպէր աչքովը բաւական մեծկակ ծակ մը փնտուեց մէջը մտնե-
լու անյայտ ըլլալու համար , ինչու որ Պ. Ռուսօի աչերը սոսկալի-
կերպով կը փայլէին :

— Մտերմարձ . . . կրկնեց այս վերջինը . Ժիլպէր մտերմա-
բար կը ճանչնար տիկինը , և ես տեղեկութիւն չունէի : Բայց մաս-
նուած էի ուրեմն , բայց զիս կը ծաղրէին ուրեմն :

Շօն և իւր քոյրը իրարու նայեցան ծիծաղելով :

Ժիլպէր ձեռներն իրար կցեց , թէ օրիորդ Շօնն աղերսելու հա-
մար որ լուէ , և թէ Ռուսօն թախանձելու համար որ աւելի շնոր-
հիւ խօսի իրեն :

Բայց ընդհակառակը , Ռուսօ լռեց և Շօն խօսեցաւ :

— Այո , ըսաւ , Ժիլպէր և ես հին բարեկամներ ենք . ինձ հիւր
եղած է , այնպէս չէ , պզտիկ . . . : Ի՛նչ ալ շուտ ապերախտ
կը գտնուիս Լիւսիէնի և Վէրսայլի անուշներուն :

Այս խօսքը յետին հարուածը տուաւ . Ռուսօի թեւերը զսպա-
նակներու նման երկնցան և քոփն ՚ի վար ընկան :

— Ա՛հ , ա՛հ , ըրաւ ծուռ ծուռ պատանիին նայելով , այսպէս
է , պզտիկ թշուառական :

— Պարոն Ռուսօ . . . մըմնաց Ժիլպէր :

— Է՛հ , բայց կարծես թէ երեսդ շոյելուս համար կու լաս , շա-
րայարեց Շօն : Մտքէս կ'անցնէր որ դու ապերախտ մ'ես :

— Օրի՛որդ . . . աղերսեց Ժիլպէր :

— Պզտիկ , ըսաւ տիկին Տիւպարի , Լիւսիէն եկուր վերտին , ա-
նուշեղէններն ու Ջամօր քեզի կ'սպասին . . . , և թէպէտ տարօ-
րինակ եղանակաւ մը հոնկէ ելար՝ սակայն լաւ ընդունելութիւն կը
գտնես հոն :

— Շնորհակալ եմ , տիկին , ըսաւ Ժիլպէր ցամաք կերպով .
երբ տեղէ մը կը մեկնիմ , պատճառն այն է որ հոն ինձ հաճելի չէ :

— Եւ ինչո՞ւ կը մերժես քեզի ընծայած բարիքնին , ընդմիջեց
Ռուսօ կծու կերպով : Գու հարստութեան համն առիր , սիրելի
Ժիլպէրս , կրկին պէտք է ստանաս զայն :

- Բայց , պարոն , քանի որ կ'երդնում . . . :
- Աորիւր , կորիւր , ես երկխօս մարդիկը չեմ սիրեր :
- Բայց զիս մտիկ չըրիք , պարոն Ռուսօ :
- Ինչո՞ւ չէ :
- Բայց ես խոյս տուի Լիւսիէնէ ուր զիս փակած էին :
- Դարան : Ես մարդոց նենդութիւնը կը ճանչնամ :
- Բայց քանի որ ձեզ նախամեծար սեպեցի , քանի որ ձեզ իրրև ասպնջական , պաշտպան , տէր ընդունեցի :
- Ահդժաւորութիւն :
- Սակայն , պարոն Ռուսօ , եթէ ես հարստութեան տենչայի՛ սոյն տիկնանց առաջարկութիւնը պիտի ընդունէի :
- Պարոն Ժիլպէր , ես մէկ անգամ կը խաբուիմ , Երկու անգամ բնաւ . ազատ ես . գնա ուր որ կ'ուզես :
- Բայց ո՞ւր , Աստուած իմ , գոչեց Ժիլպէր վշտաբեկ . ըստ որում բոլորովին կորսուած կը տեսնէր իւր պատուհանը , Անտրէի գրացութիւնը , և բոլոր իւր սէրը . . . ըստ որում հպարտ ըլլալով սաստիկ կը վշտանար՝ իւր վրայ մատնութեան կասկած ըլլալուն համար . ըստ որում կը տեսնէր որ չէր ճանչցեր իւր անձնուրացութիւնը , իւր հասակին ծուլութեան և յօժարութեանց դէմ ունեցած երկարատև կռիւր՝ որուն մէջ ինքն յաղթող ելեր էր :
- Ո՞ւր , ըսաւ Ռուսօ : Բայց նախ տիկնոջ տունը որ գեղանի և ազնիւ մէկն է :
- Ո՛հ , Աստուած իմ , Աստուած իմ , գոչեց Ժիլպէր ձեռները գլխուն մէջ թաւալելով :
- Մի վախնար , ըսաւ անոր Պ. տը Ժիւսիէօ , իրրև աշխարհային մարդ , Ռուսօի տիկնանց դէմ գործածած կշտամբանքէն սաստիկ վիրաւորուելով , մի վախնար . քեզի խնամք կը տանին , և կորուսածիդ տեղը լեցրնելու կը ջանան :
- Ար տեսնես , ըսաւ Ռուսօ կծու եղանակաւ մը , ահա Պ. տը Ժիւսիէօ , զիսնական մը , բնութեան բարեկամ մը , դաւակիյներէդ մին՝ յարեց ժպտելու ճգնելուն համար դէմքը ծումակելով , որ քեզի օգնութիւն և հարստութիւն կը խոստանայ , վստահացիր իրեն , Պ. տը Ժիւսիէօի թե՛ն երկայն է :

Այս խօսքին վրայ Ռուսօ ան ինքզինքին տէր չըլլալով, տիկիննե-
ները բարեւեց Օրօսմանի յիշատակներով, նոյնպէս ըրաւ սրտաթափ
Պ. տը Ժիւսիէօին. յետոյ առանց իսկ նայելու Ժիւլպէրին՝ անակէն
դուրս ելաւ եղերական կերպով:

— Ո՛հ, ի՛նչ ազեղ անասուն է փիլիսոփայ մը, ըսաւ Շօն հան-
դարտօրէն Ժընէվացւոյն նայելով որ շաւղէն կը դարահասակը՝ քան
թէ կ'իջնէր:

— Ինդրէ ուզածդ, ըսաւ Ժիւսիէօ Ժիւլպէրին՝ որ միշտ երեսը
ձեռներուն մէջ պահէր էր:

— Այո՛, ինդրէ, պարոն Ժիւլպէր, յարեց կոմսուհին ժպիտ մը
ուղղելով լքեալ աշակերտին կողմը:

Սա տժգոյն գլուխը վեր առաւ, մէկդի ըրաւ մազերը որ քրտին-
քէն և արսասուքէն ճակտին փակեր էին, և հաստատուն ձայնով
մը,

— Քանի որ ինձ պաշտօն մը տալ կ'ուզեն, ըսաւ, կը բաղձամ
Դրիանօն մտնել իբրև օգնական պարտիզպանի:

Շօն և կոմսուհին իրարու նայեցան, և Շօն իւր յամառ ոտ-
քովը քրոջը ոտքին դպաւ յաղթական ակնթարթով մը. կոմսուհին
գլխովը նշան ըրաւ որ լիովին կը հասկընար:

— Կրնայ ըլլալ, Պ. տը Ժիւսիէօ, հարցուց կոմսուհին: Այն-
պէս կը բաղձամ:

— Քանի որ այնպէս կը բաղձաք, տիկին, տատասխանեց Պ. տը
տը Ժիւսիէօ, եղած լմնցած է:

Ժիւլպէր խոնարհեցաւ և մէկ ձեռքը սրտին վրայ դրաւ որ ու-
րախութենէն կը զեղուր այնքան արտմութեան մէջ ընկղմելէն ետք:



ՀԷ

ԱՌԱԿ

Միսիէնի այն փոքրիկ սենեակը, ուր Ժան Տիւպարի դերկոմսը տեսանք, 'ի տհաճութիւն կոմսուհւոյն այնքան առատօրէն շօգօլադ խմելը, Պ. ար Ռիշլիէօ մարաջախտը տիկին Տիւպարիի հետ կը նախընթեր, որ Չամօրին ականջները քաշքշելով գամ քան զգամ անփութօրէն կը տարածուէր ծաղկօք նկարակիտեալ սաղէնէ բազմոցի մը վրայ, մինչդեռ ծեր քծնին զարմացական քաբէներ կ'արձակէր ամեն անգամ որ նոր դիրք մը կ'առանար այն հրապուրիչ արարածը :

— Ո՛հ, կոմսուհի, կ'ըսէր պառաւ կնոջ մը նման հպտելով, հիմա գլխադիրդ պիտի հանես. կոմսուհի, կրծանոցդ կը բացուի : Ա՛հ, շղուականդ կ'իյնայ, կոմսուհի :

— Բա՛, սիրելի դուքս, ուշադրութիւն մի ըներ անոնց, ըսաւ կոմսուհին Չամօրի գլխէն պտեղ մը մազ խլելով զբօսնելու համար և բոլորովին ընկողմանելով, իւր բազմոցին վրայ աւելի հեշտաւեսիլ և գեղանի՝ քան Աստղիկ իւր ծովային կոնքին վրայ :

Չամօր որ անզգայ էր կոմսուհւոյն այն զանազան դրից՝ բարկութենէն մոնչեց : Կոմսուհին զան հանդարտեցընել ուզելով սեղանին վրայէն ափ մը շաքարանուշ (dragée) առաւ և անոր գրգանները լցուց :

Բայց Չամօր դէմքը ծռելով գրգանները դուրս քաշեց և շաքարանուշերը տախտակամածին վրայ պարպեց :

— Ա՛հ, փոքրիկ սասհակ, շարայարեց կոմսուհին իւր նուրբ արուները երկնցընելով՝ որուն ծայրը գնաց դպաւ խափշիկին մտածին սոնապաններուն :

— Ո՛հ, շնորհ, գոչեց ծեր մարաջախտը, յիրաւի պիտի սպաննես զան :

— Ինչո՞ւ բոլոր ինձ անհաճոյ եղողները չեմ կրնար սպաննել այսօր, ըսաւ կոմսուհին, այսօր շատ անգութ եմ :

— Ա՛՛հ, բայց անհաճոյ եմ ուրեմն քեզ :

— Ո՛՛հ, ոչ, դու ոչ, ընդհակառակը դու իմ հին բարեկամս ես, և քեզ կը պաշտեմ. բայց յիրաւի, կը տեսնե՞ս, յիմար եմ ես :

— Ուրեմն հիւանդութիւն մը տուած են քեզ անոնք զորս յիմար կ'ընես :

— Ջգուշացի՛ր, սոսկալի կերպով զիս կը զրգուես քծինքովդ ուրուն մէկ բառին վրայ անպամ չես մտածեր :

— Կոմսուհի, կոմսուհի, կ'սկսիմ կարծելու որ չէ թէ յիմար՝ այլ ապերախտ ես :

— Ո՛՛չ, ես ոչ յիմար եմ և ոչ ապերախտ, այլ . . . :

— Լաւ, ըսէ նայինք ուրեմն ի՞նչ ես :

— Բարկացած եմ, պարոն դուքս :

— Ա՛՛հ, իրա՞ն :

— Կը զարմանամ :

— Բնաւ, կոմսուհի, և պատուոյս վրայ կ'երդնում որ բարկանալու ալ իրաւունք ունիս :

— Տես, ահա ասոր համար քեզի կը զայրանամ, մարաջախտ :

— Բանի մը համար ինձ կը զայրանամ, կոմսուհի :

— Այո՛ :

— Եւ ի՞նչ է այն բանը, կ'աղաչեմ : Շատ ծեր եմ, սակայն ամեն ջանք պիտի ընեմ ձեզի հաճելի ըլլալու համար :

— Այն բանը սա է որ բարկութեանս պատճառը չպիտես, մարաջախտ :

— Ո՛՛հ, ինչո՞ւ չէ :

— Գիտե՞ս զիս տանջող պատճառը .

— Անշուշտ . Ջամօր Զինական աղբիւրը կոտրեց :

Աննշմարելի ժպիտ մը նորատի կնոջ շրթանցը վրայ նկարուեցաւ . բայց Ջամօր որ իւր յանցաւոր ըլլալը կ'զգար՝ խոնարհութեամբ գլուխը ծռեց, այնպէս որ կարծես թէ երկնից երեսը ապտակներով և մատի հարուածներով ծածկուած ըլլար :

— Այո՛, ըսաւ կոմսուհին հառաչով մը, այո, դուքս, իրա-

ւունք ունիս . այնպէս է , և յիրաւի դու կարի նրբամիտ քաղաքագէտ մ'ես :

— Միշտ այսպէս ըսած են ինձ , տիկին , պատասխանեց Պ . տը Ռիշլիէօ համեստ կերպարանքով մը :

— Ո՛հ , ինձ ըսելնուն պէտք չունիմ տեսնելու համար , դուքս . և դու իմ տաղտուկիս պատճառը այսպէս գտար , անմիջապէս , առանց ոչ աջի կամ ձախդ փնտուելու . սքանչելի՛ է :

— Լիովին . սակայն ամենն այս չէ :

— Ա՛հ , իրա՛ւ :

— Ոչ : Տակաւին ուրիշ բան ալ կը գուշակեմ :

— Իրա՛ւ :

— Այո՛ :

— Ի՞նչ կը գուշակես :

— Կը գուշակեմ թէ երէկ իրիկուն Նորին Աւհափառութեան կ'սպասէիր :

— Ո՛ւր :

— Հոս :

— Լա՛ւ , ետքը :

— Եւ թէ Նորին Աւհափառութիւնը չեկաւ :

— Ա՛հ , ա՛հ , ըրաւ կոմսուհին :

— Եւ սակայն , ըսաւ դուքսը , Բարիզէն կու գամ :

— Ի՞նչ կը հաստատուի անով :

— Անով կը հաստատուի թէ Աէրսայլ անցած դարձածը չէի կրնար գիտնալ : Եւ սակայն . . .

— Դուքս , սիրելի դուքս , այսօր ամեն բան լուծեամբ կ'անցնիս : Նզովից արմատ , երբ մարդ խօսք մը կ'սկսի կ'աւարտէ , կամ քնաւ չսկսիր :

— Դու ուզածիդ պէս կը խօսիս , կոմսուհի : Թոյլ տուր որ գէթ շունչ առնեմ վերստին : Ի՞նչ կ'ըսէի :

— Կ'ըսէիր . . . տակայն :

— Ա՛հ , այո՛ , ճիշդ է , և սակայն , ոչ միայն գիտեմ թէ Նորին Աւհափառութիւնը եկած չէ՝ այլ նաև կը գուշակեմ թէ ինչո՛ւ եկած չէ :

— Դուքս, շատ անգամ մտածած եմ ինքնին թէ կախարդ ես դու. միայն ապացոյց մը կը պակսէր ինձ :

— Լաւ, հիմա այն ապացոյցը կու տամ քեզ :

Կոմսուհին որ ցոյց տուածէն աւելի կարեորութիւն կու տար սոյն խօսակցութեան՝ թողուց Ջամօրի զլուխը՝ օրուն մազերը իւր սպիտակ և նուրբ մատներովը կը խառնակէր :

— Տուր, դուքս, սուր, ըսաւ :

— Պ, կառավարչին առջևը, ըսաւ դուքսը :

— Կորսուէ՛, Ջամօր, ըսաւ կոմսուհին խափշիկին որ ուրախութեանէն խենդ դարձած մէկ ոստումով ներքնասենեկէն նախասենեակը խոյացաւ :

— Քաջ է, մրմնջեց Ռիշլիէօ, բայց ամեն բան ըսելու է ուրեմն քեզի, կոմսուհի :

— Ի՛նչ, այն Ջամօր կապիկը քեզ կը նեղէր, դուքս :

— Ճշմարիտն ըսելու համար, կոմսուհի, միշտ մէկը զիս կը նեղէ :

— Այո՛, մէկը կը հասկընամ. բայց Ջամօր մէկն է :

— Ջամօր կոյր չէ, Ջամօր խուլ չէ, Ջամօր համր չէ. ուստի մէկն է : Ուստի ես այս անունը կու տամ անոր որ իմ հաւասարս է աչքով, ականջով և լեզուով, այսինքն նա որ ըրածս կրնայ տեսնել, լսել կամ կրկնել ըսածս, միով բանիւ նա որ կրնայ զիս մատնել : Այս վարդապետութենէն ետք՝ կը շարունակեմ :

— Այո՛, շարունակէ, դուքս, ինձ հաճոյք պիտի պատճառես :

— Չեմ կարծեր որ հաճոյք պատճառեմ, կոմսուհի. սակայն փոյթ չէ, պէտք է որ շարունակեմ : Ուստի թագաւորը երէկ Գրիանօն այցելութեան կ'երթար :

— Մեծ թէ փոքր Գրիանօնը :

— Փոքր Գրիանօնը : Տիկին արքայորդին թէն առեր էր :

— Ա՛հ :

— Եւ տիկին արքայորդին որ յանկուցիչ գեղ մ'ունի, ինչպէս որ գիտես . . . :

— Աւա՛ղ :

— Անոր այնքան փաղաքշանքներ կ'ուղղէր, որ նորին վեհա՛

Generated on 2016-09-07 07:31 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

փառութիւնը , որուն սիրտը ոսկեղէն է , չկրցաւ դիմանալ , այնպէս որ շրջագայութեան ընթրիքն յաջորդեց և ընթրեաց ալ յաջորդեցին անմեղ խաղերը : Միով բանիւ . . . :

— Միով բանիւ , ըսաւ տիկին Տիւպարի անհամբերութենէն աժգունած , միով բանիւ թագաւորը Լիւսիէն չեկաւ , այնպէս չէ՞ , այս ըսել կ'ուզէիր :

— Է՛հ , Աստուած իմ , այո՛ :

— Շատ պարզ բան է , Նորին Աւհափառութիւնը իւր բոլոր սիրածը հոն ունէր :

— Ա՛հ , բնաւ , և ամենեին շես մտածեր ըսածիդ վրայ . շատ շատ իրեն հաճելի եղածը պէտք էիր ըսել :

— Այդ աւելի գէշ է , դուքս , զգուշացիր . ընթրել , խօսակցիլ , խաղալ , ահա՛ բոլոր անոր պէտք եղածը : Եւ որո՞ւ հետ խաղաց :

— Պ. սը Շուազէօլին հետ :

Կոմսուհին զայրալիր շարժում մ'ըրաւ :

— Կ'ուզես որ անոր վրայ չխօսինք , կոմսուհի , կրկնեց Ռիշլիէօ :

— Ընդհակառակը , պարո՞ն , խօսինք անոր վրայ :

— Որքան քաջասիրտ այնքան ալ հանձարեղ ես , տիկին . ուստի եղջիւրներուն կողմէն դիմագրաւենք ցուլին՝ ինչպէս որ Սպանիացիք կ'ըսեն :

— Ահա առակ մը՝ որուն համար քեզ չպիտի ներէր տիկին սը Շուազէօլ , դուքս :

— Սակայն այս առակը անոր չյարմարիր : Ուստի կ'ըսէի , տիկին , թէ Պ. սը Շուազէօլն էր , քանի որ հարկ է անունը տալ , թուղթ , խաղացողը , և այնքան բաղդաւորութեամբ , այնքան յաջողակութեամբ . . .

— Որ շահեցա՞ւ :

— Ոչ , այլ կորսընցուց , և Նորին Աւհափառութիւնը հազար ոսկի շահեցաւ քէփէէն* , խաղ մը՝ որուն մէջ Նորին Աւհափառութիւնը կարի անձնասէր է՝ շատ գէշ խաղալուն համար :

*Թղթի տեսակ մը խաղ :

Ծ . Թ .

— Ո՛հ, այն Շուաղէօլը, այն Շուաղէօլը, մրմուսաց տիկին Տիւ-
պարի: Տիկին տը Արամօնն ալ հոն էր, այնպէս չէ:

— Այսինքն մեկնելու վրայ էր, կոմսուհի:

— Դքսուհին:

— Այո՛, կարծեմ թէ անմտութիւն է ըրածը:

— Ի՞նչպէս:

— Տեսնելով որ զինքը չեն հալածեր՝ երեսը կը կախէ. տես-
նելով որ զինքը չեն աքսորեր՝ ինքզինքը կ'աքսորէ:

— Ո՛ր:

— Գաւառ:

— Մեքենայելու կ'երթայ:

— Բն: Ուրիշ ի՞նչ ընելու պիտի երթար: Ուստի մեկնելու վրայ
ըլլալով բնականաբար ուզեր է մնաս բարով ըսել իշխանուհւոյն
որ բնականաբար զինքը շատ կը սիրէ: Ահա ասոր համար Գրիա-
նօն կը գտնուէր:

— Մեծ Գրիանօնը:

— Անշուշտ, փոքր Գրիանօնը տակաւին կահուած չէ:

— Ա՛հ, տիկին արքայորդին բոլոր այն Շուաղէօլեանները շուրջն
հաւաքելով ցոյց կու տայ թէ ո՛ր կողմը պիտի բռնէ:

— Ո՛չ, կոմսուհի, ծայրայեղօրէն չզատենք. ինչու որ դքսուհին
ալ վաղը պիտի մեկնի:

— Եւ թագաւորը զուարճացաւ իմ չզտնուած տեղս, գոչեց կոմ-
սուհին այնպիսի ցասմամբ մը՝ որ ազատ չէր կերպ մ'արհաւիրքէ:

— Աստուած իմ. անհաւատալի է այս՝ սակայն այսպէս է, կոմ-
սուհի: Տեսնենք, ի՞նչ կը հետևեցնես ադկէ:

— Թէ լաւ տեղեկութիւն առերես, դուքս:

— Ամենն այսչափ:

— Ոչ:

— Աւարտէ ուրեմն:

— Կը հետևեցնեմ նաև թէ կամայ կամ բռնի պէտք է թագա-
ւորը խլել այն Շուաղէօլեաններուն մագիլներէն, ապա թէ ոչ
կորսուած ենք:

— Աւա՛ղ:

- Կը ներես , կրկնեց կոմսուհին , մենք ըսի՝ սակայն դու հանգիստ եղիր , դուքս , այդ միայն մեր ընտանեաց կը վերաբերի :
- Նաև բարեկամաց , կոմսուհի . ներէ ինձ ուրիմն որ այս ա՛նուամբ ես ալ իմ մասս ունենամ : Ուստի . . .
- Ուստի , դու իմ բարեկամներէս ես :
- Կարծէի թէ այնպէս ըլլալն ըսած եմ , տիկին :
- Այնչափը չքաւեր :
- Կարծէի թէ այնպէս ըլլալն հաստատած եմ :
- Աւելի աղէկ , և պիտի օգնես ինձ :
- Բոլոր զօրութեամբս , կոմսուհի . բայց . . .
- Բայց ի՞նչ :
- Գործը դժուարին է , այն ալ բնաւ չեմ ծածկեր քեզնէ :
- Ուստի բոլորովին անկարելի է արմատախիլ ընել այն Շուազէօլեանները :
- Իմ կարծիքս սա է որ , գէթ հաստատուն կերպով տնկուած են անոնք :
- Այնպէս կը կարծես , դու :
- Այնպէս կը կարծեմ :
- Ուստի , ինչոր ալ կ'ըսէ այն բարեմիտ լա Ֆօնդէնը , այս կաղնիին դէմ հով , մրրիկ չե՛նք :
- Մեծ հանճարի տէր է այս պաշտօնեայն :
- Լա՛ն , դու , ալ կ'սկսիս համադիտականներուն պէս խօսիլ :
- Ես ալ Ակադէմիային մէջ չեմ :
- Ո՛հ , գրեթէ ոչ , դուքս :
- Ճշմարիտ է , և դու իրաւունք ունիս . քարտուղարս է և ոչ ես : Բայց այսու հանդերձ դարձեալ իմ կարծիքս կը պնդեմ :
- Թէ Պ . տը Շուազէօլ հանճարի տէր մէկն է :
- Է՛հ , այո՛ :
- Բայց ի՞նչ բանի մէջ կը փայլի այդ մեծ հանճարը , տեսնենք :
- Այն բանին մէջ , տիկին , որ ժողովներուն և Անգղիացոց այնպիսի գործի մը կերպարանք տուած է՝ որ թագաւորը չկրնար անորմէ անցնիլ :

— Ժողովները , բայց զանոնք Նորին Աւհափառութեան դէմ կը գրդուէ :

— Անշուշտ , և ահա ճարտարութիւնն ալ հոն է :

— Անգղիացիք , զանոնք պատերազմի կը մղէ :

— Ճիշդ , խաղաղութիւնը զինքը պիտի կորսնցընէր :

— Այս հանձար չէ , դուքս :

— Ինչ է ուրեմն , կոմսուհի :

— Ծայրագոյն մատնութիւն :

— Երբ ծայրագոյն մատնութիւնը կը յաջողի , կոմսուհի , կարծեմ թէ հանձար է այն , և լաւագոյն հանձար :

— Բայց այդ հաշուով , դուքս , ես ալ մէկը կը ճանչնամ որ Պ. տը Շուաղէօլին չափ ճարտար է :

— Բա՛ն :

— Գէթ ժողովներուն նկատմամբ :

— Գլխաւոր գործն այն է :

— Ըստ որում այն մարդն է պատճառ ժողովներուն ապստամբութեանը :

— Զիս կը շփոթես , կոմսուհի :

— Չե՛ս ճանչնար դան , դուքս ,

— Յիրաւի ոչ ,

— Սակայն քու ընտանիքէդ է ,

— Հանձարաւոր մարդ մը կայ ընտանեացս մէջ : Արգեօք խօսքդ կարդինալ-դքսին , հօրեղբօրս համար է , տիկին :

— Ոչ , տ'էկիւիյլօն դքսին , եղբորորդւոյդ համար է խօսքս :

— Ա՛հ , Պ. տ'էկիւիյլօն , ճշմարիտ է , նա որ Շալօղէի գործը քալեցուց : Իրաւ որ դեղեցիկ տղայ մ'է , այո՛ , այո՛ , յիրաւի : Գժուարին պործ մը կատարեց անով : Տես , կոմսուհի , պատուոյս վրայ կ'երդնում , ահա այնպիսի մարդ մը՝ զոր իրեն գրաւելու է հանձարեղ կին մը :

— Ինչ կ'ըսես որ , դուքս , եղբորորդիդ չեմ ճանչնար , ըսաւ կոմսուհին :

— Իրաւ , տիկին , չե՛ս ճանչնար զինքը :

— Ո՛չ , երբէք զինքը քեսած չեմ :

— Խեղճ տղայ , արդարև քու գահակալութենէդ 'ի վեր միշտ Բրիտանիոյ խորն ապրեցաւ : Քեզ տեսնելու ատենն զգուշացիր , ինչու որ արև տեսնելու վարժուած չէ :

— Անոր պէս հանձարիդ և ազնուական ցիղէ մէկը ինչ կ'ընէ բոլոր այն սեւազգեստներուն մէջ :

— Չկարենալով ուրիշ բան մ'ընել՝ զանոնք կը յեղափոխէ : Ար հասկընամ , կոմսուհի , ամեն մարդ հաճոյք մը կրնայ դանել իւր ուզած բանէն , և Բրիտանիոյ մէջ ալ շատ հաճոյք չդանուիր : Ա՛հ , ահա գործունեայ մարդ մը . շուտիկ , թաղաւորը ինչ ծառայ մը պիտի ունենար՝ եթէ ուզէր : Ժողովներն իրենց ժպրհութիւնը չեն կրնար շարունակել անոր առջև : — Ա՛հ , ճշմարիտ Ռիչլիէօ է նա , կոմսուհի . ուստի ներեցէք . . .

— Ի՞նչ :

— Որ գալուն պէս քեզի ներկայացընեմ :

— Ուրեմն այդչափ շուտ պիտի գայ Բարիդ :

— Է՛հ , տիկին , ո՞վ դիտէ , թերևս հնգամայ միջոց մը դեռ իւր Բրիտանիան պիտի կենայ , ինչպէս որ այն շաղաշուտ Աօլդէրը կ'ըսէ . թերևս ճանբան է . թերևս երկու հարիւր փարսախ հեռի է . թերևս քաղաքին դուռն հասած է :

Եւ մարաջախտը այս ըրած վերջին խօսքին նորատի կնոջ դիմաց վրայ ըրած տպաւորութիւնը դիտեց :

Բայց , պահ մը մտախոհելէն ետք ,

— Սկսած կէտերնիս դառնանք :

— Ուր որ կ'ուզէք , կոմսուհի :

— Ո՛ւր էինք :

— Հոն էինք որ նորին Ա. հափառութիւնը շատ կ'ախորժի Դրիւանտէն և Պ. տը Շուազէօլի ընկերութենէն :

— Եւ կ'ըսէինք որ այն Շուազէօլը վար ձգենք , դուքս :

— Այսինքն կ'ըսէիր որ այն Շուազէօլը վար ձգես , կոմսուհի :

— Ի՛նչ , ըսաւ սիրեցեալը , այնչափ կը փափաքիմ՝ անոր անկմանը՝ որ կը մեռնիմ եթէ չիյնայ . քիչ մը չ'պիտի օգնես ինձ , սիրելի դուքս :

— Ո՛Տ, ո՛Տ, ըրաւ Ռիշլիէօ նազանքով, ա՛հա քաղաքագիտութեան մէջ ասոր խօսք բանալ կ'ըսեն :

— Ինչպէս որ կ'ուզես այնպէս հասկըցիր, ինչպէս որ կ'ուզես այնպէս կոչէ, բայց մեկին կերպով պատասխանէ :

— Ո՛Տ, այդ շատ տգեղ մակբայ մ'է այդքան զեղանի բերնի մը մէջ :

— Այդ պատասխան տալ կը կոչես, դուքս :

— Ճշդիւ ոչ. այլ պատասխանս պատրաստել կը կոչեմ :

— Պատրաստեցիր :

— Սպասէ :

— Կը վարանի՞ս, դուքս :

— Բնաւ :

— Լաւ ուրեմն մտիկ կ'ընեմ :

— Ի՞նչ կարծիք ունիս առականերուն վրայ, կոմսուհի :

— Թէ շատ հին են անոնք :

— Բա՛, արևն ալ հին է, և տեսնելու համար տակաւին անորմէ լաւագոյն բան մը չհնարեցինք :

— Շատ լաւ, թող առակով ըլլայ, բայց յստակ :

— Բիւրեղի նման :

— Օ՛ն :

— Ինչ մտիկ կ'ընէ՞ք, զեղանի տիկին :

— Մտիկ կ'ընեմ :

— Ենթադրէ թէ, կոմսուհի . . . գիտես որ առականերուն մէջ միշտ կ'ենթադրեն :

— Աստուած, որքան ձանձրալի ես, դուքս :

— Ըսածիդ վրայ բնաւ չես մտածեր, կոմսուհի, ըստ որում երբէք աւելի ուշադրութեամբ մտիկ ըրած չես :

— Այնպէս թող ըլլայ, ես իրաւունք չունիմ :

— Ենթադրէ ուրեմն որ Լիւսիէնի գեղեցիկ պարտիզիդ մէջ կը շրջիս, և չքնաղ սալոր մը կը տեսնես, այն բաւրջան սալորներէն մին՝ զոր դու շատ կը սիրես անոնց շառագոյն տեսքին համար՝ որ քոյինիդ կը նմանի :

— Շարունակէ, շողոքորթ :

— Կ'ըսեմ թէ այն սալորներէն մին ճիւղի մը ծայրը , ծառին առնէն բարձր կէտը կը տեսնես . այն աստե՛ն ինչ կ'ընես , կոմսուհի :

— Ինչ կ'ընեմ , հարկաւ ծառը կը ցնցեմ :

— Այո՛ , բայց ՚ի զուր , ըստ որում ծառը ստուար է , դիւրաւ չտապալիր՝ ինչպէս որ քիչ մ'առաջ ըսիր . և իսկոյն կը տեսնես որ առանց իսկ շարժելու այն ծառը , քու հիանալի թաթիկներդ անոր փեճեկէն կը ցտին : Այն աստե՛ն զլուխդ կը շրջաշրջես այն պաշտելի ձեռով որ միայն քեզի և ծաղկանց կը վերաբերի , և կ'ըսես , « Աստուած իմ , Աստուած իմ , որքան կը բաղձայի սոյն սալորը գետինը տեսնել » և կը զայրանաս :

— Այդ բնական է , դուքս :

— Արդարեւ ես ալ հակառակը չեմ պնդեր :

— Շարունակէ , սիրելի դուքս . առակդ անսահման կարևորութիւն ունի ինծի համար :

— Յանկարծ այնպէս դառնալու ատենդ , քու բարեկամդ տը Ռիչլիէօ դուքսը կը տեսնես որ կը շրջագայի խորհելով :

— Ինչ բանի վրայ :

— Այդ ալ հարցնելու բան է , անշուշտ քու վրայ . և քու պաշտելի սրնգանման ձայնովդ անոր կ'ըսես , « Ա՛՛հ , դուքս , դուքս : »

— Հատ լաւ :

— « Դու այր ես , զօրաւոր ես . դու Մահճօնն առած ես . քիչ մը սա սալորենին ցնցէ որ այն դիւազգեաց սալորն իյնայ : » Այնպէս չէ՞ , կոմսուհի , հէ՞ :

— Բայարձակապէս , դուքս . ես ցած ձայնով կ'ըսէի՝ իսկ դու բարձրաձայն . բայց ինչ պատասխան կու տայիր :

— Կը պատասխանէի . . . :

— Այո՛ :

— Կը պատասխանէի , « Ինչպէս ալ դիւրաւ կ'ըսես , կոմսուհի : Իմ ուզածս ալ այդ է , բայց նայէ , նայէ այս ծառն ինչպէս հաստատուն է , ճիւղերն ինչպէս փեճեկներով ծածկուած են . ես ալ իմ ձեռներուս պէտք ունիմ , նզովից արմատ , թէպէտ քոյիներէդ յիսուն տարու աւելի մեծ են : »

— Ա՛՛հ , ըրաւ կոմսուհին յանկարծ , լաւ , լաւ , կը հասկընամ :

- Աւրեմն դու շարունակէ առակը . այն ատեն ինչ կ'ըսես ինձ :
- Քեզի կ'ըսեմ :
- Սրնդանման ձայնովդ :
- Միշտ :
- Ըսէ , ըսէ :
- Քեզի կ'ըսեմ , «Իմ պզտիկ մարաջախտս , դադրէ անտարբերութեամբ նայելէ այս սալորին , որուն այնպէս նայելուդ պատճառն այն է որ քեզի համար չէ այն . ինձ հետ բաղձաանոր , սիրելի մարաջախտ . ինձ հետ տենչա անոր , և եթէ պէտք եղածին պէս ծառը ցնցես , և սալորը իյնայ , այն ատեն . . . »
- Այն ատեն :
- «Այն ատեն միասին կ'ուտենք զայն :»
- Քաջ է , ըսաւ կոմսը ձեռներն իրարու զարնելով :
- Այս այսպէս չէ :
- Իրաւ որ կոմսուհի , միայն դու կրնաս առակ մ'աւարտել : Եղջիւրներս վկայ , հանցուցեալ հօրս ըսածին պէս , ինչ վայելուչ կերպով հանգրիճուած է բոլոր այս ամենը :
- Ուստի պիտի ցնցես ծառը , դուքս :
- Երկու ձեռքով երեք սրտով , կոմսուհի :
- Եւ սալորը իրօք բամբշան սալո՞ր մ'է :
- Այդ մասին լիովին ապահովութիւն չկայ , կոմսուհի :
- Ի՞նչ է ուրեմն :
- Ինձ աւելի կը թուի թէ այն ծառին բարձրը եղածը թղթակալ մ'է :
- Ուրեմն այն թղթակալը երկուքնուս :
- Ո՛հ , ոչ , միայն ինձ : Այն սեկը մի նախանձիր ինձմէ , կոմսուհի . ծառը ցնցած ատենս այնքան աղուոր բաներ պիտի իյնան՝ որ ո՞րն ընտրելդ չպիտի գիտնաս :
- Լաւ ուրեմն , մարաջախտ , կարդադրուած գործ մ'է այս :
- Պ. տը Շուազէօլի պաշտօնը ինձ պիտի տրուի :
- Եթէ թագաւորը ուզէ :
- Թագաւորը չ՞ուզեր ինչ որ դու կ'ուզես :
- Կը տեսնես որ ոչ , քանի որ իւր Շուազէօլը ճանքել չուզեր :

— Ո՛հ , կը յուսամ որ թագաւորը պիտի բարեհաճի յիշել ի՛ր հին ընկերը :

— Զինուց :

— Այո՛ , զինուց . ամենէն ծանր վտանգները միշտ պատերազմի մէջ չեն գտնուիր , կոմսուհի :

— Տ՛եկիւյլօն դժբօն համար բան մը չե՞ս ուզեր :

— Յիրաւի ոչ . այն չարը ինք զիտէ ուզելուն կերպը :

— Ասկէ զատ դու ալ հոն պիտի գտնուիս : Հիմա կարգը իմն է :

— Ի՞նչ ընելու կարգդ :

— Ուզելու :

— Ճիշդ է :

— Ի՞նչ պիտի տաս ինձ :

— Ուզածդ :

— Ամեն բան կ'ուզեմ :

— Այդ իրաւացի է :

— Եւ պիտի ունենամ :

— Այդ ալ հարցընելու բան է : Բայց զէթ զո՛հ պիտի ըլլան ,
և ուրիշ բան չ'պիտի ուզես :

— Ուրիշ բան մ'ալ պիտի ուզեմ :

— Ըսէ :

— Պ . տը Գավէրնէյը կը ճանչնաս :

— Քառասուն տարուան բարեկամն է :

— Տղայ մ'ունի :

— Աղջիկ մ'ալ :

— Ճիշդ :

— Ետքը՞ :

— Այսչափ :

— Ի՞նչպէս , այսչափ :

— Այո՛ , այն քենէ ուզելիք մէկ բանս ալ տեղին և ժամանա-
կին պիտի ուզեմ քենէ :

— Աքանջելի է :

— Միաբանած ենք ուրեմն , դուքս :

— Այո՛ , կոմսուհի :

- Խոստումն անկեղծութեամբ սրուած է :
- Աւելի լաւ կերպով, երգմամբ :
- Ուրեմն տապալէ ինձ այն ծառը :
- Միջոցներ ունիմ անոր համար :
- Որո՞նք են :
- Եղբորորդիս :
- Ետքը :
- Ճիզվիթները :
- Ա՛հ, ա՛հ :
- Ամենքն 'ի միասին հաճոյական փոքրիկ յատակաղիծ մը՝ զոր կազմեր էի ամեն դիպուածի համար :
- Ի՛նչ ըլլալը գիտնալ կարելի՞ է :
- Բարէ՛, կոմսուհի :
- Այո՛, այո՛, իրաւունք ունիս :
- Գիտես, գաղտնիքը . . .
- Յաջողութեան կէտն ըսել է, մտածածդ ես կ'աւարտեմ :
- Քանի՛ պաշտելի ես :
- Բայց ես ալ կ'ուզեմ իմ կողմէս ծառը ցնցել :
- Շատ լաւ, ցնցէ, կոմսուհի, ցնցէ, ատկէ չարիք չծաղիր :
- Ես ալ իմ միջոցս ունիմ :
- Կը կարծես որ լաւ միջոց մ'է :
- Ինձ վճարած են անոր համար :
- Ո՞րն է այն միջոցը :
- Ա՛հ, պիտի տեսնես, դուքս, կամ մանաւանդ . . .
- Ի՞նչ :
- Ոչ, չսիտի տեսնես :

Եւ այն դեղանի բերնին միայն յատուկ եղած ազնուութեամբ մը արտասանուած այս խօսքին վրայ, յարազուարթ կոմսուհին, գոգցես խելքը գլուխը գալով, արագօրէն վար ըրաւ շրջազգեստին սաղէնէ ալիքները, որ դեսպանագիտական խանդին աստն ծովուն մակընթացութեան նման շարժում մ'ըրած էր :

Դուքսը որ ծովային արհեստին քիչ շատ հմուտ էր, և հետեւաբար Ովկիանու կամածին հաճոյիցը վարժուած՝ քրքջեց, կոմսու-

հոյն ձեռներն համբուրեց , և գուշակեց , նա որ այնքան լաւ կը գուշակէր , թէ ունկնդրութիւնն տւարտած էր :

— Երբ պիտի սկսիս ծառը տապալելու , դուքս , հարցուց կոմսուհին :

-- Վաղը : Իսկ դու , երբ պիտի սկսիս :

Նոյն միջոցին գաւթին մէջ կառքերու ժխոր մը և գրեթէ անմիջապէս կեցցէ Արայն աղաղակները լսուեցան :

— Ես , ըսաւ կոմսուհին պատուհանէն նայելով , ես հիմա պիտի սկսիմ :

— Քաջ է :

— Փոքր սանդուխէն անցիր , դուքս , և գաւթն սպասէ ինձ : Ժամէ մը պատասխանս կ'առնես :



ՀԸ

ՎԵՀՇՓԱԹ ԼՈՒԻ ՓԵՒՆ , ԱԹ Ի ՉԳՈՅԷ ԼԱԽԳՈՒՆԻՆ՝ ԳՏԸԹՈՎԸ ԳՈՏ ԵՂԱԾԸ

Լուի Փե. թագաւորը այնքան թոյլ չէր որ կարելի ըլլար ամեն օր քաղաքագիտութեան վրայ խօսիլ իրեն հետ :

Արդարեւ , քաղաքագիտութիւնը շատ կը ձանձրացընէր զինքը , և իւր դէշ օրերուն մէջ , սա փաստով խոյս կուտար անկէ , որուն պատասխան չէր մնար ,

— Բա՛ , անտարակոյս մեքենան ալ ինծի չափ պիտի տւէ :

Պարագան նպաստաւոր եղած ատեն օգուտ կը քաղէին . սակայն խիստ քիչ անգամ կը պատահէր որ իշխանը իւր զուարթ մէկ վայրկենին մէջ կորուսածը իսկոյն ձեռք չձգէր :

Տիկին Տիւպարի ի՞ծր թագաւորը այնքան լաւ կը ճանչնար որ ,

Generated on 2016-09-07 07:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իրենց ծովը ճանչցող ձկնորսներուն նման, բնաւ ճանբայ չէր ելներ դէշ օդի. ատեն :

Արդ, թագաւորը զինքը տեսնելու համար Լիւսիէն եկած վայրկեանը կարելի եղածին չափ լաւագոյն վայրկեաններէն մին էր : — Նախընթաց օրը թագաւորը անիրաւ վարուեր էր, կանխաւ գիտէր որ իրեն պիտի սրդողէին . — Անշուշտ զիւրաւ պիտի յաղթուէր :

Սակայն որքան վստահ ալ ըլլայ որսը որուն մէկ պատեհ աւթին կ'սպասէ մարդ՝ պէտք է միշտ կասկածիլ այն կերպ մը բնազգու-մէն որ միշտ անոր ներսը կայ : — Բայց այն բնազգումը 'ի դերեկե՛նէ՛ եթէ որսորդը վարուելուն կերպը գիտէ :

Ահա ինչպէս վարուեցաւ կոմսուհին թագաւորական որսին նկատմամբ՝ զոր իւր որոգայթը ձգել կ'ուզէր :

Կարծենք թէ արդէն ըսինք՝ խիստ վայելուչ գիշերուան զգեստ մը հագեր էր՝ նման Պուշէի գծազրած հովուհիներուն :

Միայն թէ կարմիր չէր քսուեր . Լուի Ժ. Ե. բնաւ չէր ախորժեր կարմիրէն :

Նորին Վեհափառութեան զալուստը ծանուցանելուն պէս՝ իւր կարմիր ներկին ամանին վազեց և սկսաւ կատաղութեամբ այտերը անով շփել :

Թագաւորը նախասենեկէն կոմսուհւոյն զբաղմունքը տեսաւ :

— Վա՛շ, ըսաւ ներս մտնելով . չարը ինքզինքը կը սնդուրէ :

— Ա՛հ, բարի լոյս, վեհափառ տէր, ըսաւ կոմսուհին առանց հայելիին առջևէն շարժելու և բրածն ընդմիջելու, այն ատենն իսկ որ թագաւորը անոր պարանոցն համբուրեց :

— Ինձ չէ՛իր սպասեր ուրեմն, կոմսուհի, հարցուց թագաւորը :

— Ինչո՞ւ կ'ընէք այդ հարցումը, վեհափառ տէր :

— Որովհետեւ երեսդ այդպէս կ'աղտեղես :

— Ընդհակառակը, վեհափառ տէր, ապահով էի որ Ձեր Վեհափառութիւնն անպատճառ սյսօր տեսնելու պատիւը պիտի ունենայի :

— Ա՛հ, ի՞նչպէս կ'ըսես այդ, կոմսուհի :

— Ա. յնպէս չէ՛ :

— Դու լուրջ կերպարանք մ'ունիս այսօր ինչպէս Ռուսօ իւր երաժշտութիւնը մտիկ ըրած ատեն :

Generated on 2016-09-07 07:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Ինչու որ արդարև , վեհափառ տէր , լուրջ ըսելիք մ'ունիմ
Ձեր վեհափառութեան :

— Ա՛՛հ , լա՛ւ , կը տեսնեմ որ կ'սկսիս , կոմսուհի :

— Իրա՛ւ :

— Այո՛ , յանդիմանութիւններ ընելու :

— Ե՛ս : Օն անդր , վեհափառ տէր . . . : Եւ ի՛նչ պատճառաւ , ըսէք կ'աղաչեմ :

— Երէկ չղալու համար :

— Ո՛հ , վեհափառ տէր , դուք պիտի խոստովանիք հարկաւ թէ
ես Ձեր վեհափառութիւնը դրաւելու պահանջումը չունիմ :

— Ժանէդ , կը վշտանաս :

— Ո՛հ , ոչ , վեհափառ տէր , բոլորովին վշտացած եմ :

— Մտիկ ըրէ , կոմսուհի , քեզ կը հաւաստեմ թէ երբէք չդադրեցայ քու վրադ մտածելէ :

— Բա՛ :

— Եւ սոյն երեկոյթը ինձ մշտնջենաւոր թուեցաւ :

— Բայց դարձեալ կ'ըսեմ , վեհափառ տէր , կարծեմ թէ անոր համար խօսք մ'ըրած չունիմ : Ձեր վեհափառութիւնը ուզած տեղը կ'անցընէ իւր երեկոյթները , այդ մէկու մը չվերաբերիր :

— Ընտանեօք , տիկին , ընտանեօք :

— Տեղեկութիւն անգամ առած չեմ , վեհափառ տէր :

— Ինչո՛ւ :

— Է՛հ , դուք պիտի խոստովանիք , վեհափառ տէր , թէ այդ անվայել բան մ'էր իմ մասիս :

— Բայց , գոչեց թագաւորը , եթէ ասոր համար ոխ չունիս ինձ , ուրեմն ի՛նչ բանի համար է ոխդ , ինչու որ քիչ շատ արդարութեամբ վարուելու է այս աշխարհիս մէջ :

— Ես ձեզի ոխ չունիմ , վեհափառ տէր :

— Սակայն , քանի որ վշտացած ես . . . :

— Այո՛ , վեհափառ տէր , վշտացած եմ . այդ ճշմարիտ է :

— Բայց ի՛նչ բանի համար :

— Փոքրագոյն չարիք մը նկատուելու համար :

— Գո՛ւ , Աստուած իմ :

— Ե՛ս , այո՛ ես , Տիւպարի կոմսուհին , գեղանի ծաննր , սիրուն ծանէղը , հրապուրիչ ծանրղօճնր , ինչպէս որ Ձեր Աեհափառութիւնը կ'ըսէ . այո՛ , ես փոքրագոյն շարիք մը կը նկատուիմ :

— Բայց ի՞նչ մասի :

— Սա մասին որ ես իմ թագաւորս , իմ սիրողս ունիմ , մինչդեռ տիկին տը Շուազէօլ և տիկին տը Արամօն չեն ուզեր :

— Ո՛հ , ո՛հ , կոմսուհի . . . :

— Յիրաւի , աւելի գէշ , ես սրտիս մէջինն յայտնի կ'ըսեմ : Տեսէք , վեհափառ տէր , կը հաւաստեն թէ տիկին տը Արամօն շատ անգամ ձեզ լրտեսած է ձեր ննջարանին դուռը : Ես , անուական դքսուհւոյն ըրածին հակառակը պիտի ընեմ . դուրսը պիտի լրտեսեմ , և ձեռքս իյնող առաջին Շուազէօլը կամ առաջին Արամօնը . . . : Աւելի գէշ , իրաւ որ :

— Կոմսուհի , կոմսուհի :

— Ի՞նչ ընեմ , ես գէշ մեծցած կին մ'եմ : Պէ՛զի տիրուհին եմ , գեղանի Պուրպօնուհին եմ , գիտէք :

— Կոմսուհի , Շուազէօլեանք վրէժ կը լուծեն :

— Ի՞նչ փոյթս է , կը բաւէ որ իմ լուծած վրէժիս վրէժը լուծեն :

— Քեզ պիտի այպանեն :

— Իրաւունք ունիք :

— Ա՛հ :

— Ես սքանչելի միջոց մ'ունիմ , և հիմա ՚ի գործ պիտի դնեմ զայն :

— Ո՞րն է այն , հարցուց թագաւորը մտայոյզ :

— Պարզապէս ելնել երթալ :

Թագաւորը ուտերը վեր ըրաւ :

— Ա՛հ , չէք հաւատար , վեհափառ տէր :

— Իրաւ որ ոչ :

— Պատճառն այն է որ տրամախոհելու ձանձրութիւնը յանձն առնել չէք ուզեր : Զիս այլոց հետ կը շփոթէք :

— Ի՞նչպէս :

— Անշուշտ : Տիկին տը Շադօրու դիցուհի ըլլալ կ'ուզէր . տի-

կին տը Բօմբատուր թագուհի ըլլալ կ'ուզէր, այլք կ'ուզէին հարուստ ըլլալ, զօրաւոր ըլլալ, իրենց ստացած շնորհին ծանրութեամբը արքունեաց կանայքը նուաստացընել: Ես այդ թերութիւններէն մին չունիմ:

— Ճշմարիտ է:

— Մինչդեռ խել մը բարեմասնութիւններ ունիմ:

— Այդ ալ ճշմարիտ է:

— Ձեր ըսածին վրայ բնաւ չէք մտածեր:

— Ո՛հ, կոմսուհի, ես շատ լաւ համոզուած եմ թէ ի՞նչ կ'արժես:

— Այնպէս թող ըլլայ, բայց մտիկ ըրէք. ըսելիքս ձեր համոզմանը չփնասեր:

— Ըսէք:

— Նախ, ես հարուստ եմ և մէկու մը պէտք չունիմ:

— Հարստութեանդ վրայ ցաւիլ պիտի տաս ինձ, կոմսուհի:

— Ապա, այն տիկնանց ունեցած ոչ ամենափոքր մէկ հպարտութիւնը և ոչ մէկ փառասիրութիւնն ունիմ. ես միշտ ուզեցի ամեն բանէ աւելի իմ սիրողս սիրել, սիրողս հրացանակիր ալ ըլլար, թագաւոր ալ ըլլար: Այն օրէն որ ալ չեմ սիրեր՝ բանի մը կապուած չեմ:

— Յուսանք թէ քիչ մ'ինձ կապուած ես, կոմսուհի:

— Չաւարտեցի, վեհափառ տէր:

— Շարունակեցէք ուրեմն, տիկին:

— Պիտի ըսեմ նաև Ձեր վեհափառութեան թէ գեղեցիկ եմ, դեռահաս եմ, տակաւին տասն տարի գեղեցկութիւնս կրնայ շարունակել, թէ ոչ միայն աշխարհիս ամենէն երջանիկ՝ այլ նաև ամենէն յարգեալ կինը պիտի ըլլամ, այն օրէն սկսելով որ Ձեր վեհափառութեան սիրուհին չպիտի ըլլամ: Կը ժպտիք, վեհափառ տէր: Յաւօք սրտի կ'ըսեմ թէ պատճառը չմտածելնիդ է: Միւս սիրականներնիդ, սիրելի թագաւորս, երբ բաւական կը համարէիք և երբ ժողովուրդը չափէն աւելի կը համարէր՝ կը վանէիք զանոնք, և ժողովուրդը ձեզ կ'օրհնէր ու աչքէ ընկածը առաջուան նման կ'անարգէր, բայց ես, իմ ճանքուելուս չպիտի

սպասեմ : Ես իմ աստիճանս պիտի թողում և թողուլս ամենուն պիտի զիտցընեմ : Հարիւր հազար ֆրանք աղքատներուն պիտի տամ , ութ օր մենաստան մը պիտի կենամ ապաշխարելու , և ամիս մը չեղած իմ կենդանագիրս ամեն եկեղեցիներու մէջ պիտի գտնուի՝ զղջացեալ Մարիամայ վրան կախելու համար :

— Ո՛հ , կոմսուհի , կատակ կ'ընես , ըսաւ թագաւորը :

— Ինձ նայեցէք , վեհափառ տէր , և տեսէք լո՞ւրջ եմ թէ ոչ . ընդհակառակը , կ'երդնում ձեզ , կենացս մէջ երբէք ասկէ աւելի լրջօրէն խօսած չեմ :

— Այդ դձձութիւնը պիտի գործես , Ժաննը : Բայց ասով կը հաստատես թէ դաշինք մ'աւրելու պատրաստ ես , տիկին կոմսուհի :

— Ոչ , վեհափառ տէր , եթէ այնպէս ըլլար՝ պարզապէս պիտի ըսէի , « Երկուքէն մին ընտրեցէք : »

— Մինչդեռ :

— Մինչդեռ ձեզի կ'ըսեմ , « Մնայք բարեաւ , վեհափառ տէր »

— և այսչափ :

Թագաւորը տոգունեցաւ , բայց այս անգամ բարկութենէ :

— Եթէ այս աստիճան ինքզինքդ կը մոռնաս , տիկին , զղուշացիր . . . :

— Ի՞նչ բանէ , վեհափառ տէր :

— Քեզ Պասդէյլ կը զրկեմ :

— Չիս :

— Այո՛ , քեզ , և մարդ մենաստանէն աւելի կը ձանձրանայ Պասդէյլի մէջ :

— Ո՛հ , վեհափառ տէր , ըսաւ կոմսուհին ձեռներն իրար կցելով , եթէ այդ շնորհն ինձ ընէիք . . . :

— Ի՞նչ շնորհ :

— Չիս Պասդէյլ զրկելու :

— Հէ՛ :

— Չիս բարեօք կը ընուիք :

— Ի՞նչպէս :

— Է՛հ , այո՛ : Իմ դաղանի փառասիրութիւնս այն է որ Պ. տը լա Շալօդէի կամ Պ. տը Վօլդէրի նման ժողովրդային ըլլամ : Ա-

տոր համար միայն Պասդիյլը ինձ կը պակսի . քիչ մը Պասդիյլ մնամ՝ աշխարհիս ամենէն երջանիկ կիներ կ'ըլլամ : Ասով առիթ կ'ունենամ յիշատակներ գրել իմ վրայ , ձեր պաշտօնէից վրայ , ձեր աղջկանց վրայ , նոյն իսկ ձեր վրայ , և այսպէս ամենէն յետադայ սերունդին հաղորդել Ամենասիրելի Լուսին առաքինութիւնները : Ձերբակալութեան հրամանագիրը ստորագրեցէք , վեհափառ տէր : Ահա ձեզի գրիչ և մելան :

Եւ աթոռակին վրայ գտնուող գրիչն ու կաղամարը թագաւորին կողմը մղեց :

Թագաւորն այսպէս արհամարուելով՝ պահ մը մտածեց , և ոտք ելնելով ,

— Լաւ : Մնաս բարեաւ , տիկին , ըսաւ :

— Ձիւրս , գոչեց կոմսուհին : Երթաք բարեաւ , վեհափառ տէր : Թագաւորը քայլ մ'առաւ դէպ 'ի դուռը :

— Շօն , ըսաւ կոմսուհին :

Շօն երևցաւ :

— Արկղներս , ուղևորութեան պիտոյքս և սուրհանգակի կառքը պատրաստ ըլլան . օն , օն , ըսաւ :

— Սուրհանգակի կառքը , ըսաւ Շօն թախծագին . ինչ կայ ուրեմն , տէր Աստուած :

— Սա կայ որ , սիրելիս , եթէ կարելի եղածին չափ շուտ չմեկնինք՝ նորին վեհափառութիւնը մեզ Պասդիյլ պիտի ղրկէ : Ուստի կորսընցընելու ժամանակ չունինք : Աճապարէ , Շօն , աճապարէ :

Այս յանդիմանութիւնը թագաւորին սրտին դպաւ . կոմսուհւոյն դարձաւ և անոր ձեռքը բռնեց :

— Գիւրադրգուութեանս համար ներէ ինձ , կոմսուհի , ըսաւ :

— Արդարեւ , վեհափառ տէր , կը զարմանամ թէ ինչպէս կախաղան չսպառնացաք ինձ :

— Ո՛հ , կոմսուհի :

— Անշուշտ : — Գողերը չե՞ն կախեր :

— Լաւ , ուրեմն :

— Տիկին տը Կրամօնի տեւը չե՞մ գողնար ես :

— Կոմսուհի :

— Է՛Տ , յանցանքն իմն է , վեհափառ տէր :

— Մտիկ ըրէ , կոմսուհի , արդարու թեամբ վարուէ . զիս զայրացուցիր :

— Իսկ հիմա՞ :

Թագաւորը ձեռներն անոր երկնցուց :

— Երկուքս ալ անիրաւ էինք : Հիմա , իրարու ներենք :

— Լրջօրէն է ձեր ուղած հաշտութիւնը , վեհափառ տէր :

— Ճշմարիտ այնպէս է :

— Գորս զնա , Շօն :

— Առանց պատուէր մը տալու , հարցուց Շօն իւր քրոջը :

— Ընդհակառակը բոլոր ըսածներս պատուիրէ :

— Կոմսուհի . . . :

— Բայց նոր հրամաններու թող սպասեն :

— Ա՛Տ :

Շօն դուրս ելաւ :

— Զիս կ'ուզէք ուրեմն , հարցուց կոմսուհին թագաւորին :

— Ամեն բանէ աւելի :

— Ըսածնուդ վրայ մտածեցէք , վեհափառ տէր :

Թագաւորը արդարեւ մտածեց , բայց չէր կրնար ընկրկիլ . և ասկէ զատ տեսնել կ'ուզէր թէ մինչ ո՞ւր պիտի հասնէին յաղթողին պահանջումները :

— Իօսէ , ըսաւ :

— Քիչ մ'առաջ : Ուշադրութիւն ըրէք , վեհափառ տէր : — Առանց բան մ'ուզելու կը մեկնէի :

— Տեսայ :

— Բայց եթէ մնամ՝ բան մը պիտի ուզեմ :

— Ի՞նչ է ուղածդ : Ինչ ըլլալը գիտնալու է :

— Ա՛Տ , դուք լաւ գիտէք :

— Ոչ :

— Ի՞նչպէս չէ , մինչդեռ դէմքերնիդ կը ծռէք :

— Պ . տը Շուաղէօլի անկոմը կ'ուզեմ :

— Ճիշդ :

— Անկարելի է , կոմսուհի :

- Ուրեմն ձիերս :
- Բայց , որքան թիւր կը մտածես . . . :
- Կամ իմ Պասդէյլ ղրկուելուս՝ կամ պաշտօնէին անկման հրամանագիրը ստորագրեցէք :
- Ասոնց երկուքին մէջ տեղը կայ , ըսաւ թագաւորը :
- Շնորհակալ եմ ձեր գթասրտութենէն , վեհափառ տէր . երեցածին նայելով , աւանց անհանգստութիւն մը կրելու պիտի մեկնիմ :
- Կոմսուհի , դու կին ես :
- Էրջանկաբար :
- Եւ իբրև յամառ ու բարկացած կին մը քաղաքականութեան վրայ կը տրամաբանես : Պ. սը Շուազէօլը պաշտօնէն ձկելու պատճառ մը չունիմ :
- Կը հասկընամ , ժողովներուդ կուռքն է , որոց նեցուկ կ'ըլլայ անոնց ապստամբութեան մէջ :
- Վերջապէս պատրուակ մը պէտք է :
- Պատրուակը տկարին փաստն է :
- Կոմսուհի , Պ. սը Շուազէօլ պարկեշտ մարդ մ'է , և պարկեշտ մարդիկ հաղուպիտ են :
- Պարկեշտ մարդ մը որ ձեզ սեաղգեստներուն կը ծախէ , որոնք ձեր թագաւորութեան բոլոր ոսկին կ'ուտեն :
- Չափազանցութիւն պէտք չէ , կոմսուհի :
- Ուրեմն կէսը :
- Աստուած իմ , դռչեց Լուի ԺԵ. զայրացած :
- Բայց , յիրաւի , դռչեց կոմսուհին ևս ըստ կարգի , խենդ եմ ես . իմ ինչ փոյթս են ժողովները , Շուազէօլեանք , անոր կառավարութիւնը . իմ ինչ փոյթս է նոյն իսկ թագաւորը որուն փոքրագոյն չարիքն եմ :
- Գործեալ կ'ըսես :
- Միշտ պիտի ըսեմ , վեհափառ տէր :³
- Տեսնենք , կոմսուհի , թող որ երկու ժամ մտածեմ :
- Տասն վայրկեան , վեհափառ տէր : Ես սենեակս կ'անցնիմ , պատասխաննիդ դրան ներքեւէն սահեցուցէք . թուղթը հոն է , գրի-

չը հոն է , կաղամարը հոն է : Եթէ տասն վայրկենէն չպատասխանէք կամ ուզածիս պէս չպատասխանէք՝ — Մնաք բարեալ , վեհափառ տէր : — Ա՛լ իմ վրայ մի մտածէք , ես մեկնած պիտի ըլլամ : Բայց եթէ ոչ . . . :

— Բայց եթէ ո՛չ :

— Ճախարակը դարձուցէք՝ սեպը կ'իյնայ :

Լուի ԺԵ. ինքզինքին կերպարանք մը տալու համար կոմսուհւոյն ձեռքն համբուրեց , որ մեկնելու ատեն իւր ամենէն աւելի հրապուրիչ ժպիտն ուղղեց անոր՝ նման Պարթևին :

Թագաւորը բնաւ դէմ չկեցաւ այս երթին , և կոմսուհին մերձակայ սենեակը փակուեցաւ :

Հինգ վայրկեան ետք , քառակուսի ծալուած թուղթ մը դրան և զորդին մէջտեղէն քսուելով անցաւ :

Կոմսուհին անյադուութեամբ կարդաց տոմսակը , շտապաւ քսնի մը խօսք դրեց Պ. տը Ռիշլիէօի՝ որ փոքր դաւթին մէջ քիւի մը ներքեւ կը շրջէր՝ սաստիկ վախնալով որ այնպէս երկայն ատեն ոտքի վրայ մնալը կը տեսնեն :

Մարաջախտը թուղթը բացաւ , կարդաց , և իւր եօթանասուներեց հինգ տարեկան հասակին չնայելով աճապարանօք մեծ դաւթիթը իւր կառքին քովն հասաւ :

— Կառավար , ըսաւ , 'ի Աէրսայլ , կառքը թուցրնելու է :

Պատուհանէն Պ. տը Ռիշլիէօի նետուած թղթին պարունակութիւնը հետեւեալն էր .

« Ծառը ցնցեցի , թղթակալն ընկաւ : »



ՀԹ

ԹԻ ԼՈՒԻ ԺԵ. ԹԱԳԱՆՈՐԸ ԻՆՉՊԵՍ ԿԱՅԻՆՆԵՐԻ ԻՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԵՑ

Հետևեալ օրը Վերսայլի մէջ մեծ շշուկ կար : Մարդիկ իւրարու կը մօտենային խորհրդաւոր նշաններով և նշանակական ձեռք սեղմելներով, կամ թևերնին խաչաձև և աչերնին երկինք դարձուցած, որմէ կ'իմացուէր անոնց ցաւն ու զարմանքը :

Պ. տը Ռիշլիէօ բազմաթիւ կողմնակիցներով, ժամը տասնին ատենները թագաւորին նախասենեակը կը գտնուէր 'ի Գրիանօն :

Ժան դերկոմսը, զարդարուած, շողշողուն՝ ծեր մարաջախտին հետ կը խօսակցէր, և իւր զուարթ դիմաց նայելով ուրախութեամբ կը խօսէր :

Ժամը տասնումէկին ատենը, թագաւորը գրասենեակն երթալու ատեն անցաւ և մէկու մը չխօսեցաւ : Նորին Վեհափառութիւնը խիստ արագ կը քայլէր :

Տասնումէկը հինգ անցած Պ. տը Շուաղէօլ կառքէն իջաւ և դաւթէն անցաւ թղթակալը թևին ներքև :

Անոր անցնելու ատեն մեծ շարժում մը տեղի ունեցաւ հոն դտնուող մարդկանց մէջ՝ որոնք երեսնին կը դարձրնէին խօսակցիլ ձևադրնելու և պաշտօնեայն չբարևելու համար :

Գուքսը ուշադրութիւն չըրաւ անոնց այս ընթացքին. սենեակը մտաւ ուր թագաւորը իւր շօքօլադը խմելով դատաստանական թղթեր կը թղթատէր :

— Բարի լոյս, դուքս, ըսաւ թագաւորը բարեկտմական եղանակաւ մը. կայտան ենք այս առտու :

— Վեհափառ տէր, Պ. տը Շուաղէօլ աղէկ է, բայց պաշտօնեայն շատ հիւանդ է, և կու գայ խնդրել Ձեր Վեհափառու-

Թենէն որ իւր հրաժարականն ընդունի, քանի որ Ձեր Վեհափառութիւնը տակաւին բան մը չըսէր իրեն: Շնորհակալ եմ թագաւորէն առաջարկութեան կարգն ինձ թողելու շնորհն ընելուն համար: Վերջին շնորհ մ'է այս որուն համար կարի երախտապարտ եմ:

— Ինչպէս, դուքս, ձեր հրաժարականը, ինչ կը նշանակէ այդ:

— Վեհափառ տէր, երէկ Ձեր Վեհափառութիւնը տիկին Տիւպարիի ձեռքն ըլլալով հրամանադիր մը ստորագրեց՝ որ իմ անկումն կը նշանակէր: Այս լուրն արդէն համայն Բարիզի և Վէրսայի մէջ տարածուած է: Վնասը եղած լմրնցած է: Սակայն չուզեցի Ձեր Վեհափառութեան ծառայութենէն ելնել առանց հրամանն հրամանագրին հետ ստանալու: Ըստ որում պաշտօնապէս կուչուած ըլլալով պաշտօնի՝ միայն պաշտօնական հրամանագրով մը կրնամ անկեալ համարել զիս:

— Ինչպէս, դուքս, գոչեց թագաւորը խնդալով, ինչու որ Պատր Շուազէօլի խիստ և զգօն կերպարանքը վախ ազդելու չափ պատկառանք կ'ազդէր իրեն. դուք հանձարեղ և կարգապահ անձ մը ըլլալով, ինչպէս հաւաստացիք անոր:

— Բայց, վեհափառ տէր, ըսաւ պաշտօնեայն զարմացած, դուք ստորագրեցիք . . . :

— Ինչ:

— Գիբ մ'որ տիկին Տիւպարիի ձեռքն է:

— Ա՛հ, դուքս, երբէք խաղաղ մնալ չէք ուզեր: Արի երջանիկ էք դուք . . . : Ահա տիկին սը Շուազէօլ օրինակ մ'է ըսածիս:

Գուքսն այս բաղդատութենէն վշտանալով ունքը պոստեց:

— Ձեր Վեհափառութիւնը, ըսաւ, խիստ հաստատուն և խիստ ընտիր բնաւորութիւն մ'ունենալով Պետութեան գործերը անային գործերուն չխառներ:

— Շուազէօլ, պէտք է որ եղածը պատմեմ, խիստ զուարճալի է: Գիտե՞ս որ այն կողմէն շատ կը վախնան քենէ:

— Այսինքն զիս չ'ատեն, վեհափառ տէր:

— Այնպէս թող ըլլայ: Լաւ ուրեմն, այն յիմար կոմսուհին

Generated on 2016-09-07 07:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ինձ չառաջարկէ որ կամ զինքը Պասդէյլ զրկեմ կամ քեզի շնորհակալ ըլլամ քու ծառայութեանցդ փոխարէն :

— Ուրեմն , վեհափառ տէր :

— Ուրեմն , դուքս , դու ևս պիտի խոստովանիս թէ Վէրսայլի այս առատուան ընծայած տեսարանը ձեռքէ փախցրնելը խելք չէր : Երէկուանէ 'ի վեր , ճանրաներուն վրայ պնդադեսպաններուն վազելը , ոմանց ուրախութիւնը և այլոց տրտմութիւնը տեսնելով կը զուարճանամ . . . : Գօղիյլօն Գ. Գաղղիոյ թագուհի է երէկուանէ 'ի վեր : Ասկէ աւելի զուարճալի բան չկրնար ըլլալ :

— Բայց վախճանը , վեհափառ տէր :

— Վախճանը , սիրելի դուքս , ըսաւ Լուի ԺԵ. լուրջ կերպարանք մ'առնելով , վախճանը միշտ նոյնը պիտի ըլլայ : Զիս կը ճանչնաս . միշտ թոյլտուութիւն ընել կը ձեացընեմ և երբէք թոյլտուութիւն չեմ ըներ : Թող որ կանայք լափեն այն մեղրալի փոքր կարկանդակը զոր մերթ ընդ մերթ իրենց կը նետեմ՝ ինչպէս որ Վերբերոսի* կ'ընէին . բայց մենք հանուարտ , անսասան , միշտ 'ի միասին ապրինք : Եւ որովհետև բացատրութիւն տալու վրայ ենք , ըսելիքս լաւ միտքդ պահէ : Ի՛նչ խօսք ալ որ տարածուի , ինչ նամակ ալ որ առնես ինէ . . . Վէրսայլ զպէ ետ մի կենար . . . քանի որ քեզի ըսեմ հիմա ըսածս , դուքս , լաւ բարեկամներ պիտի ըլլանք :

Թագաւորը ձեռքը պաշտօնէին երկնցուց որ վրան ծուեցաւ առանց երախտադիտութեան ինչպէս նաև առանց ոխի :

— Հիմա թէ որ կ'ուզես աշխատինք , սիրելի դուքս :

— Չեր Վեհափառութեան հրամաններուն պատրաստ եմ , պատասխանեց Շուաղէօլ թղթակալը բանալով :

— Տեսնեմք , սկսելու համար , քանի մը խօսք ըրէ ինձ հրախաղին վրայ :

— Մեծ աղէտ մ'եղաւ այն , վեհափառ տէր :

— Յանցանքը որո՞ւ է :

*Ըստ դիցաբանութեան շուն եռազլիսի , պահապան գղութունի արքունեաց : Ծ. Թ.

Generated on 2016-09-07 07:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Պ. Պինեօն վաճառապետին :

— Ժողովուրդը շատ գոռաց գոչեց :

— Ո՛հ , շատ :

— Այն ատեն թերևս պէտք էր պաշտօնէ հանել Պ. Պինեօնը :

— Ժողովը՝ որուն մէկ անդամը քիչ մնացեր է որ այն աղմուկին մէջ պիտի խեղդուի եղեր , մեծ կարևորութիւն կու տար գործին . բայց Պ. Սէկիէ ընդհանուր փաստաբանը կարի պերճաբան ճառ մը մը խօսեցաւ հաստատելով սր այն աղէտը ձախորդ զիպուածի մ'արդիւնքն էր : Ներկայ եղողները ծափահարեցին , և ալ հիմա ամեն բան մոռցուեցաւ :

— Աւելի լաւ : Անցնինք ժողովներուն , դուքս . . . : Ա՛հ , ահա այս երեսնուս կը զարնեն :

— Իմ երեսիս կը զարնեն , վեհափառ տէր , որ Պ. տը լա Շալօղէի դէմ Պ. տ'Էկիւլօնի նեցուկ չեղայ . բայց ո՞վ է այս բանն երեսս զարնողը : Նոյն իսկ այն մարդիկ որոնք Ձեր Վեհափառութեան նամակը ամեն կողմ շրջեցուցին սաստիկ ցնծութեամբ : Մտածեցէք , վեհափառ տէր , թէ Պ. տ'Էկիւլօն իւր իշխանութեան չափն անցուց Բրիտանիոյ մէջ , թէ ճիզվիթներն իրօք աքսորուեցան , թէ Պ. տը լա Շալօղէ իրաւունք ունէր , և Ձեր Վեհափառութիւնը ինքը ճանչցաւ այն ընդհանուր գործակալին անմեղութիւնը և այնպէս ըլլան հրատարակեց : Կարելի չէ որ թագաւորին ետ առնել տան իւր խօսքը : Իւր պաշտօնէին առջևը՝ այնչափ հող չէ . բայց իւր ժողովրդեան առջևը :

— Ներկայիս մէջ , ժողովները զօրաւոր կը կարծեն ինքզինքնին :

— Իրօք զօրաւոր ալ են : Չանոնք կը յանդիմանեն , կը բանտարկեն , կը լլկեն և անմեղ կը հրատարակեն , անոնք ալ հարկաւ զօրաւոր կ'ըլլան : Ես Պ. տ'Էկիւլօնը չամբաստանեցի լա Շալօղէի գործն սկսելուն համար , այլ երբէք չպիտի ներեմ իրեն նոյն գործին մէջ անիրաւ գտնուելուն համար :

— Դուքս , դուքս , օն , չարիքը գործուած է . դարմանին նախիւր . . . : Ի՞նչպէս սանձելու է այն լիրբերը :

— Թող Պ. դիւանապետին մեքենայութիւնները դադրին , թող Պ. տ'Էկիւլօն նեցուկ չունենայ՝ այն ատեն ժողովներուն ցասումը կ'իջնէ :

Generated on 2016-09-07 08:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Բայց այն ատեն թոյլտուութիւնը րա՞ծ պիտի ըլլամ, դուքս :

— Պ. տէկիւյլօնն է որ Ձեր Վեհափառութիւնը կը ներկայացընէ . . . և ո՞չ թէ ես :

Ձեռնարկութիւնը խիստ էր, թագաւորը զգաց զայն :

— Գու գիտես որ ես իմ ծառաներս տաղտկացընել չեմ ուզեր, ըսաւ, նոյն իսկ այն ատեն որ իրենք սխալած են . . . : Բայց թողունք այս գործը որ զիս կը վշտացընէ և որուն մէջ որ կողմին իրաւունք ունենալը ժամանակը պիտի յայտնէ . . . : Քիչ մ'ալ արտաքին գործերու վրայ խօսինք . . . : Ա՛րսեն թէ պատերազմ պիտի ունենամ :

— Վեհափառ տէր, եթէ պատերազմ ունենաք՝ արդար և հարկաւոր պատերազմ մը պիտի ըլլայ այն :

— Անդղիացւոց հետ . . . չար սատանայ :

— Ի՞նչ, միթէ Ձեր Վեհափառութիւնը կը վախնայ Անգղացիներէն :

— Ո՛հ, ծովու վրայ . . . :

— Թող Ձեր Վեհափառութիւնը հանդիստ ըլլայ . Պ. ար Բրասլէն գուքը, հօրաքեւորդիս, ձեր ծովային գործոց պաշտօնեայն ձեզի պիտի ըսէ թէ վաթսունուչորս նաւ ունի, ՚ի բաց առեալ նաւարանը գանուածները. ասոնցմէ վատ մէկ տարուան մէջ ուրիշ տասներկու նաւ ալ շինելու համար հարկաւոր եղած նիւթերը պատրաստ կան . . . : Վերջապէս, առաջին կարգի զօրութեամբ յիսուն Ֆրէկադ՝ որ ծովային պատերազմի համար ահարկու գիրք մ'ունենալ է : Իսկ ցամաքային պատերազմի դալով անկէ լաւագոյնը ունինք, Փօնդրնուան ունինք :

— Շատ լաւ . բայց ինչո՞ւ պատերազմ պիտի ունենամ Անգղիացւոց հետ, սիրելի գուքս : Քոյինէդ նուազ ճարտար վարչութիւն մը Տիւպուա արքային վարչութիւնը միշտ խոյս տուած է Անգղիոյ հետ պատերազմ ունենալէ :

— Այնպէս ըլլալը կը հաւատամ, վեհափառ տէր. Տիւպուա արքան ամիսը վեց հարիւր հազար Փրանք կ'ստանար Անգղիացիներէն :

— Ո՛հ, գուքս :

5

Generated on 2016-09-07 08:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-g-google

— Ապացոյցն ունիմ, վեհափառ տէր :

— Լաւ . բայց ինչ բանի մէջ պատերազմի պատճառ կը տեսնես :

— Անգղիան ամբողջ Հնդկաստանը կ'ուզէ . պարտաորեցայ ձեր պաշտօնակալաց պատուիրելու որ կարի խստութեամբ և թշնամութեամբ զարուիմ : Հոն պատահելիք առաջին ընդհարումին Անգղիա պիտի բողոքէ . իմ սեպհական կարծիքս այն է որ անոնց իրաւունքը տեղը չտանինք : Պէտք է որ Ձեր Վեհափառութեան կառավարութիւնը բռնի յարգուի , ինչպէս որ էր շնորհիւ կաշառքին :

— Է՛հ , համբերենք . հոս ո՛վ պիտի գիտնայ Հնդկաստան անցած դարձածը : Ա՛րքան հեռի է :

Գուքսը շուրթերը խածաւ :

— Աւելի մօտերնիս casus belli* մը կայ , վեհափառ տէր , ըսաւ :

— Գործեալ : Ինչ է ուրեմն այն :

— Սպանիացիք Մալտին և Ֆալքլանտ կղզիներուն տէր ըլլալ կը պնդեն . . . : Էկմօնի նաւահանդիստը Անգղիացիք գրաւեր էին ըստ հաճոյս , Սպանիացիք չարաչար վանեցին զանոք հոնկէ . ասոր վրայ Անգղիա կատղեցաւ , յետին աստիճանի սպառնալիքներ կ'ընէ Սպանիացւոց եթէ իրեն հատուցում մը չտրուի :

— Լաւ , սակայն եթէ Սպանիացիք ալ անիրաւ են՝ թող որ իրենք ինքզինքնին ազատեն :

— Վեհափառ տէր , ընտանեկան դաշինքը : Ինչո՞ւ պնդեցիք ստորագրել ապա այն դաշինքը՝ որ Եւրոպիոյ բոլոր Պուրպօններն իրարու կը կապէ սերտիւ , և անոնց պատուար մը կ'ըլլայ Անգղիոյ բոլոր ձեռնարկութեանց դէմ :

Թագաւորը գլուխը ծռեց :

— Հանգիստ եղէք , վեհափառ տէր , ըսաւ Շուազէօլ . ահագին բանակ մը , ահեղ նաւատորմիդ մը և դրամ ունիք : Ես դրամ կրնամ դանել առանց ժողովուրդը գողալ տալու : Եթէ պատերազմ ունենանք՝ փառաց պատճառ մը պիտի ըլլայ այն Ձեր Վեհափառու-

*Պատճառ, պատերազմի :



Թեան թագաւորութեանը համար, և ես այնպիսի յաւելուածներու վրայ կը մտածեմ՝ որոց պատրուակն ու շատագովութիւնը իրենք մեզի պիտի հայթայթեն :

— Աւրեմն, դուքս, ներքին խաղաղութիւն, ամենուրեք պատե-
րազմ չունենանք :

— Բայց ներքին խաղաղութիւն կայ, վեհափառ տէր, պատաս-
խանեց դուքսը չհասկընալ կեղծելով :

— Ոչ, ոչ, կը տեսնես որ ոչ : Գու զիտ կը սիրես և լաւ կը
ծառայես ինձ : Աւրիշներ ալ կան որ կ'ըսեն թէ զիս կը սիրեն,
բայց անոնց կերպերը բնաւ քոյիներուդ չեն նմանիր, բոլոր այս
ձևերուն մէջ համաձայնութիւն մը դնենք որ, սիրելի դուքս, եր-
ջանիկ ապրիմ ես :

— Չեր երջանկութիւնը կատարեալ ըլլալը իմ ձեռքս չէ, վե-
հափառ տէր :

— Տեսար մի խօսքը : Աւրեմն այսօր եկուր ինձ հետ ճաշելու :

— Աւերայլ, վեհափառ տէր :

— Ա՛չ, Լիւսիէն :

— Ա՛հ, շատ կը ցաւիմ, վեհափառ տէր : Ընտանիքս տակնու-
վրայ եղած է երէկի տարածուած լուրն առնելով : Ար կարծեն թէ
Չեր վեհափառութիւնը զիս երեսէ ձգած է : Ինչպէս թախծու-
թեան մէջ ձգեմ այնքան սրտեր :

— Եւ անոնք որոց վրայ քեզի կը խօսին թախծութեան մէջ
չեն, դուքս : Մտածէ թէ ինչպէս երեքնիս ալ երջանիկ ապրե-
ցանք այն խեղճ մարքիզուհւոյն օրով :

Գուքսը գլուխը ծռեց, աչերուն վրայ քող մ'եկաւ, կէս խեղ-
դուկ հառաչ մ'ելաւ հուրժքէն :

— Տիկին տը Բօմբատուր Չեր վեհափառութեան փառաց կարի
նախանձախնդիր կին մ'էր : Քաղաքագիտական բարձր գաղափարներ
ունէր : Ար խոստովանիմ որ իւր հանձարը խիստ կը յարմարէր իմ
բնաւորութեանս : Վեհափառ տէր, շատ անգամ գլուխ գլխի տուած
ենք անոր յղացած մեծ ձեռնարկութիւններու մէջ : այո՛, միասին
կը գործէինք :

— Բայց նէ քաղաքականութեան կը խառնուէր, դուքս, և ամեն
մարդ պակասութիւն մը կը համարէր զայն իրեն :



— Ճշմարիտ է :

— Մինչգեռ ընդհակառակը կոմսուհին գառնի մը նման քաղցր է . տակաւին ձերբակալութեան գիր մը ստորագրել տուած չէ , նոյն խկ տետրագիրներուն և երգագիրներուն դէմ : Լաւ ուրեմն , միւսին վրայ գովածնին՝ ասոր պակասութիւն մը կը համարին : Ա՛Տ , դուքս , յառաջադիմութենէ զոտելու համար եղած է այս . . . : Տեսնենք , Լիւսիէն պիտի գաս հաշտուելու :

— Վեհափառ տէր , հաճեցէք հաւաստել տիկին Տիւպարին թէ կարի գեղանի և թաղաւորին սիրոյն արժանի կին մը կը գտնեմ զինքը . բայց . . . :

— Ա՛Տ , անս որ բայց մը կայ , դուքս . . . :

— Բայց , շարայարեց Պ. տը Հուազէօլ , իմ համոզումս սա է որ եթէ այսօր Գաղղիա պէտք ունի Ձեր Վեհափառութեան՝ այսօր Ձեր Վեհափառութիւնն ալ աւելի լաւ պաշտօնէի մը՝ քան թէ գեղանի տիրուհւոյ մը պէտք ունի :

— Ա՛լ ասոր վրայ չխօսինք , դուքս , և լաւ բարեկամներ մնանք : Բայց ողորձ տիկին տը Արամօնը որ ալ կոմսուհւոյն դէմ չդաւադրէ . կանայք կրնան մեզ աւրել :

— Տիկին տը Արամօնը , վեհափառ տէր , սաստիկ կը բաղձայ հաճելի ըլլալ Ձեր Վեհափառութեան , իւր պակասութիւնը այս է :

— Եւ ինձ անհաճոյ կ'ըլլայ կոմսուհւոյն փնասելով , դուքս :

— Ուստի տիկին տը Արամօնն ալ կը մեկնի , վեհափառ տէր , ալ զինքը չպիտի տեսնեն . թշնամի մը պակաս պիտի ըլլայ :

— Այդ ըսել չեմ ուզեր , դու շատ հեռիները կ'երթաս : Բայց գլուխս կ'այրի , դուքս , այս առտու Լուի ԺԳ.ի և Գօլպէրի նման աշխատեցանք , Ֆէժ Դարն եղանք , ինչպէս փիլիսոփաները կ'ըսեն : Ազէկ միտքս ընկաւ , դուքս , դու ալ փիլիսոփայ ես :

— Ես Ձեր Վեհափառութեան ծառան եմ , պատասխանեց Պ. տը Հուազէօլ :

— Զիս կը հմայես , անգին մարդ մ'իս դու . թեղ ինձ տուր , բոլորովին ընդարմացած եմ :

Դուքսն աճապարեց Նորին Վեհափառութեան ընծայել իւր թեր :

Ար գուշակէր թէ դռներուն երկուքը մէկէն պիտի բանային, թէ համայն արքունիքը սրահը կը գտնուէր և զինքը այն փառաւոր զիրքով պիտի տեսնէին. այնքան վիշտ կրելէն ետք՝ ինքն ալ գոհ կ'ըլլար իւր թշնամեացը վիշտ պատճառելով:

Արդարև բարապանը դռները բացաւ, և թագաւորը ծանոյց սրահին մէջ:

Լուի Ժե. միշտ Պ. տը Շուազէօլի հետ խօսելով և ժայտելով, անոր թեկին վրայ ընկած, բազմի Գեան մէջէն անցաւ առանց ուշադրութիւն ընելու կամ ուշադրութիւն ընել չաղելու թէ որքան զեղնած էր Ժան Տիւպարի և որքան կարմրած էր Պ. տը Ռիշլիէօ:

Բայց Պ. տը Շուազէօլ այն դոյներու տարբերութիւնը տեսաւ: Ծնողերը ձիգ, պարանոցը պիւրկ, աչերը զոզոզուն, սլալատականներուն առջեկէն անցաւ՝ որոնք այնչափ իրարու կը մօտենային՝ որչափ որ առաւօտուն իրարմէ հեռացեր էին:

— Հոն, սրահին ծայրն ինձ սպասէ, դուքս, քեզ Գրիանօն պիտի տանիմ: Բոլոր ըսածներս միտքդ պահէ:

— Սրտիս մէջ պահեցի, պատասխանեց պաշտօնեայն քաջ գիտնալով որ այս սայրասուր խօսքովը իւր բոլոր թշնամեաց սիրտը կը ծակէր:

Թագաւորն իւր սենեակը մտաւ:

Պ. տը Ռիշլիէօ մարդոց շարքը պատուելով անցաւ և ցնաց իւր նիհար ձեռներովը պաշտօնէին ձեռքը սեղմեց ըսելով,

— Ի վաղուց գիտեմ որ Շուազէօլի մը հոգին մարմնոյն գամուած է:

- Շնորհակալ եմ, ըսաւ դուքսը որ ինչ որոշելիքք գիտէր:
- Բայց այն այլանդակ լո՛ւրը, շարայարեց մարաջխտար:
- Այն լուրը շատ խնդացուց Նորին Աւհափառութիւնը:
- Նամակի մը վրայ կը խօսէին . . . :
- Թագաւորին կողմէ խաղ մ'էր այն, պատասխանեց պաշտօնեայն այս խօսքը ծանին ուղղելով որ ոտքի վրայ շէր կրնար կենալ:

— Աքանչելի, սքանչելի, կրկնեց մարաջխտար կոմսին գառնահով, երբ տը Ռիշլիէօ դուքսը մերձեցաւ և աներևոյթ եղաւ:



Թագաւորը սանդուխէն կ'իջնէր դուքսը կանչելով որ կ'աճապարէր անոր հետեւելու :

— Է՛Տ, էՏ, խաղ խաղացեր են մեզի, ըսաւ մարաջախտը ժանի :

— Ո՛ւր կ'երթան :

— Փոքր Դրիանօն կ'երթան մեզ ծաղրելու համար :

— Դժո՛խք, մրմուսց ժան : Ա՛Տ, ներեցէք, պարոն մարաջախտ :

— Կարգը իմն է, ըսաւ մարաջախտը, տեսնենք թէ իմ միջոցս կոմսուհւոյն միջոցէն լաւագոյն է :



2

ՓՈՔՐ ԴՐԻԱՆՕՆ

Երբ Լուի ժԳ. Վէրսայլը շինեց, և մեծութեան անպատեհութիւնները ճանչցաւ, երբ տեսաւ այն լայնատարած սրահակները լի պահապաններով, այն նախասենեակները լի դրանիկներով, այն նորանցքերը և հոն գտնուող սենեակները լի պայիկներով, մանկլաւիկներով և սեղանակիցներով, ինքնիրեն ըսաւ թէ Վէրսայլ Լուի ժԳ. շինել ուզածին՝ Մանսարի, լը Պրէօնի և լը Նօդրի շինածին պէս եղած էր, այսինքն աստուծոյ մը բնակարան և ոչ թէ մարդու մը տուն :

Այն ատեն մեծ թագաւորը որ իւր անգրազ վայրկեաններուն մէջ մարդ մ'էր՝ Դրիանօնը շինել տուաւ՝ հոն շունչ առնելու և իւր կեանքը քիչ մը ծածուկ անցընելու համար : Բայց Ա. քիլլէսի սուրը որ Ա. քիլլէսը յոգնեցուցեր էր՝ անշուշտ անտանելի ծանրութիւն մը պիտի ունենար տկար յաջորդի մը համար :

Դրիանօն ևս, որ Վէրսայլի փոքրկացեալն էր՝ կարի մեծաշուք



Թուեցաւ Լուի ԺԵ.ի՝ որ Կապրիէլ ճարտարապետին փոքր Գրիանօնը շինել տուաւ՝ վաթսուն քառակուսի ոտք տարածութեան վրայ :

Այն շէնքին ձախ կողմը երկայն քառակուսի մը շինեցին աննշան և անշուք . սպասարաններուն և սեղանակիցներուն բնակարանն եղաւ այն : Տասնի չափ տիրոջ օթեան կար հոն , և յիսունի չափ ալ ծառաներու տեղ : Տակաւին այն շէնքը լրիւ կը կենայ : Գետնա-յարկէ մը , առաջին դատիկունէ մը և խորշերէ կը բաղկանայ : Այն գետնայարկը ապահովեալ է քարայտակ փոսով մը որ զայն թաւուտներէն կը զատէ . բոլոր պատուհանները երկաթէ վանդակապատներ ունին , ինչպէս նաև առաջին դատիկունները : Գրիանօնի կողմէն նայուած ատեն այն պատուհանները երկայն նրբանցք մը կը լուսարոքեն նման մենաստանի մը նրբանցքին :

Ութ կամ ինն դուռն նրբանցքին մէջ օթեանները կ'առաջնորդեն՝ որոց ամենքն ալ բաղկացեալ են նախասենեկէ մը երկու սենեակներով , մին ձախ՝ միւսը աջ կողմը , և ցած սենեկէ մը , միւս երկու սենեակներուն նման՝ շէնքին ներքին գաւթին վրայ լուսարոքուած :

Այն դատիկունին ներքեւը խոհանոցն է :

Խորշերուն մէջ ծառայի սենեակներ կան :

Ահա փոքր Գրիանօնի նկարագիրը :

Աւելցուր ասոնց վրայ գղեկէն քսան ձողաչափ հեռի մատուռ մը՝ որուն նկարագրութիւնը չպիտի ընենք , որովհետև բնաւ պէտք չունինք անոր , և միայն մէկ ընտանիքի կրնայ բաւել այն գղեակը՝ ինչպէս այսօր պիտի ըսէին տեսած ատեննին :

Ուստի տեղագրութիւնը հետեւեալն է . գղեակ մը որ իւր լայն աչերովը ճեմելեաց և անտառին վրայ կը նայի , իսկ ձախ կողմը վանդակապատ պատուհաններու , խիտ վանդակներով ծածկուած նրբանցքի կամ խոհանոցի պատուհաններու :

Մեծ Գրիանօնէն , որ Լուի ԺԵ.ի հանդիսական բնակարանն էր , փոքր Գրիանօնը երթալու համար բանջարեղէնի պարտեղէ մը պէտք էր անցնիլ՝ որ երկու բնակարանները փայտէ կամուրջով մը իրարու կը միացընէր :

Լա-Քէնդինի գծագրած և մշակած այս բանջարեղէնի և մրգեղէնի պարտեղէն էր որ Լուի ԺԵ. Պ. տը Շուաղէօլը փոքր Գրիան-



նօնը տարաւ՝ քիչ մ'առաջ պատմուած բազմաշխատ նիստէն ետք :
Արքայորդւոյն և իշխանուհւոյն նոր բնակարանին մէջ ըրած կար-
գադրութիւնները կ'ազէր ցոյց տալ անոր :

Պ. տը Շուազէօլ ամեն բանի վրայ կը զարմանար, ամեն բան
կը մեկնէր պալատականի մը պարզմտութեամբ . թոյլ կաւ տար որ
թագաւորն ըսէ թէ փոքր Գրիանօնը օր ըստ օրէ աւելի կը գեղեց-
կանար . և պաշտօնեայն կը յաւելուր թէ Նորին Աւհափառութեան
համար ընտանեկան տունն էր այն :

— Իշխանուհին, ըսաւ թագաւորը, դեռ քիչ մ'անընդել է բո-
լոր դեռահաս Ալմանուհիներուն նման . Գաղղիարէնը քաջ կը խօ-
սի բայց վախէն տկար հնչելով՝ Գաղղիացի ականջներէն կը ճանչ-
ցուի Աւստրուհի ըլլալը : Ի Գրիանօն միայն բարեկամներուն խօս-
քը պիտի լսէ և ուզած ատենը միայն պիտի խօսի :

— Որմէ կը հետեի թէ քաջ պիտի խօսի : Արդէն դիտեցի, ը-
սաւ Շուազէօլ, թէ Նորին արքայազն Բարձրութիւնը անթերի է
և կատարելագործուելու բան մը չունի :

Ճանբան մեր երկու ճանբորդները Պ. արքայորդւոյն սլառուհե-
ցան՝ որ մարգագետնին վրայ կեցած արեւին բարձրութիւնը կը չա-
փէր :

Պ. տը Շուազէօլ բարեկց խիստ շատ ծռելով, և որովհետեւ
արքայորդին խօսք մը չըրաւ անոր՝ ինքն ալ արքայորդւոյն խօսք
չըրաւ :

Թագաւորը բաւական բարձր ձայնով ըսաւ՝ որպէս զի իւր թուր
լսէ :

— Առի գիտնական մ'է, և աղէկ չընէր գիտութեանց մէջ
գլուխն ուռեցընելով, իւր կինը չողտի ախորժի :

— Բնաւ, պատասխանեց մացառի մը մէջէն կնոջ քաղցրալուր
ձայն մը :

Եւ թագաւորը տեսաւ որ իշխանուհին իրեն վազելով թղթերով,
կարկիններով և մատիտներով ծածկուած մարդու մը հետ կը խօ-
սակցէր :

— Աւհափառ տէր, ըսաւ իշխանուհին, Պ. Միք, իմ ճարտա-
շապետս :



— Ա՛Տ, ըրաւ թագաւորը, դո՛ւք ալ ունիք այդ հիւանդութիւնը, տիկին :

— Ա.Ն.Տափառ տէր, ընտանեկան հիւանդութիւն մ'է այս :

— Ի՞նչ պիտի շինել տաք :

— Զարդարել պիտի տամ այս ճեմելին ուր ամեն մարդ կը ձանձրանայ :

— Օ՛Տ, օ՛Տ, աղջիկս, բարձր ձայնով կը խօսիք. կարելի է որ արքայորդին ըսածնիդ կը լսէ :

— Մեր մէջ անոր որոշումը տուած ենք, հայր իմ, պատասխանեց իշխանուհին :

— Զանձրանալո՞ւ :

— Ոչ, գրօսանք փնտռելու :

— Եւ Չեր արքայազն Բարձրութիւնը շինել կ'ուզէ, ըսաւ Պ. տը Հուազէօզ :

— Այս ճեմելին պարտէզ մ'ընել կ'ուզեմ, պարոն դուքս :

— Ա՛Տ, այն խեղճ Լը Նօդրը, ըսաւ թագաւորը :

— Ա.Ն.Տափառ տէր, Լը Նօդրը մեծ մարդ մ'էր այն ատենուան սիրուածին համար, բայց ոչ իմ սիրածիս :

— Դուք ի՞նչ կը սիրէք, տիկին :

— Բնութիւնը :

— Ա՛Տ, փիլիսոփաներուն նման :

— Կամ Անդղիացուոց նման :

— Լա՛ւ, Հուազէօզին առջևն ըսէք այդ խօսքը՝ պատերազմի առաջարկութիւն մը պիտի ընէ : Չեզ դէմ պիտի հանէ վաթսուներորս նաւերը և իւր մօրաքեռորդւոյն, Պ. տը Բրասլէնի քառասուն ֆրէկազները :

— Ա.Ն.Տափառ տէր, ըսաւ իշխանուհին, բնական պարտէզ մը դժագրել պիտի տամ Պ. Ռօպէրին՝ որ քաջավարժ մէկն է այս կերպ յատակագիծներու մէջ :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք բնական պարտէզ ըսելով, ըսաւ թագաւորը : Ես կարծէի թէ ծառեր ու ծաղիկներ, նաև պտուղներ՝ անցնելու ատեն քաղածներուս նման, բնական քաներ են :

— Ա.Ն.Տափառ տէր, հարիւր տարի ալ չըջիք ձեր պարտիզին



մէջ՝ ուրիշ բան չպիտի տեսնէք՝ այլ միայն ուղիղ ծառուղիներ , կամ Պ. արքայորդւոյն ըսածին նման , քառասունուհինգ աստիճան անկիւն ունեցող թաւուտներ , կամ մարդագետիներու կցուած աւազաններ : և այն մարդագետիներն ալ զանազան պատկերներու կամ տողաններու , կամ հողակոյտներու յանգուած :

— Լաւ ուրեմն , տգեղ են անոնք :

— Բնական չեն :

— Տես ոա փոքր աղջիկը որ բնութիւնը կը սիրէ , ըսաւ թագաւորը աւելի զուարթ քան ուրախ : Տեսնենք ի՞նչ պիտի ընէք իմ Գրիանօնս :

— Գետակներ , ջրվէժներ , կամուրջներ , քարայրներ , ժայռեր , անտառներ , հեղեղատներ , տուներ , լեռներ , մարգեր շինել պիտի տամ :

— Պաճուճապատաններո՞ւ համար , ըսաւ թագաւորը :

— Աւճղ , վեհափառ տէր , թագաւորներու համար ինչպէս որ պիտի ըլլանք , պատասխանեց իշխանուհին առանց դիտելու իւր հաւին այտերը ծածկող կարմրութիւնը , նոյնպէս իրեն սգալի ճշմարտութիւն մը գուշակելը :

— Այն ատեն տակնուվերայ պիտի ընէք . բայց ի՞նչ պիտի շինէք :

— Չպիտի փլցընեմ :

— Ա՛հ , գէթ այն անտառներուն և գետակներուն մէջ չպիտի բնակեցընէք ձեր մարդիկը Հուրօններու , Էպիմացիներու կամ Արօտլանտացիներու նման : Բնական կ'ապրէին այն ատեն , և Պ. Ռուսօ բնութեան որդիքը կը կոչէր զանոնք . . . : Ըրէք ասոնք , աղջիկս , և համագիտականները ձեզ կը պաշտեն :

— Աւեհափառ տէր , ծառաներս շատ կը մնին այնպիսի տեղեր :

— Ուրեմն ո՛ւր պիտի բնակին անոնք քանի որ դուք ամենքն ալ կը փլցընէք : Հարկաւ պալատը չպիտի բնակին . հազիւ ձեր երկուքին համար տեղ կայ :

— Աւեհափառ տէր , ծառայից սենեակները մի և նոյն վիճակին մէջ կը թողում :

Եւ մեր նկարագրած նրբանցքին պատահանները ցոյց տուաւ իշխանուհին :

— Ո՛վ է այն տեսածս, ըսաւ թագաւորը մէկ ձեռնը իրբև լուսարգել (garde-cue) աչերուն վրայ բռնելով :

— Աին մը, վեհափառ տէր, ըսաւ Պ. տը Շուազէօլ :

— Օրիորդ մը զոր քովս առի, պատասխանեց իշխանուհին :

— Օրիորդ տը Դավէրնէյ, ըսաւ Շուազէօլ իւր սուր նայուածքովը :

— Ա՛՛՛՛՛, ըրաւ թագաւորը. հոն են Դավէրնէյները :

— Միայն օրիորդ տը Դավէրնէյը հոս է, վեհափառ տէր :

— Ի՛նչ գեղեցիկ աղջիկ : — Ի՛նչ պիտի ընէք զինքը :

— Ընթերցուհիս :

— Շատ լաւ, ըսաւ թագաւորը առանց աչքէ թողլու վանդակաւոր պատուհանը՝ որմէ կարի անմեղութեամբ և առանց կասկած մը ունենալու թէ զինքը կը դիտեն, օրիորդ տը Դավէրնէյ, կը նայէր՝ որուն հիւանդութեան ատենի դեղնութիւնը տակաւին գացած չէր :

— Ո՛րչափ դեղնած է, ըսաւ Պ. տը Շուազէօլ :

— Մայիսի 31ին քիչ մնաց պիտի խեղդուէր, պարոն դուքս :

— Իրա՛ն : Խեղճ աղջիկ, ըսաւ թագաւորը : Այն Պ. Պինեօնը արժանի էր անոր աչքէն իյնալու :

— Հիմա աղէկ է, ըսաւ Պ. տը Շուազէօլ կարի շուտ :

— Փառք Աստուծոյ, պարոն դուքս :

— Ա՛՛՛՛՛, ըրաւ թագաւորը, փախաւ :

— Ձեր վեհափառութիւնը ճանչցած ըլլալու է. և ինչն ալ երկչոտ է :

— Շատո՛ւց ՚ի վեր ձեր քոփէ է :

— Երէկէ ՚ի վեր, վեհափառ տէր. տեղաւորուելէս ետք բերել տուի զինքը :

— Տխուր բնակարան մ՛է այս գեղեցիկ աղջկան մը համար, ըսաւ Լուի Ժե. այն կապրիէլն ալ շատ անձարակ է եղեր. չէ մտածեր որ ծառերը մեծնալով այն ծառաներուն սենեակները, խոհարանը և այլն պիտի գոցուին, և մարդ յստակ չպիտի կարենայ տեսնել հոն :

— Բայց ոչ, վեհափառ տէր, կ'երդնում որ հանգստութեամբ բնակարան մ՛է այն :

— Այդ կարելի բան չէ, ըսաւ թագաւորը :

— Չեր վեհափառութիւնը կ'ուզէ՞ ինքն ստուգել, ըսաւ իշխանուհին որ կարի նախանձախնդիր էր իւր տունն ուզածին պէս տրամադրելու :

— Լաւ : Դու ալ կու գաս, Շուազէօլ :

— վեհափառ տէր, ժամը երկուքն է : Ժամը երկուքուկէսին ժողովը կը հաւաքուի : Հազիւ ժամանակ ունիմ վերսայլ դառնալու :

— Լաւ, գնա, դուքս, դնա, և սեւազգեստները ցնցէ : Իշխանուհի, կ'աղաչեմ, ցոյց տուէք ինձ փոքր օթեանները : Սաստիկ փափաք կ'զգամ ներքին կողմերը տեսնելու :

— Եկ, պարոն Միք, ըսաւ իշխանուհին իւր ճարտարապետին, պատեհութիւն կ'ունենաս կարծիք առնելու Նորին վեհափառութենէն որ ամեն բանէ շատ լաւ կը հասկընայ :

Թագաւորը առջևէն քայլեց, իշխանուհին անոր հետեւեցաւ :

Մատուռն առաջնորդող փոքր դրանդէն վեր ելան՝ ճեմելիքը մէկդի թողլով :

Մատուռին դուռը ձախ կողմն է. միւս կողմն է ուղիղ և պարզ սանդուխտ՝ որ օթեաններուն նրբանցքը կը տանի :

— Հոս ո՛վ կը բնակի, հարցուց Լուի Ժե :

— Տակաւին ոչ ոք, վեհափառ տէր :

— Տեսէք բանալի մը կայ առաջին օթեանին դրանը վրայ :

— Ա՛հ, ճշմարիտ է, օրիորդ տը Դավէրնէյ այսօր իւր բնակարանը կը կահէ և կը կտրագագրէ :

— Հո՞ս, ըսաւ թագաւորը դուռն ցոյց տալով :

— Այո՛, վեհափառ տէր :

— Եւ իւր սենեակն է : Չմտնե՛ք ուրեմն :

— Հիմա վար իջաւ, վեհափառ տէր. խոհանոցին փոքր բակին քիւին ներքև տեսայ զինքը :

— Ուրեմն իբրև օրինակ ցու անոր սենեակները ցոյց տուէք ինձ :

— Պատրաստ եմ ձեր փափաքը կատարելու, պատասխանեց իշխանուհին :

Եւ թագաւորը մտոցուց այն միակ սենեակը որուն առաջը կար նախասենեակ մը և երկու խցիկներ :



Արդէն շարուած քանի մը կարասիները , գրքեր , դաշնակ մը ,
Թագաւորին ուշը գրաւեցին , և մանաւանդ ամենագեղեցիկ ծաղիկ-
ներու ահագին փունջ մը՝ զոր օրիորդ տը Գավէրնէյ Ճաբոնի ա-
մանի մը մէջ դրեր էր արդէն :

— Ա՛հ . ըրաւ Թագաւորը , ի՛նչ գեղեցիկ ծաղիկներ , և դուք
կ'ուզէք պարտիզին մէջ փոփոխութիւն մտցընել . . . : Ո՛ր սա-
տանան այսպիսի ծաղիկներ հասցընող մարդիկ կը գտնէ ձեզի : Չե-
զի համար ալ կը պահեն :

— Արդարեւ գեղեցիկ փունջ մ'է :

— Պարտիզպանը հոգ կը տանի օրիորդ տը Գավէրնէյի . . . :
Ո՛վ է հոս տեղի պարտիզպանը :

— Չզիտեմ , վեհափառ տէր : Պարտիզպան գտնելու հոգը Պ.
ար Ժիւսիէօ վրան առած է :

Թագաւորը բոլոր բնակարանին վրայ հետաքրքիր աչք մը պտըտ-
ցուց , դարձեալ նայեցաւ դրսի կողմերը , և մեկնեցաւ :

Նորին Վեհափառութիւնը ճեմելիքէն անցաւ և մեծ Դրիանօնը
եկաւ . իւր մարդիկն իրեն կ'սպասէին , կառքով որսի մը համար
որ տեղի պիտի ունենար երեկոյեան ժամը երեքէն վեց :

Արքայորդին արեւը կը չափէր շարունակ :



ԴԱՐՄԱՆՆԵՐԻ ԹԻՒՆԸ ՎԵՐՍՏԻՆ ԿՍԿՍԻ

Մինչդեռ Թագաւորը Պ. տը Շուազէօյը լաւ մը ապահովե-
լու և իւր ժամանակն ալ չկորուսելու համար Դրիանօնի մէջ կը շրջա-
գայէր մինչև որսի երթալը , Լիւսիէն կեդրոն եղած էր ահաբեկ
դաւաճաններու խմբի մը , որ որսորդին վառօդին հոտն առնող

Generated on 2016-09-07 08:25 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google



Թուշուններու նման՝ տիկին Տիւպարիի քովը կը համեմէին թեւերնին բարբախելով :

Ժան և տը Ռիշլիէօ մարաջախար երկայն ատեն սրտնեղութեամբ իրարու նայելէն ետք՝ նախ իրենք ճանբայ ելան :

Միւսները սովորական սիրականներն էին՝ որոնք Շուաղէօլեանց անկմամբր մօտեցեր էին՝ բայց անոնց վերականգնումէն սոսկալով, և պաշտօնեայն ալ իրենց մօտը չըլլալով անոր պլլուելու համար, մեքենաբար Լիւսիէն կը դառնային տեսնելու համար թէ ծառը բաւական հաստատուն էր և թէ կրնային անոր պլլուիլ առաջուան նման :

Տիկին Տիւպարի դեսպանագիտական աշխատանքէն և զայն պսակող խարուսիկ յաղթանակէն ետք, կէսօրուան քունը կը քնանար՝ երբ Ռիշլիէօի կառքը դղեակը մտաւ ամպրոպի մ'արագութեամբ և աղմուկով :

— Տիրուհի Տիւպարին կը քնանայ, ըսաւ Չամօր առանց տեղէն թնդալու :

Ժան Չամօրի կառավարչի զգեստին լաւ նկարակերտութենովն սաստիկ կից մը աալով գորգին վրայ թաւալգլոր ըրաւ զան :

Չամօր սուր աղաղակներ արձակեց :

Հօն վազեց :

— Դարձեալ այդ պզտիկը կը ծեծես, տգեղ անասուն, ըսաւ :

— Քեզ ալ գետինը կ'անցընեմ, շարայարեց Ժան հրաբորբօր աչերով, եթէ կոմսուհին անմիջապէս չարթընցընես :

Բայց կոմսուհին արթընցընելու հարկ չկար. Չամօրի աղաղակներէն, Ժանի ձայնին գողէն զպալով որ աղէտ մը կայ՝ վարչամակով մը ծածկուած կը վազէր :

— Ինչ կայ, հարցուց զարհուրանօք տեսնելով որ Ժան բազմոցին վրայ ընկողմաներ էր բարկութեան ցոյցերը հանդարտելու համար, և մարաջախտն ալ ձեռքն անգամ չէր պագեր :

— Բա՛, ինչ պիտի ըլլայ, միշտ, միշտ Շուաղէօլը կայ :

— Ինչպէս :

— Այո՛, ամեն ատենէ աւելի, դժո՛խք :

— Ինչ ըսել կ'ուզէք :



— Պ. Տիւպարի կոմը իրաւունք ունի, շարայարեց Ռիշլիէօ. ա՛մնն ատենէ աւելի հիմա կայ Պ. տը Շուաղէօլ դուքսը :

Կոմսուհին թագաւորին տոմսակը հանեց ծոցէն :

— Իսկ այս, ըսաւ ժպտելով :

— Աղէկ կարդացիր, կոմսուհի, հարցուց մարաջախտը :

— Բայց . . . կարդալ գիտեմ, դուքս, պատասխանեց տիկին Տիւպարի :

— Հարկաւ, տիկին. բայց կը ներես որ ես ալ կարդամ :

— Ո՛հ, ստուգիւ. կարդա :

Դուքսը թուղթն առաւ, ծանր կերպով բացաւ և կարդաց,

«Դրապէս կը խոստանամ, վաղը շնորհակալ ըլլալու Պ. տը Շուաղէօլի, իւր մատուցած ծառայութեանցն համար :

«ԼՈՒԻ»

— Բացայայտ չէ, ըսաւ կոմսուհին :

— Կարի բացայայտ, պատասխանեց մարաջախտը դէմքը ծոռելով :

— Լա՛ւ, ի՛նչ կայ, հարցուց ժան :

— Լաւ, վաղը պիտի տանինք յաղթութիւնը, տակաւին բան մը կորսուած չէ :

— Ի՛նչպէս, վաղը՞, Բայց թագաւորը երէկ ստորագրեց այս թուղթը : Ուստի վաղը այսօր է :

— Կը ներես, տիկին, ըսաւ դուքսը. որովհետեւ թուական չկայ՝ Պ. տը Շուաղէօլին անկումն ուզած օրուանդ երկրորդ օրը վաղը պիտի ըլլայ շարունակ : Կրանժ-Պաղըլիէր փողոցը, տնէս հարիւր քայլ հեռի, գինետուն մը կայ որուն վրայ սա խօսքը գրած են կարմիր տառերով, «Հոս վաղը ապառիկ կու տան :» վաղը կը նշանակէ երբէք :

— Թագաւորը մեզ ծաղրեր է, ըսաւ ժան կատաղութեամբ :

— Անկարելի է, մըմուաց կոմսուհին վշտաբեկ. անկարելի է, այնպիսի նենգ մը չվայլեր . . . :

— Ա՛հ, տիկին, նորին Վեհափառութիւնը կարի զուարճասեր է, ըսաւ Ռիշլիէօ :

Generated on 2016-09-07 08:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Ասոր փոխարէն ինձ պիտի հատուցանէ , դուքս , շարայարեց կոմսուհին ցասկոտ շեշտով մը :

— Նաև , կոմսուհի , պէտք չէ թագաւորին սիւ պահել , պէտք չէ Նորին Աւհափառութիւնը զրպարտել նենգաւոր է : խաբեբայ է ըսելով . ոչ , թագաւորը խոստացածը կատարեց :

— Օ՛հ անդր , ըսաւ Ժան կարի գուեհիկ ձևով մ'ուսերը շարժելով :

— Ի՞նչ խոստացաւ , գոչեց կոմսուհին . Շուազէօլին շնորհակալ ըլլալ :

— Ճիշդ այնպէս , տիկին . ես լսեցի որ Նորին Աւհափառութիւնը դրապէս շնորհակալ եղաւ անոր մատուցած ծառայութեանցն համար : Բառը երկու իմաստ ունի . դեսպանագիտութեան մէջ իւրաքանչիւր ոք իւր ուզած իմաստովը կ'ըմբռնէ . դու քու ուզած իմաստովդ ըմբռնեցի ես , թագաւորն ալ իւր ուզած իմաստով : Այս կերպով վաղը բառն ալ վիճի ներքև չմնար . քու կարծեօքդ , թագաւորն այսօր պիտի բռնէր խօսքը , բռնեց : Ես որ քեզի կը խօսիմ , ես լսեցի անոր շնորհակալ ըլլալը :

— Գուքս , կատակ ընելու ժամանակ չէ կարծեմ :

— Միթէ կը կարծես որ կատակ կ'ընեմ , կոմսուհի : Ժան կոմսին հարցուր :

— Է՛հ , ոչ , կատակ չենք ըներ : Այս առտու թագաւորը Շուազէօլը գրկեց , գգուեց , փաղաքշեց , և այս ժամուս երկուքն ալ Գրիանծններուն մէջ կը շրջագային թե թեի տուած :

— Թե թեի տուած , կրկնեց Շոն որ կամաց մը ներս մտնէր , և սպիտակ թևերը վեր վերցուց՝ իբրև մէկ նոր օրինակ՝ յուսարեկ նիովբէին :

— Այո , ինձ խաղ խաղացեր են , ըսաւ կոմսուհին , բայց պիտի տեսնենք . . . : Շոն , պէտք է որ նախ որսի պատրաստութիւնները ետ թողուս . շպիտի երթամ :

— Լա՛ւ , ըսաւ Ժան :

— Քիչ մը կեցիր , գոչեց Ռիշլիէօ , յախուռն պոթծելու չէ , սրդողելու չէ . . . : Ա՛հ , կը ներես , կոմսուհի , քեզի խրատ տալու կը համարձակիմ . կը ներես :

— Տուր, դուքս, մի նեղուիր. կարծեմ խելքս կը կորսընցընեմ :
Տես եղածը. մարդ չուզեր քաղաքագիտութեամբ զբաղիլ, և երբ
մարդ օր մը զայն կը խառնէ՝ ոտքով գլխով մէջը կ'իյնայ անձնա-
սիրութեանն համար . . . : Ուստի կ'ըսես . . .

— Թէ այսօր սրդողիլը խելք չէ : Դժուարին կացութեան մը
մէջ կը գտնուինք, կոմսուհի : Եթէ թագաւորն ստուգիւ Շուա-
զէօլեանց կը կապուի, իշխանուհիէն ազդեցութիւն կը կրէ, և քե-
զի հետ այսպէս յայտյանդիման կ'աւրուի՝ այն ատեն . . .

— Այն ատեն :

— Այն ատեն պէտք է որ աւելի սիրուն երեխս, կոմսուհի :
Գիտեմ որ անկարելի է, բայց մեր գտնուած պարագային մէջ
անկարելին հարկաւոր է. ուստի անկարելին 'ի գործ դրէք . . . :
Կոմսուհին մտածեց :

— Ըստ որում, շարունակեց դուքսը, եթէ թագաւորն Գերմա-
նական բարքն ընդունէր :

— Եթէ առաքինութեան դառնար, բացագանչեց Ժան սարսա-
փահար :

— Ո՞վ գիտէ, կոմսուհի, ըսաւ Ռիշլիէօ, քանի՛ հրապուրիչ
է նորաձևութիւնը :

— Ո՛հ, պատասխանեց կոմսուհին դժուարահաւան շարժում մը
ընելով, այդ չեմ կարծեր :

— Աւելի այլանդակ բաներ տեղի ունեցած են, տիկին. կը յի-
շես ճգնաւոր ձևացող սատանին առակը . . . : Ուստի պէտք կ'ըլ-
լայ շսրդողիլ :

— Բայց բարկութենէս կը խեղդուիմ :

— Է՛հ, չգիտեմ. խեղդուէ, կոմսուհի, բայց թագաւորը, այս-
ինքն Պ. տը Շուազէօլ չգիտէ. մեր մէջ խեղդուէ, անոնց մէջ
հանգիստ շունչ առ :

— Ուրեմն որսի երթամ :

— Շատ ճարտարութեամբ վարուած կ'ըլլաս :

— Դո՛ւ, դուքս :

— Ո՛հ, ես, չորս ոտքով ալ հարկ ըլլայ որսի երթալ՝ պիտի
երթամ :

Generated on 2016-09-07 08:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Ուրեմն իմ կառքովս , գոչեց կոմսուհին տեսնելու համար թէ
ինչ կերպարանք պիտի առնէր իւր դաշնակիցը :

— Կոմսուհի , պատասխանեց դուքսը այնպիսի հպտանօք որ իւր
զայրոյթը կը ծածկէր , այդ այնպիսի երջանկութիւն մ'է . . . :

— Որ կը մերժես , այնպէս չէ՞ :

— Ե՞ս : Աստուած չընէ :

— Մտածէ , ինքզինքդ վտանդի կ'ենթարկես :

— Ինքզինքս վտանդի ենթարկել չեմ ուզեր :

— Կը խոստովանի , երես ալ ունի խոստովանելու , գոչեց տի-
կին Տիւպարի :

— Կոմսուհի , Պ. տը Շուազէօլ երբէք չպիտի ներէ ինձ :

— Ի՞նչ ալ շուտ աղէկցար Պ. տը Շուազէօլին հետ :

— Կոմսուհի , կոմսուհի , իշխանուհւոյն հետ պիտի աւրուիմ :

— Լաւ և՛ս ունիս որ իւրաքանչիւրս առանձին կուռնք առանց
արդիւնքէն բաժին ունենայու : Տակաւին ժամանակ կայ : Ատանդի
մէջ չես , և դեռ կրնաս ելնել ընկերութենէն :

— Ձիս չես գիտեր , կոմսուհի , ըսաւ դուքսն անոր ձեռքը համ-
բուրելով : Կերկայացմանդ օրը վարանեցայ , երբ հարկ եղաւ զդեսս
մը , վարսավիրայ մը և կառք մը գտնել քեզի : Ուրեմն այսօր
ինչո՞ւ վարանիմ : Ո՛հ , կարծածէդ աւելի քաջասիրտ եմ , կոմսուհի :

— Ուրեմն որոշուեցաւ : Երկուքս ալ որսի պիտի երթանք , և
այն պատրուակ մը պիտի ըլլայ ինձ մէկը չտեսնելու , մէկը չլսելու ,
մէկու մը չխօսելու :

— Եւ ոչ իսկ թագաւորին :

— Ընդհակառակը անոր այնպիսի մեղմելի խօսքեր սլիտի ընեմ
որ համբերութիւնը պիտի հասնի :

— Քաջ է , այսպէս է պատերազմի կանոնը :

— Բայց դու , Ժան , ի՞նչ կ'ընես : Տեսնեմ , քիչ մը դուրս ել
բարձերուն մէջէն . ողջ ողջ ինքզինքդ թաղեր ես , բարեկամ :

— Ըրածս կ'ուզես գիտնալ :

— Բայց այո , թերևս օգտակար կ'ըլլայ մեզ այն :

— Լաւ ուրեմն , կը մտածեմ . . . :

— Ի՞նչ :

— Կը մտածեմ որ այս պահուս քաղաքին և նահանգին բոլոր
երգագիրները կարելի եղած ամեն եղանակներով մեր վրայ կը
գրեն . Գաղտնիքը կարկանդակի թերթերու նման մեզ կը բա-
նան . Զբոսորդը կրօնականութիւնը մեզի նշան կ'առնէ զրահ չունենալուս
համար . Գիտողներու Լրագիրը մեր ոսկրներուն մինչև ուղեղը կը
գիտէ . վերջապէս վաղը այնպիսի վիճակի մը մէջ պիտի գտնուինք
որ ամենքն ալ մեր վրայ պիտի գլխան , նոյն իսկ Շուաքէօլ մ'ալ :

— Եւ ինչ կը հետեցնես . . . հարցուց դուքսը :

— Կը հետեցնեմ թէ հիմա պիտի վազեմ Բարիզ երթամ քիչ
մը պրօն և քիչ մ'ալ սպեղանի պիտի առնեմ մեր վէրքերուն
վրայ դնելու համար : Գրամ տուր ինձ , քոյրիկ :

— Ո՞րքան , հարցուց կոմսուհին :

— Քիչ բան , երկու երեք հարիւր ոսկի :

— Կը տեսնես , դուքս , ըսաւ կոմսուհին Ռիշլիէօի կողմը դառ-
նալով , հիմայէն կը վճարեմ պատերազմի ծախքերը :

— Պատերազմին սկզբնաւորութիւնն է . այսօր ցանէ , վաղը կը
քաղես :

Կոմսուհին աննկարագրելի շարժումով մը ուսերը վեր բրաւ , ոտք
ելաւ , դնաց զգրոցը բացաւ , դրամատոմսերու ծրար մը հանեց հոն-
կէ , առանց համբերու ժանին տուաւ . սա ևս առանց համբերու
զրպանը նետեց զանոնք կոշտ հառաչ մ'արձակելով :

Ապա ոտք ելնելով , ձգտուելով , վաստակաբեկ մարդու մը նման
թևերը զալարելով , ժան երեք քայլ առաւ սենեկին մէջ :

— Ահա այս մարդիկը , ըսաւ դուքսը և կոմսուհին ցոյց տա-
լով , որսի երթալով պիտի զուարճանան , մինչդեռ ես Բարիզ կը
սրանամ . անոնք գեղեցիկ երիտասարդներ և գեղեցիկ կիներ պիտի
տեսնեն , մինչդեռ ես մրտտիչներուն (gratte-papier) ժանտատեսիլ
կերպարանքը պիտի դիտեմ : Ստուգիւ տանը շունն եմ ես :

— Գիտցիր որ , դուքս , ըսաւ կոմսուհին , բնաւ մեզմով չպիտի
զբաղի . դրամատոմսերուս կէս հերատուկի մը պիտի տայ , և մնա-
ցածն ալ խաղարան մը երթալով պիտի խաղայ . ահա ընելիքը
այս է , և կ'ուսայ թշուառականը : Է՛հ , կորսուէ , ժան , ինձ
սոսկում կը պատճառես :

Ժան երեք շաբարաման պարպեց և գրպանները լցուց, աղա-
մանդեայ աչերով Չինուհի մը յափշտակեց դարակին վրայէն, և
մեծ մարդու մը պէս մեկնեցաւ առանց ուշ դնելու կոմսուհոյն
ջղային աղաղակներուն :

— Ինչ աղուոր տղայ, ըսաւ Ռիշլիէօ այն եղանակաւ որով
հացկատակ մը այս սոսկալի տղաքներէն մին կը գովէ՝ մտովի երկ-
նից շանթն հայցելով անոր գլխուն. շատ սուղի կը նստի քեզի .
. . . այնպէս չէ, կոմսուհի :

— Ինչպէս որ կ'ըսէք, դուքս, իմ քով շահու դրած է իւր
բարեսիրութիւնը՝ որ տարին երեք չորս հարիւր հազար Փրանք կը
բերէ իրեն :

Ժամացոյցն հնչեց :

— Կէսօր ու կէս, կոմսուհի, ըսաւ դուքսը. երջանկաբար գրեթէ
հագուած ես. քիչ մը ցոյց տուր ինքզինքդ դրանիկներուդ որոնք
կը կարծեն թէ խաւարում կայ, և շուտ կառք հեծնենք. գիտե՞ս
որան ինչպէս պիտի ըլլայ :

— Երէկ նորին Վեհափառութեան հետ որոշեցինք. Մարլիի
անտառը պիտի երթային, և անցնելու ատեննին զիս պիտի առ-
նէին :

— Ո՛հ, ես ապահով եմ որ Թագաւորը իւր նախագրէն (pro-
gramme) բան մը չպիտի փոխէ :

— Հիմա քու յատակադի՞ծդ, դուքս : Ըստ որում կարգը քոյդ
է յատակադի՞ծ մը տայու :

— Տիկին, երէկուանէ գրեցի քեռորդուոյս որ, իմ նախագրաց-
մանցս նայելով, արդէն ճանբան ըլլալու է :

— Պ. տ'Էլիւլօն :

— Շատ պիտի զարմանամ եթէ վաղը նամակիս հետ իրար չկտրեն
ճանբան, և վաղը կամ առ առաւելն միւս օր հոս չհասնի :

— Եւ դու անոր վրայ կը դնես յոյս :

— Է՛հ, սիկին, խորհուրդներ կան անոր քով :

— Ի՞նչ փոյթ, մեք շատ հիւանդ ենք : Թագաւորը թերեւս զի-
ջանէր, եթէ սոսկալի վախ մը չունենար դործերէն :

— Մինչ զի՛ . . . :

— Մինչ զի կը գողամ որ երբէք չպիտի հաւանի Պ. տը Հուա-
զէօլը զոհելու :

— Կ'ուզեմ որ համարձակ խօսիմ, կոմսուհի :

— Ստուգիւ :

— Լաւ ուրեմն, ես ալ չեմ հաւատար : Թագաւորը երէկուա-
նին նման հարիւր պտոյտներ կ'ընէ, շատ հանձարեղ է Նորին
Ղեկավարութիւնը : Գու ալ, կոմսուհի, անտեղի յամառութեամբ
մ'անոր սէրը կորսընցընելու վտանգը աչքդ չես առնուր անշուշտ :

— Է՛հ, մտածելու է այդ մասին :

— Ուստի կը տեսնես, կոմսուհի, որ Պ. տը Հուազէօլ յաւի-
տեան հոն է. զան իւր տեղէն հանելու համար մի միայն հրաշք
մը պէտք է :

— Այո՛, հրաշք մը, կրկնեց կոմսուհին :

— Եւ դժբաղդաբար մարդիկ ալ հրաշք չեն գործեր, պատաս-
խանեց դուքսը :

— Ո՛հ, ըսաւ տիկին Տիւպարի, ես մէկը կը ճանչնամ որ տա-
կաին հրաշք կը գործէ :

— Հրաշագործ մէկը կը ճանչնա՞ք, կոմսուհի :

— Իրաւ որ կը ճանչնամ :

— Ինչո՞ւ չըսիք ինձ ուրեմն :

— Այս պահուս միայն միտքս ընկաւ, դուքս :

— Կը կարծեմ որ այն յանդուգն մարդը կարող է մեզ մեր նե-
ղութենէն ազատել :

— Ես կը կարծեմ որ նա ամեն բանի կարող է :

— Ո՛հ, ո՛հ . . . : Եւ ի՞նչ հրաշք գործեց : Պատմէ ինձ քիչ
մը զայն, կոմսուհի, որպէս զի օրինակցուէն հասկընամ :

— Գուքս, ըսաւ տիկին Տիւպարի տը Ռիշլիէօի մօտենալով և
ակամայ ձայնը ցածրնելով, այս այնպիսի մարդ մ'է որ տասն
տարի առաջ Լուի Ժ. հրապարակը պատահեցաւ ինձ և ըսաւ որ
Քաղղիոյ թագուհի պիտի ըլլամ :

— Արդարեւ հրաշալի է այդ, և այդ մարդը կարող պիտի ըլ-
լար ինձ գուշակելու որ առաջին պաշտօնեայ պիտի մեռնիմ :

— Այնպէս չէ՞ :

- Ո՛Տ , վայրկեան մը չեմ կասկածիր : — Ի՞նչ է անունը :
- Անունէն բան մը չես հասկընար :
- Ո՛ւր է :
- Ա՛Տ , ահա այդ չեմ գիտեր :
- Իւր հասցէն չտուա՞ւ քեզի :
- Ոչ : Ինքը պիտի դար իւր վարձքը խնդրելու :
- Ի՞նչ խոստացար իրեն :
- Ինչ որ ուզէր :
- Չեկա՞ւ :
- Ոչ :
- Կոմսուհի , ահա այս իւր գուշակութենէն աւելի հրաշալի է : Իրօք այն մարդը մեզի պէտք է :
- Բայց ի՞նչ ընելու է :
- Անունը՞ , կոմսուհի , անունը՞ :
- Երկու անուն ունի :
- Կարգաւ երթանք . ի՞նչ է առաջին անունը :
- Տը Ֆէնիքս կոմս :
- Ի՞նչ , այն մարդը որ ներկայացմանդ օրն ինձ ցուցըցիր :
- Ճիշդ :
- Այն Բրուսիացի՞ն :
- Այն Բրուսիացի՞ն :
- Ո՛Տ , ալ վստահութիւն չունիմ : Բոլոր իմ ճանչցած կախարդներուս անունները ի կամ օ վերջաւորութիւն ունէին :
- Այդ սքանչելի կերպով կը յարմարի , դուքս . երկրորդ անունը ըսած կերպովդ կը վերջանայ :
- Ի՞նչ է այն անունը :
- Ժօզէֆ Պալսամօ :
- Վերջապէս միջոց մը չե՞ս կրնար ունենալ զինքը գտնելու :
- Պիտի մտածեմ ասոր վրայ , դուքս : Կարծեմ թէ զանձանչցող մէկը գիտեմ :
- Լա՛ւ : Բայց աճապարէ , կոմսուհի : Տես ժամը մէկին քառորդ կայ :
- Պատրաստ եմ : Կա՛մքս :

Տասն վայրկեան ետք, տիկին Տիւպարի և Պ. տը Ռիչլիէօ կառ-
քին մէջ քով առ քով նստած՝ որսի ելնողներուն առաջը կ'ըն-
թանային :

ԶԲ

ԿԱԽԱՐԴՈՐՍՈՒԹԻՒՆ

Կառքերու երկայն շարք մը Մարլիի անտառին ծառուղիները
էը գոցէր, ուր թագաւորը որսի կ'եւնէր :

Կէսօրէն ետք որս մ'ըսածնին այս էր :

Արդարև Լուի Ժե. իւր կենաց ետքերը ոչ հրացանով և ոչ
կենդանին յոգնեցընելով չէր որսար :

Մեր ընթերցողներէն անոնք որ Պլուտարքոսը կարդացած են՝
թերևս պիտի յիշեն Մարգ-Անդուանի այն խոհարարը՝ որ ժամէ 'ի
ժամ կինձ մը կը շամփրէր՝ որպէս զի խորովող հինգ վեց կինձե-
րուն մէջ միշտ հատ մը կատարեալ կերպով եփած գանուի, Մարգ-
Անդուանի սեղան նստելու ճիշդ ատենին պատրաստ գանուելու հա-
մար :

Որովհետև Մարգ-Անդուան, ստորին Ասիոյ իշխանութեանը մէջ,
շատ գործ ունէր. դատաստան կը կտրէր, և Կիլիկիացիք երևելի
գողեր ըլլալնուհ համար, ըստ հաստատութեան Ժիւլէնալի, Մարգ-
Անդուան շատ զբաղած էր : Միշտ հինգ վեց խորոված կը գտնուէր
շամբուրին վրայ, որպէս զի այն իւր դատաստանական պաշտօնին
մէջ դիպուածով ժամանակ մ'ունեցած ատեն պատառ մը բան
ուտէ :

Արդ, Լուի Ժե.ի համար ալ այսպէս էր : Կէսօրէն ետքի որ-
սերուն համար երկու երեք այծեամ թոյլ կու տային զանազան ժա-

մերու մէջ, և ունեցած տրամադրութեանն համեմատ շուտ կամուշ կ'որսար :

Այն օրը Նորին Աւհափառութիւնը յայտներ էր որ մինչև ժամը չորս պիտի որսար : Ուստի կէսօրէն հետէ թոյլ տրուած այծեամ մ'ընտրեր էին՝ որ մինչև այն ատենը կրնար տեւել :

Տիկին Տիւպարի ևս միտքը դրեր էր թագաւորին հետեւելու այնքան ճշդութեամբ՝ որքան որ թագաւորը միտքը դրեր էր այծեամին հետեւելու :

Սակայն եկողները կ'առաջագրեն ու դիպուածը կը տրամադրէ : Դիպուածը գրեթէ կոմսուհւոյն չափ հետաքրքիր ախոյեան մը հաներ էր դէմը :

Մինչդեռ, Պ. ար Ռիշլիէօի հետ քաղաքականութեան վրայ խօսելով, կոմսուհին Նորին Աւհափառութեան ետեւէն կը վազէր, ինչպէս որ Նորին Աւհափառութիւնն ալ այծեամին ետեւէն, և դուքսն ու ինքը ճանբան իրենց ուղղուած բարեներուն կը պատասխանէին՝ յանկարծ, ճանբէն յիսուն քայլի չափ հեռի, կանաչեղէններու զմայլելի հովանիի մը ներքե, խորտակուած կառք մը տեսան, որ իւր երկու անիւները երկնից կողմը կը դարձնէր ուղորմագին, մինչդեռ երկու սև ձիերը որ պարտէին զայն քաշել՝ մին սփիի մը փեճեկը և միւսն ալ ոտքին ներքե գտնուած մամուռը հանդարտօրէն կը կրծէին :

Տիկին Տիւպարիի ձիերը որ թագաւորէն տրուած սքանչելի կառածիգ երիվարներ էին, բոլոր միւս կառքերը ետե թողեր էին, ինչպէս որ այսօր ալ կ'ըսեն, և առաջ անոնք հասեր էին խորտակուած կառքին մօտ :

— Տես, աղէտ մը, ըսաւ կոմսուհին հանդարտօրէն :

— Արդարեւ, այո՛, ըսաւ դուքսը մի և նոյն անտարբերութեամբ, ինչու որ արքունեաց մէջ քիչ զգայնութիւն ցոյց կու տան. արդարեւ, այո՛, կառքը ջախջախեր է :

— Հոն խոտին վրայ տեսածս մեռեալ մ'է, հարցուց կոմսուհին : Նայէ՛, դուքս :

— Չեմ կարծեր որ մեռեալ մ'ըլլայ, ինչու որ կը շարժի :

— Մարդ է թէ կին :

— Շատ աղէկ չգիտեմ : Աչերս շատ գէշ են :

— Տէս , կը բարևէ :

— Ուրեմն մեռեալ չէ :

Եւ Ռիշլիէօ եռածայր գլխարկը վար առաւ գլխէն՝ առանց ո՛վ
ըլլալը հասկընալու :

— Է՛՛հ , բայց , կոմսուհի , ըսաւ , ինձ կը թուի . . . :

— Նոյնպէս և ինձ :

— Թէ սրբազան Լուի իշխանն է :

— Անձամբ տը Ռօհան կարդինալը :

— Ի՛նչ կ'ընէ հոն , հարցուց դուքսը :

— Երթանք տեսնենք , պատասխանեց կոմսուհին . Շամբայն ,
Խորտակուած կառքին կողմը վարէ :

Կոմսուհւոյն կառավարն իսկոյն ճանբան թողուց և անտաւիններ-
քև մտաւ :

— Արդարև , այո՛ , սրբազան կարդինալն է , ըսաւ Ռիշլիէօ :

Իրօք Նորին Սրբազնութիւնն էր որ խոտին վրայ ընկողմաներ
էր , սպասելով որ ծանօթ մէկն անցնի :

Տիկին Տիւպարիին իրեն գալը տեսնելով ոտք ելաւ :

— Բազում յարգանք տիկին կոմսուհւոյն , ըսաւ :

— Ի՛նչպէս , կարդինալ , դուք :

— Նոյն ինքն ես :

— Ոտքի վրայ :

— Ոչ , նստած :

— Արդեօք վիրաւորուած էք :

— Բնաւ :

— Եւ ի՛նչ դիպուածով այս վտանգին մէջ կը գտնուիք :

— Մի հարցընէք , տիկին . սա անբան կառավարին , դատարկա-
սուն մ'որ Անգղիայէն բերել տուի , ըսի որ անտառէն մտնէ որ-
սին հասնելու համար , և այնքան նեղ միջոցի մէջ դարձաւ՝ որ
կառքը դարձաւ և իմ ընտրելադոյն կառքերէս մին խորտակեցաւ :

— Բնաւ մի գանգաաիք , կարդինալ , ըսաւ կոմսուհին . Գաղղիա-
ցի կառավար մը ձեր վիզը կամ առ նուազն ձեր կողերը պիտի
խորտակէր :

- Թերևս ճշմարիտ է այդ բաժնիդ :
- Մխիթարուեցէք ուրեմն :
- Ո՛հ, ես փիլիսոփայօրէն կը վարուիմ, կոմսուհի, միայն թէ պիտի ստիպուիմ սպասելու, ի՛նչ մահացու տաղտուկ :
- Ի՞նչպէս, իշխան, սպասելո՞ւ. Ռօհան մը կ'սպասէ :
- Հարկ է :
- Յիրաւի ոչ. ես աւելի լաւ ունիմ կառքէն իջնել՝ քան թէ ձեզ հոգ թողուլ :
- Ճշմարիտ, տիկին, զիս ամօթապարտ կ'ընէք :
- Հեծէք, իշխան, հեծէք :
- Ո՛չ, շնորհակալ եմ, տիկին. Սուպիսի կ'սպասեմ որ որսին ընկերացած է, և անշուշտ քանի մը վայրկենէն հոսկէ կ'անցնի :
- Բայց եթէ ուրիշ ճանբայ մը բռնած է :
- Փոյթ չէ :
- Սրբազան, կ'աղաչեմ :
- Ո՛չ, շնորհակալ եմ :
- Բայց ինչո՞ւ համար :
- Բնաւ չեմ ուզեր ձեզ նեղել :
- Կարդինալ, եթէ մերժէք՝ զգեստիս պոչը պայիկի մը բռնել կու տամ, և զրիադի մը նման անտառներուն մէջ կը վազեմ :
- Կարդինալը ժպտեցաւ. և մտածելով որ իւր երկարատեղ զիմա-գրութիւնը կրնայ ուրիշ նշանակութիւն մ'ունենալ կոմսուհոյն համար, որոշեց կառքն հեծնել :
- Դուքան արդէն կառքին խորն իր տեղէն ելեր և առջևի նստա-րանին վրայ տեղաւորուեր էր. կարդինալն սկսաւ պատուոյ սակարկութեան մանել՝ սակայն դուքան անողոքելի մնաց :
- Իսկոյն կոմսուհոյն ձիանը կորսուած ժամանակին տեղը լցուց :
- Կը ներէք, սրբազան, ըսաւ կոմսուհին կարդինալին, բայց Ձեր Սրբազնութիւնը հաշտուեր է ուրեմն որսին հետ :
- Ի՞նչպէս :
- Ինչու որ առաջին անգամն է որ այս զբօսանքին մասնակից քլլալնիդ կը տեսնեմ :
- Ոչ, կոմսուհի : Վէրսայլ եկեր էի, նորին Վեհափառութեան

յարդանքս մատուցանելու պատիւն ունենալու համար , երբ իմացայ որ որսի ելեր է — ստիպողական գործի մը վրայ խօսելիք ունէի իրեն — սկսայ ետեէն իյնալ — բայց այս անիծեալ կառավարին շնորհիւ , ոչ միայն թագաւորին ունկնդրութիւնը չպիտի վայելեմ՝ այլ և քաղաքը տուած ժամադրութեանս ալ չպիտի հասնիմ :

— Կը սեսնես , տիկին , ըսաւ դուքսը խնդալով , սրբազանը իրեն յայտնի կը խոստովանի քեզի . . . սրբազանը ժամադրութիւն մ'ունի :

— Որուն չպիտի հասնիմ , դարձեալ կ'ըսեմ , պատասխանեց Նորին Սրբազնութիւնը :

— Միթէ Ռօհան մը , իշխան մը , կարդինալ մը , բանէ մը ետ կը մնայ , ըսաւ կոմսուհին :

— Ե՛հ , ըրաւ իշխանը , միայն թէ հրաշք մ'ըլլայ : Գուքնն ու կոմսուհին իրարու նայեցան . այս բառը նոր յիշատակ մը կը բերէր անոնց միտքը :

— Յիրաւի , իշխան , ըսաւ կոմսուհին , որովհետեւ հրաշքի վրայ կը խօսիք , համարձակ պիտի ըսեմ որ շատ դո՛հ եմ Եկեղեցւոյ իշխանի մը պատահելովս , իրեն հարցընելու համար թէ ինքն ալ կը հաւատայ :

— Ինչի՛ , տիկին :

— Ի՞նչ պիտի ըլլայ , հրաշքի , ըսաւ դուքսը :

— Ս . Գիրքը հաւատոյ մէկ մասը կը նշանակէ զայն , տիկին , ըսաւ կարդինալը հաւատացեալի հով մ'առնելու ջանալով :

— Ո՛հ , խօսքս հին հրաշքներուն վրայ չէ , պատասխանեց կոմսուհին :

— Եւ ի՞նչ հրաշքի վրայ է խօսքերնիդ , տիկին :

— Այժմեան հրաշքներուն վրայ :

— Ասոնք հազրուպիւտ են շիտակը , ըսաւ կարդինալը : Սակայն . . . :

— Սակայն ի՞նչ :

— Շիտակը , ես այնպիսի բաներ տեսայ , որ եթէ հրաշալի ալ չէին՝ դէթ կարի անհաւատալի էին :

— Գուք այդպիսի բաներ տեսա՞ք , իշխան :

Generated on 2016-09-07 08:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Պատուոյս վրայ կ'երգնում :

— Բայց գիտես, տիկին, ըսաւ Ռիշլիէօ խնդալով, որ Նորին Սրբազնութեան համար կ'ըսեն թէ ոգիներուն հետ յարաբերութիւն ունի, որ թերևս այնչափ ուղղափառ ընթացք մը չէ :

— Ոչ, սակայն շատ գիւրութիւններ կ'ընծայէ, ըսաւ կոմսուհին :

— Եւ ի՞նչ տեսաք, իշխան :

— Երդուած եմ գաղտնի պահելու :

— Ո՛հ, ո՛հ, իրն աւելի կը ծանրանայ :

— Այսպէս է, տիկին :

— Սակայն եթէ ձեր տեսած կախարդութիւնը գաղտնի պահել խոստացած էք, թերևս կախարդն ալ գաղտնի պահել խոստացած չէք :

— Ոչ :

— Լաւ ուրեմն, իշխան, պէտք է ձեզի ըսեմ որ դուքն ու ես դուրս ելանք ու եւ կախարդ մը փնտռելու համար :

— Իրա՛ն :

— Պատուոյս վրայ :

— Իմն առէք :

— Ատկէ աղէկ ի՞նչ կայ :

— Պատրաստ է ձեզ ծառայելու, կոմսուհի :

— Նաև ի՞նչ, իշխան :

— Նաև ձեզ, դուքս :

— Ի՞նչ է անունը :

— Տը Ֆէնիքս կոմս :

Տիկին Տիւպարի և դուքսն իրարու նայեցան երկուքն ալ սո՛՛գունեցաւ,

— Ի՞նչ տարօրինակ բան, ըսին միասին :

— Միթէ կը ճանչնա՞ք զինքը, հարցուց իշխանը :

— Ոչ : Նա կախարդ է կ'ըսէք :

— Ըսածս կը կրկնեմ :

— Իրեն խօսեցա՞ք :

— Անշուշտ :

— Ինչպէս գտաք :

— Անթերի :

— Ի՞նչ առթիւ :

— Բայց . . . :

Կարդինալը վարանեցաւ :

— Բաղդս դուշակելուն առթիւ :

— Ճիշդ գուշակեց :

— Այսինքն մինչև անգամ անդիի աշխարհէն լուր սուաւ ինձ :

— Տը ֆէնիքս կոմսէն ուրիշ անուն չունի :

— Ունի . ուրիշ մէկ անունն ալ լսած եմ . . . :

— Ըսէք, սրբազան, ըսաւ կոմսուհին անհամբեր :

— Ժօզէֆ Պալսամօ, տիկին :

Կոմսուհին ձեռներն իրար կցեց Ռիշլիէօի նայելով : Ռիշլիէօ քթին ծայրը քերեց կոմսուհւոյն նայելով :

— Շատ սե՛ է սատանան, յանկարծ հարցուց տիկին Տիւպարի :

— Սատանան, կոմսուհի : Բայց ես չտեսայ զան :

— Ի՞նչ կ'ըսէք իբե՛ն, կոմսուհի, գոչեց Ռիշլիէօ : Ի՞նչ աղուոր ընկերութիւն մ'է այդ կարդինալի մը համար :

— Միթէ առանց սատանան ցոյց տալու բաղդդ կը գուշակե՞ն, հարցուց կոմսուհին :

— Ա՛հ, ստուգիւ, ըսաւ կարդինալը . սահաւամիտ մարդոց միայն ցոյց կու տան սատանան . բայց մեզի համար զանց կ'ընեն այդ ձեւերը :

— Միով բանիւ, ինչ որ կ'ուզէք ըսէք, իշխան, շարայարեց տիկին Տիւպարի . միշտ քիչ մը սատանի գործ կայ անոր ներքեւ :

— Է՛հ, ես ալ այնպէս կը կարծեմ :

— Կանաչ հուրեր, այնպէս չէ՛, կմախքներ, դժոխային սաներ որոնք այրուածի պարշելի հոտ մը կը բուրեն :

— Բայց ոչ, ոչ . իմ կախարդս ընտիր կերպեր ունի . շատ վեհանձն մարդ մ'է, և ընդհակառակը, շատ լաւ ընդունելութիւն կ'ընէ :

— Ժամադէտդ գտնել չ'պիտի ստաս այն կախարդին, կոմսուհի, հարցուց Ռիշլիէօ :

— Շիտակը այդ փափաքիս համար կը մեռնիմ :

— Ըրէք, տիկին :

— Բայց ո՞ր կը կատարուն անոնք, հարցուց տիկին Տիւպարի յուսալով որ կարգինալն իրեն պիտի ըսէր փնտուած հասցէն :

— Կարի վայելուչ կերպով կահուած գեղեցիկ սենեակ մը :

Կոմսուհին անհամբերութիւնը ծածկելու նեղութիւն կը կրէր :

— Լաւ, ըսաւ, սակայն տունը :

— Վայելուչ տուն մը, թէպէտ տարօրինակ ձևով :

Կոմսուհին բարկութենէն ինքզինքը կ'ուսէր, կարգինալն իւր միտքը չհասկընալուն համար :

Ռիշլիէօ օգնութեան հասաւ իրեն :

— Բայց չէք տեսներ, սրբազան, որ տիկինը տակաւին կախարհին ո՞ր բնակիլը չգիտնալուն համար սիրտը կը ճաթի :

— Ո՛ւր բնակիլը, ըսիք :

— Այո՛ :

— Ա՛հ, շատ լաւ, սլատասխանեց կարգինալը : Է՛հ, շիտակը, կեցէք . . . ոչ . . . այո . . . ոչ : Ի Մարէ, գրեթէ պողոտային անկիւնը, Սուրբ-Փրանսուա փողոց, Սուրբ-Անաստօզ փողոց . . . ոչ : Վերջապէս սուրբի մ'անունով է :

— Բայց ո՞ր սուրբին, տեսնե՞ք, դուք որ անոնց ամենքն ալ գիտէք անշուշտ :

— Շիտակը ոչ, ընդհակառակը . անոնցմէ շատ քիչը գիտեմ, ըսաւ կարգինալը . բայց կեցէք, շաղաշուտ պայիկս գիտնալու է զայն :

— Ճիշդ, ըսաւ դուքսը, կառքին ետեւն է : Կառքը կեցո՞ւր, Շամբայն, կեցո՞ւր :

Կառավարն յանկարծ ձիերը կեցուց, որոնք իրենց ջլուտ ծնգանցը վրայ տատանելով կայ առին :

— Օլիվ, ըսաւ կարգինալը, հո՞ն ես շաղաշուտ :

— Այո՛, սրբազան հայր :

— Իրիկուն մը ո՞ր գայի, 'ի Մարէ, շատ հեռուն :

Պայիկը կատարելապէս իմացեր էր խօսակցութիւնը, բայց բնաւ գիտնալ չցուցուց :

— Ի Մարէ՛ . . . ըսաւ փնտուել ձեացընելով :

— Այո՛, պողոտային մօտ :

- Ո՞ր օր , սրբազան հայր :
- Սէն-Տընիէն վերադարձած մէկ օրս :
- Սէն-Տընիէն , կրկնեց Օլիվ , ինքզինքին յարգ մը տալու և աւելի բնական կերպարանք մ'առնելու համար :
- Է՛հ , այո , Սէն-Տընիէն . կառքն ալ սլողոտան կ'սպասէր , կարծեմ :
- Շատ լաւ , սրբազան հայր , շատ լաւ , ըսաւ Օլիվ . նոյն իսկ մարդ մ'ալ սաստիկ ծանր ծրար մը բերաւ կառքը դրաւ , հիմա միտքս եկաւ :
- Կարելի է , պատասխանեց կարդինալը . բայց այդ հարցը նող կայ քեզի , անբան :
- Ուրեմն ինչ կը բաշխայ սրբազանը :
- Փողոցին անունը դիտնալ :
- Սէն-Գլօտ (Սուրբ-Գլօտ) փողոց , սրբազան :
- Գլօտ , այնպէս է , գոչեց կարդինալը : Սուրբի մ'անուն ըլլալուն համար դրաւ կը դնէի :
- Սէն-Գլօտ փողոցը , կրկնեց կոմսուհին այնպիսի նշանակական ակնարկ մ'արձակելով Ռիշլիէօի՝ որ մարաջախտը գողտիւնքն երևան ելնելու վախէն , երբ մանաւանդ խնդիրը դաւաճանութեան վրայ էր , տիկին Տիւպարին ընդմիջեց սա խօսքով ,
- Է՛հ , կոմսուհի , թագաւորը :
- Ո՞ր :
- Վարը :
- Թագաւորը , թագաւորը , գոչեց կոմսուհին : Չախ կողմ դարձուր , Շամբայն , ձախ կողմը դարձուր որ Նորին Վեհափառութիւնը մեզ չտեսնէ :
- Եւ ինչո՞ւ համար , կոմսուհի , ըսաւ կարդինալը ահաբեկ : Ընդհակառակը , ես կը կարծէի թէ զիս թագաւորին մօտը պիտի առաջնորդէիք :
- Ա՛հ , ճշմարիտ է , դուք թագաւորը տեսնել կը փափաքէք :
- Միայն ասոր համար եկած եմ , տիկին :
- Լաւ ուրեմն , ձեզ թագաւորին պիտի առաջնորդեն :
- Բայց դուք :

— Մենք հոս կը մնանք :

— Սակայն , կոմսուհի . . . :

— Բնաւ մի՛ նեղուիք , իշխան , կ'աղերսեմ . ամեն մարդ իւր գործին . թաղաւորը վարն է , այն շաղանակենիներուն անտառակին ներքեւ , դուք թաղաւորին հետ գործ ունիք , սքանչելի է : Համբայն :

Համբայն իսկոյն կառքը կեցուց :

— Համբայն , կեցիր որ մենք իջնենք , և Նորին Սրբազնութիւնը թաղաւորին տար :

— Ինչ , առանձին , կոմսուհի :

— Թաղաւորին ունկնդրութիւնը կը խնդրէիք , սպարոն կարդինալ :

— Ճշմարիտ է :

— Լաւ ուրեմն , թաղաւորը միայն ձեզի ունկնդիր պիտի ըլլայ :

— Ա՛հ , այդ որքան բարեսիրութիւն է :

Եւ եկեղեցականը տիկին Յիւպարիի ձեռքն համբուրեց վայելչորէն :

— Բայց դուք ո՞ւր կը քաշուիք , տիկին , հարցուց :

— Հոս , սա խողկաղնիներուն ներքեւ :

— Թաղաւորը ձեզ պիտի փնտուէ :

— Աւելի լաւ :

— Հատ անհանգիստ պիտի ըլլայ ձեզ շտեմներով :

— Եւ պիտի տանջուի , ուզածս ալ այն է :

— Պաշտելի էք , կոմսուհի :

— Ճիշդ թաղաւորն ալ այսպէս ըսաւ , երբ զինքը տանջեցի : Համբայն , երբ Նորին Սրբազնութիւնն առաջնորդես՝ սրարշաւ վերադարձիր :

— Այո՛ , տիկին կոմսուհի :

— Մնայք բարեաւ , դուքս , ըսաւ կարդինալը :

— Կրկին տեսութիւն , սրբազան , պատասխանեց դուքսը :

Եւ պայիկը քայլարկն իջեցընելով , դուքսը ոտքը գետինը դրաւ կոմսուհւոյն հետ՝ որ մենաստանէ մը խուսող կուսանի մը նման թեթեաշարժ էր . մինչդեռ կառքը Նորին Սրբազնութիւնը արագօրէն կը տանէր այն բլրակին կողմը՝ ուր Նորին Ամենաբրիստոնեայ

Անհատաբանութիւնը իւր պղտոր աշերովը կը փնտուէր այն շար կում սուհին՝ զոր ամեն մարդ տեսեր էր բաց՝ իրմէն :

Տիկին Տիւպարի ժամանակ չկորոյս : Դուքսին թիւն բռնեց և անտաւը տանելով ,

— Գիտես որ , ըսաւ , Աստուած մեզ ղրկեց զան , այն սիրուն կարգինալը :

— Այրկեան մ'անոր ձեռքէն ազատելու համար , կը հասկընամ , պատասխանեց դուքսը :

— Ա՛յ , այլ այն մարդուն հետքը մեզի գիտցընելու համար :

— Աւրեմն անոր տունը կ'երթանք հիմա :

— Կարծեմ թէ այո : Միայն թէ . . . :

— Ի՞նչ , կոմսուհի :

— Շիտակը կը վախնամ :

— Որմէ՞ :

— Կախարդէն : Ա՛հ , ես շատ դիրահաւատ եմ :

— Չար սատանայ :

— Դու ալ կը հաւատաս կախարդներուն :

— Է՛հ , չէ չեմ ըսեր , կոմսուհի :

— Գուշակութեան պատմութիւնս . . . :

— Իրողութիւն մ'է : Ես ալ ըսաւ ծեր մարաջախորը ականջը շփելով :

— Լա՛ւ , դո՛ւ :

— Ես ալ կախարդ մը ճանչցայ . . . :

— Բա՛ :

— Որ օր մ'ինձ ամենամեծ ծառայութիւն մ'ըրաւ :

— Ի՞նչ ծառայութիւն , դուքս :

— Չիս յարոյց :

— Յարո՛յց , քե՛զ :

— Ստուգիւ , մեռած էի , ուրիշ բան չէ :

— Պատմէ ինձ եղածը , դուքս :

— Պահուինք ուրեմն :

— Դուքս , սոսկալի կերպով վախկոտ ես :

— Բայց ոչ : Խոհեմութիւն է ըրածս :

- Հոս աղէկ է :
- Կարծեմ թէ այո :
- Ուրեմն պատմութիւնը , պատմութիւնը :
- Ահաւասիկ : — Վիէննա էի : — Գեսպանութեանս ատենն էր : — Իրիկուն մը ցուպցիկ կանթեղի մը ներքեւ սրոյ հարուած մ'առի մարմնոյս մէջտեղէն : Ամուսնոյ սուր մ'էր այն , խիստ քնասակար բան մը : Ընկայ : Զիս զետնէն վերցուցին . մեռած էի :
- Ի՞նչ , մեռած էիր :
- Իրաւ որ այո , կամ մօտ բան մը : — Այն միջոցին կախարդ մը կ'անցնի և կը հարցընէ թէ թաղուելու տարուող մարդը ո՞վ է :
- Ինձի համար կ'ըսեն : — Պատգարակը կը կեցունէ , չգիտեմ երեք կաթիլ ինչ վէրքիս վրայ , ուրիշ երեք կաթիլ ալ շրթանցս վրայ կը կաթեցընէ . արիւնս կը դադրի , վերստին շունչ կ'առնեմ , աչերս կը բացուին , և կը բժշկուիմ :
- Այդ Աստուծոյ հրաշքն է , դուքս :
- Ահա ճիշդ զիս սոսկացընողն ալ այդ է , ինչու որ ընդհակառակը ես կը կարծեմ որ սատանային հրաշքն է :
- Ճիշդ է , մարաջախտ : Հարկաւ Աստուած քեզի պէս անառակ մը չէր ազատեր . ամեն մարդ իւր անունով : Եւ ո՞ղջ է քու կախարդդ :
- Չեմ կարծեր , միայն թէ ոսկեջուրը (or potable) դտած չըլլայ :
- Քեզի պէս , մարաջախտ :
- Կը հաւատան ուրեմն այդ վէպերուն :
- Ամեն բանի կը հաւտամ : Ծե՛ր էր :
- Անձամբ Մաթուսաղէմն էր :
- Անունը :
- Շքեղ Յոյի անուն մը , Ալթուբաս :
- Ո՛հ , ի՞նչ սոսկալի անուն , մարաջախտ :
- Այնպէս չէ՞ , տիկին :
- Գուքս , ահա կառքը կը վերադառնայ :
- Սքանչելի է :
- Որոշէջլ'նք :

- Այո՛ , արդարեւ :
- Բարի՛զ պիտի երթանք :
- Բարի՛զ :
- Սէն-Գլօտ փողոցը :
- Եթէ կ'ուզէք . . . : Բայց թողաւորն ալ կ'սպասէ . . . :
- Ահա անոր համար որոշումն կ'ընէի , դուքս . եթէ արդէն բրած չըլլայի : Զիս սանջից . կարող իմն է Գաղղիան տանջելու :
- Բայց քեզ առեանգուած , կորսուած պիտի կարծեն :
- Այդ առելի արդէկ որ զիս քեզի հետ աեսան , մարաջախտ :
- Ըստ կարգի ես ալ համարձակ պիտի խօսիմ , կոմսուհի . կը վախնամ :
- Ի՞նչ բանէ :
- Կը վախնամ որ մէկու մը կը պատմես այս , և զիս կը ծաղրեն :
- Այն ասեն երկուքնիս ալ պիտի ծաղրեն , ինչու որ ես ալ հետդ եմ :
- Արդարեւ , կոմսուհի , որոշումն կ'ընեմ : Ասկէ զատ , եթէ զիս մասնես՝ կ'ըսեմ թէ . . . :
- Ի՞նչ կ'ըսես :
- Կ'ըսեմ թէ ինծի հետ առանձին տեսնուեցար :
- Չպիտի հաւատան ըսածիդ , դուքս :
- Ի՛հ , էհ , Նորին Աւհափառութիւնը հոն չըլլայ . . . :
- Շամբայն , Շամբայն , հոս , սա մայառին ետեն եկուր որ մեզ շտեմեն : Ժէրմէն , կառքին դուռը բայ : Լաւ , այդպէս : Հիմա , Բարի՛զ , Սէն-Գլօտ փողոցը , 'ի Մարէ , և զետնէն կրակ հանելու շափ սորանք :



Generated on 2016-09-07 08:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

29

ԹՂԹԱՅԻՐԸ

Երեկոյեան ժամը վեցն էր :

Սէն-Գլօտ փողոցի սանն այն սենեակը՝ ուր արդէն մեր ընթերցողները մուծինք , Պալսամօ Լօրէնցային քով նստեր էր , և այն ամեն աղաչանաց անողոք մնացող միտքը համոզմամբ մեղմացրնել կը ջանար :

Բայց նորատի կինը ծուռ կը նայէր անոր՝ ինչպէս որ Դիդէ կը նայէր մեկնելու պատրաստ գանուող Էնէասին , միայն յանդիմանութեան համար բերանը կը բանար , միայն մղելու համար ձեռքը կ'երկրնցրնէր :

Ար գանգաւէր բանտարկեալ , գերի ըլլալուն , և օդ չնչելուն , արևը շտեմնելուն համար : Ամենաթշուառ արարածոց , թուշոց , ծաղկանց վիճակին կը նախանձէր : Պալսամօն իւր բռնակալը կը հոչէր :

Ապա , յանդիմանութենէն բարկութեան անցնելով , կը քճքճէր այն ճոխ զգեստները զոր իւր ամուսինը տուած էր՝ քծնի երևոյթներով , անոր պարտք դրած մենակեցութիւնը զուարճալի գործելու համար :

Իսկ Պալսամօ քաղցրութեամբ կը խօսէր , սիրով կը նայէր անոր : Ար տեսնուէր որ այն տկար և զայրացկոտ արարածը մեծ տեղ մը կը բռնէր անոր սրտին մէջ՝ եթէ ոչ կենցաղին մէջ :

— Լօրէնցա , կ'ըսէր անոր , սիրելի աղջիկս , ինչո՞ւ այդքան ատելութիւն և դիմադրութիւն ցոյց կու տաս , ինչո՞ւ չես ուզեր կենակցիլ ինձ հետ՝ որ քեզ անբացատրելի կերպով կը սիրեմ քաղցր ու անձնուէր ընկերուհւոյ մը պէս : Այն ատեն բաղձալու բան մը չէիր ունենար . այն ատեն քիչ մ'առաջ ըսած ծաղկանցդ պէս աչտ կ'ըլլայիր արևին մէջ բացուելու , թեկերդ պարզելու այն

Generated on 2016-09-07 08:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թուչոյ նման՝ որոց վիճակին կը նախանձիս . այն ատեն միասին տ-
մենուրեք կ'երթայինք . այն ատեն կը տեսնէիր՝ ոչ միայն քեզ այն-
քան դիւթող արեւը՝ այլ և մարդոց արուեստական արեւները , այն
խմբեակներն ուր այս երկրին կանայք կը յաճախեն . դու քու ճա-
շակիդ համեմատ երջանիկ կ'ըլլայիր՝ զիս իմ ուզած կերպովս եր-
ջանիկ ընելով : Լօրէնցա , ինչո՞ւ կը մերժես այս երջանկութիւնը ,
որ գեղեցկութեանդ և հարստութեանդ միանալով շատ կիներու
նախանձ պիտի ազգէր :

— Ինչու որ ինձ սոսկում կը պատճառես , պատասխանեց վէս
նորատի կինը :

Պալսամօ զայրագին և միանգամայն ղթալիր աչք մը յառեց Լօ-
րէնցայի վրայ :

— Ուրիմն ինչպէս որ զքեզ կը դատապարտես՝ այնպէս ապրէ ,
ըսաւ , և որովհետեւ հպարտ ես՝ մի՛ գանգատիր :

— Զիս առանձին ալ թողուիր՝ չպիտի գանգատէի , քեզի խօ-
սելու չստիպէիր ալ զիս՝ չպիտի գանգատէի : Հեռի գնա իմ ներ-
կայութենէս , կամ երբ բանտս գաս՝ բան մը մի՛ ըսեր ինձ , ես
ալ հարաւին խեղճ թուշուններուն պէս կ'ընեմ՝ որոնք վանդակի
մէջ կը պահեն . կը մեռնին՝ բայց չեն երգեր :

Պալսամօ ճիգ մ'ըրաւ :

— Օ՛ն , Լօրէնցա , ըսաւ , քաղցրութիւն ունեցիր և համակերպէ .
կարգա անգամ մը սիրտս , այն սիրտը որ զքեզ ամեն բանէ աւելի
կը սիրէ : Գիրք կ'ուզես :

— Ոչ :

— Ինչո՞ւ ոչ : Գրքերը տաղտուկ կ'անցընեն :

— Ես այնպիսի տաղտուկ մը կ'ուզեմ ունենալ որմէ մեռնիմ :
Պալսամօ ժպտեցաւ կամ մանաւանդ ջանաց ժպտիլ :

— Դու յիմար ես , ըսաւ , դու քաջ գիտես որ չպիտի մեռնիս ,
քանի որ ես մօտդ պիտի գտնուիմ՝ քեզ դարմանելու և բժշկելու
համար եթէ հիւանդանաս :

— Ո՛հ , գոչեց Լօրէնցա , զիս չպիտի բժշկես այն օրը՝ երբ պա-
տուհանիս երկաթէ ձողերուն սա կապովը զիս կապուած և խեղ-
դուած գտնես :

Պալսամօր մարմնէն ստրտուռ մ'անցաւ :

— Երբ , շարայարեց Լօրէնցա սրտմտած , սա դանակը բանամ
և զայն սիրաս միեմ :

Պալսամօ գունատ և սառուցեալ քիրտով մը ծածկուած՝ Լօ-
րէնցայի նայեցաւ , և սպառնալից ձայնով մը ,

— Ոչ , ըսաւ , Լօրէնցա , իրաւունք ունիս , այն օրը քեզ չպի-
տի բժշկեմ՝ այլ պիտի յարուցանեմ :

Լօրէնցա սոսկման ճիչ մ'արձակեց . Պալսամօի կարողութիւնը
անսահման կը կարծէր , ուստի հաւատաց անոր սպառնալեաց :

Պալսամօ ազատեր էր :

Մինչդեռ Լօրէնցա իւր յուսահատութեան այս նոր պատճառին
մէջ անդնդասոյզ կը գլորէր , զոր նախատեսած չէր , և իւր ծփուն
միտքը տանջանաց անանց շրջանակի մը մէջ փակուած կը տեսնէր
զինքը , Ֆրիդի կոչող զանգակը Պալսամօի ականջին հնչեց :

Արագօրէն երեք անգամ և հաւասար հարուածներով հնչեց :

— Թղթարեր մը , ըսաւ :

Յետոյ կարճ միջոցէ մ'ետք , ուրիշ հարուած մ'ալ հնչեց :

— Նաև ստիպողական , ըսաւ :

— Ա՛հ , ըրաւ Լօրէնցա , ուրեմն զիս պիտի թողնու :

Պալսամօ նորատի կնոջ սառ ձեռքը բռնեց :

— Անդամ մ'ալ , և վերջին անգամն ըլլալով կ'ըսեմ , ըսաւ ,
միասիրտ ապրինք , եղբօր պէս կեանք վարենք , Լօրէնցա . քանի
որ ճակատագիրը մեզ իրարու կապած է՝ բարեկամ մ'ընենք զայն
մեզ , և ոչ թէ դահիճ մը :

Լօրէնցա պատասխան չտուաւ : Պիշ ու ախուր աչքը անսահմա-
նութեան մէջ գաղափար մը կը փնտռէր՝ որ մշանջենաւոր կերպով
իրմէ խոյս կու տար , և թերեւս ինքն ալ չէր զգար որ շատ անոր
ետեւէն ընկեր էր , նման անոնց որոնք մութին մէջ ապրելէն ետք՝
չափազանց եռանդով կը նային լուսոյն , և արեւէն կը կուրանան :

Պալսամօ բռնեց անոր ձեռքն ու համբուրեց , բայց նէ դողցես
բնաւ չզգաց :

Եւ դէպ ՚ի կրակարանը քայլ մ'առաւ :

Անմիջապէս Լօրէնցա իւր թմրութենէն սթափեցաւ և ցանկու-
թեամբ աչերն անոր վրայ յառեց :

— Այո՛ , մըմնաց Պալսամօ , ուստի դուրս ելնելս կ'ուզես զիտնալ՝ որ մ'իմ ետեէս դուրս ելնելու համար , փախչելու համար՝ ինչպէս որ սպառնացիր . և ասոր համար կ'սթափիս , ասոր համար աչքով ինձ կը հետեւիս :

Եւ ձեռքը իւր ճակտին վրայէն անցընելով , այնպէս որ զոգցես տաժանելի բռնադատութեան մը ներքե կը դնէր ինքզինքը , նոյն ձեռքը նորատի կնոջ կողմն երկընցուց , և հրամայական եղանակաւ մը , նայուածքն ու շարժումը նետի մը նման անոր կուրծքին և աչերուն արձակելով ,

— Քնացիր , ըսաւ :

Հաղիւ այս խօսքն արտասանուած էր որ Լօրէնցա իւր բունին վրայ ծռող ծաղկի մը պէս ծռեցաւ . զլուխը պահիկ մը երերալէն ետք զնաց բազմոցին բարձին վրայ յեցաւ : Աղօտ սպիտակ ձեռները քովն 'ի վար սահեցան մետաքսէ զգեստին քսուելով :

Պալսամօ անոր այնքան զեղեցկութիւնը տեսնելով մօտեցաւ , և այն զեղանի ճակտին վրայ դրոշմեց իւր շրթունքը :

Այն ատեն Լօրէնցայի ամբողջ գէմքը պայծառացաւ , այնպէս որ կարծես նոյն խակ Սիրոյ շրթերէն ելած շունչ մը անոր ճակատը ծածկող ամպը վաներ էր . բերանը կիսովին բացուեցաւ զոգը դռնուն , աչերն հեշտալի արտասուօք լցան , և հառաչեց ինչպէս որ անշուշտ հառաչեցին այն հրեշտակները՝ որոնք արարչագործութեան առաջին օրերը , մարդկան որդւոյն համար սէր ունեցան :

Պալսամօ սրահ մը անոր նայեցաւ՝ իւր նկատութեան մէջ թաղուած մարդու մը նման . ապա , որովհետեւ ձայնը վերստին կը հնչէր՝ կրակարանին կողմը սրացաւ , զսպանակ մը մղեց , և ծաղկանց ետեն աներևոյթ եղաւ :

Փրից իրեն կ'սպասէր սրահակը՝ սուրհանդակի բաձկոնակ մը և երկայն մտրակներով կօշիկներ հաղած մարդու մը հետ :

Մարդուն դուզնաքեայ գէմքէն կ'իմացուէր ժողովրդեան մարդ մը ըլլալը , աչքը միայն կը ծածկէր նուիրական հրոյ մասնիկ մը որ զոգցես իւրայինէն աւելի գերազանց իմացականութենէ մ'իրեն հաղորդուած էր :

Չախ ձեռքը կարճ ու ուտախիտ խարազանի մը յեցուցեր էր ,

մինչդեռ աջ ձեռքովը նշաններ կը ձևէր, զորս կարճ քննութենէ մ'ետք Պալսամօ գիտոյաւ, և որոց ինքն ալ համրօրէն պատասխանեց ցուցամատը ճակտին քսելով:

Սուրհանդակին աջն իսկոյն կուրծքն ելաւ, ուր նոր նշանագիր մը դժեց՝ զոր անտարրեր մը չպիտի հասկընար, ըստ սրում շատ կը նմանէր կոճակ մ'անցընելու շարժումին:

Այս վերջին նշանին, գլխաւորը մատը կրած մէկ մատնին ցոյց տուաւ անոր:

Այս ահարկու նշանակին սուջև մէկ ծունդը ծոեց եկողը:

— Ուտի՛ կու գաս, հարցոյց Պալսամօ:

— Ռուանէն, տէր:

— Ի՞նչ է դործդ:

— Տիկին տը Արամօնի սուրհանդակութիւն յիշեմ:

— Քեզ ո՞վ դրաւ անոր քով:

— Աւագ Գօֆթին կամբը:

— Անոր ծառայութեանը մտած ատենդ ի՞նչ հրաման ստացար:

— Բնաւ գողտնիք չպահել գլխաւորին սուջև:

— Ո՞ւր կ'երթաս:

— Վէրսայլ:

— Ի՞նչ կը տանիս հոն:

— Նամակ մը:

— Որո՞ւ:

— Պաշտօնէին:

— Տուր:

Սուրհանդակը կոճակը կիսպած կաշիէ պարկէն նամակ մը հանելով Պալսամօի երկնցոյց:

— Սպասե՛մ, հարցոյց:

— Այո՛:

— Վ'սպասեմ:

— Ֆրից:

Ալմանիացին երևան ելաւ:

— Սէպատթիէնը մառանը պահէ:

— Այո՛, տէր:

— Անունս գիտէ՛ , միմն ջեց աշկերտը սնապաշտ վախով մը :

— Ամեն բան գիտէ , պատասխանեց Ֆրից թեէն քաշելով :

Պալսամօ առանձին մնաց . այն նամակին անբիծ ու խորհրդաւոր կնիքին նայեցաւ՝ զոր կարելի եղածին չափ յարգել պատուիրեց սուրհանդակին աղերսարկու ակնարկը :

Ապա , ծանր ու մտախոհ , դէպ 'ի Լօրէնցայի սենեակն ելաւ , և հաղորդակցութեան դուռը բացաւ :

Լօրէնցա միշտ կը քնանար , բայց անգործութենէն վաստակաքեկ և ջլատեալ : Պալսամօ անոր ձեռքը բռնեց զոր Լօրէնցա սեղմեց ջլաձգօրէն , և սուրհանդակին նամակը այն կնքուած վիճակովը Լօրէնցայի կուրծքին վրայ դրաւ :

— Կը տեսնե՞ս , հարցուց :

— Այո՛ , կը տեսնեմ , պատասխանեց Լօրէնցա :

— Ձեռքս ի՞նչ կայ :

— Նամակ մը :

— Կրնամ կարդալ զայն :

— Կրնամ :

— Կարդա ուրեմն :

Այն ատին Լօրէնցա աչերը դոց , թասելով , բառ առ բառ հետեալ տողերը կարդաց , զոր Պալսամօ հետզհետէ կը զրէր՝ քանի որ նա կը թելադրէր ,

« Սիրելի եղբայր ,

« Գուշակածիս պէս , վտարումս գէթ բանի մ'օգտակար եղաւ : Այս առտու Ռուանի նախագահը տեսայ . նա մերն է՝ սակայն երկչոտ է : Քու անունովդ ստիպեցի զինքը : Աերջապէս որոշումն ըրաւ , և իւր գնդին տհաճութեան յայտարարութիւնները ութ օրէն առաջ Աէրսայլ կը հասնին :

« Անմիջապէս կը մեկնիմ Սէն երթալու և քիչ մը դրդելու համար Քարատէօը ու Շալօգէն՝ որ կը քնանան :

« Մեր Գօտպէքի գործակալը Ռուան կը գտնուէր : Զինքը տեսայ : Անկլիա ճանբան չպիտի կասի . Աէրսայլի խորհրդարանին համար կանաչ յայտարարութիւն մը կը պատրաստէ :

«Ք . . . ինձ հարցուց թէ հարկ էր անոր օրինակները շատցընել : Արտօնութիւն առի անոր : Կէփօի , Մօրանտի և Տըլլիլի , Տիւպարիին դէմ հեղինակած վերջին պարսաւադիրերը պիտի ստանաս : Ասոնք այնպիսի պատերազմական ամենաքանթ անօթներ են որ կրնան քաղաք մը օդն հանել :

«Գէշ լուր մ'ինձ հասաւ , և աչքէ ելնելու ձայն մը կար օդին մէջ : Սակայն դու տակաւին ինձ չգրեցիր , և ես կը ծիծաղիմ այն լուրին վրայ : Այսու ամենայնիւ , զիս երկուանայ մէջ մի թողուր , և ամեն սուրհանդակի ինձ պատասխան դրէ : Նամակդ զիս Գան պիտի գտնէ , ուր մեր պարոններէն մէկ քանին սխտի գործածեմ :

«Մնաս բարեալ , զքեզ կ'ողջագուրեմ :

«ՏԸ ԿՐԱՄՕՆ ԴԻՍՈՒՀԻ»

Լօրէնցա այս ընթերցանութենէն ետք կայ տոալ :

— Ուրիշ բան չե՞ս տեսներ , հարցուց Պալսամօ :

— Բան մը չեմ տեսներ :

— Յետագրութիւն ալ չկայ :

— Ոչ :

Պալսամօ , որուն ճակատը հետզհետէ կը խորշովէր քանի որ Լօրէնցա կը կարդար , դըսուհոյն նամակը առաւ Լօրէնցայէն :

— Հետաքրքրական գրութիւն , ըսաւ , որուն համար շատ սուղ կը վճարեն ինձ : Ո՛հ , ինչպէս այս կերպ բաներ կը դրեն , գոչեց : Այո՛ , միշտ կ'ինքն են որ մեծ մարդիկը կը կորուսեն : Այո՛ , Հուազէօլը թշնամեաց բանակով մը , հաղարաւոր դաւերով շտապալեցաւ , և ահա կնոջ մը շունչը զինքը շոյելու ատեն կը ջախջախէ : Այո՛ , ամենքնիս ալ կանանց մասնութենէն կամ տկարութենէն կը կորնչինք . . . : Եթէ սիրտ մ'ունենանք , և այն սրտին մէջ ալ զգայուն թել մը՝ կորնչած ենք :

Եւ այս խօսքերն ըսած ատեն , Պալսամօ անբացատրելի գորովով մը Լօրէնցայի կը նայէր՝ որ այն նայուածքին ներքե կը դողդողէր :

— Խորհածս ճշմարիտ է , ըսաւ :

— Ոչ , ոչ , ճշմարիտ չէ , պատասխանեց Լօրէնցա եռանդեամբ :

Գու. կը տեսնես որ ես սաստիկ կը սիրեմ քեզ և չեմ կրնար քեզ
Ֆնագել այն ամեն անմիտ և անսիրտ կանանց նման :

Պալսամօ թող տուաւ որ զինքը հմայող կինը շուրջը թողորէ
թեկերը :

Յանկարծ Ֆրիցի զանգակը կրկին դռնչմամբ երկու անգամ հնչեց :

— Երկու այցելութիւն , ըսաւ Պալսամօ :

Հնչակին սաստիկ մէկ հարուածը Ֆրիցի հեռագրական պարբերու-
թիւնն աւարտեց :

Եւ Պալսամօ Լօրէնցայի բաղկայը մէջէն ելնելով սինեկէն դուրս
ելաւ՝ նորատի կինը քնացած թողլով :

Ճանքուն վրայ սուրհանդակին պատահեցաւ՝ որ զլսաւ որին հրա-
մաններուն կ'սպասէր :

— Ահա նամակը , ըսաւ Պալսամօ :

— Ի՞նչ ընեմ զայն :

— Իւր հասցէին յանձնէ :

— Այո՞չափ :

— Այո՞չափ :

Աշկերտը պահարանին և կնիքին նայեցաւ , և զանոնք սողալուան
նման անեղծ տեսնելով ուրախացաւ , և մութին մէջ աներևոյթ ե-
ղաւ :

— Ի՛նչ անբաղդութիւն որ կարելի չէ պահել այսպիսի ինքնա-
դիր մը , ըսաւ Պալսամօ , և մանաւանդ ի՛նչ անբաղդութիւն որ
կարելի չէ ապահով ձեռքով թաղաորին ձեռքն անցընել զայն :

Ֆրից դէմն ելաւ այն ատեն :

— Ո՞վ կայ հոն , հարցուց :

— Կին մը և մարդ մը :

— Ուրիշ անգամ հոս եկած են :

— Ոչ :

— Կը ճանաչես զանոնք :

— Ոչ :

— Կինը դեռահաս է :

— Գեռահաս և գեղեցիկ :

— Մարդը :

- Վաթուռնէն վաթսուռնուհինդ տարեկան մէկը :
- Ո՛ւր են :
- Սրահախն են :
- Պալսամօ ներս մտաւ :



27

ՌԳԵԿՈՉՈՒԹԻՒՆ

Կոմսուհին բոլորովին դէմքը ծածկեր էր կրկնոցի մը ներքեւ . որովհետեւ ժամանակ ունեցեր էր իրենց ընտանեկան տունն հանդիպելու , ուր քաղաքաւոր կնոջ մը հագուստն հագեր էր :

Յոռի կառքով մ'եկեր էր մարաջախտին հետ՝ որ անորմէ աւելի երկչոտ ըլլալով , մոխրագոյն զգեստներ հագեր էր , ազնուական տան մը գլխաւոր պայիկին պէս :

- Պարոն կոմս , ըսաւ տիկին Տիւպարի , զիս կը ճանչնա՞ք :
- Կատարելապէս , տիկին կոմսուհի :

Ռիշլիէօ ետեւ կը կենար :

Հաճեցէք նստիլ , տիկին , դուք ևս , պարոն :

- Պարոնը տեսուչս է , ըսաւ կոմսուհին :

— Կը սխալիք , տիկին , պատասխանեց Պալսամօ խոնարհելով . պարոնը Պ. տը Ռիշլիէօ դուքսն է զոր շատ լաւ կը ճանչնամ , և ինքն ալ շատ ապերախտ պիտի ըլլար եթէ զիս չճանչնար :

— Ի՛նչպէս , հարցուց դուքսը բոլորովին շփոթած , ինչպէս որ Դալման տէ Ռէօ պիտի ըսէր :

— Պարոն դուքս , կարծեմ , քիչ մը երախտագիտութիւն ունենալու է մեր կեանքն ազատողներուն :

— Ա՛հ , ա՛հ , դուքս , ըսաւ կոմսուհին խնդալով . կը լսես , դուքս :

Generated on 2016-09-07 09:02 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Եւ դուք իմ կեանքս ազատեցիք, պարոն կոմս, ըսաւ Ռիշ-
լիէօ զարմանալով :

— Այո՛, աէր իմ, 'ի Վիէննա, 1725ին, ձեր դեսպանութեան
ատենը :

— 1725ին, բայց այն ատեն դուք ծնած չէիք, սիրելի պա-
րոնս :

Պալսամօ ժպտեցաւ :

— Կարծեմ թէ ծնած էի, պարոն դուքս, ըսաւ, ըստ որում
պատգարակի մը վրայ հոգեվար կամ լաւ ևս մեռած պատահեցայ
ձեզի. դեռ նոր սրոյ հարուած մ'առեր էիք ձեր կուրծքէն, ա-
պացոյցն ալ սա է որ ձեր վէրքին վրայ իմ ցքիէս երեք կաթիլ
կաթեցուցի . . . : Տես, հոն, Ալանսօնի կիտուածդ՝ ճմրտկած
տեղդ՝ որ տեսուչի մը համար քիչ մը ճոխ զարդարանք է :

— Բայց, ընդմիջեց մարաջախտը, հազիւ երեսուն երեսունուհինգ
տարեկան էք, պարոն կոմս :

— Օն անդր, դուքս, գոչեց կոմսուհին քրքջելով. ահա կա-
խարդին առջևն ես. — կը հաւատաս :

— Յապուշ կրթած եմ, կոմսուհի : Բայց ուրեմն, շարայարեց
դուքսը խօսքը վերստին Պալսամօի ուղղելով . . . : Ուրեմն ձեր
անունը . . . :

— Ո՛հ, մեք կախարդքս, պարոն դուքս, գիտէք որ, ամեն սե-
րունդի անուննիս կը փոխենք . . . 1725ին, «սով, օսով և սով
անուններու նորաձեւութիւն կար, և չափտի զարմանամ, եթէ այն
ատեն, քմահաճոյք մ'ունեցեր եմ Յոյն կամ Լատին անուան մը
հետ անունս փոխանակելու : — Այս հաստատելէն ետք, — ձեր
հրամանացը պատրաստ եմ, տիկին կոմսուհի, նոյնսէս ձերիններուն,
պարոն դուքս . . . :

— Կոմս, մարաջախտն ու ես եկանք ձեզի խորհուրդ հարցը-
նելու :

— Չափազանց պատիւ կ'ընէք ինձ, տիկին, մանաւանդ եթէ բնա-
կանապէս ունեցաք այդ գաղափարը :

— Ամենաբնական կերպով, կոմս. ձեր գուշակութիւնը գլխուս
մէջն է. միայն թէ տարակոյս ունիմ իրականալու մասին :

— Գիտութեան ըսածին վրայ երբեք տարակոյս մի ունենաք , սիկին :

— Ո՛հ , ո՛հ , ըրաւ Ռիշլիէօ , պատճառն այն է որ մեր թագը շատ վտանգի մէջ է , կոմս . . . : Վէրք մը երեք կաթիլ ցքիով բժշկելուն չնմանիր այս :

— Ոչ , այլ պէտք է երեք խօսքով պաշտօնեայ մը տապալել . . . պատասխանեց Պալսամօ : Լաւ , գուշակեցի՞ր , ըսէք նայիմ :

— Կատարելապէս , ըսաւ կոմսուհին դողդոջուն : Յիրաւի , դուքս , ինչ կ'ըսես այս ամենուն :

— Ո՛հ , այսչափ քիչ բանի մը համար մի զարմանաք , սիկին , ըսաւ Պալսամօ որ սիկին Տիւպարիի և Ռիշլիէօի մտատանջութիւնը սենեկով , կրնար պատճառը գուշակել առանց կախարդութեան դիմելու :

— Ուստի , յարեց մարաշխատը , ձեզ պիտի պաշտեմ՝ եթէ դարմանը մեզ ցոյց տաք :

— Ձեզ զբաղեցընող հիւանդութեան :

— Այո՛ , Շուպէօնն ունինք :

— Կ'ուզէք որ անորմէ ազատիք ու բժշկուիք :

— Այո՛ , մեծդ 'ի մոգս , ճիշդ այդպէս :

— Պարոն կոմս , ըսաւ կոմսուհին , անշուշտ մեզ տարակոյսի մէջ չպիտի թողուք , ինչու որ այն աստե՛ն ձեր պատիւը պիտի կորուսէք :

— Բողոքովին պատրաստ եմ իմովսանն ձեզի ծառայելու , սիկին . . . կայն ո՛ր գէի գիտնալ թէ Պ. դուքսը հոս եկած աստե՛ն կան ու խորհուրդ մ'ունեցած չէ՛ :

— Այնտեղովանիմ որ այնպէս է , պարոն կոմս : — Ճշմարիտ , ինչ որդուր բան է կախարդ մ'ունենալ , որուն Պ. կոմս անունը կրնայ տալ , ասով մարդ բնաւ սովորութիւնը չփոխեր :

Պալսամօ ժպտեցաւ :

— Տեսնենք , համարձակ խօսեցէք :

— Պատուոյս վրայ կ'երդնում որ իմ ալ ուզածս այն է , ըսաւ դուքսը :

— Ինձ խորհուրդ մ'ունէիր հարցնելու :

— Ճշմարիտ է :

- Ա՛Տ, կեղծաւոր, ըսաւ կոմսուհին . ինձ բան մը չըսաւ :
- Միայն Պ. կոմսին կրնայի ըսել զայն , և այն ալ ականջն 'ի վար խիստ զաղանի կերպով , պատասխանեց մարաջախսոր :
- Ինչո՞ւ համար , դուքս :
- Ինչու որ կասկարմիր պիտի ըլլայիր , կոմսուհի :
- Ա՛Տ , հետաքրքրութիւնս յայեցընելու համար , ըսէ մարաջախս . երեսու կարմիր քսած եմ , կարմրելս յայտնի չըլլար :
- Լա՛ւ , ըսաւ Ռիշլիէօ , տես ինչ մտածեցի : Զգուշացիր , կոմսուհի , պատշաճողութեան դէմ պիտի վարուիմ :
- Հոպ չէ , դուքս , ես ալ այնպէս պիտի ընեմ :
- Ո՛հ , բայց թէ որ ըսել ուզածս ըսեմ՝ զիս պիտի ծեծես :
- Դուք ծեծ ուտելու վարժուած չէք , պարոն դուքս , ըսաւ Պալսամօ ծեր մարաջախսին՝ որ շատ հաւնեցաւ այս գովեստին :
- Լաւ ուրեմն , կրկնեց , ահաւասիկ . թող շարժողի տիկինը , Նորին Վեհափառութիւնը . . . ինչպէս ըսեմ պիտի :
- Դանդաղութիւնովը մարդը կ'սպաննէ , գոչեց կոմսուհին :
- Կ'ուզես որ ըսեմ :
- Այո՛ :
- Բացարձակապէս :
- Բայց այո՛ , հարիւր անգամ այո՛ :
- Այն ատեն վտանգը սչքս կ'առնեմ : Տխուր բան մ'է ըսածս , պարոն կոմս , բայց Նորին Վեհափառութիւնը ալ չզուարձանար : Այս խօսքը տիկին տը Մէնդընօնինն է , ես չհանեցի :
- Ասոր մէջ վշտանալու բան չեմ տեսներ , դուքս , ըսաւ տիկին Տիպարի :
- Հազար անգամ աւելի աղէկ , այն ատեն ես ալ հանգիստ պիտի ըլլամ . ուրեմն պէտք է որ կոմսը որ այնքան հազուադիւտ ցփիներ կը գանէ . . . :
- Այնպիսի ցփի մը գտնէ որ , ըսաւ Պալսամօ , թագաւորին զուարձանալու ձիրք տայ :
- Ճիշդ :
- Է՛հ , պարոն դուքս , այդ շնչին բան մ'է , արհեստին « ք քն է այդ : Որ և է ճամարտակ մը կրնայ տարփացուցիչ գեղ մը գտնել :

— Որուն ազդեցութիւնը , շարայարեց դուքսը , տիկնոջ արժանիքն համարելու է :

— Գուքս , գոչեց կոմսուհին :

— Է՛հ , ես քաջ գիտէի որ պիտի սրդողէիր . բայց գու ուզեցիր որ ըսեմ :

— Պարոն դուքս , պատասխանեց Պալսամօ , իրաւունք ունէիք . ահա տիկին կոմսուհին կը կարմբի : Բայց ինչպէս որ քիչ մ'առաջ կ'ըսէինք , խնդիրը վիրաւորուելու , սիրոյ վրայ չէ : Տարփացուցիչ դեղով չէ որ կրնաք Գաղղիան Պ. տը Շուազէօլին ձեռքէն ազատել : Ստուգիւ , եթէ թագաւորը տասնապատիկ աւելի սիրէ տիկինը՝ դարձեալ անկարելի է : Պ. տը Շուազէօլ անոր մտքին վրայ պիտի շարունակէր այն հմայքն ու ազդեցութիւնը՝ զոր տիկինը անոր սրտին վրայ 'ի գործ կը դնէ :

— Ճշմարիտ է , ըսաւ մարաջախար : Բայց մեր միակ միջոցն այն էր :

— Ա՛յնպէս կը կարծէք :

— Է՛հ , դուք ուրիշ միջոց մը գտէք :

— Շատ դիւրին գործ է այդ :

— Գիւրին գործ , կը լսես , կոմսուհի : Այս կախարդները ամեն բանի կը յուսան :

— Ինչու չյուսամ , երբ խնդիրը պարզապէս հաստատուելու վրայ է թագաւորին՝ որ Պ. տը Շուազէօլ զինքը կը մատնէ . — անշուշտ թագաւորին աչքովը նկատելով , ինչու որ Պ. տը Շուազէօլ չկարծեր որ իւր բրաժովը թագաւորը կը մատնէ :

— Եւ ի՞նչ կ'ընէ :

— Ինձի չափ դուք ալ գիտէք , կոմսուհի . թագաւորական իշխանութեան գէմ ժողովին ապստամբութեանը նեցուկ կ'ըլլայ :

— Ստուգիւ այդպէս է . բայց ի՞նչ միջոցով ըլլալը պէտք է գիտնալ :

— Զիրինք քաջալերող գործակալներու միջոցաւ՝ որոնք իրենց կը խոստանան որ անպատիժ պիտի մնան :

— Որոնք են այն գործակալները : Ահա պիտնալու բանը :

— Օրինակի համար , տիկին տը Արամօնը կը կարծէք որ ուրիշ

բանի համար մեկնած է, եթէ ոչ քաջասիրտները գրողելու և երկ-
չոսները հեղձամղձուկ ընելու համար :

— Ստուգիւ ուրիշ բանի համար մեկնած չէ, գոչեց կոմսուհին :

— Այո՛, բայց թագաւորը պարզ վտարանկում մը կը նկատէ
այն չուն :

— Ճշմարիտ է :

— Ինչպէս հաստատելու է որ այն չուն ուրիշ նպատակաւ
մ'է :

— Տիկին տը Արամօնը ամբաստանելով :

— Ա՛հ, եթէ միայն ամբաստանելը բաւական ըլլար, կոմս . .
. ըսաւ մարաջախար :

— Գծբաղգարար հարկ է ամբաստանութիւնը հաստատել, ը-
սաւ կոմսուհին :

— Եւ եթէ այն ամբաստանութիւնը հաստատուէր, լաւ մը հաստա-
տուէր կը կարծէք որ Պ. տը Շուաղէօլ իւր պաշտօնին մէջ կը մնար :

— Անտարանկոյս ո՛չ, գոչեց կոմսուհին :

— Ուստի Պ. տը Շուաղէօլի մէկ դաւաճանութիւնը հարկ է
գանել, շարայարեց Պալսամօ վստահութեամբ, և զայն թագաւորին
ներկայացրնել յստակ, ճիշդ և դիւրիմաց կերպով :

Մարաջախար թիկնաթուին մէջ 'ի շեպ ընկաւ քրքջելով :

— Մարդը կը հմայէ, գոչեց. բանէ մը յոյսը չկտրեր : Պ. տը
Շուաղէօլի օձիքը ձեռք անցրնել դաւաճանութիւնը դործած միջո-
ցին . . . ահա պէտք եղածն այս է . . . ասկէ աւելին պէտք
չէ :

Պալսամօ անտարբեր մնաց և սպասեց որ մարաջախտին սաստիկ
ցնծութիւնը լաւ մը անցնի :

— Տեսնենք, ըսաւ այն ատեն Պալսամօ, լրջօրէն խօսինք և
համառօտիւ անգամ մ'ալ վրայէն անցնիք ըսածնուս :

— Լաւ :

— Պ. տը Շուաղէօլ կասկածելի չէ որ ժողովին ապստամբու-
թեանը նեցուկ կ'ըլլայ :

— Այնպէս է. բայց ապացոյցը :

— Պ. տը Շուաղէօլի համար չե՛ն կարծեր որ Անդղիոց դէմ
8

պատերազմ մը կը պատրաստէ , որպէս զի ինքը միշտ ամենահարկաւոր մարդ մը համարուի :

— Այնպէս կը կարծեն . բայց ապացոյցը :

— Միով բանիւ , Պ. տը Շուազէօլ սոյն տիկին կոմսուհւոյն հանրածանօթ թշնամին չէ , և չջանար ամեն հնարք 'ի գործ դնել զինքը տապալելու համար այն գահէն՝ զոր ես իրեն խոստացայ :

— Ա՛հ , այս , շատ ճշմարիտ է , ըսաւ կոմսուհին . բայց այս ալ հաստատելու է . . . : Ո՛հ , եթէ կարենայի հաստատել :

— Այո՛ ալ բան է : Խիստ չնչին բան մը :

Մարաջախտն սկսաւ մատնետուն փչել :

— Այո՛ , չնչին բան մը , ըսաւ հեգնաբար :

— Մտերմական նախակ մը , օրինակի համար , ըսաւ Պալսամօ :

— Ամենն այսչափ . . . այս ալ բան է :

— Տիկին տը կրամօնէն նամակ մը , այնպէս չէ , պարոն մարաջախտ , շարայարեց կոմսը :

— Կախարդ , բարեսիրտ կախարդ , գտիր ուրեմն յայնպիսի նամակ մը , գոչեց կոմսուհին : Ես հինգ տարիէ հետէ է որ անոր կ'աշխատեմ . տարին հարիւր հազար ֆրանք վասնեցի անոր համար , և դարձեալ չկրցայ :

— Ինչու որ ինձ չլիմեցիք , տիկին , ըսաւ Պալսամօ :

— Ինչպէս , ըսաւ կոմսուհին :

— Անշուշտ , եթէ ինձ դիմէիք :

— Ետքը՞ :

— Ձեզ այդ հոգէն կ'ազատէի :

— Դո՛ւք :

— Այո՛ , ես :

— Կոմս , արդեօք ո՛ւշ մնացի :

Կոմսը ժպտեցաւ :

— Բնաւ :

— Ո՛հ , սիրելիդ իմ՝ կոմս . . . ըսաւ տիկին Տիւպաքի ձեռներն իրար կցելով :

— Ուրեմն , նամակ մը կ'ուզէք :

— Այո՛ :

- Տիկին տը Կրամօնէն :
- Եթէ հնար է :
- Որով Պ. տը Շուաղէօլ բռնուի այն ըսած երեք կէտերուս մէջ :
- Այդպիսի նամակ մը ձեռք անցընելու համար . . . աչքիս մին կու տամ :
- Ո՛հ , կոմսուհի , այդ սուղ կըլլար . մինչդեռ այն նամակը . . . :
- Այն նամակը :
- Ես ձրի պիտի տամ ձեզ :
- Եւ Պալսամօ քառածալ թուղթ մը հանեց գրպանէն :
- Ի՛նչ է այն , հարցուց կոմսուհին աչքով թուղթն ուտելով :
- Այո՛ , ի՛նչ է այն , հարցուց դուքսը :
- Ձեր ուզած նամակն է :
- Եւ կոմսը , խորին ըութեան մէջ , յայտուշ կը թեալ երկու ունկն-գիրներուն կարգաց այն նամակը՝ զոր մեր ընթերցողներն արդէն արդէն գիտեն :
- Քանի որ նա կարդալն յառաջ կը ասնէր՝ կոմսուհին աչերը մեծ մեծ կը բանար և կ'սկսէր խռովիլ :
- Զրպարտութիւն մ'է այդ , նզովից արմատ , զլուշանանք , մրմուռաց Ռիշլիէօ՝ երբ Պալսամօ աւարտեց :
- Պարոն դուքս , այս պարզապէս , բառ առ բառ օրինակն է տիկին տը Կրամօն դքսուհւոյն մէկ նամակին՝ զոր այս առտու Ռուանէն զրկուած սուրհանգակ մը , 'ի Աէրսայլ Պ. տը Շուաղէօլ դքսին տանելու վրայ է այս միջոցին :
- Ո՛հ , տէր Աստուած , զոչեց մարաջախտը , ճշմարիտ է ըսածնիդ , պարոն Պալսամօ :
- Ես միշտ ճշմարիտ կը խօսիմ , պարոն մարաջախտ :
- Կարելի՞ է որ դքսուհին այդպիսի նամակ մը գրէ :
- Այո՛ , պարոն մարաջախտ :
- Կարելի՞ է որ այդ անխոհեմութիւնը գործած ըլլայ :
- Ես ալ կ'ըսեմ որ անհաւատալի է . սակայն այսպէս է :
- Ծեր մարաջախտը դքսուհւոյն նայեցաւ՝ որ այլ ևս բառ մ'արտասանելու կարողութիւն չունէր :

Generated on 2016-09-07 09:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Լաւ , ըսաւ կոմսուհին վերջապէս , ես ալ դքսին նման եմ , չեմ կրնար հաւատալ , կը ներէք , պարոն կոմս , որ տիկին տը Արամօն , այնպիսի խելացի կին մը , իւր և եղբօրը վիճակը այնպիսի զօրութեամբ դրուած նամակով մը վտանդի ենթարկէ . . . : Ասկէ զատ . . . այնպիսի նամակի մը գոյութիւնը գիտնալու համար՝ հարկ է զայն կարդացած ըլլալ :

— Նաև , ըսաւ մարաջախտն աճապարանօք , եթէ Պ. կոմսը կարդացած ըլլար այն նամակը պիտի սրահէր . անդին դանձ մ'է այն : Պալսամօ մեղմովին գլուխը տատանեց :

— Ո՛հ , պարոն , ըսաւ , այդ աղէկ միջոց մ'է անոնց համար որ նամակները կը բանան դադսնիք իմանալու համար . . . և ոչ թէ անոնց համար՝ որ ինձ նման , պահարաններուն ետեէն կը կարդան . . . : Վաշ . . . : Նաև , ես ինչ շահ կրնամ ունենալ Պ. տը Շուազէօլին և տիկին տը Արամօնի փնասելով . կու գաք ինձ խորհուրդ հարցընելու . . . կարծեմ՝ իբրև բարեկամ՝ ես ալ նոյն կերպով կը պատասխանեմ : Գուք կը բաղձաք որ ծառայութիւն մ'ընեմ ձեզի՝ կ'ընեմ : Անշուշտ եկած չէք ինձ առաջարկելու որ խորհրդակցութեանս գինը վճարէք նման Ֆէրայլի ծովափին դուշակներուն :

— Ո՛հ , կոմս , ըսաւ տիկին Տիւպարի :

— Է՛հ , ես ձեզի խրատ մը կու տամ և ինձ կը թուի թէ չէք հասկընար : Պ. տը Շուազէօլը պաշտօնէ ձգելու փափաքնիդ կը յայտնէք , և միջոց կը փնտռէք . միջոց մը կ'ըսեմ ձեզի՝ կը հաւնիք . ձեռքերնիդ կու տամ զայն՝ չէք հաւատար :

— Վասն զի . . . վասն զի . . . կոմս , մտիկ ըրէք . . . :

— Այն նամակը կայ , կ'ըսեմ ձեզի , քանի որ անոր օրինակը քովս է :

— Բայց վերջապէս , ո՞վ իմացուց ձեզի , պարոն կոմս , դուչեց Ռիշլիէօ :

— Ա՛հ , ահա մեծ խօսք մը . . . ո՞վ իմացուց ինձ : Վայրկենի մը մէջ ինձի չափ գիտնալ կ'ուզէք , ինձի՝ որ աշխատեր , ուսեր , աշակերտեր և երեք հազար եօթն հարիւր տարի ապրեր եմ :

— Ո՛հ , ո՛հ , ըրաւ Ռիշլիէօ վհասելով ձեր վրայ ունեցած լաւ կարծիքս պիտի ջնջէք , կա՛մն :

Generated on 2016-09-07 09:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Ես ձեզի չեմ աղաչեր որ ինձ հաւատաք, պարոն դուքս, և թագաւորին որսին եկող ձեզ փնտրողը ես չեմ :

— Գուքս, իրաւունք ունի, ըսաւ կոմսուհին : Պարոն տը Պալլաւո, կ'աղերսեմ զձեզ, մի կարճմտիք :

— Ժամանակ ունեցողը բնաւ չկարճմտիր, տիկին :

— Բարեւրտութիւննիդ շարունակեցէք . . . այս շնորհն ալ ձեր ինձ ըրած շնորհացը վրայ աւելցնելով ինձ ըսէք՝ թէ ինչպէս այսպիսի զաղանկներ ձեզ կը յայտնուին :

— Չեմ վարանիր, տիկին, ըսաւ Պալլաւո այնպիսի ծանր կերպով որ կարծես թէ պատասխանին իւրաքանչիւր բառը կը փնտռէր, ձայն մը կը յայտնէ ինձ զանոնք :

— Չայն մը, զոչեցին միասին դուքսն ու կոմսուհին, ձայն մը որ ամեն բան ձեզի կ'ըսէ :

— Ամեն գիտնալ ուզածս, այո՛ :

— Չայն մը ըսաւ ձեզ տիկին տը Արամօնի իւր եղբօրը գրած նամակը :

— Տիկին, կը հաստատեմ որ ձայն մը ըսաւ ինձ զայն :

— Հրաշալի բան մը :

— Բայց չէք հաւատար :

— Է՛հ, ոչ, կոմս, ըսաւ դուքսը . մարդ ինչպէս հաւատայ այդպիսի բաներու :

— Բայց թէ որ ձեզի ըսեմ թէ Պ. տը Շուազէօլի նամակը տանող սուրհանդակը ինչ կ'ընէ այո պահուս, կը հաւատա՞ք այն ստե՛ն :

— Է՛հ, պատասխանեց կոմսուհին :

— Ես, զոչեց կոմսը, եթէ ձայնը լսեմ՝ կը հաւատամ . . . Բայց մեռելահարցուկ կամ մնալ պարոններն այն մենաշնորհն ունին որ զերջնականը միայն իրենք կը տեսնեն և կը լսեն :

Պալլաւո Պ. տը Ռիշլիէօի վրայ յառեց աչերը տարօրինակ նաշուածքով մը՝ որ սարսուռ մը տուաւ կոմսուհւոյն երակներուն, և տը Ռիշլիպօ դուքս ըսուած Սկեպտիկեան անձնատիրին ծոծրակին և սրտին դոյզն պաղ մ'ազդեց :

— Այո՛, ըսաւ Պալլաւո բաւական շատն լուռ մնալէն ետք :

միայն ես կը տեսնեմ ու կը լսեմ գերբնական նիւթերն ու էակները . բայց երբ ձեր կարգի մարդոց հետ կը գտնուիմ , դուքս , ձեզի պէս հանճարաւոր՝ կոմսուհի , ձեզի պէս գեղանի անձանց հետ կը գտնուիմ՝ դանձերս կը թանամ և զանոնք ալ մասնակից կ'ընեմ .

. . : Շատ փափաք ունիք ինձ ազդարարող դաղտնի ձայնը լսելու :

— Այո , ըսաւ դուքսը , չլողալու համար բուռները սեղմելով :

— Այո , կակազեց կոմսուհին դողալով :

— Ուրեմն , պարոն դուքս , ուրեմն , տիկին կոմսուհի , հիմա պիտի լսէք : Ինչ լեզու կ'ուղէք որ խօսի :

— Եթէ կը հաճիք՝ Գաղղիսրէն , ըսաւ կոմսուհին : Ես ուրիշ լեզու չգիտեմ , և այսպիսի պարսպայի մը մէջ ուրիշ լեզու մը շատ վախ պիտի տայ ինձ :

— Իսկ դո՞ք , պարոն դուքս :

— Տիկնոջ նման . . . Գաղղիսրէն : Ա՛յո զեմ սատանին ըսածը կրկնել , և տեսնել թէ բարեկիրթ է ու Պ. տը Աօլդէր բարեկամիս լեզուն ուղիղ կը խօսի :

Պալսամօ գլուխը կուրծքին վրայ ծռած՝ սրահակին վրայ բացող դրանը կողմը յառաջացաւ , որմէ սանդուղը կ'երթուէր՝ ինչպէս որ գիտեիք :

— Ներեցէք որ ձեր վրայէն պոչեմ՝ որպէս զի շատ վտանգի չենթարկիք , ըսաւ :

Կոմսուհին տժպունեցաւ և դքսին մօտեցաւ , որուն թևէն բռնեց :

Պալսամօ պրեթէ սանդուխին դրանը դպչելով Լօրէնցային գտնուած կէտը յառաջացաւ , և Արաբերէն , դու ձայնով հետևեալ խօսքն արտասանեց՝ զոր մեք սովորական լեզուի կը թարգմանենք :

— Բարեկամուհիս . . . ինձ կը լսես . . . : Եթէ կը լսես հնչակին լարը քաշէ և երկու անգամ զարկ :

Պալսամօ այս խօսքին արգիւնքին սպասեց դուքսին և կոմսուհւոյն նայելով , որոնք կոմսին ըսածը չկարենալով հասկընալ՝ աւելի ալկանջնին կը տնկէին և աչերնին կը բանային :

Հնչակը երկու անգամ յստակ կերպով զարնուեցաւ :

Կոմսուհին բազմոցին վրայ ոստեց , դուքսը թաշկինակովը ճակատը սրբեց :

— Արով՛հետե կը լսես , շարայարեց Պալսամօ նոյն լեզուով , կրակարանին վրայ քանդակուած առիւծին աջ աչքը ձեացընող մարմարէ կոճակը մղէ՝ կրակարանին ներքեի երկաթէ տախտակը կը քացուի . հոնկէ մտիր , սենեկէս անցիր , սանդուղէն իջիր , և մինչև գտնուած սենեկիս կից սենեակն եկուր :

Պահ մ'եաք , անըմբռնելի հովի մը նման , ուրուականի մը թռչելուն նման խշրտոցէ մը Պալսամօ հասկըցաւ . որ իւր հրամանները իմացեր և կատարեր էին :

— Ինչ լեզու է այդ , հարցուց Ռիչլիէօ ապահովութիւն կեդ՝ ձեռով , թագուն լեզուն է :

— Այո՛ , պարոն դուքս , ոգեկոչութեան յատուկ լեզուն է :

— Դուք ըսիք որ մեք պիտի հասկընայինք :

— Չայնին ըսածը՝ այո՛ , բայց ոչ իմ ըսածս :

— Սատանան եկաւ ուրեմն :

— Սատանի խօսք ընող եղա՛ւ ձեզի , պարոն դուքս :

— Բայց կարծեմ թէ միայն սատանան կը կոչեն :

— Այն որ գերագոյն ոգի է , գերբնական էակ է՝ կրնայ կոչուիլ :

— Իս. գերագոյն ոգին , գերբնական լէակը . . . :

Պալսամօ մերձակայ սենեկին դուռը ծածկող դորգին երկնցուց ձեռքը :

— Ինծի հետ ուղղակի հազորդակցութիւն ունի , տէր իմ :

— Ես կը վախնամ , ըսաւ կոմսուհին . դո՛ւք , դուքս :

— Արգարե , կոմսուհի , չեմ պահեր և կ'ըսեմ թէ գրեթէ աւերի լաւ ունիմ Մահօն կամ Փիլիպսպուրկ գտնուիլ :

— Տիկին կոմսուհի , և դուք , պարոն դուքս , հաճեցէք մտիկ ընել՝ քանի որ լսել կ'ուզէք , ըսաւ Պալսամօ խառի :

Եւ դրանը կողմը քարձաւ :



Generated on 2016-09-13 11:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

26

ՉԱՅՆԸ

Պահ մը հանդիսաւոր լուծիւն տիրեց : Յետոյ Պալսամօ Գաղղիարէն լեզուով հարցուց .

— Հո՞ն ես :

— Հոս եմ , պատասխանեց յստակ և հնչուն ձայն մը՝ որ օթոցներէն և դռնակներէն անյնելով ներկայ եղողներուն ականջին հնչեց աւելի մետաղեայ սկահի մը՝ քան թէ մարդկային ձայնի մը նման :

— Նզովից արմատ , հետզհետէ կարևոր կերպարանք մը կ'առնէ . և այս ամենը առանց ջահի , առանց մոգութեան , առանց Պէնկալեան հրոյ :

— Սոսկալի է , մրմնջեց կոմսուհին :

— Լաւ ուշադրութիւն ըրէ հարցումներուս , շարայարեց Պալսամօ :

— Բոլոր սրտով մտիկ կ'ընեմ :

— Նախ ըսէ թէ այս միջոցին քանի հոգի կան հետս :

— Երկու :

— Ի՞նչ սեռէ :

— Մարդ մը և կին մը :

— Մտքիս մէջ մարդուն անունը կարդայ :

— Պ. տը Ռիշլիէօ դուքս :

— Կնոջ անունը՞ :

— Տիկին Տիւպարի կոմսուհի :

— Ա՛հ , ա՛հ , մրմնջեց դուքսը , բաւական նշանաւոր բան է այս :

— Շիտակը , մրմնջեց կոմսուհին դողալով , շիտակը ես այսօրէս բան մը տեսած չեմ :

— Լաւ , ըսաւ Պալսամօ . հիմա ձեռքս բռնած նամակիս առաջին պարբերութիւնը կարդա :

Չայնը հնազանդեցաւ :

Կոմսուհին ու դուքսը այնպիսի վարմանքով իրարու կը նայէին՝ որ կ'օխէր սքանչացման մօտիկ :

— Այս համակը զոր քու թեւադրութեամբ գրեցի, ի՞նչ եղաւ :

— Կ'ընթանայ :

— Ո՞ր կողմ :

— Արեւմտեան կողմը :

— Հեռի՞ է :

— Ո՛հ, այո՛, հեռի է, շատ հեռի է :

— Ո՞վ կը տանի զայն :

— Կանաչ բաձկոնակով, կաշիէ գլխարկով և երկայն կօշիկներ հաղած մարդ մը :

— Հետի՞ է թէ հեծեալ :

— Հեծեալ է :

— Ի՞նչ ձիու վրայ :

— Ճարտուկ ձիու վրայ :

— Ո՞ւր կը տեսնես զինքը :

Պահ մը լռութիւն տիրեց :

— Նայէ՛, ըսաւ Պալսամօ հրամայարար :

— Ծառատունկ մեծ ճանրայ մը :

— Բայց ո՞ր ճանրան :

— Չգիտեմ, ամեն ճանրաներն իրարու կը նմանին :

— Ի՞նչ, բնաւ բանէ մը չ'այտնուիր ո՞ր ճանրան ըլլալը, ու՞ ղեցոյց տախտակ ալ չկայ, արձանադրութիւն մ'ալ չկայ :

— Կեցիր, կեցիր, այն ձիաւորին մօտէն կառք մը կ'անցնի. ա՛նոր ճանրան կը կտրէ իմ կողմն զալով :

— Ի՞նչ տեսակ կառք է :

— Արբաներով և զինուորականներով լի ծանր կառք մը :

— Ուղեկառք մը, մրմնջեց Ռիչլիէօ :

— Այն կառքին վրայ բնաւ զիր չկայ :

— Այո՛, կայ, պատասխանեց ձայնը :

— Կարգա :

— Կառքին վրայ, գրեթէ արուած դեղին գրերով Ալեքսայէ կը կարդամ :

- Թող այն կատ քը և սուրհանդակին հետևէ :
- Ա՛լ չեմ տեսներ զան :
- Ինչո՞ւ չես տեսներ :
- Ինչու որ ճանքան կը դառնայ :
- Դարձիր այն ճանքուն մէջ և հասիր անոր :
- Ո՛հ , ձին որչափ ոյժ ունի կը վազցընէ . ժամացոյցին կը նայի :
- Ձիուն առաջն ինչ կը տեսնես :
- Երկայն ծառուղի մը , չքնաղակերտ շէնքեր , մեծ քաղաք մը :
- Միշտ հետևէ :
- Կը հետևիմ :
- Ա՛յժմ :

— Սուրհանդակը յաճախակի հարուածներով ձիուն միշտ կը զարնէ . կենդանին քրտինքի մէջ կը լողայ . պայտերն այնպիսի աղմուկ մը կը հանեն սալարկին վրայ՝ որ բոլոր անցնողները ետևնին կը դառնան : Ա՛հ , սուրհանդակը երկայն փողոց մը կը մտնէ՝ որ երթալով վար կ'իջնէ : Աջ կողմը կը դառնայ : Ձիուն ընթացքը կը ծանրացընէ : Մեծակառոյց ապարանքի մը դուռը կը կասի :

- Հոս աւելի ուշադրութեամբ անոր հետևելու է , կը լսես :
- Չայնր հառաչ մ'արձակեց :
- Յոգներ ես , կը հասկընամ :
- Ո՛հ , սաստիկ :
- Թող այն յողնութիւնն աներևութանայ , այնպէս կ'ուզեմ :
- Ա՛հ :
- Ուրե՛մն :
- Շնորհակալ եմ :
- Տակաւին յողնութիւն կ'զգաս :
- Ոչ :
- Սուրհանդակը կը տեսնես միշտ :
- Կեցիր . . . : Այո՛ , այո՛ , քարէ մեծ սանդուղէ մը կ'ելլանէ : Կապոյտ և ոսկեգոյն դրատով պայիկ մ'իրեն առաջնորդ ունի : Ոսկեճաճանչ մեծ սրահներէ կ'անցնի : Լուսաւոր սենեակ մը կը հասնի : Պայիկը դուռը կը բանայ և կը քաշուի :
- Ինչ կը տեսնես :

- Սուրհանդակը կը բարևէ :
- Զո՛ւլ :
- Կեցիր . . . : Մարդ մը կը բարևէ՝ որ զրասեղանի մ'առջև նստած ու կռնակը դրան դարձուցած է :
- Ի՞նչպէս հագուած է այն մարդը :
- Ո՛հ, շքեղ կերպով, և զոյցես պարահանդէս երթալու պատրաստուած :
- Շքանշան ունի՞ :
- Կապոյտ ժապաւէն մը կը կրէ շեղակի :
- Երե՞սը :
- Չեմ տեսներ . . . : Ա՛հ :
- Ի՞նչ կայ :
- Ետեւը կը գառնայ :
- Ի՞նչ կերպսրանք ունի :
- Նայուածքն ազդու, գլխաց գծերն անկանոն, սկզբները գեղեցիկ :
- Քանի՞ տարեկան կայ :
- Յիսուն յիսունուութ տարեկան :
- Դո՛ւքսն է, փոփսաց կոմսուհին մարաջախտին, զո՛ւքսն է : Մարաջախտը զլխովը նշան մ'ըրաւ որ կը նշանակէր, «Այո, ան է . . . բայց մտիկ ըրէ :»
- Ետքը՞, հարցուց Պալսամօ հրամայաբար :
- Սուրհանդակը կապոյտ ժապաւէնով մարդուն կու տայ . . . :
- Դուքս կրնաս ըսել, դուքս է նա :
- Սուրհանդակը, կրկնեց ձայնը հնազանդելով, նամակ մը կու տայ դքսին՝ կռնակը կախած կաշիէ պարկէն հանելով : Դուքսը նամակը կը բանայ և ուշադրութեամբ կը կարդայ :
- Ետքը՞ :
- Գրիչ մը, թերթ մը թուղթ կ'առնէ և կը գրէ :
- Կը գրէ, մրմնջեց Ռիշլիէօ : Նղովից արմատ, եթէ մարդ գիտնար գրածը, ի՞նչ աղուոր բան կ'ըլլար :
- Գրածն ըսէ ինձ, հրամայեց Պալսամօ :
- Չեմ կրնար :

— Հեռի ըլլալուդ համար : Սենեակը մտիր : Մտար :

— Այո :

— Ուսին վրայէն ծռէ :

— Ըրի :

— Հիմա կը կարդաս :

— Գիրը դէշ, նուրբ, յօշուած է :

— Կարդա, այնպէս կ'ուզեմ :

Կոմսուհին և Ռիշլիէօ շունչերնին բռնեցին :

— Կարդա, կրկնեց Պալսամօ աւելի հրամայական նղանակաւ մը :

— «Քոյր իմ» ըսաւ ձայնը դողդօջելով և վարանելով :

— Պատասխանն է, միասին միմնջեցին տը Ռիշլիէօ դուքսն ու կոմսուհին :

— «Քոյր իմ, կրկնեց ձայնը, աստիճանը եղիր. ճգնաժամը տեղի ունեցաւ՝ ճշմարիտ է. բայց անցաւ : Անհամբեր վաղուան կ'ըստասեմ. ինչու որ վաղն ըստ կարգի, կը յուսամ որ ասոր փոխարէնը պիտի հանեմ, և ամեն բան որոշիչ յաջողութիւն մը կ'աւետէ ինձ : Թէ Ռուանի ժողովին համար, թէ Ք . . . միլորտին համար, թէ հրանօթին համար :

« Աւազը, թագաւորին հետ աշխատելէս ետք, յետագային մը կ'աւելցընեմ նամակիս, և մի և նոյն սուրհանդակով քեզի կը շնորհակցեմ :»

Պալսամօ, ձախ ձեռքը երկնցուցած, իւրաքանչիւր խօսքը դողցես դժուարաւ կը խլէր ձայնէն, մինչդեռ աջ ձեռքովը ճեպով կը նշանակէր այն տողերը՝ զոր Պ. տը Շուազէօլ 'ի Աէրսայլ իւր սենեակը կը գրէր :

— Ամենն այսչափ :

— Այսչափ :

— Հիմա ինչ կ'ընէ դուքսը :

— Թուզթը երկու կը ծալէ, վրան կը գրէ, յետոյ դարձեալ երկու կը ծալէ, և հագուստին ձախ կողմէն հանած թղթապանակին մէջ կը դետեղէ դայն :

— Կը լսէք, ըսաւ Պալսամօ յապուշ կրթեալ կոմսուհեոյն :

- Ետքը :
- Ետքը , սուրհանդակը կը ճանրէ ըսելով :
- Ի՞նչ կ'ըսէ անոր :
- Խօսքին վերջը միայն իմացայ :
- Ի՞նչ էր . . . :
- «Ժամը մէկին , Գրիանօնի վանդակապատներուն առջևը :»
Սուրհանդակը կը բարևէ և դուրս կ'ելնէ :
- Այնպէս է , ըսաւ Ռիշլիէօ , ինչպէս որ նամակին մէջ ըսաւ ,
գործէն դառնալուն ժամագրութիւն կու տայ սուրհանդակին :
- Պալսամօ ձեռքովը նշան մ'ըրաւ լռութիւն հրամայելու համար :
- Հիմա ինչ կ'ընէ դուքսն , հարցուց :
- Ոտք կ'ելնէ : Իրեն տրուած նամակը ձեռքը բռնած է : Շի-
տակ իւր անկողնին կ'երթայ , անոր և պատին մէջի անջրպետէն
կ'անցնի , երկաթէ արկղ մը բացող զսպանակ մը կը մղէ . նամակը
հոն կը նետէ և արկղը վերստին կը գոցէ :
- Ա՛հ , գոչեցին դուքսն ու կոմսուհին միանգամայն բոլորովին
սովորենելով : Ա՛հ , ստուգիւ , քանի՛ հմայական է այս ամենը :
- Բոլոր գիտնալ ուղածնիդ հիմա գիտէք , տիկին , հարցուց
Պալսամօ :
- Պարոն կոմս , ըսաւ տիկին Տիւպարի դողով անոր մօտենա-
լով . դուք ինձ այնպիսի սպաս մը մատուցիք՝ որուն համար տասն
տարուան կեանքս կու տայի , կամ լաւ ևս բնաւ չեմ կրնար փո-
խարինել : Կծորեցէք ինէ ինչ որ կ'ուզէք :
- Ա՛հ , տիկին , գիտէք որ արդէն հաշիւ ունինք :
- Ըսէք , ըսէք ուղածնիդ :
- Ժամանակը եկած չէ :
- Լաւ , երբ այն ժամանակը գայ , միլիոն մ'ալ ըլլայ . . . :
- Պալսամօ ժպտեցաւ :
- Է՛հ , կոմսուհի , գոչեց մարաջախտը , աւելի դու կոմսէն մի-
լիոն մ'ուզելու ես : Այն մարդը որ գիտնալ ուղածը գիտէ , և մա-
նաւանդ տեսնել ուղածը կը տեսնէ , երկրիս աղիքներուն մէջ ոսկի
և ագամանդ չ'կրնար տեսնել , ինչպէս որ մարդկան մտքէն անցածը
կը տեսնէ :

Generated on 2016-09-07 09:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

- Ետքը :
- Ետքը , սուրհանդակը կը ճանբէ ըսելով :
- Ի՞նչ կ'ըսէ անոր :
- Խօսքին վերջը միայն իմացայ :
- Ի՞նչ էր . . . :
- «Ժամը մէկին , Գրիանօնի վանդակապատներուն առջևը :»
Սուրհանդակը կը բարևէ և դուրս կ'ելնէ :
- Այնպէս է , ըսաւ Ռիշլիէօ , ինչպէս որ նամակին մէջ ըսաւ ,
գործէն դառնալուն ժամագրութիւն կու տայ սուրհանդակին :
- Պալսամօ ձեռքովը նշան մ'ըրաւ լուծիւն հրամայելու համար :
- Հիմա ինչ կ'ընէ դուքսն , հարցուց :
- Ոտք կ'ելնէ : Իրեն տրուած նամակը ձեռքը բռնած է : Շի-
տակ իւր անկողնին կ'երթայ , անոր և պատին մէջի անջրպետէն
կ'անցնի , երկաթէ արկղ մը բացող զսպանակ մը կը մղէ . նամակը
հոն կը նետէ և արկղը վերստին կը գոցէ :
- Ա՛հ , գոչեցին դուքսն ու կոմսուհին միանգամայն բոլորովին
սովորենելով : Ա՛հ , ստուգիւ , քանի՛ հմայական է այս ամենը :
- Բոլոր գիտնալ ուզածնիդ հիմա գիտէք , տիկին , հարցուց
Պալսամօ :
- Պարոն կոմս , ըսաւ տիկին Տիւպարի դողով անոր մօտենա-
լով . դուք ինձ այնպիսի սպաս մը մատուցիք՝ որուն համար տասն
տարուան կեանքս կու տայի , կամ լաւ ևս բնաւ չեմ կրնար փո-
խարինել : Կծորեցէք ինէ ինչ որ կ'ուզէք :
- Ա՛հ , տիկին , գիտէք որ արդէն հաշիւ ունինք :
- Ըսէք , ըսէք ուզածնիդ :
- Ժամանակը եկած չէ :
- Լաւ , երբ այն ժամանակը գայ , միլիոն մ'ալ ըլլայ . . . :
- Պալսամօ ժպտեցաւ :
- Է՛հ , կոմսուհի , գոչեց մարաջախտը , աւելի դու կոմսէն մի-
լիոն մ'ուզելու ես : Այն մարդը որ գիտնալ ուզածը գիտէ , և մա-
նաւանդ տեսնել ուզածը կը տեսնէ , երկրիս աղիքներուն մէջ ոսկի
և ազամանդ չ'կրնար տեսնել , ինչպէս որ մարդկան մտքէն անցածը
կը տեսնէ :

Generated on 2016-09-13 11:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Ուրեմն, կոմս, ըսաւ կոմսուհին, իմ անկարողութեանս մէջ գետնաբան իր խոնարհիմ :

— Ոչ, կոմսուհի, օր մը այդ պարտքդ պիտի վճարես ինձ : Այն առիթը պիտի ներկայացնեմ ձեզի :

— Կոմս, ըսաւ դուքսը Պալսամօին, ես ճնշուեցայ, յաղթուեցայ, ճմլուեցայ : Կը հաւատամ :

— Սուրբ Թովմասին նման, այնպէս չէ՞, պարոն դուքս : Այդ հաւատալ չէ՞՝ այլ անսնել :

— Ուզած անուննիդ տուէք. բայց ես պատուոյ հատուցում կ'ընեմ, և ասկէ ետք երբ ինձի հետ կախարդի վրայ խօսին՝ ես գիտեմ ըսելիքս :

Պալսամօ ժպտեցաւ :

— Այժմ, տիկին, ըսաւ կոմսուհւոյն, կը ներէ՞ք :

— Ըսէք :

— Ոգիս խոնջած է : Թոյլ տուէք որ ազատութիւն տամ իրեն մոգական խօսքով մը :

— Ըրէք, պարոն :

— Լօրէնցա, ըսաւ Պալսամօ Արարերէն, շնորհակալ եմ. քեզ կը սիրեմ. սենեակ վերադարձիր եկած ճանբէդ, և ինձ սպասէ : Գնա, սիրեցեալդ իմ :

— Շատ խոնջած եմ, պատասխանեց ձայնը Իտալերէն՝ ոգեկոչութեան ժամանակէն աւելի մեղրալի եղանակաւ մը. աճապարէ, Աշարա :

— Կու դամ :

Եւ ոտքին ձայնը մի և նոյն շրջիւնով հեռացաւ :

Յետոյ Պալսամօ, յորում Լօրէնցայի մեկնելուն համոզուեցաւ, խորին յարգանքով բայց միանգամայն մեծավայելուչ արժանեօք բարեց երկու այցելուները՝ ոգք ահաբեկ, զիրենք գրաւող խառնաշփոթ դաղափարներու ալեպէս մէջ թաղուած, իրենց կառքն հասան աւելի արբեալներու՝ քան թէ բանաւոր էակներու նման :



ՁԵ

ԱՉՔԻ ԵԼՆԵԼ

Երկրորդ օրը, Վէրսայլի մեծ ժամացոյցը տասնեմէկ կը զարնէր՝ երբ Լուի ԺԵ. Թագաւորը իւր սենեկէն դուրս ելնելով՝ անոր կից սրահէն անցաւ, և բարձր ու ցամաք ձայնով մը կոչեց.

— Պարոն սը լա Վրիլիէր :

Թագաւորը դեղնած էր և յուզեալ կ'երեւէր. որքան հոգ կը տանէր այն յոյզը ծածկելու՝ այնքան աւելի յայտնի կ'երեւէր իւր շիտթ նայուածքէն և սովորաբար անտարբեր մնացող դէմքին ջղային ձգաուամէն :

Իսկոյն սառնահասար լուսութիւն մը տիրեց պալատականաց շարքին մէջ, որոց մէջ կը տեսնուէին Պ. սը Ռիշլիէօ դուքսը և Ժան Տիւպարի դերկոմսը, երկուքն ալ հանդարտ կերպարանքով և անտարբերութիւն ու անդիաութիւն կեղծելով :

Տը լա Վրիլիէր դուքսը մօտեցաւ և Թագաւորին ձեռքէն առաւ հրամանագիր մը՝ զոր նորին Վեհափառութիւնը իրեն կ'երկնցընէր :

— Պ. սը Շուալէօլ դուքսը Վէրսայլն է, հարցուց Թագաւորը :

— Երէկուանէ ՚ի վեր հոն է, վեհափառ տէր. կէսօրէն ետք ժամը երկուքին եկաւ Բարիզէն :

— Իւր ապարանքն է թէ դղեակն է :

— Դղեակն է, վեհափառ տէր :

Հանդիսականներուն շարքերէն սարսուռ մ'անցաւ, որոնք ամենքն ալ փսփսալով ծռեցան մրրկի քամիէն ծռող հասկերուն նման :

Թագաւորը ունքը պռստելով, այնպէս որ դոպցես սարսափով աւելի սաստկացրնել կ'ուզէր սոյն տեսարանին տպաւորութիւնը, վէսօրէն իւր սենեակը մտաւ՝ ետեւէն ունենալով պահապան զօրաց հարիւրապետը և թեթևընթաց հեծելազօրաց հարիւրապետը :

Ամենքն ալ Պ. տը Վրիլիէրի ետեէն նայեցան , որ ունենալիք ընթացքին պատճառաւ մտայոյ՞ դղեկին բակէն ծանրաքայլ կ'անցնէր և Պ. տը Շուաղէօլի բնակարանը կ'երթար :

Այս միջոցին սպառնալից կամ երկչոտ խօսակցութիւնները կ'սկսէին ծեր մարջախտին շուրջը ուր այլոյմէ աւելի զարմանք ցոյց կու տար , բայց ոչ ոք կը խաբուէր՝ անոր դիմաց վրայ երբեմն երեցող տեսակ մը ժպիտին պատճառաւ :

Պ. տը լա Վրիլիէր վերադարձաւ և ամենքն անոր շուրջն առին իսկոյն :

- Ինչպէս եղաւ , հարցուցին անոր :
- Ինչպէս ըլլայ , աքտորման հրամանադիր մ'էր :
- Աքտորման :
- Այո , խիստ կանոնաւոր գրուած :
- Կարգացիր , դուքս :
- Կարգացի :
- Իրական բան մ'էր :
- Գուք դատեցէք :

Եւ տը լա Վրիլիէր դուքսը հետևեալ խօսքն արտասանեց՝ զոր միտքը պահած էր պալատականաց յատուկ անվրէպ յիշողութեամբ .

« Բարեկամ , քու ծառայութենէդ դժգոհ ըլլալուս համար՝ քեզ կ'աքտորեմ 'ի Շանդու՝ ուր երթալու համար պէտք է մեկնիս մինչև քսանուչորս ժամէն : Քեզ աւելի հեռի կը զրկէի՝ եթէ մասնաւոր յարգանք մը չունենայի տիկին տը Շուաղէօլի համար՝ որուն առողջութեանը փնաս մը հասնիլը չեմ ուզեր : Զըլլայ որ այնպիսի վարք ունենաս որ գիս ստիպես ուրիշ միջոցներ ձեռք առնելու : »

Պ. տը լա Վրիլիէր դուքսը պատող խումբին մէջ երկարատև մրմունջ մը տեղի ունեցաւ :

- Եւ ինչ պատասխան տուաւ քեզի , պարոն տը Սէն-Ֆլօրանդէն , դքսին հարցոց Ռիշլիէօ յամառութեամբ ոչ անոր նոր տխաղոսը և ոչ նոր անունը տալով :
- Ինձ պատասխանեց :

« Պարոն դուքս , ես համողուած եմ թէ՛ կարի ուրախ ես այս թուղթն ինձ բերելով : »

Generated on 2016-09-07 09:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

- Ծանր խօսք մ'ըրեր է, խեղճ դուքսս, ըսաւ ժան :
 - Ի՞նչ ընելու է, պարոն գերկոմս, ո՞վ որ այնպիսի քար մը գլխուն ուտէ՝ քիչ մը ձայն կը հանէ :
 - Բայց ի՞նչ պիտի ընէ, զիտե՛ս, հարցուց Ռիշլիէօ :
 - Անտարակոյս պիտի հնազանդի :
 - Հը՛մ, ըրաւ մարաջատար :
 - Ահա՛ դուքսը, գոչեց ժան որ իբրև պահնորդ պատուհանին մօտը կեցեր էր :
 - Հո՛ս կու գայ, գոչեց ար լա Արիլիէր դուքսը :
 - Ես քեզի չէի ըսեր, պարոն տը Սէն-Ֆլօրանդէն :
 - Բակէն կ'անցնի, շարայարեց ժան :
 - Առանձին :
 - Բողոքովին առանձին ; թղթապանակը թևին ներքև :
 - Ա՛հ, տէր Աստուած, մրմուաց Ռիշլիէօ, արդեօք երէկուան տեսարանը նորէն պիտի սկսի :
 - Անոր խօսքը մի ըներ, տակաւին դողը վրայէս զացած չէ՛, պատասխանեց ժան :
- Տակաւին խօսքը չէր աւարտեր որ տը Շուաղէօլ դուքսը բարձրագլուխ, հաստատուն նայուածքով, որահին մուտքին մէջ երևցաւ՝ ջինջ ու հանդարտ նայուածքով մը շանթահարե լով իւր թշնամիները կամ անոնք որ թշնամի պիտի ըլլային իրեն՝ աչքէ ելած ատեն :
- Գիչ մ'առաջ տեղի ունեցածէն ետք ոչ ոք այսպիսի ընթացքի մտ կ'սպասէր. ուստի ոչ ոք դէմ դրաւ :
 - Աղէկ կարդալուդ վրայ ստոյգ ես, դուքս, հարցուց ժան :
 - Այդ ալ հարցընելու բան է :
 - Եւ այնպիսի նամակէ մ'ետք դսրձեալ կու գայ :
 - Պատիւս վկայ, ես ալ բան մը չեմ հասկընար այս եղածներէն :
 - Բայց թաղաւորը Պասդելլը նետել կու տայ զինքը :
 - Սոսկալի գայթակղութիւն մը կը պատճառի :
 - Գրեթէ ես ալ կը ցաւէի վրան :
 - Ա՛հ, տես թաղաւորին սենեակը կը մտնէ : Այս լսուած բան չէ :

Արդարև դուքսը, յայտուշ կրթած բարապանին ցոյց տուած
կերպ մ'ընդդիմութեանը առանց ուշ զնելու, մինչև թագաւորին
սենեակը մտաւ, որ զինչը տեսնելով՝ վարմացական բացազանչութիւն
մ'արձակեց :

Դուքսը իւր արտորման հրամանադիրը ձեռքը բռներ էր. դրե-
թէ ժպտուն դէմքով մը թագաւորին ցոյց տուաւ զայն :

— Աւհափառ տէր, ըսաւ, ինչպէս որ Ձեր Աւհափառութիւնը
երէկ հաճեցաւ ինձ իմացընելու՝ քիչ մ'առաջ նոր թուղթ մը
ստացայ :

— Այո, պարոն, պատասխանեց թագաւորը :

— Եւ որովհետեւ Ձեր Աւհափառութիւնը երէկ ինձ ըսելու բա-
րեսրտութիւնն ունեցաւ որ երբէք իբրև լուրջ դրութիւն մը չնկա-
տեմ որ ե. է նամակ մը՝ որ թագաւորին մասնաւոր խօսքովը հաս-
տատուած չըլլայ, եկայ բացատրութիւն խնդրելու :

— Բացատրութիւնը երկայն չէ, պարոն դուքս, պատասխանեց
թագաւորը : Այսօրուան թուղթը վաւերական է :

— Աւաւերական, ըսաւ դուքսը. այնքան անձնուէր ծառայի մը
համար այսպիսի թշնամանիկ նամակ մը :

— Պարոն, անձնուէր ծառայ մը ծիծաղելի դեր մը կատարել
չտար իւր տիրոջ :

— Աւհափառ տէր, ըսաւ պաշտօնեայն հպարտութեամբ, ես
կը կարծէի թէ դահին վեհութիւնն հասկընալու չափ մօտը ծնած
եմ :

— Պարոն, պատասխանեց թագաւորը կտրուկ ձայնով մը, քեզ
յոզնեցընել չեմ ուզեր : Երէկ իրիկուն 'ի Աւերսայլ ասպարանքին
սենեակը տիկին տը Կրամօնի կողմէն սուրհանդակ մ'եկաւ քեզի :

— Ճշմարիտ է, վեհափառ տէր :

— Նամակ մը տուաւ քեզի :

— Եղբօր մ'ու քրոջ մ'արդիլուած է թղթակցիլ, վեհափառ
տէր :

— Կեցիր, խնդրեմ. ես այն նամակին սպրունակութիւնը դիտեմ :

— Ո՛հ, վեհափառ տէր . . . :

— Ահաւասիկ . . . ինքս օրինակելու ծանրութիւնն յանձն առի :

Generated on 2016-09-07 09:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա թագաւորն անոր երկնցոց այն նամակին մէկ ճիշդ օրինակը :
— Ա Եհափառ տէր . . . :

— Մի ուրանար , պարոն դու քո . այն նամակը անկողնիդ Ետը
զրուած երկաթէ արկղին մէջ պահեցիր :

Գուքսը ուրուականի մը նման մեռելախաչ կերպարանք մ'առաւ :

— Ամենն այս չէ , շարայարեց թագաւորն անդ թաբար , տիկին
տը Արամոնի պատասխան գրեցիր : Այն նամակին պարունակութիւնն
սըլ զիտեմ : Այն նամակը հող է , լծղթագանակիդ մէջն է , և
ճանրայ ելնելու համար միայն յեփաթընէան մը կ'սպասէ՝ զոր պի-
տի աւելցընես ինէ բաժնուելէդ Ետք : Այլ տեսնես որ լաւ տեղե-
կացեր եմ , այնպէս չէ՞ :

Գուքսը սառուցեալ քրտինքով մը թրջած ճակատը սրբեց , ա-
ռանց խօսք մ'ըսելու խոնարհեցաւ և սենեկէն դուրս ելաւ . դողդո-
ջելով գլխուն կաթուած իջածի պէս :

Եթէ երեսին զարնող լայնասփիւռ օղը չըլլար՝ ՚ի շեպ պիտի
լինար :

Բայց զօրաւոր կամք ունեցող մարդ մ'էր : Անդամ մ'որ սրահը
հասաւ , ոյժը փոփոխեալ , և սլաշատականներուն շարքէն բարձ-
րադուրս անցնելով իւր բնակարանը մտաւ զանազան թղթեր պա-
հելու և այրելու համար :

Քառորդ մ'ետք , կառքով մը զղեկէն կը մեկնէր :

Պ . տը Շուաղէօլի աչքէ ելնելը կայծակ մ'եղաւ ու Գաղղիան
հրդեհեց :

Ժողովներն արդարեւ պաշտօնէին աչք խփելովը նեցուկ գտնելուն
համար , հռչակեցին լծէ Պետութիւնը իւր ամենէն զօրաւոր սիւնն-
րէն մին կորոյս : Աղետականաց դասը անոր յարած էր՝ իբրև իւրա-
յիններէն միայն : Աղերական դասը խնամք կը տեսնէր այն մարդէն՝
որուն անձնական արժանիքը յաճախ մինչև հպարտութեան ելնե-
լով քահանայական կերպարանք մը կ'առնէր իւր պաշտօնը :

Ներշնչական կամ փիլիսոփայական դասը որ արդէն կարի բազ-
մաթիւ և զօրաւոր էր՝ ըստ որում լուսաւորեալ , հմուտ և բժա-
խնդիր մարդիկ կ'աւելցընէր իւր մէջ , սիսաւ աղաղակ բառնալ՝
տեսնելով որ կառավարութիւնը պրծաւ այն պաշտօնէին ձեռքէն՝

Generated on 2016-09-07 09:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

որ Վօլգէրը կը խնկարկէր, թողակ կու տար ներշնչականներուն (Encyclopédie), և իբր օդտակար նսլատակաւ մը զանոնք ստուարացրնելով՝ տիկին տը Բօմբատուրի աւանդութիւնները կը պահէր, որ Փայլածոսի* մարդոց և փիլիսոփայից էդ Մեկենասն էր:

Ժողովուրդն ամեն սժգոհներէն աւելի իրաւունք ունէր: Նա ևս կը դանդատէր, և իբրև միշտ առանց խորն հասնելու՝ իրական ճշմարտութեան, ծանր վէրքին վրայ կը խօսէր:

Պօ տը Շուազէօլ ընդհանուր նկատմամբ, յոռի պաշտօնեսայ մը և յոռի քաղաքացի մ'էր. բայց համեմատաբար՝ առաքինութեան, բարոյականութեան և հայրենասիրութեան տիպար մ'էր: Երբ ժողովուրդը դիւղերուն մէջ անօթութենէ մեռնելով, Նորին Վեհափառութեան զեղխութիւնները, տիկին Տիւպարիի կործանիչ քմահաճոյքը կը լսէր, երբ իրեն ուղղակի ազդարարութիւններ կ'ուղղէին, այն է՝ Բարասունն սկստ ունեցող մարդը, կամ խրատ կու տային, այն է՝ Ընկերային դաշինքը, ՚ի ծածուկ յայտնութիւններ կ'ընէին, այն է՝ Գաղտարիւղ լրերը և Բարի Կողմացիի մը եղանակաւ դաժարները, այն ատեն ժողովուրդը կը սոսկար սիրեցելոյն պիղծ ձեռքն իյնալէ՝ որ ածխագործի մը կնոջ չափ յարգ չունի, ըսեր էր Պօվօ, սիրեցելոց սիրեցեալին ձեռքը, և այնքան տառապանքէ խոնջած՝ ապագան անցեալէն աւելի չարագուշակ տեսնելով կը վարմանար:

Պատճառն այն չէր թէ ժողովուրդը օր հակակրութիւններ ունէր՝ յայտնի համակրութիւններ ալ կը տածէր: Ժողովները չէր սիրեր, ըստ որում ժողովները, իւր բնական պաշտպանները միշտ զինքը երեսէ ձգեր էին՝ նախաթոռի և անձնական շահու դատարկ խնդիրներու զբաղելով. ըստ որում թագաւորական ամենակարութեան պատիր ցոլումէն միայն լուսաւորուած՝ այն ժողովները ազնուականաց և ժողովրդին մէջ տեղը ազնուապետութեան պէս բան մը երեւակայած էին ինքզինքնին:

Ժողովուրդը բնազդով և անցեալն յիշելով ազնուականները չէր սիրեր: Սուրէն այնքան կը վախնար՝ որքան եկեղեցին կ'անարգէր:

*Երբեմն պարբերական թերթ ՚ի Գաղղիա: Ծ. Թ.

Պ. տը Շուաղէօլի անկումը բնաւ իրեն դպչելու կէտ մը չունէր . բայց ազնուականաց , կղերին , ժողովին գանգասները կը լսէր , և այս շուկները իւր տրտունջներուն վրայ աւելնալով գլուխը տանելու չափ ժխոր մը յառաջ կը բերէր :

Ժողովուրդն այն զգացումէն խոտորելով ցաւ զգաց , և Պ. տը Շուաղէօլի համար գրեթէ ժողովրդայնութիւն մը երևան եկաւ :

Համայն Բարիզ , այս բառը կրնայ ապացոյցով մը ճշգրտիւ հոս , համայն Բարիզ քաղաքին մինչև դռները ուղեկից եղաւ 'ի Շանդլու շուղ տարագրին :

Կառքերն անցնելու ճանքուն վրայ ժողովուրդը երկու կողմը շարուեր էր . ժողովին անդամները ու պալատականները որ չէին կրցեր դքսէն ընդունուիլ՝ իրենց կառքերն ու ձիանը ժողովրդեան շարքերուն առաջքը կեցուցեր էին՝ դուքսն անցնելու ատեն բարեւելու և անոր հուսկողջոյնն ընդունելու համար :

Ամենէն աւելի Անֆէրի դուռը աղմուկ տեղի ունեցաւ՝ որ Դուրէնի ճանքան է : Հոն այնքան հետիոսներու , ձիաւորներու և կառքերու բազմութիւն մը խոնեցաւ՝ որ շրջագայութիւնը քանի մը ժամ ընդմիջեցաւ :

Երբ դուքսն յաջողեցաւ քաղաքին դռնէն ելնելու՝ իրեն ուղեկից եղան հարիւրէն աւելի կառքեր՝ որք իւր կառքին զուգես պսակն էին :

Կայթիւններն ու հառաչները տակաւին կը հեռանէին դքսին : Հասկըցաւ որ այսպիսի պարագայի մը մէջ այս աղմուկները այնքան իւր վրայ ցաւելուն համար չէր՝ որքան իւր անկման վրայ բարձրացող անձանցմէ վախնալուն համար :

Բազմութեան խոնուած ճանքուն վրայ սուրհանդակի կառք մը վարդելով կու գար , և եթէ կառուղիւր հզօր ճիգ մը չընէր՝ փոշիէն և փրփուրէն ճերմկած ձիերը Պ. տը Շուաղէօլի ձիանին վրայ պիտի իյնային յախուռն :

Այն կառքէն դուրս գլուխ մը ծռեցաւ , ինչպէս որ Պ. տը Շուաղէօլ ալ իւր կառքէն գլուխը դուրս հանեց :

Պ. տ'էկիւլյօն յարգանօք ողջունեց պաշտօնէ ընկած պաշտօնեայն՝ որուն ժառանգութեանը հնարքով հետամուտ ըլլալու կու գար :

Պ. տը Շուաղէօլ կառ.քը նետուեցաւ վերստին . մի միայն բոյէ մը իւր պարտութեան դափնիները կը լծուհաւորէր :

Քայց նոյն վայրկենին , զողջես պատահածին իբր հատուցում մը , Գաղղիոյ զինանշանները կրող և ութ ձիէ ձգուող կառ.ք մը որ Յէվրէն Սէն-Գլու տանող ճանրուն բերնէն կ'անցնէր՝ և կամ ըստ դիպաց , կամ հատքուած բաղմութեան պատճառաւ մեծ ճանրէն չէր անցնէր՝ Պ. տը Շուաղէօլի կառ.քին առջէն անցաւ :

Տիկին արքայորդին ետեւի բազմոցին վրայ էր իւր պատուոյ տիկնոջ տիկին տը նօայլի հետ :

Առջևի բազմոցին վրայ նստած էր օրիորդ Անտրէ տը Գավէրնէյ :

Պ. տը Շուաղէօլ կարմրեցաւ զոհունակութենէն և ընդունելու պատիւէն , և կառ.քին զոնակէն զուրս ծռեցաւ յարգանք բարեկէլով :

— Մնայք բարեաւ , տիկին , ըսաւ կիսատ ձայնով մը :

— Արկին տեսութիւն , պարոն տը Շուաղէօլ , պատասխանեց իշխանուհին կայսերավայել ժպիտով մը և ամեն արքունի ձեռն արհամարհող վեհափառ կերպարանքով մը :

— Աեցցէ՛ Պ. տը Շուաղէօլ , զոչեց եռանդնալից ձայն մը իշխանուհւոյն այն խօսքէն ետք :

Օրիորդ Անտրէ այն ձայնն առնելուն պէս ետեւը դարձաւ աշխուժիւ :

— Ի բայց , 'ի բայց , զոչեցին իշխանուհւոյն ձիավարները ճանրուն փոսերուն վրայ քաշուելու բռնադատելով ժիլպէրը՝ որ մեռելատիպ զեղներ և կը հալէր կը մաշէր տեսնելու համար :

Արդարեւ մեր զիւցազն էր որ նոյն միջոցին փիլիսոփայական խանդ մը զղարով զոչեր է՝ «Աեցցէ՛ Պ. տը Շուաղէօլ :»



Generated on 2016-09-07 09:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-g-google

2Է

Պ. ՏԻԿԻՒՅԼՕՆ ԳՈՒՔՍ

Բարիգի մէջ և Շանդուի ճանքուն վրայ կախ երեսով և կարծաթ աչերով շրջողները, զուարթագէմ և յանկուցիչ ժպիտներով Լիւսիէն կու գային :

Ինչու որ այս անգամ 'ի Լիւսիէն չէ թէ մահականացու կլին մը, չէ թէ մահականացու կանանց ամենէն գեղանին ու պաշտելին կը դահակալէր՝ ինչպէս որ պաշտականներն ու սուէտները կ'ըսէին, այլ ճշմարիտ դիցուհի մը՝ որ Գաղղիան կը կառավարէր :

Ուստի, Պ. տը Շուազէօլի պաշտօնէ ընկած օրուան իրիկունը, ճանքուն վրայ մի և նոյն կառքերն ու ձիերը խոնեցան՝ որոնք առաւօտուն տարադիր պաշտօնէին կառքին ետէն զացեր էին. նաև, հոն տեսնուեցան դիւանապետին կողմնակիցները, սպականութիւն սիրողները և շնորհ յուսացողները, որով բաւական ստուար խումբ մը կազմուեր էր :

Բայց տիկին Տիւպարի իւր ուստիկանութիւնն ունէր. Ժան սեպուհի մը չափ դիտէր անկինդան Շուազէօլեանց վրայ վերջին ծաղիկը նետելու դացողներուն անունը. այն անունները կոմսուհւոյն կ'ըսէր, և անոնք անողորմաբար կը մերժուէին, մինչդեռ այլոց հասարակային կարծեաց գէմ ունեցած արութիւնը օրուան դիցուհւոյն կողմէն կը վարձատրուէր պաշտպան ժպիտով մը և ինքզինքը ցոյց տալով :

Կառքերուն երկայն շարքերէն և ընդհանուր հաւաքումներէն ետք մասնաւոր ընդունելութիւնները տեղի ունեցան : Աիշլիէօ, օրուան դիւցազնը, արդարև զաղանի և մանաւանդ համեստ դիւցազնը այցելուներուն և խնդրարկուներուն յորձանուտին անցնելուն սպասեց, և ներքնասենեկին ամենէն ծայրի տիւրը նստաւ :

Ինչ ուրախութիւն և ինչ շնորհաւորութիւններ : Գողցես Լիւս

սիէնի բնակչաց սովորական լեզուն եղած էին ձեռք սեղմելները ,
անձայն խնդումները , եռանդուն տոփիւնները :

— Շիտակը , ըսաւ կոմսուհին , տը Պալսամօ կամ տը Ֆէնիքս
կոմսը , ինչպէս որ կ'ուզես այնպէս անուանէ , մարաջախտ , ներկայ
ժամանակիս ամենէն առաջին մարդն է : Մեղք որ մինչև հիմա կա-
խարդները կ'այրեն :

— Այո՛ , կոմսուհի , այո՛ , շատ մեծ մարդ մ'է , պատասխանեց
Ռիշլիէօ :

— Եւ շատ գեղեցիկ մարդ մը : Այն մարդուն համար մտահա-
ճոյք մ'ունիմ , դուքս :

— Զիս պիտի նախանձեցընես , ըսաւ Ռիշլիէօ խնդալով և խօ-
սակցութեան յայտնի ըջաթիւն մը տալ ստիպուելով : Պ. տը Ֆէ-
նիքս կոմսը սոսկալի ոստիկանութեան պաշտօնեայ մը կ'ըլլար :

— Ես ալ այնպէս կը մտածէի , պատասխանեց կոմսուհին : Միայն
թէ անկարելի է :

— Ինչո՞ւ , կոմսուհի :

— Ինչու որ իւր պաշտօնակիցներուն ոտքը ձեռքը պիտի կապէ :

— Ի՞նչպէս :

— Ամեն բան պիտնալով , անոնց ամեն խաղերը տեսնելով . . . :
Ռիշլիէօ իւր սնդոյրին ներքև կարմրեցաւ :

— Կոմսուհի , պատասխանեց , եթէ անոր պաշտօնակիցն ըլլայի ,
կը բաղձայի որ նա իմ խաղիս տեղեակ ըլլայ , և քարտէսները
քեզի հաղորդէ . պիտի տեսնես որ միշտ գոտային պոճախը աղջկան
ծնդանցը և լահլէն ոտիցը ներքև պիտի դանուի* :

— Քե՞նէ աւելի հանճարեղ մէկը չկայ , սիրելի դուքս , պա-
տասխանեց կոմսուհին : Բայց քիչ մը մեր պաշտօնէութեան վրայ
խօսինք . . . : Կարծեմ թէ մօրաքեռորդուոյդ իմաց պիտի տայիր
. . . :

* Այս խօսքէն բառախաղ մը գոյացած է գաղղլարէնին
մէջ սա կերպով. «Պիտի տեսնես որ ծառան յօժարակամ
միշտ տիկնոջ ծնգանցը եւ թագաւորին ոտիցը ներքև պիտի
գտնուի :

Ծ. Թ.

— Տ'Էկիւլլօնի՞ն : Եկաւ , տիկին , և այնպիսի դիպուածներով շրջապատեալ որք ապագային լաւադոյն դուշակները պիտի համարէր Հուովմայեցի կանխասաց մը , իր կառքը Պ. տը Շուազէօլի կառքին առջևը կտրելով անցաւ անոր շուած ատեն :

— Արդարեւ , այդ բարեգօշակ դիպուած մ'է , ըսաւ կոմսուհին : Աւրեմն պիտի գայ :

— Տիկին , մտածեցի որ եթէ Պ. տ'Էկիւլլօնը 'ի տես ամենեցուն և այսպիսի ժամանակ մը Նիւսիէն գայ՝ ղանազան մեկնութիւններու տեղի պիտի տայ . աղաչեցի զինքը որ վարը զիւղը մնայ մինչև որ քու հրամանաւդ զինքը կանչեմ :

— Աւրեմն իմաց տուր որ գայ , մարաջախտ , և անմիջապէս . ինչու որ ալ մինակ մնացինք գրեթէ :

— Ամենայն յօժարութեամբ , մինչդեռ իրարու միտքն ալ շատ աղէկ հասկըցած ենք , այնպէս չէ՞ , կոմսուհի :

— Բայարձակապէս , այո՛ , դուքս : — Պատերազմը . . . դա՛նձային գործերէ աւելի լաւ ունիս , այնպէս չէ՞ , կամ թէ արդեօք ծովային պաշտօնէութիւն կ'ուզես :

— Պատերազմը աւելի լաւ ունիմ , տիկին . պատերազմական պաշտօններու մէջ աւելի ծառայութիւն կրնամ մատուցանել :

— Ճիշդ է : Աւրեմն այն կերպով կը խօսիմ թաղաւորին : Հակակրութիւն ունի՞ս :

— Որո՞ւ համար :

— Պաշտօնակիցներէդ անոնց համար զոր Նորին Աւհափառութիւնը քեզ պիտի ներկայացընէ :

— Ես . կարի գիւրահամբոյր մէկն եմ , կոմսուհի . արդ ներէ որ քեռորդիս կանչել տամ , քանի որ զինքն ընդունելու շնորհն իրեն ընել կ'ուզես :

Ռիշլիէօ պատուհանին մօտեցաւ . վերջալուսոյ յետին նշոյլները տակաւին բախր կը լուսաւորէին : Նշան ըրաւ սլայիկի մը որ այն պատուհանը կը լրտեսէր , և այն նշանին վրայ արշաւասոյր մեկնեցաւ :

Սոյն միջոցին սկսան ճրագները վառել :

Պայիկին մեկնելէն տասն վայրկեան ետք , առաջին դատիթը

Generated on 2016-09-07 09:56 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կառք մը մնաւ : Կոմսուհին աչերը սլափուհանին դարձուց աշխուժի :

Ուրիշիէօի աչքէն չվրիպեցաւ այն շարժումը՝ որ կարի բարեզո շակ թուեցաւ իրեն՝ Պ. տ'Էկիւլժօնի , և հետեւաբար իւր գործու համար :

— Կոմսուհին մօրեղբօրէն կ'ախորժի , ըսաւ գուքսը մտովի , քեռ-
որդւոյն համար կ'սկսի ախորժ զղալ . հոսանդի մեծերը պիտի ըլ-
լանք մենք :

Մինչդեռ գուքսն այս սնոտի ակնկալութիւններով կ'զբաղէր՝
տկար ձայն մը լսուեցաւ դուռը , և վստահութիւն գրաւած սենե-
կապան ծառան Պ. տ'Էկիւլժօն գուքսը ծանոց :

Կարի գեղեցիկ և վայելուչ անձ մ'էր՝ ճոխ , շքեղ և կիրթ ճա-
շակով հաղուած : Պ. տ'Էկիւլժօն ծաղիկ երիտասարդութիւնն ան-
ցուցեր էր , բայց այն տեսակ մարդոցմէ էր որոնք մինչ 'ի խոր
ծերութիւն նայուածքով և կամքով երիտասարդ են :

Կառավարութեան հոգերը չէին կրցած անոր ճակտին վրայ խոր-
շում մը զոյայցնել . միայն մեծցուցեր էին այն բնական ծալը որ
դողցես Պետութեան մարդոց և բանաստեղծներուն վսեմ գաղափար-
ներուն ասպատարանն է : Նրբութիւն և միլամաղձութիւն արտայայ-
տող դեղանի գլուխը ուղիղ և բարձր բռներ էր , այնպէս որ գոգ-
ցիս գիտէր թէ տասն միլիոն մարդոց ատելութիւնը այն զլխուն վրայ
կը ծանրանար , բայց նաև հաստատել կ'ուզէր զոգցիս թէ այն ծան-
րութիւնը իւր զօրութենէն վեր չէր :

Պ. տ'Էկիւլժօն շատ գեղեցիկ ձեռներ ունէր , այնպիսի ձեռներ
որ նոյն խակ տանդէլաներու ներքե սպիտակ և փափուկ կ'երևին :
Այն ասունները բարեձև սրունքները շատ կը յարդէին . գուքսին
սրունքը Չլային վայելչութեան և ազնուապետական ձևի տիպար մ'էր :
Բանաստեղծի մը քաղցրութիւնը և մեծ իշխանի մը ազնուականու-
թիւնը , հրացանակրի մը դիւրաշարժութիւնը և գիրութիւնը կային
անոր վրայ : Կոմսուհւոյն համար երբակի մտայածին կատարելու-
թիւն մ'էր . մէկ կաղապարի մը վրայ երեք տիպար կը գտնէր՝ զոր
բնազգով պիտի սիրէր այն գեղանի զղայասէր կիներ :

Նշանակութեան արժանի գիպուածով մը , կամ լաւ ևս ըսելու
համար , Պ. տ'Էկիւլժօնի գիտուն մարտագիտութեամբը կազմուած

պարագաներու շարքով, հասարակաց ատելութեան ենթարկուած այս երկու դիւյցաները, քծնուհին ու քծնողը տակաւին արքունեաց մէջ դէմ առ դէմ չէին դանուած իրենց ամեն առաւելութիւններով:

Արդարեւ երեք տարիէ ՚ի վեր, Պ. տ'Եկիւլյօն Բրիտանիոյ կամ իւր խորհրդարանին մէջ շատ զբաղեցուցեր էր ամենուն միտքը իւր վրայ. արքունեաց մէջ խնդիրը շատ չէր յոյնեցուցեր, քաջ դիմանալով որ նպաստաւոր կամ աննպաստ ճղնածամ մը վրայ պիտի հասնէր, թէ առաջին պարագային մէջ աւելի լաւ էր անծանօթ բանի մը շահը իւր քաղաքայնոց թողուլ. երկրորդ պարագային մէջ անյայտ ըլլալ առանց բնաւ հետք մը թողուլ՝ ետքը նոր դէմքով մը դիւրաւ վճէն ելնելու համար:

Եւ ապա բոլոր այս հաշիւներէն աւելի պատճառ մը կար. այն պատճառը վիպասանական սահմանի մը մէջ էր՝ սակայն լաւագոյն էր:

Տիկին Տիւպարի կոմսուհի չըլլալէ և ամեն դիշեր իւր շրթերը Գաղղիոյ թաղին չքսելէն առաջ, ժպտերես, պաշտելի սիրուն անձ մ'էր, սիրուած էր, երջանկութիւն մը սրուն ալ պէտք չէր որ վստահէր վախ աղղելէն ՚ի վեր:

Բոլոր այն երիտասարդ, հարուստ, զօրաւոր և զեղանի անձինք որ Ժաննը Աօպէլինիէի հաճելի ըլլալ ուզէր էին, բոլոր այն յանդաստեղծներուն մէջ որ երկտող ոտանաւորի մը ծայրը Լանժ և անժ (հրեշտակ) բառերը փակցուցեր էին՝ Պ. տ'Եկիւլյօն ատենով առաջին տողին մէջ կ'երևէր. բայց համարէ թէ օրիորդ Լանժ իւր վրայ չարախօսողներուն չափ դիւրամատոյց չէր եղեր, կամ միովբանիւ, և այս՝ երկուքին արժանիքն ալ չպակսէցրնէր, համարէ թէ թաղաւորին սէրը իրարմէ զատեց այն իրարու միանալու պատրաստ երկաւ սրտերը, Պ. տ'Եկիւլյօն ոտանաւորները, փունջերը, անուշահոտութիւնները դաղրեցուցեր էր. օրիորդ Լանժ Բրիտանի փողոցին դուռը գոցեր էր. դուքսը Բրիտանիոյ կողմը երկնցեր էր հառաչները խեղդելով, և օրիորդ Լանժ ալ իւր հառաչները Աէրսայլի կողմն ուղղեր էր, Պ. տը կօնէս սեպուհին, այսինքն Գաղղիոյ թագաւորին:

Ասկէ սա հետեւեցաւ որ Պ. տ'Եկիւլյօնի յանկարծ անհետանալը գրեթէ հոգ չպատճառեց տիկին Տիւպարիի անցեալէն չվախ ունե-

նալուն համար, բայց յետոյ իւր վաղեմի տարփածուին լռին զիր-
քը տեսնելով խռովեր, յետոյ սքանչապէր էր, և մարդոց վրայ
ուղիղ զատողութիւն ընելու զիրքին մէջ զանուկելով ճշմարիտ հան-
ճարեղ մարդ մը գտեր էր Պ. տ'Էկիւլյօն դուքսը:

Աոմսուհւոյն համար այս որոշութիւնը շատ բան էր. բայց ամեն
բան չէր, և թերևս ընդ հուպ պիտի գար այն ժամանակը՝ յորում
տ'Էկիւլյօնը սրտի աէր անձ մը պիտի գանէր:

Հարկ է ըսել որ հէգ օրիորդ Լանժ անցեալէն վախնալու պատ-
ճառներ ունէր: Հրացանակիր մը, երբեմն երջանիկ տարփածու մը,
օր մը մինչև Վէրսայլ մտեր էր օրիորդ Լանժին քիչ մ'անցեալ
շնորհներէն խնդրելու համար, և այն խօսքերը արքայավայել խրոխ-
տութեամբ մը խեղդուելովն հանդերձ՝ սիկին տը Մէնդընօնի պա-
լատին պարկեշտ արձագանքը ճոնչելով ձայն հաներ էր:

Տեսնուեցաւ որ, սիկին Տիւպարիի հետ ըրած խօսակցութեան
մէջ, մարաջախտը բնաւ խօսք չէր բացեր իւր քեռորդուոյն և օրի-
որդ Լանժի իրարու հետ ունեցած ծանօթութեան մը վրայ: Այս
լուութիւնը, դքսին պէս ամենադժուար բաներն ըսելու վարժ մէկու
մը կողմէն եղած ըլլալով, սաստիկ զարմացուցեր, և մինչ իսկ խոռ-
վեր էր կոմսուհին:

Աստի անհամբեր Պ. տ'Էկիւլյօնի կ'սպասէր՝ ինչպէս ըլլալը
գիտնալու և տեսնելու համար որ մարաջախտը այս մասին խոհե-
մութիւն բանեցուցեր էր թէ տղէտ էր:

Դուքսը ներս մտաւ:

Անբունագրօս յարգանօք, թագուհւոյ մը և սովորական արքու-
նի սիկինոջ մը միջին սասիճանը գտնուող կէն մը ինչպէս ողջունե-
լը գիտնալուն վրայ վստահ՝ իւր ծեքծեքանօքը մէկ անգամուն իւր
վրայ անթերի մէկու մը, հրաշալի կերպով անթերի մէկու մը դա-
ղափարը տուաւ:

Պ. տ'Էկիւլյօն դուքսը ետքէն մօրեղբօրը ձեռքը բռնեց, որ
դէսդ 'ի կոմսուհին յառաջանալով՝ փաղաքուշ ձայնով մ'ըսաւ.

— Տիկին, ահա Պ. տ'Էկիւլյօն դուքսը. չէ թէ քեռորդիս՝ այլ
քու ամենէն եռանդուն ծառաներէդ մին քեզ ներկայացընելու պա-
տիւ ունիմ:

Կոմսուհին այն խօսքին վրայ դքսին նայեցաւ , կանանց յատուկ նայուածքով , այսինքն այնպիսինայուածքով մը որմէ բան մը չվրիպիր . միայն յարդանօք խոնարհեալ երկու զլուխներ և երկու դէմքեր տեսաւ՝ որոնք բարեւէն ետք հանդարտ ու պարզ կերպով իրենց դիրքն ստացան :

— Գիտեմ որ Պ . դուքսը կը սիրես , մարաջախտ , պատասխանեց կոմսուհին . դու բարեկամն ես : Պարոնին պիտի աղաչեմ որ իւր մօրեղբայրը մեծարելու համար , անոր ինձ ընելու հաճոյից մասին անոր նմանի :

— Կանխաւ այդ շաւիղն ինձի համար որոշած եմ , տիկին , պատասխանեց տ'էկիւյլօն դուքսը կրկին յարդական շարժում մ'ընելով :

— Շատ տառապանք կրեցիր Բրիտանիոյ մէջ , հարցոյց կոմսուհին :

— Շատ , տիկին , և դարձեալ տառապանացի վախճանին հասած չեմ , պատասխանեց տ'էկիւյլօն :

— Չեմ կարծեր որ այնպէս ըլլայ , պարոն . ասկէ զատ Պ . տը Ռիշլիէօ զօրութեամբ պիտի օդնէ քեզի :

Տ'էկիւյլօն Ռիշլիէօի նայեցաւ զողջես զարմանօք :

— Ա՛հ , ըրաւ կոմսուհին , կը տեսնեմ որ մարաջախտը տակաւին ժամանակ չէ ունեցեր քեզի հետ խօսակցելու . շատ պարզ է , ուղեորութենէ կը դառնաս : Անշուշտ շատ բաներ ունիք իրարու ըսելու , ձեզ առանձին կը թողում , մարաջախտ : Պարոն դուքս , հոս տանդ պէս է :

Այս ըսելով կոմսուհին մեկնեցաւ :

Բայց կոմսուհին դիտաւորութիւն մ'ունէր : Շատ հեռի չլինաց : Ներքնասենեկին ետեւ մեծ սենեակ մը կը բացուէր , ուր թաղաւորը շատ անգամ Լիւսիէն եկած աստնը շատ կ'ախորժէր նստիլ տեսակ տեսակ Չինական ամաններու մէջ : Այս սենեակը ներքնասենեկէն աւելի կ'ուղէր , ինչու որ մերձակայ սենեկին մէջ բոլոր խօսուածը հոնկէ կը լսուէր :

Տիկին Տիւպարի հաւաստի էր որ դքսին և քեռորդույն բոլոր խօսքը պիտի լսէր հոնկէ . ասով անդառնալի կարծիք մը պիտի ունենար այս վերջնոյն վրայ :

Բայց դուքսը որողայլը չընկաւ . պաշտաներուն կամ պաշտօնա-
րաններուն մէջ գտնուած թագստոյներուն մեծագոյն մասը գիտէր :
Խոսուած ատեն մտիկ ընելը իւր պորձածած միջոցներէն մին էր ,
իսկ լսուած ատեն խօսիլը իւր հնարքներէն մին :

Ուստի , տիկին Տիւպարիի ա'Էկիւլլօնի ըրած լաւ ընդունելութեան
վրայ ժամանակ շանցած , միաքը դրաւ բոլոր տաղանդը փայլեցնել ,
և կոմսուհւոյն ենթադրեալ բացակայութեան շնորհիւ ցոյց տալ ա-
նոր դաղտնի փոքր երջանկութեան և խարդաւանանքով խառնուած
մեծ զօրութեան մը յատակադիծը , կրկնակի գրգիռ մը որուն բնաւ
դէմ չկրնար դնել գեղտնի կին մը , մանաւանդ արքունիքը մեծցող
կին մը :

Գուքսը նստեցուց և ըսաւ .

— Ար տեսնես , դուքս , հոս տեղաւորուած եմ :

— Այո , պարոն , կը տեսնեմ :

— Բարեբաղդաբար կրցայ սիրտը շահիլ այն գեղանի կնոջ՝ զոր
իբր թագուհի մը կը նկատեն հոս , և իրօք ալ է :

Տ'Էկիւլլօն խոնարհութիւն մ'ըրաւ :

— Հիմա քեզի պիտի ըսեմ , շարայարեց Ռիչլիէօ , ինչ որ փո-
ղոցը բաց տեղը չկրցայ քեզի իմացնել , այն թէ տիկին Տիւպարի
պաշտօն մը խոստացաւ ինձ :

— Ա՛հ , ըրաւ տ'Էկիւլլօն , շատ արժանի ես , պարոն :

— Արժանի ըլլալս չգիտեմ , բայց այսպէս է , թէպէտ շիտակն
ըսելու համար քիչ մ'ուշ . ուստի պաշտօնիս մէջ հաստատուելէն
ետք , ինչպէս որ պիտի հաստատուիմ ալ , քու վրադ պիտի մտա-
ծեմ , ա'Էկիւլլօն :

— Շնորհակալ եմ , պարոն դուքս , դու ընտիր աղղական մ'ես ,
այս մասին շատ ապացոյցներ կան :

— Նպատակ մը չունին , ա'Էկիւլլօն :

— Բնաւ , միայն թէ դքսութեան և դերագոյն խորհրդարանի ան-
դամակցութեան արտոլոսէս չիյնամ , ինչպէս որ ժողովոյ անդամնե-
րը կը խնդրեն :

— Քեզի նեցուկ ունին տեղ մը :

— Ե՛ս , բնաւ :

Generated on 2016-09-07 09:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ինծի պէս տարփածու մը չեն սիրեր , քու ցուրտ մպխտովդ այն ըսել կ'ուզես . դու երիտասարդի աչերովդ կը նայիս խորշումեալ ճակատիս , ծռմուկած սրունքներուս և չորցած ձեռքիս՝ որ ատենով այնքան դեղեցիկ էր : Շուաղէօլի վրայ խօսած ատենս , փոխանակ «Անոր դերը պիտի կատարեմ» ըսելու՝ «Անոր դերը պիտի կատարենք» ըսել պարտ էի :

— Մօրեղբայրդ իմ :

— Ոչ , ես չեմ կրնար անորմէ սիրուիլ , դիտեմ . սակայն քեզի կ'ըսեմ . . . և առանց ահի , ինչու որ նէ չկրնար դիտնալ , այն կ'ընր ամեն բանէ աւելի պիտի սիրէի . . . բայց . . . :

Տ'էկիւլլօն յօնքը պուստեց :

— Բայց շարայարեց , ես սքանչելի յատակադիծ մը պատրաստեցի . այս դերը որ տարիքիս պասսառաւը անկարելի կ'ըլլայ՝ երկուքի պիտի բաժնեմ :

— Ա՛հ , ա՛հ , ըրաւ տ'էկիւլլօն :

— Իմի՛ններէս մէկը , ըսաւ Ռիշլիէօ , տիկին Տիւպարին պիտի սիրէ : Է՛հ , ի՛նչ դժուար գործ . . . այնպիսի անթերի կին մը :

Եւ Ռիշլիէօ ձայնը բարձրացուց :

— Անշուշտ Փրօսնազը չպիտի ըլլայ այն , իւր սերնդին անարժան թշուառական մը , անմիտ մը , վատ մը , անառակ մը , ողորմելի արարած մը . . . : Տեսնեմ , դուքս , դու չըլլաս :

— Է՛ս , դոչեց տ'էկիւլլօն : Խե՛նդ ես , մօրեղբայր :

— Խե՛նդ : Ի՛նչ , այս խրատը քեզի տուողին ոտքը չե՛ս իյնար , ի՛նչ , չե՛ս ցնծար , երախտագիտութեամբ չե՛ս տոչոբի՛ր , ի՛նչ , անոր քեզ ընդունած եղանակին համար սիրով չե՛ս բռնկիր . . . սիրով չե՛ս յիմարիր . . . : Օն անդր , դոչեց ծեր մարաջախտը , Ալսիպիատէն մինչև հիմա միայն մէկ Ռիշլիէօ մ'եկաւ աշխարհ , և ուրիշ մ'ալ չպիտի դայ , քաջ կը տեսնեմ :

— Սիրելի հօրեղբայրս , պատասխանեց դուքսը յուզմունքով մը , որ եթէ կեղծ էր շատ ճարտարութիւն կը բանեցընէր , նոյնպէս եթէ ճշմարիտ ալ էր , ինչու որ առաջարկութիւնը բացայայտ էր , սիրելի հօրեղբայրս , կը հասկընամ այն օգուտը որ կրնաս քաղել ինձ խօսած դիրքէդ . դու Պ . տը Շուաղէօլի իշխանութեան նման

Generated on 2016-09-07 09:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կը կառավարէ իր , և ես ալ քեզի համար այն իշխանութիւնը դանոյղ տարփածուն կ'ըլլայի : Այո , Գաղղիոյ ամենէն հանճարամիտ անձին յատակազիծն է այդ . բայց զայն պատրաստելու ատենդ միայն բան մը մնուցեր ես :

— Ինչ բան . . . գոչեց Ռիշլիէօ մտայոյզ , արդեօք տիկին Տիւպարին չէս կրնար սիրել : Այո է . . . : Յիմար , երբակի յիմար , թշուառական , այս ըսել կ'ուզես :

— Ո՛հ , ոչ , այդ ըսել չեմ ուզեր , սիրելի մօրեղբայրս , գոչեց տ'էէկիւլօն այնպէս որ գոզցես զիտէր թէ իւր խօսքէն և ոչ մին չպիտի կորսուէր . տիկին Տիւպարի որ հազիւ թէ կը ճանչնամ ինձ կարի գեղանի և կարի հրապուրիչ կին մ'երեցաւ : Ընդհակառակը , սաստիկ , չափազանց պիտի սիրէի տիկին Տիւպարին . բայց խնդիրն հոս չէ :

— Ո՛ւր է ուրեմն :

— Խնդիրն հոն է որ , պարոն դուքս , տիկին Տիւպարի երբէք չպիտի սիրէ զիս , և այնպիսի մտերմութեան մ'առաջին պայմանն ալ սէրն է : Ինչպէս կարելի է որ այն փառաւոր արքունեաց մէջ . ամէն տեսակ ղեղեցկութիւններով ճոխացեալ նորատի հասակի մը մատուցուած մեծարանաց մէջ , ինչպէս կարելի է որ ղեղանի կոմսուհոյն աչքին զարնէ ճիշդ այն մարդը որ բնաւ արժանիք չունի , որուն երիտասարդ ատենն անցած է արդէն և տառապանաց ներքև կը հեծէ , որ ամենուն աչքէն կը ծածկուի զլալով որ քիչ ատենէն աներևոյթ պիտի ըլլայ : Սիրելի մօրեղբայրս , եթէ տիկին Տիւպարին երիտասարդութեան , և գեղեցկութեանս ատեն ճանչցած ըլլայի , այն ատեն որ կանայք կ'ախորժէին իմ վրայ տեսնելով այն բանէն ինչ որ երիտասարդի մը վրայ տեսնելով կ'ախորժին , իբրև հին յիշատակ մը կրնար նկատել զիս : Այս ալ քիչ բան չ'է . սակայն ոչինչ , ոչ անցեալը , ոչ ներկան և ոչ ապագան այսպիսի տպաւորութիւն մը չեն կրնար ընել : Սիրելի մօրեղբայրս , պէտք է ետ կենալ այս եղջերուաքաղէն . սակայն այնքան քաղցր ու փայլուն նկարադրելով ինձ կոմսուհին՝ սիրտս խոցեցիր :

Գուքսը այնպիսի խանդով մը կ'արտասանէր այս խօսքերը որ Մոլէի նախանձ պիտի ազդէր , և Լըքէն ուննելու արժանի պիտի համար էր , Ռիշլիէօ շրթերը կը խածնէր իւրովի ըսելով , 10

Generated on 2016-09-07 09:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Արդեօք չարաճճին դուշակեր է թէ կոմսուհին մեզ մտիկ կ'ընէ : Նզովից արմատ , ինչ ճարպիկ է : Վարպետ ելած է : Զգոյշ կենալու է :

Ռիշլիէօ իրաւունք ունէր . կոմսուհին մտիկ կ'ընէր , և տ'էկիւր լօնի խօսքերուն իւրաքանչիւրը շատ առաջ իւր սրտին մէջ մտեր էին . այն խոստովանութեան՝ հրապոյրը հրձուանօք կը վայելէր , և կը լափէր այն մարդուն ազնիւ փափկասրտութիւնը որ իւր մտերմին իսկ չէր յայտնէր վաղեմի կապակցութեան դաղանիքը , վախնալով որ թերևս տակաւին սիրուած պատկեր մը ստուերով շծածկէ :

— Ուստի , կը մերժե՞ս , ըսաւ Ռիշլիէօ :

— Ո՛հ , այդ մասին , այո , սիրելի մօրեղբայրս , ինչու որ դժբաղդ դաբար գործն անկարելի կը տեսնեմ :

— Գէթ փորձէ , թշուառական :

— Ի՞նչպէս :

— Ալ դու մենէ ես . . . կոմսուհին ամէն օր պիտի տեսնես , ջանա անոր հաճելի ըլլալ , նզովից արմատ :

— Շահախնդիր նպատակաւ մը . . . : Ոչ , ոչ . . . : Եթէ այս դժնդակ գաղափարով , անոր հաճելի ըլլալու դժբաղդութիւնն ունենայի՝ աշխարհիս միւս ծայրը կը փախչէի՝ ինքզինքէս ամչնալուս համար :

Ռիշլիէօ կզակը քերից դարձեալ :

— Գործը եղած լմնցած է , ըսաւ մտովի , ապա թէ ոչ տ'էկիւլօն անմիտ մէկն է :

Յանկարծ գաւիթներուն մէջ աղմուկ մը լսուեցաւ , և քանի մը ձայներ դոչեցին՝ «Թագաւորը :»

— Չա՛ր սաստանայ , գոչեց Ռիշլիէօ , պէտք չէ որ թագաւորը դիս հոս տեսնէ , ես խոյս կու տամ :

— Իսկ ե՞ս , ըսաւ դուքսը :

— Գու՛ ուրիշ , պէտք է որ քեզ տեսնէ : Աեցիր . . . կեցիր . . . և , Աստուծոյ սիրոյն համար , չըլլայ որ տապարէն՝ քետք կոթնալ մէկդի նետես :

Այս խօսքին վրայ Ռիշլիէօ փոքր սանդուխէն աներևոյթ եղաւ գլխին ըսելով ,

— Վա՛ղը :

ՉԸ

ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՏԱԹԵ

Տ'Էկիւլլօն դուքսը առանձին մնալով նախ բաւական շփոթեցաւ . կատարելապէս հասկցեր էր մօրեղբօրն իրեն ըսածը , տիկին Տիւպարի մտիկ ընելը , միով բանիւ կատարելապէս հասկցեր էր որ այուպիսի պարագայի մը մէջ խելացի մարդ մը ընտիր սիրտ մը ցոյց տալու՝ և առանձին ինքը կատարելու էր այն մասը որուն մասնակցելու կը ջանար ձեր մարաջախտը :

Երջանկաբար թաղաւորին գալստեամբը ընդմիջեցաւ այն բացատրութիւնը՝ որ բռնի երեան պիտի ելնէր Պ. տ'Էկիւլլօնի մաքրակրօնի մը նման ցոյց տուած կերպարանքէն :

Մարաջախտը երկայն ատեն խաբուող՝ նա մանաւանդ իւր բարեմասնութիւնները վրայ տալով այլոյը չափազանց դրուացող մէկը չէր :

Բայց տ'Էկիւլլօն առանձին մնալով խորհելու ժամանակ ունեցաւ :

Թաղաւորն արդարեւ կուղար : Մանկլաւիկներն արդէն նախասենեկին դուռը բացեր էին , և Ջամօր դէպ 'ի վեհապետը կը խոյանար անորմէ շաքարեղէն ուզելով . սրտաշարժ ընտանութիւն մը՝ որուն փոխարէն Լուի ԺԵ ցասկոտ ստեներ , մատին ծայրով աւոր քիթը ձողկելով կամ ականջներէն քաշելով կը պատասխանէր 'ի սաստիկ տհաճութիւն դեռստի Ափրիկեցոյն :

Թագաւորը չինական ամաններուն սենեակը տեղաւորուեցաւ , և տ'Էկիւլլօն իւր մօրեղբօրը հետ ըրած խօսակցութիւնը ամբողջապէս տիկին Տիւպարի լսած ըլլալուն վրայ սա պատճառաւ համոզուեցաւ որ , ինքն ալ տ'Էկիւլլօն , թագաւորին կոմսուհոյն հետ ըրած խօսակցութիւնը սիկզբէն ամբողջ իմացաւ :

Նորին Վեհափառութիւնը խիստ ծանր բեռ մը վերցուցածի պէս խոնջած կ'երևէր . Այլաս աշխարհս տամներկու ժամ իւր ուսին

Քրայ կրելէն ետք՝ այնքան հաշմ չպիտի երևէր երեկոյին :

Լուի Ժե թոյլ տուաւ որ իւր տարփուհին շնորհակալ ըլլայ իւրեն , զինքը դրուատէ , փայփայէ . Պ. տը Շուապէօլի անկումէն պոյսացած ազդեցութիւնը պատմել տալով շատ զուարճացաւ :

Տիկին Տիւպարի ճիգ մ'ըրաւ այն ատեն : Քաղաքապետութեան համար պատեհ ժամ մ'էր . ասկէ զատ նոյն միջոցին , աշխարհիս չորս ոլորտէն մին գլորդելու չափ արութիւնն կ'զգար իւր վրայ :

— Վեհափառ տէր , ըսաւ , ջնջեցիր՝ լաւ . քանդեցիր՝ սքանչելի բայց այժմ վերաշինելու է :

— Ո՛հ , այդ եղած լմնցած է , ըսաւ թաղաւորն անփութօրէն :

— Ինչպէս , պաշտօնէութիւն մը կազմեցիր :

— Այո :

— Անմիջապէս , առանց շունչ առնելո՞ւ :

— Տես սա իմ անմիտ մարդիկս . . . : Ո՛հ , կնկան խելքն այսպէս է : Մարդ իւր խոհարարը ճամբելէն առաջ , ինչպէս որ անցեալ օր կ'ըսէիր , նոր մը չբռնէր :

— Անգամ մ'ալ ըսէ որ խորհրդարանը կազմեցիր :

Թագաւորը կանգնեցաւ լայն բազմոցին վրայ ուր աւելի պառկած էր քան նստած՝ գեղանի կոմսուհւոյն ուսերը բարձի տեղ գործածելով :

— Ժանէդ , ըսաւ թաղաւորը , քու տաղնապէդ այնպէս կ'երևի թէ նոր պաշտօնեաներս կը ճանչնաս ու զանոնք պիտի դարձնես , և անոնց տեղ ուրիշներ ունիս առաջարկելու :

— Բայց . . . , ըսաւ կոմսուհին , այնքան դժպատեհ բան մը չէ այս :

— Իրա՞ն . . . պաշտօնեաներ ունիս պատրաստած :

— Դու ալ պատրաստեր ես , ըսաւ կոմսուհին :

— Ո՛հ , ես ուրիշ , իմ գործս է այն , կոմսուհի : Տեսնենք ով են առաջարկած անձինքդ :

— Ոչ , դու քուկիներդ ըսէ :

— Հաճութեամբ , քեզի օրինակ տալու համար կ'սկսիմ :

— Նախ , ծովային գործոց պաշտօնեայն որ այն սիրելի Պ. տը Քրասլէնն էր :

Generated on 2016-09-13 11:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Ա՛հ , նոր մը դրուեցաւ անոր տեղը , կոմսուհի . սիրուն մարդ մը որ երբէք ծովուն երեսն անգամ տեսած չունի :

— Օ՛ն անդր :

— Պատուոյս վրայ կ'երդնում , ընտիր հնարք մ'է այս : Այս կերպով շատ ժողովրդայնութիւն պիտի շահիմ , և ամենէն հեռաւոր ծովերուն մէջ զիս պսակօք պիտի զարդարեն , այսինքն պատկերս :

— Բայց ո՞վ է այն , վեհափառ տէր , ո՞վ է :

— Գրաւ կը գնեմ որ մտքէդ չանցնիր ո՞վ ըլլալը :

— Մարդ մը զոր ընտրելով ժողովրդային կ'ըլլաս . . . : Ի՞նչու որ մտքէս չանցնիր ո՞վ ըլլալը :

— Ժողովական մը , սիրելիս . . . , Պզանսօնի ժողովին առաջին նախագահը :

— Պ. տը Պօյնրո :

— Ինքն իսկ . . . : Նշովից արմատ , ինչպէս ալ ամէն բան դիտես . . . : Ար ճանչնամ այն մարդիկը :

— Ամայ ակամայ պիտի ճանչնամ , ամբողջ օրը ժողովին վրայ կը խօսին ինձ : Ա՛հ , բայց այդ մարդը թիակ մ'ինչ ըլլալն անգամ չգիտէ :

— Աւելի լաւ : Պ. տը Բրասլէն իւր գործէն շատ աղէկ հասկնալուն համար շատ սուղի նստաւ ինձ շինել տուած նաւերովը :

— Գանձուց պաշտօնեայն , վեհափառ տէր :

— Ո՛հ , զանձուց պաշտօնեայն ուրիշ . յարմար մարդ մ'ընտրեցի :

— Գանձային մարդ մը :

— Ոչ . . . զինուորական մը : Շատ ատենէ 'ի վեր գանձային մարդիկը զանձս կը պարպեն :

— Բայց , տէր Աստուած , պատերազմական գործոց :

— Հանգիստ եղիր , հոն ալ գանձային մարդ մը կը դնեմ , Դէրէյը , սոխի պէս կ'ստկէ հաշիւները , Պ. տը Շուաղէօլի ըրած բոլոր դումարներուն մէջ սխալ պիտի գտնէ : Շիտակը միտք ըրի որ պատերազմական գործոց համար սքանչելի մէկն ընտրեմ , անշահասէր մարդ մը , ինչպէս կ'ըսեն . այս ալ փիլիսոփայից հաճելի ըլլալու համար :

— Լաւ , ո՞վ պիտի ընտրէիր , Աօլդէրը :

— Անոր պէս բան մը . . . տիւ Միւյ ասպետը . . . : Կատօն մը :

— Ա՛հ , տէր Աստուած , զիս կը սոսկացնես :

— Եղած լմնցած էր . . . : Մարդը բերել տուեր էի , իւր պաշտօնին հրովարտակը ստորագրուած էր . ինձ շնորհակալ եղաւ , ես ալ , կոմսուհի , չա՞ր թէ բարի հրեշտակէս գրգեալ , ալ դու որոջէ , ըսի իրեն որ այս իրիկուն Լիւսիէն զայ ընթրելու և խօսակցելու համար :

— Ա՛նչ , քանի՞ զգուելի է ըսածդ :

— Լաւ , կոմսուհի , տիւ Միւյ ևս ճիշդ այսպէս պատասխանեց :

— Այնպէս պատասխանեց :

— Ուրիշ բառերով , կոմսուհի՛ բայց վերջապէս ըսածը սա էր թէ թագաւորին ծառայելը իւր ամենէն մեծ փափաքն էր , սակայն տիկին Տիւպարիի ծառայելը անկարելի էր իրեն :

— Լաւ , ի՛նչ աղոթք մարդ է այդ քու փիլիսոփադ :

— Ես ալ , կոմսուհի , ձեռքս երկնցուցի . . . որ հրովարտակը ես տայ , առի , կտոր կտոր ըրի զայն կարի համբերող ժպիտով մը , և ասպետն աներևոյթ եղաւ : Եթէ իմ տեղս Լուի ԺԳ ըլլար՝ Պասդիլի ամենայնուրեւ մէկ ծակին մէջ փտեցնել կուտար այն լիրբը . բայց ես Լուի ԺԵն եմ , զոր ժողովը կը խարազանէ՝ փոխանակ ես ժողովը խարազանելու : Ահա դործն այս կէտերուն մէջն է :

— Միևնոյն բանն է , վեհափառ տէր , ըսաւ կոմսուհին իւր վեհափառ տարփածուն համբոյրներով ծածկելով , դու անթերի մէկն ես :

— Ամեն մարդ այնպէս չըսեր : Գէրէյէն կը զարշին :

— Որմէ՞ չեն զարշիր . . . : Իսկ արտաքին գործոց պաշտօնին :

— Այն բարի Պէրդէնը զոր կը ճանչնաս :

— Ոչ :

— Ուրեմն զոր չես ճանչնար :

— Բայց բոլոր ասոնց մէջ բնաւ մէկ լաւ պաշտօնեայ չեմ տեսներ :

- Այնպէս թող ըլլայ . դու ալ քու մարդիկդ ըսէ :
- Միայն մին պիտի ըսեմ :
- Բայց չես ըսեր , կը վախնաս :
- Մարաջախտը :
- Ո՞ր մարաջախտը , ըսաւ թաղաւորը դէմքը խոժոռելով :
- Տը Ռիշլիէօ դուքսը :
- Այն ծեօնը , այն թրջած համը :
- Լաւ , Մահօնի յաղթողին թրջած համ . կ'ըսես :
- Ծեր պակշոտ մը . . . :
- Վեհափառ տէր , քու ընկերակիցդ :
- Անբարոյական մարդ մը՝ որուն երեսէն բոլոր կանայք խոյս
կու տան :
- Է՛հ , հարկաւ . այն ատենէ ՚ի վեր որ անոնց ետեւէն չիյնար :
- Երբէք Ռիշլիէօի խօսքը մի ընէր , սաստիկ հակակրօթիւն
ունիմ անոր . այն Մահօնի յաղթողը զիս Բարիզի բոլոր խաղարանները
տարած է . . . մեր վրայ խաղեր կ'երգէին : Ոչ , ոչ , Ռիշլիէօի
անունը միայն լսելով ինքնիրմէս կ'եղնեմ :
- Ուրեմն շատ կ'ատէք զանոնք :
- Որո՞նք :
- Ռիշլիէօի ընտանիքը :
- Կը դարձիմ անոնցմէ :
- Ամենէ՞ն ալ :
- Ամենքն ալ : Չե՞ս տեսներ Պ. Քրօնտագը , ինչ աղւոր դուքս
և անդամ ատենակալաց ժողովին , տասն անգամ պատժանիւի ար-
ժանի դորժեր կատարեց :
- Անոր համար խօսք չունիմ , բայց աշխարհիս մէջ ուրիշ մար-
դիկ չկան Ռիշլիէօի ընտանիքէն :
- Ա՛հ , այո , տ'եկիւյլօն :
- Լաւ , ուրեմն :
- Ալ կրնայ հասկցուիլ թէ այս խօսքին վրայ քեռորդւոյն ական-
ջը ինչպէս տնկուեր էր ներքնասենեկին մէջ :
- Չան ուրիշներէ աւելի պէտք է որ ատեմ , ինչու որ Գաղ-
ղիոյ մէջ գտնուող բոլոր շատախօսները դէմս կը հանէ . բայց
ձեռքս չէ , յանդուգն ըլլալուն համար տհաճելի չէ ինձ :

Generated on 2016-09-07 10:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Խեղացի մարդ մ'է, գոչեց կոմսուհին :

— Քաջասիրտ և խիստ մարդ մը թագաւորին պատիւը պահելու համար : Ահա ճշմարիտ ատենակալ մը :

— Այո, այո, հարիւր անգամ այո կ'ըսեմ : Բան մ'ըրէ զան : Թագաւորը թեւերը խաչաձև կուրծքին վրայ դնելով կոմսուհոյն նայեցաւ :

— Կոմսուհի, ինչպէս կարելի է որ այդպիսի բան մը կ'առաջարկես ինձ երբ բոլոր Քաղղիա ինձմէ կը խնդրէ որ զան աքսորեմ և դքսութեան աստիճանն իրմէ առնեմ :

Տիկին Տիւպարի ըստ կարգի թեւերը խաչաձև կուրծքին վրայ գրաւ :

— Քիչ մ'առաջ, ըսաւ կոմսուհին, Ռիշլիէօն թրջած հաւ կը կոչէիր. բայց այս անունը իրաւամբ քեզի կը վայէ :

— Ո՛հ, կոմսուհի . . . :

— Որքան փքացեր ես Պ. տը Շուաղէօլը ճամբելու համար :

— Է՛հ, դիւրին գործ չէր :

— Այդ ըրիր, շատ լաւ, և հիմա անոր հետեանայն առջև կ'ընկրկիս :

— Ե՞ս :

— Անշուշտ : Գուքսը ճամբելովդ ի՛նչ կ'ընես :

— Ժողովին կոնակին կից մը կու տամ :

— Թող երկու կից ըլլայ : Դողովից արմատ, երկու ոտքդ ալ վերցուր. անշուշտ իրարու ետեէ : Ժողովք կ'ուզէր Շուաղէլը պահել. Շուաղէօլը ճամբէ : Տ'Էկիւյլօնը կ'ուզէ ճամբել. ա'Էկիւյլօնը պահէ :

— Ես ալ չեմ ճանբեր զան :

— Պահէ զան ուղղելով և անոր յարդն աւելցնելով :

— Այն սթախիչին համար պաշտօն մը կ'ուզես,

— Ես վարձատրութիւն կ'ուզեմ այն մարդուն համար որ զքեզ պաշտպանեց՝ պատիւն ու հարստութիւնը կորսնցնելը աչքն առնելով :

— Կեանքն ըսէ, ինչու որ օր մը քու դուքսդ Մօրըու բարեկեամիդ հետ պիտի քարկոծեն :

— Շատ քաջալերած կ'ըլլայիր պաշտպաններդ եթէ խօսքդ
լսէին :

— Անոնք ալ ինչ այնպէս կը փոխարինեն , կոմսուհի :

— Այդպէս մի խօսիր , գործերը կեցած են :

— Ա՛հ , բայց այդ ո՛րքան տիւն է տ'էկիւլժօնի համար :

— Աւի՛ն , չեմ հասկնար այդ . այսօր տեսայ զինքը , և առա-
ջին անգամն ըլլալով խօսեցայ հետը :

— Ա՛հ , այդ ուրիշ . ուրեմն համոզումէ յառաջ եկած է , և
ես ամեն համոզում կը յարդեմ՝ ես բնաւ համոզում ունեցած չըլ-
լալու համար :

— Ուստի յանուն տ'էկիւլժօնի բան մը տուր Ռիշլիէօի՝ քանի
որ տ'էկիւլժօնի բան մը տալ չես ուզեր :

— Ռիշլիէօի , ոչ ինչ , ոչ ինչ , ոչ ինչ , յաւիտեան ո՛չ ինչ :

— Ուրեմն Պ. տ'էկիւլժօնի , քանի որ Ռիշլիէօի բան մը չես
տար :

— Ի՛նչ , անոր պաշտօն մը տա՛լ : Այս միջոցին անկարելի է :

— Կը հասկընամ . . . բայց ատենէ մը ետք . . . : Մտածէ
անգամ մ'որ հնարապէտ , գործունեայ մէկն է , և Գէրէյը , տ'է-
կիւլժօնը և Մօբրուն ունենալով Կերբերոսի երեք զլուխները կ'ու-
նենաս . սա ևս մտածէ որ կարգած պաշտօնեաներդ կատակ մ'են
որ շատ չկրնար տևել :

— Կը սխալիս , կոմսուհի , առ նուազն երեք ամիս կը տևէ :

— Երեք ամիսէն , խօսքդ առած եմ :

— Ո՛հ , ո՛հ , կոմսուհի :

— Այն լմնցաւ . հիմա ներկային նայինք :

— Հիմա բան մը չունիմ :

— Թեթևակի զօրքերդ կան . Պ. տ'էկիւլժօն պաշտօնակալ մ'է ,
զինուորական մ'է . Թեթևակի զօրքերդ անոր տուր :

— Այնպէս թող ըլլայ :

— Շնորհակալ եմ , գոչեց կոմսուհին տարապայման ուրախու-
թեամբ :

Եւ Պ. տ'էկիւլժօն վեհափառ Լուի Ժե.ի այտին վրայ դոեհիկէ
համբոյրի մը ձայնն առաւ :

— Այժմ ըսէ որ ընթրիքը պատրաստեն , կոմսուհի , ըսաւ թագաւորը :

— Այ , ըսաւ կոմսուհին , հոս բան մը չկայ . քաղաքականութեամբ դժուրս ճաթեցուցիր . . . : Մարդիկս ճառեր խօսեցան , հրախաղութիւններ ըրին՝ բայց կերակուր չպատրաստեցին :

— Ուրեմն եկուր քեզ Մարլի տանիմ :

— Անկարելի է , դժուրս կը ճաթի :

— Գլուխդ կը ցաւի :

— Անտանելի կերպով :

— Ուրեմն պառկիս աղէկ կ'ընես , կոմսուհի :

— Իս ալ այնպէս պիտի ընեմ , վեհափառ տէր :

— Ուրեմն մնաս բարեալ :

— Այսինքն կրկին տեսութիւն :

— Քիչ մը Պ. տը Շուազէօլի կը նմանիմ այս միջոցին . զիս ալ կը ճամբեն :

— Քեզ առաջնորդելով , գողուելով , փայփայելով , ըսաւ զուարթագեղ կինը որ մեղմովին դրանը կողմը կը մղէր , և վերջապէս գուրս հանեց թագաւորը որ քրքիջներ կ'արձակէր և սանդուխին մէն մի աստիճանին վրայ ետևը կը գառնար նայելու : կոմսուհին կամարակապ սրահին վերէն ձեռաց աշտանակ մը կը բռնէր :

— Ինձ նայէ , կոմսուհի , ըսաւ թագաւորը աստիճան մը վեր ելնելով :

— Վեհափառ տէր :

— Խեղճ մարաջախտը սիտի մեռնի :

— Ինչ բանի համար :

— Վերստին ձեռք անցուցած պաշածնին համար :

— Ինչե՛ր ալ կ'ըսես , ըսաւ կոմսուհին վերջին քրքիջով մը զան ճամբելով :

Եւ նորին Վեհափառութիւնը գ.բ.ին համար ըրած վերջին անարդական կատակէն կարի ղոհ մեկնեցաւ , ըստ որում իրօք կը գարչէր անորմէ :

Երբ տիկին Տիւպարի ներքնասենեակը մտաւ , տեսաւ որ տ'է-

Generated on 2016-09-07 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կիւյլօն դրանն առջև ծունր դրած , ձեռները կցած , աչերը բոցա-
վառ իւր վրայ յառած էր :

Կոմսուհին շառագնեցաւ :

— Ի դերև ելաւ , ըսաւ . խեղճ մարաջախտը . . . :

— Ո՛հ , ամեն բան գիտեմ , ըսաւ դու քոր , հոսկէ կը լսուի . . . :

Շնորհակալ եմ , տիկին , շնորհակալ եմ :

— Կարծեմ թէ այդ իմ պարտքս էր քեզի , պատասխանեց
քաղցր ժպիտով մը . բայց ոտք ել , դու քս , ապա թէ ոչ պիտի
կարծեմ թէ որքան շատ խելք այնքան ալ յիշողութիւն ունիս :

— Կարելի է այդ , տիկին . մօրեղբայրս քեզ ըսաւ , ես եռան-
դուն ծառայ էմ :

— Նաև թողաւորին . վաղը , պէտք է որ նորին Վեհափառու-
թեան յարդանքդ մատուցանես . ոտք ել , կ'աղաչեմ :

Եւ կոմսուհին ձեռքն անոր երկնցույց զոր յարդանօք համբու-
րեց :

Կոմսուհին ըստ երևութի շատ յուզուեցաւ , ըստ որում բառ
մ'անդամ չաւելցուց :

Պ. տ'էկիւյլօն ևս անոր նման համր ու շփոթած մնաց . վերջա-
պէս տիկին Տիւպարի զլուխը վեր աւնելով ,

— Խեղճ մարաջախտ , ըսաւ դարձեալ , պէտք է որ այս պարտու-
թիւնն իմանայ :

Պ. տ'էկիւյլօն արձակուրդ մը նկատեց այս խօսքը , խոնարհե-
ցաւ :

— Տիկին , ըսաւ , հիմա անոր պիտի երթամ :

— Ո՛հ , դու քս , ամէն գէշ լուր կարելի եղածին չափ ուշ ի-
մացուելու է . փոխանակ մարաջախտին երթալու հոս կեցիր , և
ինձի հետ ընթրէ :

Գուքսն զզաց որ երիտասարդութեան և սիրոյ բոյր մը զողցես
իւր սրտին արիւնը բորբոքեց , նորոգեց :

— Գու կին մը չես , ըսաւ դու քոր , այլ . . . :

— Հրեշտակ մը , այնպէս չէ՞ , ըսաւ կոմսուհւոյն հրատապ բե-
րանը անոր ականջին , աւելի ցած խօսելու համար անոր քսուելով ,
և կոմսուհին սեղան տարաւ դու քոր քաշելով .

Generated on 2016-09-07 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այն իրիկունը Պ. տ'եկիւյլօն անշուշտ կարի երջանիկ համարեց զինքը, ինչուոր մօրեղբօրը սլաշածնն ինքն առաւ և թաղաւորին սլատառն ալ ինք կերաւ :

2Թ.

Պ. ՏԸ ՌԻՇԼԻԷՍ ԳՔՍԻՆ ՆԱԽԱՍԵՆՆԵԱԿՆԵՐԸ

Պ. տը Ռիշլիէօ բոլոր սլալստականաց նման, ապարանք մ'ի Վէրսայլ, ապարանք մ'ի Բարիզ, տուն մ'ի Մարլի, տուն մ'ալ 'ի Ղիւսիէն ունէր. միով բանիւ թաղաւորին իւրաքանչիւր բնակարանին կամ կայանին քով բնակարան մը :

Լուի Ժե իւր բնակարանները շատցնելով երկայն կամ փոքր տեսակցութեանց մենաշնորհն ունեցող աւազանին սլարտաւորեր էր հարուստ ըլլալով՝ իւր սանը ընթացքին և մտահաճոյքին հետեւելու համար :

Ուստի Պ. տը Ռիշլիէօ, ՊՊ. տը Շուազէօլի և տը Բրասլէնի անկման միջոցին Վէրսայլ կը բնակէր. առջի օրն հոն փոխադրուեր էր, իւր քեւորդին տիկին Տիւպարիի ներկայացնելէն ետք Ղիւսիէնէ դառնալուն :

Ռիշլիէօն կոմսուհոյն հետ տեսեր էին Մարլիի անտառը, սլաշտօնէին անկումէն ետք Վէրսայլ տեսեր էին զինքը, 'ի Ղիւսիէն ունեցած երկարատե և զաղտնի տեսակցութիւնը զիտէին. այս բաւական եղաւ բոլոր արքունեաց համար, մանաւանդ Ժան Տիւպարիի անխորհրդապահութեամբ, այս բաւական եղաւ բոլոր արքունեաց համար, ըսինք, և համայն արքունիք սլարտաւոր կարծեց ինքզինքը երթալ իւր յարդանքը Պ. տը Ռիշլիէօի մատուցանել :

Ըստ կարգի ծեր մարաշախտն ալ սլիտի ծծէր այն դովեստներու, փաղաքանաց և ողբքանաց անուշահոտութիւնը՝ զոր ամեն ակնկալու

օրուան կուռքին առջև կը վառէ՝ առանց ըրածին վրայ մատածելու :

Թէպէտ Պ. տը Ռիշլիէօ բնաւ չէր յուսար իրեն պատահելիքին՝ սակայն կանուխ ելաւ այն օրը՝ ուր մենք հասանք հաստատ միտքերնիս դնելով որ անոր ռուսները պոյնք այն անուշահոտ բուրմանց դէմ, ինչպէս որ Ողիսես ականջը մեղրամամով կը խցէր համբարուններուն երզը չլսելու համար :

Արդիւնքը հետեւեալ օրը միայն պիտի պոյնար, արդարև հետեւեալ օրն էր որ թագաւորը նոր պաշտօնեայն պիտի անուանէր :

Ուստի մարաշախտը շատ զարմայաւ երբ արթննալով, կամ լաւ ևս, կառքերու մեծ աղմուկէ մ'արթննալով, սենեկապան ծառայէն իմացաւ որ ապարանքին բոլոր գաիթները, ինչպէս նաև նախասենեակներն ու սրահակները բազմութեամբ լցուած էին :

- Ո՛հ, ո՛հ, ըսաւ, կ'երևի թէ համբաւս կը տարածուի :
- Գեռ կանուխ է, պարոն մարաշախտ, ըսաւ սենեկապան ծառան տեսնելով որ պիշերուան գտակը աճապարանօք կը հանէ :
- Ասկէ ետք ինծի համար ժամ չկայ, ըսաւ դուքսը, լաւ միտքդ պահէ ըսածս :
- Այո, տէր իմ :
- Ի՛նչ պատասխան տուին այցելուններուն :
- Ըսին թէ Ձեր Աեհագնութիւնը դեռ պառկած է :
- Այսչափ միայն :
- Այսչափ միայն :
- Ի՛նչ անմտութիւն. պէտք էր յարելուլ նաև թէ ուշ պառկեր էի, կամ լաւ ևս, պէտք էր . . . : Տեսնե՞ք ո՞ւր է Ռաֆդէ :
- Ռաֆդէ կը քնանայ, ըսաւ սենեկապան ծառան :
- Ի՛նչ, կը քնանայ : Բայց թող արթնցնեն թշուառականը :
- Օ՛ն, ո՛ն, ըսաւ կորովի և ժպտուն ծեր մը որ դրան սեմին վրայ երեցաւ, ահա Ռաֆդէն. ի՛նչ կ'ուզեն իրմէ :
- Դքսին բոլոր խրոխտանքն իջաւ այն խօսքին առջև :
- Ա՛հ, ես ալ կ'ըսէի որ պառկած ըլլալու չես :
- Եթէ պառկած ալ ըլլայի՛ զարմանալու ի՛նչ կայ : Գեռ նոր լուսցաւ :

Generated on 2016-09-07 10:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Բայց , սիրելի Ռաֆիէս , կը տեսնես որ ես չեմ քնանար :

— Դու ուրիշ , դու պաշտօնեայ ես , դու . . . : Ի՞նչպէս կարելի է որ քնանաս :

— Օ՛ն , պիտի սկսիս զիս կշտամբելու , ըսաւ մարաջախտը հայերույն մէջ դէմքը ծուկով . միթէ գոհ չե՞ս :

— Ե՛ս , ի՞նչ փայթս է : Դու շատ պիտի աշխատիս , և վերջը հիւանդ պիտի ըլլաս . հետեաբար ես պիտի կառավարեմ Տէրութիւնը , և այս ալ զուարճալի բան մը չէ , տէր իմ :

— Ո՛հ , սիրքան ծերացար , Ռաֆիէ :

— Ճիշդ քե՛նէ շորս սարու փոքր եմ , տէր իմ : Ո՛հ , այո , ծերացած եմ :

Մարաջախտը ոտքը դետինը զարկաւ անհամբերութենէն :

— Կախասենեակը դացիր , ըսաւ :

— Այո :

— Ո՞վ կայ հոն :

— Ամենքն ալ հոն են :

— Ի՞նչ կը խօսին :

— Իրարու կը պատմեն ինչ որ քե՛նէ պիտի խնդրեն :

— Այդ շատ բնական է : Բայց իմ պաշտօնեայ անուանելուս մասին բան մը լսեցիր :

— Ո՛հ , աւելի լաւ ունիմ որ ըսածնին չըսեմ :

— Վայ . . . արդէն կը քննադատեն :

— Կոյն իսկ անոնք որ քեզի պէտք ունին : Քու պէտք ունեցած մարդիկը ի՞նչ պիտի ընեն ուրեմն , տէր իմ :

— Ա՛հ , տես , Ռաֆիէ , ըսաւ ծեր մարաջախտը խնդալ կեղծելով , անոնք որ կ'ըսեն թէ զիս կը շողոքորթես . . . :

— Բայց , տէր իմ , ըսաւ Ռաֆիէ , ինչո՞ւ լծուեցար այն արօրին որ պաշտօնէութիւն կը կոչուի . երջանիկ ըլլալէ և ապրելէ խանջած ես :

— Սիրելիդ իմ ամէն բանին համն առի , բաց ասկէ :

— Է՛հ , երբէք զառիկին համն առած չես . ինչո՞ւ շողոքադիդ մէջը դնելով չես խմբ հետաքրքրութեան համար :

— Ռաֆիէ , դու ծոյլ ես . կը գուշակես որ շատ դժուար պիտի

ունենաս քարտուղարս ըլլալուդ համար , և կը նահանջես . . .
նաև ըսիր ալ :

Մարաջախտը ինքզինքը հաղուեցնել տուաւ խնամքով :

— Զինուորական դարձուած մը աուր , պատուիրեց սենեկապան
ծառային , և զինուորական կարգի շքանշաններս բեր :

— Կ'երևի թէ պատերազմի մէջ ենք , ըսաւ Ռաֆդէ :

— Տէր Աստուած , այո՛ , կ'երևի թէ այնպէս է :

— Ա՛հ , բայց , շարայարեց Ռաֆդէ , թաղաւորին անուանիչ զի-
րը չստեսայ , կանոնաւոր բան չէ :

— Անշուշտ պիտի գայ :

— Ուրեմն , առջուտը ներկայիս պաշտօնական բան է :

— Ռաֆդէ , քանի ծերացար հաւրդ փախաւ . որքան կանոնապահ
մէկն ես և գործածած բառերուդ սաստիկ ուշադրութիւն կ'ընես .
եթէ այնպէս ըլլալը զխանայի , Ակադէմիային մէջ ընդունուած ա-
տենս քեզի ընել չէի տար ասենախօսութիւնը , ինչու որ այն պատ-
ճառաւ սովեցատ եղար :

— Մտիկ ըրէ , տէր իմ , քանի որ գործերնիս կառավարութեան
հետ է՝ ամէն բան կանոնաւոր պէտք է ըլլայ . . . : Այլանդակ
բան :

— Ի՞նչ բան այլանդակ է :

— Պ. տը լա Վօտրէյ կոմսը որ քիչ մ'առաջ փողոցը ինձի
հետ խօսեցաւ՝ իմացուց որ տակաւին պաշտօնէութեան մասին բան
մ'եղած չէ :

Ռիշլիօ ժպտեցաւ :

— Պ. տը լա Վօտրէյ իրաւունք ունի , ըսաւ : Բայց դու այն-
քան կանուխ դուրս ելար :

— Է՛հ , պէտք էր որ դուրս ելնէի . կառքերուն այն դժխային
աղմուկը զիս արթնցուց , հաղուեցայ , ևս ալ զինուորական պա-
տուանշաններս կախեցի , և քաղքին մէջ ճեմ մ'ըրի :

— Ա՛հ , Պ. Ռաֆդէ իմ ծախքովս կ'զբօսնու :

— Ո՛հ , տէր իմ , Աստուած չընէ . ինչու որ . . .

— Ինչու որ . . . ինչ :

— Շրջելու ատենս մէկու մ'ալ պատահեցայ :

Generated on 2016-09-07 10:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Որո՞նք :

— Գէրէյ արքային քարտուղարին :

— Լաւ :

— Ըսաւ որ իւր տէրը սպասերազմական զլեւսաններ հազած է :

— Օ՛, օ՛, ըրաւ Ռիշլիէօ իւր մշանջենաւոր ժպիսովը :

— Ի՞նչ կը հետևցնես ասկէ, տէր իմ :

— Սա կը հետևցնեմ որ, եթէ Գէրէյ սպասերազմի ըլլայ՝ ես հոն չեմ. եթէ չըլլայ՝ ես հոն եմ թերևս :

Ռաֆիէ իւր սիրտն հանգարտեցնելու չափ խօսեր էր. յանդուդն, անխոնջ, փառասէր մէկն էր, իւր տիրոջը չափ հանճարեղ, և անորմէ աւելի զինեալ էր, ըստ որում զիտէր որ նա անտոհմ և կախեալ էր, զրահի մը կրկին պակսութիւններ՝ որք քառասուն տարի շարունակ անոր խորամանկութիւնը, զօրութիւնը, բոլոր ուշիմութիւնը կրթեր էին : Ռաֆիէ իւր տէրն այնքան անհող սեսնելով կարծեց թէ ալ բան մը չկար տաղնապելու :

— Օ՛ն, վեհազուն տէր, աճասպարէ, շատ սպասեցնել մի տար, լաւ ազդեցութիւն չընէր :

— Պատրաստ եմ. բայց ո՞վ կայ հոն, դարձեալ կը հարցնեմ :

Երկայն ցուցակ մը ներկայացուց իւր տիրոջը, որ ազատանուոյն, պաշտօնական անձանց և պանձային մարդոց առաջին անունները դոհունակութեամբ կարդաց :

— Կարելի է որ ժողովրդային պիտի ըլլամ, ի՞նչ կ'ըսես, Ռաֆիէ :

— Հրաշալի ատենի մը մէջ կ'ապրինք, պատասխանեց սա :

— Տէս, Գավէրնէյն ալ, ըսաւ մարաջախտը ընթերցումը շարունակելով. . . : Հոս ի՞նչ ընելու եկեր է :

— Չդիտեմ, պարոն մարաջախտ : Օն, ներս եկուր :

Եւ դրեթէ հրամայական կերպով, քարտուղարը իւր տէրն ստիպեց սրահն անցնիլ :

Ռիշլիէօ անշուշտ գոհ եղաւ, արքայազուն իշխանէ մը պակաս ընդունելութիւն չեղաւ իրեն :

Բայց այն ատենի և այն ընկերութեան բոլոր այն այնքան նուրբ, ճարտար և խորամանկ քաղաքավարութիւնը չյարմարեցաւ զիպուս-

Generated on 2016-09-07 10:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յին՝ որ դառն նշաւակութիւն մը կը պատրաստէր Ռիշլիէօի :

Արքունի սովորութեանց համաձայն վարուելու և զանոնք յարգելու համար, բոլոր այն խումբը զգոյշ կեցաւ պաշտօնէութիւն բաւր Ռիշլիէօի առջև արտասանելէ . ոմանք՝ միւսներէն աւելի համարձակ դանուելով մինչև շնորհաւորութիւն բաւր բերաննին առին . զիտէին որ հարկ էր շուտով անցնիլ բառին վրայէն, և Ռիշլիէօ հազիւ թէ կը պատասխանէր :

Բոլորին համար, առաւօտուն կանուխ այս այցելութիւնը պարզ ցոյց մը, մաղթանքի պէս բան մը համարուեցաւ :

Այն ատենները, շատերը համամտութեամբ անըմբռնելի կետեւրը կը հասկնային :

Քանի մը պալատականներ խօսակցութեան մէջ համարձակեցան փափաք մը, իղձ մը, յոյս մը յայտնելու :

Մին կ'ըսէր թէ եթէ կառավարութեան կեդրոնը Վէրայի մօտ ըլլար՝ աւելի լաւ կ'ըլլար :

Իրեն համար հաճոյք մ'էր այս նիւթին վրայ խօսիլ Պ. տը Ռիշլիէօի նման մեծ վարկ մը վայելող անձի մը հետ :

Ուրիշ մը կը պնդէր թէ երեք անգամ մոռցուեր էր Պ. տը Շուազէօլէն ասպետական կարգի աւագութիւններ տրուած ատեն, կը յուսար որ Պ. տը Ռիշլիէօի պարսաւորիչ յիշողութիւնը թաղաւորին միտքը պիտի ձգէր զայն՝ քանի որ ալ հիմա Նորին Վեհափառութեան յօժարութեան դէմ արդելք մը չկար :

Միով բանիւ, իրարմէ աւելի կամ նուազ անյագ հարիւրաւոր խնդրուածներ, յետին աստիճան ճարտարութեամբ մը պատրաստուած, մարաջախտին հմայեալ ականջներէն մտան :

Տակաւ առ տակաւ բազմութիւնը զրուեցաւ . Պ. մարաջախտը իւր կարեւոր դիւանդը թողուլ կ'ուզէին, կ'ըսէին :

Մարդ մը միայն սրահակը մնաց :

Միւսներուն հետ չէր մօտեցեր, բան մը չէր խնդրեր, չէր ներս կայացէր իսկ :

Երբ շարքերը նուազեցան՝ լայն մարդը դքսին եկաւ ժպիտ 'ի շրթունս :

— Ա՛հ, պարոն տը Գավէրնէյ, ըսաւ մարաջախտը . քեզ տեսնե՞լու համար շատ ուրախ եմ :

Generated on 2016-09-07 10:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Քեզի կ'սպասէի, դուքս, շնորհաւորելու համար, Կրահան, անկեղծ շնորհաւորութիւն մ'ընելու համար :

— Ա՛հ, իրա՛ւ, և ի՞նչ բանի համար, պատասխանեց Ռիշլիէօ՝ որ այցելուաց զգուշաւորութենէն ինքն ալ ստիպուեր էր դադուհայաս և գրեթէ խորհրդակիր ըլլալու :

— Բայց, նոր պաշտօնիդ համար, դուքս :

— Լ՛ուռ, լ՛ուռ, ըսաւ մարաջախտը. չխօսինք ասոր վրայ . . . : Տակաւին բան մը եղած չէ, միայն խօսքը կայ :

— Սակայն, սիրելիդ իմ մարաջախտ, շատ մարդիկ իմ կարծիքէս են, ըստ որում սրահակներդ լի էին :

— Շիտակը չգիտեմ ինչու :

— Ո՛հ, ես քաջ գիտեմ :

— Ի՞նչ, ի՞նչ :

— Խօսք մ'ըսեմ կը բաւէ :

— Ի՞նչ խօսք :

— Էրէկ, 'ի Գրիանօն պատիւ ունեցայ թագաւորին յարդանքս մատուցանելու : Նորին Աւհափառութիւնը զաւակացս վրայ խօսեցաւ և խօսքն աւարտեց ըսելով, « Կարծեմ, Պ. տը Ռիշլիէօն կը ճանչես. շնորհաւորէ զինքը :

— Ա՛հ, Նորին Աւհափառութիւնն այնպէս ըսաւ, պատասխանեց Ռիշլիէօ ակներև հպարտութեամբ մը, այնպէս որ կարծես թէ այն խօսքը նոյն իսկ այն պաշտօնական հրովարտակն էր՝ որուն գալուն վրայ կը կասկածէր Ռաֆղէ կամ ուշանալուն վրայ կը ցաւէր :

— Այնպէս որ, շարայարեց Գավէրնէյ, եղածը մտքէս անցաւ. այս ալ դժուարին չէր՝ համայն Աւերսայլի աճապարանքը տեսնելով. ուստի վազեցի շնորհաւորութիւնս ընելու՝ թագաւորին հնազանդելու, և իմ մասնաւոր զգայմանցս հպատակելու համար մեր հին բարեկամութիւնը քեզ յանձնելով :

Գուքսն ուրախութենէն այլ յայլմէ եղեր էր, բնութեան մէկ պակսութիւնն է այս, նոյն իսկ ընտիր հանձարներ չին կրնար ազատ մնալ անկէ : Գավէրնէյը յետին աստիճանի խնդրարկուներէն մին կարծեց, երանութեան ճամբուն վրայ ետ մնացած խեղճ մարդ :

Generated on 2016-09-07 10:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

դիկ, զորս անօգուտ խսկ է պաշտպանելը, որոնք անօգուտ են մահ նաւանդ իրենց ծանօթիցը, և որոց երեսին կը զարնեն թէ, քսան տարի ետք, մոռացութեան դուբէն ելնելով, եկեր են այլոց երջանկութեան արևէն տաքնալու :

— Ի՛նչ ըլլալը կը տեսնեմ, ըսաւ մարաջախտը բաւական խիստ կերպով, ինէ բան մը խնդրելու եկած ես :

— Ինչպէս որ ըսիր, դուքս :

— Ա՛հ, ըրաւ Ռիչլիէօ նստելով, կամ լաւ ևս բազմոցին մէջ թաղուելով :

— Երկու տղայ ունիմ կ'ըսէի, շարայարեց Գավէրնէյ կակղութեամբ և խորամանկութեամբ, տեսնելով որ իւր մեծ բարեկամը կը պաղի. ուստի աւելի աշխուժիւ անոր կը մօտենար : Աղջիկ մը ունիմ զոր շատ կը սիրեմ, և որ առաքինութեան և դեղեցկութեան տիպար մ'է : Նէ տիկին արքայորդւոյն քովն է որ մասնաւոր յարգանօք կը վարուի անոր հետ : Անոր վրայ, դեղանի Անտրէիս վրայ ըսելիք մը չունիմ, դուքս. իւր ճամբան դուստ է, և բազըը յաջող է : Տեսած ես աղջիկս, տեղ մը քեզի ներկայացուցած չեմ զինքը, բնաւ անոր վրայ խօսք մ'եղած չէ :

— Է՛հ . . . չեմ գիտեր, ըսաւ Ռիչլիէօ անփութօրէն. կարելի է :

— Փոյթ չէ, շարայարեց Գավէրնէյ, աղջիկս տեղը դուստ է : Ես բանի մը պէտք չունիմ, թագաւորը իմ ապրուստիս չափ թուշակ մը յատկացուց ինձ : Շիտակը բաւական եկամուտ պիտի ունենամ Մէզօն-Ռուժը վերաշինելու համար, զոր իմ առաջին ասպատանարանս պիտի ընեմ. քու վարկովդ, աղջկանս վարկովդ . . .

— Է՛հ, ըսաւ Ռիչլիէօ մտովի, որ մինչև այն ատեն մտիկ ըրած չէր, իւր անձնական մեծութիւնը նշմարելու զբաղած ըլլալով, բայց աղջկանս վարկով, խօսքէն յանկարծ սթափեցաւ : Է՛հ, է՛հ, աղջիկդ . . . դեղանի աղջիկ մը որ այն բարեսիրտ կոմսուհւոյն ստուեր մը կ'ըլլայ. փոքրիկ կարիճ մը որ իշխանուհւոյն թեւրուն ներքև ոյժ կ'առնէ Վիսիէնէն մէկը խածնելու համար . . . : Է՛հ, վատ բարեկամ չըլլանք, և երախտագիտութեան դալով, այն սիրուն կոմսուհւոյն որ զիս պաշտօնեայ ըրաւ. պիտի տեսնէ թէ պէտք եղած ատեն ունիմ թէ ոչ :

Ապա, ձայնն հանելով :

— Շարունակէ, ըսաւ մեծամտութեամբ տը Գավէրնէյ սեպուէ Տին :

— Իրաւ որ լմնալու մօտ է, պատասխանեց սա հաստատ միտքը դնելով որ ՚ի ներքուսա սնապարծ մարաջախտին վրայ խնդայ, միայն թէ խնդրածն անորմէ ստանայ. ուստի միայն Փիլիպիս վրայ կը մտածեմ որ շատ գեղեցիկ անուն մը հանած է, բայց երբէք չպիտի կրնայ այն անունը փայլեցնել՝ եթէ օգնող մը չգտնուի : Փիլիպ քաջ և խոհական տղայ մ'է, թերևս քիչ մը չափազանց խոհական. բայց այս ալ իւր նեղ վիճակին մէկ հետեանն է. սանձը շատ քաշուած ձի մը գլուխը կը ծուէ, ինչպէս որ դիտես :

— Ինձ ինչ փոյթ, կը մտածէր մարաջախտը այնպիսի նշաններով. որոյմէ թէ ձանձրոյթ և թէ անհամբերութիւն կարելի էր գուշակուիլ :

— Քեզի պէս բարձրաստիճան մէկու մը պէտք ունէի, շարա-
յարեց Գավէրնէյ անողորմաբար, որպէս զի Փիլիպի զօրագունդ մը ձեռք ձգել տայ . . . : Իշխանուհին Սդրազպուրկ մտած ա-
տեն հարիւրապետ անուանել առաւ զան. բայց հարիւր հաղար
Փրանք կը պակսի անոր մենաշնորհեալ հեծելազօրաց գունդ մը
ձեռք անցնելու համար . . . : Այդ շնորհն ընել տուր, իմ մեծ
բարեկամն :

— Քու տղադ, ըսաւ Ռիշլիէօ, այն երիտասարդը չէ՞ որ իշ-
խանուհւոյն ծառայութիւն մ'ըրաւ :

— Մեծ ծառայութիւն մը, գոչեց Գավէրնէյ. նա խլեց այն Տիւ-
պարիին ձեռքէն Նորին արքայազն բարձրութեան վերջին կայարա-
նի ձիերը զոր բռնի առնել կ'ուզէր :

— Ո՛ւյ, ըրաւ Ռիշլիէօ մտովի, ճիշդ նա է . . . կոմսուհւոյն
ամենէն աւելի ոխերիմ թշնամին է : Շատ յարմար ատենին եկած
է այս Գավէրնէյը : Գիտէ թէ այս խօսքերով խնդրածը պիտի ըն-
դունի, մինչդեռ աւելի ևս պիտի մերժուի :

— Ձեռն պատասխաներ, դուքս, ըսաւ Գավէրնէյ մարաջախտին
յամառ լռութենէն քիչ մը տաքնալով :

— Այդ ամենն անկարելի է, սիրելիդ իմ պարոն Գավէրնէյ,

պատասխանեց մարաջախտը ուրք ելնելով ունկնդրութիւնը աւարտած ըլլալն իմացնելու համար :

— Անկարելի, այսպիսի չնչին բան մը անկարելի է : Հին բարեկամ մէկ ինձ այս խօսքն ընողը :

— Ինչո՞ւ չէ . . . : Բարեկամ ըլլալու համար, քնչպէս որ կ'ըսես, պէտք է որ ես անիրաւութիւն մը գործեմ և դու ալ բարեկամութիւն բառին չափազանց նշանակութիւն մը տաս : Քտան տարի զիս չտեսար, այն ատեն բան մը չէի . հիմա որ պաշտօնի անցայ՝ կուզաս զիս կը գտնես :

— Պ. տը Ռիշլիէօ այս պահուս դու ես անիրաւը :

— Ոչ, սիրելիդ իմ, ոչ, ես զքեզ ունայն յոյսերով զբաղեցընել չեմ ուզեր, ես ճշարիտ բարեկամ մ'եմ, հետեաբար . . .

— Սակայն մերժելու պատճառ մ'ունիս :

— Ե՛ս, գոչեց Ռիշլիէօ սաստիկ տաղնապելով որ Գավէրնէյ կրնար կասկածիլ այս մասին . ես, պատճառ մը . . . :

— Այո, թշնամիներ ունիմ :

Գուքը մտքէն անցածը կրնար ըսել . բայց ասով կը յայտնուէր թէ տիկին Տիւպարիի ունեցած երախտագիտութեան համար անհաճոյ ըլլալ չէր ուզէր, տարիուհոյ մը ձեռքով պաշտօնի անցնիչը խոստովանած կ'ըլլար, և այս ալ մարաջախտը չէր ընէր՝ մինչ իսկ եթէ կայսրութիւն մ'ալ տային իրեն . ուստի փութով սեպուհին պատասխանեց ,

— Գու բնաւ թշնամի չունիս, սիրելի բարեկամս . բայց ես ունիմ . այսպէս անմիջապէս, առանց տիտղոսները քննելու, այսպիսի շնորհներ ընելը ամենուն իրաւունք տալէ որ ըսեն թէ Շուազէօլին ընթացքը կը շարունակեմ : Սիրելիդ իմ, իմ կատարելիք գործոցս մէջ կ'ուզեմ հետքս թողուլ : Քսան տարիէ ՚ի վեր վերակազմութիւններու, յառաջադիմութիւններու վրայ կը մտածեմ, անոնք այժմ լոյս պիտի տեսնեն : Շնորհատրութիւնը Գաղղիան կը կործանէ, ես արժանեաց պիտի նայիմ . մեր փիլիսոփայից գրածները ջահեր են՝ որոց լոյսը ընդունայն տեսած չպիտի ըլլամ ես . անցիալ օրերուն բոլոր խաւարը փարատեցաւ, և Տէրութեան բարօրութեան ժամն հասեր էր . . . : Ուստի տղուդ տիտղոսները աչ-

Generated on 2016-09-07 10:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քէ պիտի անցնեմ՝ որ և է քաղաքացւոյ մը ըրածիս պէս . իմ հա՛մ մողմանցս այս զոհողութիւնը պիտի ընեմ, անշուշտ ցաւալի զոհողութիւն մը՝ որ մէկ անձի մը կողմէն կ'ըլլայ՝ թերևս ուրիշ երեք հարիւր հազար անձանց օգտին համար . . . : Եթէ Պ. Փիլիպ տը Գավէրնէյ քու որդիդ, արժանաւորութիւն ունի իմ շնորհիս՝ կ'ստանայ, ոչ թէ հայրն իմ բարեկամս ըլլալուն համար, ոչ թէ անոր անուանովը կոչուելուն համար՝ այլ իւր արժանեացն համար . ահա իմ բունելու ընթացքիս յատակադիծը :

— Այսինքն փիլիսոփայութեան դասը, պատասխանեց ծեր սեպուհը որ կատաղութենէն մատներուն ծայրը կը կրծէր, և զայրոյթը կը շարունակէր այնպիսի խօսակցութեան մը համար որ այնքան զիջումներու և ստորնութեանց պատճառ եղեր էր իրեն :

— Թող փիլիսոփայութիւն ըլլայ, սլարոն . դեղեցիկ բառ մ'է :
— Որ մարդը շատ բաներէ կ'ազատէ, այնպէս չէ՞, սլարոն մարաջախտ :

— Գու տղէտ սլալաստական մ'ես, ըսաւ Ռիշլիէօ յուրտ ժպիտով մը :

— Իմ կարգի մարդիկս միայն թագաւորին պալատականներն են :

— Քու կարգի մարդոցմէդ օրը հազար հողի կ'ընդունի Ռաֆդէ նախասենեակներուն մէջ, պատասխանեց Ռիշլիէօ . և չեմ դիտեր գաւառին ո՛ր ծակէն կ'ենէն կուգան՝ ուր անքաղաքավար վարուիլ կ'ուանին իրենց կարծեցեալ բարեկամաց հետ՝ ներդաշնակութիւն (պատշաճութիւն) քարոզելն ալ ձեռքէ չ'թողլով :

— Ո՛հ, ես քաջ դիտեմ թէ Մէզօն-Ռուժ մը, խաչակիրներուն սերնդէն ազնուական մը, յոռի քնարահար Աիներրօի մը չափ լաւ չհասկնար ներդաշնակութենէ :

Մարաջախտը Գավէրնէյէն աւելի խելացի գտնուեցաւ :

Արնար պատուհանէն վար նետել տալ զան : Բայց միայն ուսերը վեր ըրաւ և պատասխանեց ,

— Շատ ետ մնացեր ես, սլարոն խաչակիր, դու 1720ի ժողովներուն դատաստանադիրը միայն դիտես, և 'ի պատասխանի դուքսերուն և ատենակալաց գրածը կարդացած չես : Թանդարանս անցիր, սիրելի սլարոնս, Ռաֆդէ կը կարդայնէ զայն քեզ :

Generated on 2016-09-07 10:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւ, մինչդեռ այս հանձարեղ պատասխանով իւր հակառակորդը կը ճամբէր՝ դուռը բացուեցաւ և մարդ մ'աղմկաւ ներս մտաւ ըսելով,

— Ո՛ւր է այն սիրելի դուքսը :

Այն շառագոյն, գոհունակութենէն աչերը մեծ մեծ բացած մարդը ժան Տիւպարին էր, ոչ աւելի ոչ պակաս :

Դավէրնէյ նորեկը տեսնելով զարմանքէն և զայրոյթէն ընկրկեցաւ :
Ժան այն շարժումը տեսաւ, այն դէմքը ճանչցաւ և թիկունքը դարձուց :

— Կարծեմ թէ հասկցայ, ըսաւ սեպուհը հանդարտութեամբ, և կը մեկնիմ : Պ. պաշտօնեայն անզուգական ընկերի մը հետ կը թողում :

Եւ կարի ազնուարար մեկնեցաւ :



2

ՀՄԱՅԻՑ ԼՈՒԹՈՒՄԸ

Ժան անոր մեկնելու ատեն ըրած գրգռիչ խօսքէն կատղած՝ երկու քայլ առաւ սեպուհին ետեւէն, ապա ուսերը վեր ընելով մաքրաջախտին դարձաւ :

— Այս մարդը տունդ կ'ընդունիս :

— Է՛հ, կը սխալիս, սիրելիս, ընդհակառակը կը վճռտեմ :

— Գիտե՛ս այս պարոնին ինչ ըլլալը :

— Աւա՛ղ, այո :

— Ոչ, բայց աղէկ դիտե՛ս :

— Դավէրնէյի ընտանիքէն մէկն է :

— Այս պարոնը այնպիսի մէկն է որ աղջիկը թագաւորին անուղիներ դնել կ'ուզէ . . . :

— Օ'ն անդր :

— Այնպիսի մարդ մը որ մեզ աչքէ հանել կ'ուզէ , և անոր համար ամէն միջոց 'ի գործ կը դնէ . . . : Այո , բայց ժան հոն է , և ժան լաւ կը տեսնէ :

— Կը կարծես որ կ'ուզէ . . . :

— Այդ տեսնելը շատ դժուարին է , այնպէս չէ : Արքայորդւոյ հնարք , սիրելիդ իմ . . . և ահա դէմդ քեզ սպաննող մը կ'ենէնէ :

— Բա :

— Մարդոց ազդրը խածնելու համար միշտ պատրաստ կեցած է երիտասարդ մը , մարտամուլ (bretteur) մը որ սրոյ հարուածներ կուտայ ժանի ուսին . . . այն խեղճ ժանի :

— Քո՛ւ , նոյն իսկ քո՛ւ թշնամիդ է , սիրելիդ իմ դերկոմս , ըսաւ Ռիշլիէօ զարմանք կեղծելով :

— Է՛հ , այո , ձիերու կայանի խնդրոյն մէջ հակառակորդս է , գիտես :

— Ա՛հ , տես մեր համակրութիւնը , ես այդ չէի գիտեր՝ սակայն անոր ամէն խնդիրքը մերժեցի . չէ թէ կը ճամբէի՝ այլ կը վանէի եթէ գիտնայի . . . : Հանդիստ եղիր , դերկոմս , հիմա որ այն մարտամուլին դէմ ատելութիւն կ'զգամ՝ պիտի տեսնէ :

— Այո , մեծ ճամբուն վրայ յարձակումներ ընելու համար անոր ունեցած փափաքը կրնաս անցնել . . . : Ինչու որ , կեցիր , քեզ չչնորհաւորեցի :

— Այո , դերկոմս , կ'երևի թէ ամէն բան վերջնական կերպով լմնցած է :

— Այո , ամէն բան լմնցած է . . . : Քեզ համբուրեմ :

— Ի բոլոր սրաէ կ'ընդունիմ :

— Արդարեւ բաւական վիշտ կրեցինք . բայց վիշտը կ'անցնի՝ երբ մարդ կը յաջողի : Գու դո՛հ ես , այնպէս չէ :

— Համարձակ խօսիմ , այո , ինչուոր կարծեմ թէ օգտակար պիտի կարենամ ըլլալ :

— Այդ մասին կասկած մի ունենար . բայց ծանր հարուած մ'է այս , պիտի ունան :

— Հասարակութիւնը զիս չ'սիրէր :

— Գեղ . . . սիրողներ ալ կան չսիրողներ ալ . . . անարդուածը նա է :

— Նա՞մ . . . ըսաւ Ռիշլիէօ զարմանօք . նա ո՞վ . . . :

— Անշուշտ , ընդամիջեց ժան : Ո՛հ , ժողովները զլուխ պիտի վերցնեն , Լուի ԺԳ.ի խարազանին մէկ կրկնութիւնն է այս . ձաղկուեցան , դուքս , ձաղկուեցան :

— Բացատրէ . . . :

— Բայց ինքնին կը բացատրուի՝ այս հալածմանց հեղինակին համար ժողովներուն տաճած ատեւութեամբը :

— Ա՛հ , կը կարծես որ . . . :

— Համայն Գաղղիոյ նման ստոյգ եմ : Միևնոյն բանն է , դուքս , շատ աղէկ ըրիր որ առանց ժամանակ անցնելու զինքը բերել տուիր :

— Ո՞վ , բայց ո՞վ , դերկոմս : Փուշերու վրայ եմ , ըսածէդ բան մը չեմ հասկնար :

— Բայց քեռորդոյդ , Պ. տ'Էկիւլլօնի վրայ է խօսքս :

— Լաւ , ետքը՞ :

— Կ'ըսեմ թէ շատ աղէկ ըրիր բերել տալովդ :

— Ա՛հ , շատ լաւ , շատ լաւ : Ինձ պիտի օղնէ՞ , ըսել կ'ուզես :

— Ամէնքնուս ալ պիտի օղնէ . . . : Գիտես որ ժանէդին հետ շատ աղէկ է :

— Իրան , լաւ :

— Շատ աղէկ է : Արդէն իրարու հետ խօսեցան և դրաւ կը գնեմ որ իրարու ըսածը շատ աղէկ կը հասկնան :

— Գիտես այդպէս ըլլալը :

— Շատ դիւրին է դիտնալը : Ժանէդ ծոյլ քնայող մ'է :

— Ա՛հ :

— Եւ ժամն իննէն , տասնէն կամ տասնևմէկէն առաջ անկողնէն չելնէր :

— Այո , ուրեմն :

— Այս առտու , 'ի Լիւսիէն , ժամը վեցին տ'Էկիւլլօնի կառ. քին մեկնիլը տեսայ :

— Ժամը վեցին , գոչեց Ռիշլիէօ ժպտելով :

— Գեղ . . . սիրողներ ալ կան չսիրողներ ալ . . . անարդուածը նա է :

— Նա՞մ . . . ըսաւ Ռիշլիէօ զարմանօք . նա ո՞վ . . . :

— Անշուշտ , ընդամիջեց ժան : Ո՛հ , ժողովները զլուխ պիտի վերցնեն , Լուի ԺԳ.ի խարազանին մէկ կրկնութիւնն է այս . ձաղկուեցան , դուքս , ձաղկուեցան :

— Բացատրէ . . . :

— Բայց ինքնին կը բացատրուի՝ այս հալածմանց հեղինակին համար ժողովներուն տաճած ատեւութեամբը :

— Ա՛հ , կը կարծես որ . . . :

— Համայն Գաղղիոյ նման ստոյգ եմ : Միևնոյն բանն է , դուքս , շատ աղէկ ըրիր որ առանց ժամանակ անցնելու զինքը բերել տուիր :

— Ո՞վ , բայց ո՞վ , դերկոմս : Փուշերու վրայ եմ , ըսածէդ բան մը չեմ հասկնար :

— Բայց քեռորդոյդ , Պ. տ'Էկիւլյօնի վրայ է խօսքս :

— Լաւ , ետքը՞ :

— Կ'ըսեմ թէ շատ աղէկ ըրիր բերել տալովդ :

— Ա՛հ , շատ լաւ , շատ լաւ : Ինչ պիտի օղնէ՞ , ըսել կ'ուզես :

— Ամէնքնուս ալ պիտի օղնէ . . . : Գիտես որ ժանէդին հետ շատ աղէկ է :

— Իրան , լաւ :

— Շատ աղէկ է : Արդէն իրարու հետ խօսեցան և դրաւ կը գնեմ որ իրարու ըսածը շատ աղէկ կը հասկնան :

— Գիտես այդպէս ըլլալը :

— Շատ դիւրին է դիտնալը : Ժանէդ ծոյլ քնայող մ'է :

— Ա՛հ :

— Եւ ժամն իննէն , տասնէն կամ տասնևմէկէն առաջ անկողնէն չելնէր :

— Այո , ուրեմն :

— Այս առտու , 'ի Լիւսիէն , ժամը վեցին տ'Էկիւլյօնի կառ. քին մեկնիլը տեսայ :

— Ժամը վեցին , գոչեց Ռիշլիէօ ժպտելով :

— Այո :

— Առտուն , այս առտու :

— Առտուն , այս առտու : Այն ժամուն ունինդրութիւն տալու համար այնքան կանուխ ելնելովը , ալ կրնաս դատել թէ ժանէդ որքան խենդի պէս կը սիրէ սիրուն քեռորդիդ :

— Այո , այո , շարայարեց Ռիշլիէօ ձեռները շփելով , ժամը վեցին : Կեցցես , տ'եկիւլօն :

— Անշուշտ ունինդրութիւնը ժամը հինգին սկսած է . . . : Գիշերը , հրաշալի բան :

— Հրաշալի է . . . կրկնեց մարաջախտը : Արդարև հրաշալի , սիրելիդ իմ ժան :

— Եւ երեքնիդ գրեթէ Օրէսդը , Բիլատը և մէկ մ'ալ ուրիշ Բիլատ մ'էք :

Նոյն միջոցին , երբ մարաջախտը սաստիկ ուրախութեամբ ձեռներն իրար կը շփէր՝ տ'եկիւլօն սրահակը մտաւ :

Քեռորդին մօրեղբայրը բարեւեց այնպիսի ցաւակից դէմքով մը՝ որ բաւական եղաւ Ռիշլիէօի եթէ ոչ բոլոր ճշմարտութիւնը հասկցնելու՝ զեթ անոր լաւագոյն մասը դուշակել տալու :

Մահացու վէրք մ'առածի պէս մահատիպ դեղնեցաւ . իսկոյն միտքն եկաւ որ արքունեաց մէջ ոչ բարեկամ կայ ոչ ազգական , և թէ իւրաքանչիւր ոք իւր օգտին կը նայի :

— Շատ տխմար եմ եզեր , ըսաւ մտովի : — Է՛հ , տ'եկիւլօն , ըսաւ կոշտ հաւաչ մը խեղդելով կոկորդին մէջ :

— Է՛հ , պարոն մարաջախտ :

— Այս ծանր հարուած մ'է ժողովներուն համար , ըսաւ Ռիշլիէօ ժանին ամէն խօսքը փոխ առնելով :

Տ'եկիւլօն կարմրեցաւ :

— Գիտե՛ս , ըսաւ :

— Պարոն դերկոմնը ամէն բան ինձ գիտցուց , պատասխանեց Ռիշլիէօ , նոյն իսկ 'ի Լիւսիէն այցելութիւնդ , այս առտու չլուսցած . քու պաշտօնի հասնիլդ յաղթանակ մ'է ընտանեացս համար :

— Հաւատա որ շատ կը ցաւիմ , պարոն մարաջախտ :

— Ի՛նչ ապուր կ'ուտէ , ըսաւ ժան որ թեւերը խաչաձև կուրծքին վրայ գրեթէ էր :

— Մենք իրարու խօսք կը հասկնանք, ընդմիջեց Ռիշլիէօ, մենք իրարու խօսք կը հասնանք :

— Այդ ուրիշ. բայց ես ձեր ըսածը չեմ հասկնար . . . : Արցաի . . . : Ա՛Տ, բայց այո . . . անմիջապէս պաշտօնեայ չհրատարակուեց չուն համար . այո, այո . . . շատ աղէկ :

— Ա՛Տ, աւելի ետքի թողուած ըլլալու է, ըսաւ մարաշախտը, որուն սրտին մէջ սկսաւ մտնել յոյսը՝ փառասերին և սիրահարին մշտնջենաւոր հիւրը :

— Աւելի ետքի, այո, պարոն մարաշախտ :

— Բայց, գոչեց Ժան, ներկայիս համար ալ դէշ չեղաւ . . . : Վէրսայլի ամենէն ընտիր հրամանատարութիւնը տրուեցաւ :

— Ա՛Տ, ըրաւ Ռիշլիէօ նոր վէրք մ՛առած, հրամանատարութիւն կայ :

— Պ. Տիւպարի թերևս քիչ մը շափազանց կը խօսի, ըսաւ տ՛է-կիւլօն դուքսը :

— Բայց վերջապէս, ի՞նչ է այն հրամանատարութիւնը :

— Թաղաւորին թեթևակի զօրաց հրամանատարութիւնն է :

Ռիշլիէօ զգաց որ մահատիպ դեղնութիւն մը իւր խարշամեալ այտերը պատեց :

— Ո՛Տ, այո, ըսաւ այնպիսի ժպիտով մը որ և ոչ մէկ բանով չկրնար բացատրուիլ, այո, այդ շատ քիչ բան մ՛է այսպիսի աղուր մարդու մը համար. բայց ի՞նչ ընելու է, դուքս, աշխարհիս ամենէն դեղանի աղջիկը ունեցածը միայն կրնայ սալ՝ նոյն իսկ թագաւորին տարփուհին ալ ըլլայ :

Արզը տ՛է կիւլօնի եկաւ տժողունելու :

Ժան մարաշախտին գեղեցիկ Մուրիլլօններուն կը նայէր :

Ռիշլիէօ քեռորդւոյն ուսին զարնելով ըսաւ,

— Երջանկաբար մօտերս աւելի յառաջացնելու խոստում ըրեր են քեզ : Ար շնորհաւորեմ, դուքս անկեղծութեամբ կը շնորհաւորեմ . . . : Գործի մէջ ունեցած աջողակութիւնդ և ճարտարութիւնդ երջանկութեանդ կը հաւասարին . . . : Էրթաս բարեաւ, գործ ունիմ. յաջողութեանցդ մէջ զիս մի մտնար, սիրելի պաշտօնեայ :

Տ՛է կիւլօն միայն պատասխանեց :

Generated on 2016-09-07 10:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Պարսն մարաջախտ , դու՛ ես եմ , ես՛ դու ես :

Եւ մօրեղբայրն ողջունելով դուրս ելաւ իւր բնաձիր արժանաւո՞
րութիւնը պահելով , և իւր բազմահոգ կենաց մէջ պատահած ա-
մենէն դժուարին կացութիւններուն մէկէն խոյս տալով :

— Տ՛եկիւյլօնի լաւ կողմը , զարմանալի կողմը իւր միամտու-
թիւնն է , փութաց ըսել Ռիշլիէօ անոր մեկնելէն ետք ժանի՛ որ
քեռորդուոյն և մօրեղբօրը փոխանակած այս քաղաքավարական խօս-
քերուն վրայ ինչ մտածելիքը չգիտէր : Խելացի և ուղղամիտ մէկն
է . արքունիքը գիտէ , և դեռահաս աղջկան մը նման համեստ է :

— Եւ քեզ ալ կը սիրէ :

— Ոչխարի մը պէս :

— Է՛հ , տէր Աստուած , ըսաւ ժան , սա աւելի քու որդիդ կը
համարուի՛ քան թէ Պ. տը Քրօսնադ :

— Յիրաւի այո . . . յիրաւի այո . . . դերկոմս :

Եւ Ռիշլիէօ այս պատասխանները կուտար թիկնաթուին բոլոր-
տիքը շրջելով մտայոյզ . բան մը կը փնտուէր և չէր գտնէր :

— Ա՛հ , կոմսուհի , կը մոմուար , ասոր փոխարէնը ինձ Վպիտի
հասուցանես :

— Մարաջախտ , ըսաւ ժան նրբամտութեամբ , չորսերնիս
հին ատենի այն հռչակաւոր խուրձը պիտի իրացնենք . ինչպէս գի-
տես՝ ոչ ոք կրնար զայն խորտակել :

— Չորսերնիս , սիրելիդ իմ պարոն ժան , ինչպէս կը հաշուես :

— Քոյրս զօրութիւն , տ՛եկիւյլօն իշխանութիւն , դու խորհուրդ ,
ես հսկողութիւն :

— Շատ աղէկ , շատ աղէկ :

— Եւ ասկէ ետք թող գան քրոջս իրաւանց վրայ բռնանալ ու-
ղին : Չեմ կարծեր որ ոչինչ և ոչ ոք կարենայ բան մ՛ընել :

— Այդ ալ խօսք է , ըսաւ Ռիշլիէօ որուն ուղեղը կ'եռար :

— Ա՛լ հիմա թող ոսոխուհիներ հանեն , գոչեց ժան իւր յա-
տակաղիծներովը և յաղթիչ գաղափարներովը գինովցած :

— Ո՛հ , ըրաւ Ռիշլիէօ ճակտին զարնելով :

— Ինչ կայ , սիրելի մարաջախտ , ինչ կ'ըլլաս :

— Ոչինչ . այդ գաղափարը հիանալի դաշնակցութիւն մ'ըսել է :

- Այնպէս չէ :
- Եւ ես ամեն մասամբ այդ կարծիքը կ'ընդունիմ :
- Կեցցես :
- Միթէ Գավէրնէյ Գրիանօն կը բնակի աղջկանը հետ :
- Ոչ, Բարիզ կը բնակի :
- Շատ գեղեցիկ է այն աղջիկը, սիրելի դերկումն :
- Կղէօպատրասին պէս, կամ . . . քրոջս պէս ալ գեղեցիկ ըլլայ՝ դարձեալ չեմ վախնար անորմէ . . . քանի որ դաշնակցեցանք :

— Գավէրնէյ Բարիզ Սէնդ-Օնօրէ փողոցը կը բնակի, ըսիր, կարծեմ :

— Սէնդ-Օնօրէ փողոցը չըսի, Գօք-Հէռօն փողոցը կը բնակի : Արդեօք միտքդ բան մ'ինկաւ Գավէրնէյը պատժելու համար :

— Կարծեմ թէ այո, դերկումն, մտքէս այնպիսի բան մը կ'անցնի :

— Անհամեմատ մարդ մ'ես. ես կը մեկնիմ քաղաքն երթալու համար որպէս զի քիչ մը դիտնամ թէ հոն ինչ կը խօսուի :

— Էրթաս բարեաւ, դերկումն . . . : Աղէկ միտքս ինկաւ, նոր սլաշտօնէից անուաները չըսիր :

— Ո՛հ, անցարդ թուշուներ. Գէրէյ, Պէրդէն, ուրիշ չգիտեմ ո՛վ . . . , որոնք տ'էկիլյօնի, միով բանիւ, ապառնի ճշմարիտ պաշտօնէին կօշիկներն անդամ հանելու արժանի չեն :

— Թերևս անորոշապէս ապառնի, ըսաւ մարաջախտը մտովի՝ կարի շնորհալի ժպիտ մ'ուղղելով ժանի՝ իբր փաղաքշանք հրածեշտի :

Ժան մեկնեցաւ : Ռաֆղէ ներս մտաւ : Ամէն բան լսած էր և ինչ մտածելիքը դիտէր. բոլոր իւր կասկածները իրացեր էին : Բան մը չըսաւ իւր տիրոջը, անոր բնաւորութիւնը շատ աղէկ դիտնալուն համար :

Սենեկապան ծառայ ալ չկոչեց, նոյն իսկ ինքը հանուեցուց և և անկողինն առաջնորդեց ծեր մարաջախտը՝ որ իսկոյն հոն մտաւ թաղուեցաւ, քարտուղարին առած մէկ դեղահատը կուլ տալէն ետք՝ տենդէն գողարով :

Ռաֆղէ վարպայրները դոցեց ու դուրս ելաւ :

Նախասենեակին արդէն լի էր աճասյարող և ականջ դնող ծառաներով : Ռաֆդէ դէմն ելնող մէկ ծառային թեէն բռնելով ,

— Պ. մարաջախտին լաւ խնամք տար , ըսաւ . անհանդիստ է ։ Այս առտու սաստիկ հակառակութիւն մ'ունեցաւ . ստիպուեցաւ թաղաւորին անհնազանդ գտնուելու . . . :

— Թաղաւորին անհնազանդ գտնուելու , դոչեց սենեկապան ծառան սարսափահար :

— Այո , Նորին Վեհափառութիւնը Պ. մարաջախտին պաշտօնէութեան հրովարտակը զրկած էր . Պ. մարաջախտը իմանալով որ Տիւ պարիի ձեռքով եղեր էր այն՝ մերժեց : Ո՛հ , վեհ գործ մը կատարեց , և Բարիզցիք յաղթական կամար մը կը պարտին իրեն : Բայց հարուածը խիստ ըլլալուն պատճառաւ մեր տէրն հիւանդացաւ . լաւ խնամք տար անոր :

Ռաֆդէ այս քանի մը խօսքէն ետք որուն շրջաբերական զօրութիւնը կանխաւ գիտէր՝ իւր սենեակը մտաւ :

Քառորդ մ'ետք համայն Վէրսայլ մարաջախտին վեհ ընթացքը և վեհանձն հայրենասիրութիւնն իմացեր էր , այն մարաջախտին՝ որ խոր քունով մը կը քնանար իւր քարտուղարին կերտած ժողովրդայնութեան վրայ :

ՂԱ

Պ. ԱՐՔԱՅՈՐԴԻՈՅՆ ՍԵՂԱՆԻ ՓՈՔՐ ՍՊԱՍԸ

Միևնոյն օրը օրիորդ Գավէրնէյ ժամը երեքին սենեկէն դուրս ելաւ իշխանուհւոյն երթալու համար , որ ճաշէն առաջ ընթերցանութիւն մը մտիկ ընելու սովորութիւն ունէր :

Արբան , Նորին արքայազն Բարձրութեան առաջին ընթերցիչը

ան իւր պաշտօնը չէր կատարէր : Բարձր քաղաքագիտութեամբ կ'զբաղէր դեսպանագիտական ինչ ինչ խարդաւանանքներէ 'ի վեր' որոց մէջ գործ կատարողի ընտիր տաղանդ մը ցոյց տուեր էր :

Արդ օրիորդ տը Գավէրնէյ բաւական զարգարուած դուրս ելաւ իւր պաշտօնատեղին երթալու համար : Գրիանօնի բոլոր հիւրերուն նման շուտով տեղաւորուելու գծուարութիւնները ինքն ալ կը կրէր : Տակաւին բան մը կարդի դրած չէր, ոչ իւր պաշտօնը, ոչ իւր կահ կարասին, և առժամանակեայ կերպով տիկին տը Նօայլի մէկ սենեկապան կինը հաղուեցուցեր էր ղինքը, այն անհամբոյր պատուոյ տիկնոջ՝ զոր տիկին Արքունի պատշաճութիւն կը կոչէր իշխանուհին :

Անտրէ մետաքսեայ կապոյտ զգեստ մը հաղեր էր երկայնաձև և պիծակի մը մարմնոյն նման փոթ : Այս զգեստը առջևի կողմէն կը բացուէր և ցոյց կուտար բեհեզի մը ներքեւը՝ որ երեք կարգ ուռուցիկ նկարակիտուած էր . ծաղկօք նկարակիտեալ բեհեզէ կարճ թևեր ուսէն սկսելով կ'երթային կը միանային գեղջկական տարազով նկարակիտեալ շղարշին՝ որ նորատի աղջկան պարանոցը կը ծածկէր համեստօրէն : Օրիորդ Անտրէ զգեստին նման կապուտագոյն ժապաւէնով մը իւր գեղանի մազերը վեր առած էր պարզ ձևով մը . այն մազերը երկայն և թանձր խոպոպլիներով անոր պարանոցէն և ուսերէն կախուելով, այն ատեն գործածուած փետուրներէն, դարդմանակներէն և տանգէլաներէն շատ աւելի երևան կը հանէին նորատի աղջկան խրոխտ և համեստ դէմքը՝ որ աղօտ և անարատ գոյն մ'ունէր և զոր երբեք կարմիրը պղծած չէր :

Անտրէ քայլելու ատեն, իւր նուրբ և բոլորշի մասներուն կ'անցնէր սպիտակ մետաքսէ փոքր ձեռնոցները, մինչդեռ պարտիզին աւազին վրայ անուշ կապոյտ սաղէնէ շղուականին կրուկին տեղերը կը դրոշմուէր :

Գրիանօն հասնելով իմացաւ որ տիկին իշխանուհին իւր ճարտարապետին և գլխաւոր պարտիզպանին հետ ման դալու գացեր էր : Սակայն վերի յարկը ճախարակին ձայնը կը լսուէր որուն վրայ Պ. արքայորդին փականք մը կը շինէր իւր շատ սիրած մէկ արկղին համար :

Անտրէ իշխանուհւոյն միանալու համար ծաղկոյէն անցաւ , ուր՝ եղանակն անցած ըլլալովն հանդերձ , զիշերը խնամքով ծածկուած ծաղիկներ իրենց դեղնած գլուխները վեր կ'առնէին՝ իրենցմէ աւելի դեղին արևի մը փախստական ճառագայթները վայելելու համար : Եւ որովհետև իրիկունը կը մօտենար , ըստ որում այն եղանակին մէջ ժամը վեցին զիշեր կ'ըլլայ , պարտիզպանին մանչերը կ'սկսէին ապակիէ ծածկոյներով զոյգել իւրաքանչիւր ածուին ամենէն աւելի մակոտ սուները :

Կանաչազարդ ծառերու շարքի մը ծայրը , որ ցանկանման յօտուած և Պէնկալեան վարդենիներով պատած , դեղեցիկ մարդագետնի մը կը յանդէին , յանկարծ Անտրէ տեսաւ որ այն պարտիզպաններէն մին , զինքը տեսնելով , իւր բաճին կռթնելով կը կանդներ և ժողովրդային քաղաքավարութենէն շատ աւելի ճարտար և հմուտ քաղաքավարութեամբ մը զինքը կը բարեկէր :

Անտրէ նայեցաւ և այն գործաւորը ժիլպէրն ըլլալը ճանչցաւ , որուն ձեռներն , իւր աշխատանքին չնայելով , Պ. տը Գավէրնէյը կատղեցնելու չափ դեռ ճերմակ էին :

Անտրէ ահամայ կարմրեցաւ . անոր այնպէս կը թուէր թէ ժիլպէրին հոն գտնուիլը բաղդին մէկ տարօրինակ հաճոյքն էր :

Ժիլպէր բարևը կրկնեց , և Անտրէ բարևն առաւ ճամբսն շարունակելով :

Բայց կարի անկեղծ և արի ըլլալով չէր կրնար դէմ դնել հողոյն մէկ շարժմանը՝ իւր յուզեալ մտայ մէկ հարցումը անպատասխանի թողլով :

Ետ դարձաւ , և ժիլպէր որ արդէն տժգուներ էր և ահարկու նայուածքով մ'անոր ետեէն կը նայէր , յանկարծ հոյի առաւ և ուստում մ'ըրաւ անոր մօտենալու համար :

— Գու հո՞ս ես , պարոն ժիլպէր , ըսաւ Անտրէ ցտրտ կերպով մը :

— Այո՛ , օրիորդ :

— Ի՞նչ դիպուածով :

— Օրիորդ , ապրիլ պէտք , և այն ալ պարկեշտութեամբ :

— Բայց զիտե՞ս որ բաղդաւոր ես :

— Ո՛Տ, շատ, օրիորդ, ըսաւ Ժիլպէր :

— Ի՞նչ ըսիր :

— Ըսի թէ օրիորդ, ըսածիդ պէս շատ բաղդաւոր եմ :

— Քեզ ո՞վ հոս դրաւ :

— Պ. տը Ժիւսիէօ, իմ մէկ պաշտպանս :

— Ա՛Տ, ըրաւ Անտրէ զարմանալով, Պ. տը Ժիւսիէօն կը ճանչնաս :

— Ի՞մ առաջին պաշտպանիս, վարպետիս, Պ. Ռուսօին բարեկամն էր :

— Քեզ նայի՞մ աշխատէ, պարոն Ժիլպէր, ըսաւ Անտրէ մեկնելու պատրաստուելով :

— Ի՞նչպէս ես աղէկցար, օրիորդ . . . ըսաւ Ժիլպէր այնպիսի դողդոջուն ձայնով մը, որմէ կը գուշակուէր թէ սրտէն մինչև բերանը գալու ատեն շատ խոնջեր էր, և սրտին իւրաքանչիւր թրթռումը յայտնի կ'երևէր :

— Աղէկցայ՝ ի՞նչ ըսել կ'ուզես, ըսաւ Անտրէ ցուրտ կերպով :

— Բայց . . . այն աղէտալի պատահարը . . .

— Ա՛Տ, այո . . . : Շնորհակալ եմ, պարոն Ժիլպէր, աղէկ եմ. բան մը չէր :

— Ո՛Տ. քիչ մնաց որ մէջ պիտի խաղայիր, ըսաւ Ժիլպէր յետին աստիճան յուզուած, վտանգը սոսկալի էր :

Նոյն պահուն Անտրէ մտածեց որ թաղաւորական ճեմավայրի մը մէջ գործաւորի մը հետ ըրած խօսքը պէտք չէր երկայն տևել :

— Մնաս բարեաւ, պարոն Ժիլպէր, ըսաւ :

— Միթէ օրիորդը վարդ մը կ'ընդունի, ըսաւ Ժիլպէր դողդոջալով և քրտնաթոր :

— Բայց, պարոն, քոյդ չեղած մէկ բանն ինձ կ'ընծայես, պատասխանեց Անտրէ :

Ժիլպէր յապուշ կրթելով պատասխան չտուաւ : Գլուխը ծռեց, և որովհետև Անտրէ իւր մեծութիւնը յայտնած ըլլալուն համար տեսակ մ'ուրախութեամբ անոր կը նայէր, Ժիլպէր գլուխը վեր առնելով, ամենէն գեղեցիկ մէկ վարդենիին ծաղկած ամբողջ մէկ ճիւղը խլեց, և սկսաւ վարդերուն թերթերը փետել այնպիսի պաղ

Generated on 2016-09-07 10:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տրեամբ մը և ազնուութեամբ մը որ մեծ տպաւորութիւն ազդեց
նորասի աղջկան :

Արի արդարասէր և բարեսիրտ ըլլալով կարելի չէր աչքէն վրի-
պիլ թէ ընդ վայր վիրաւորեր էր ստորին մը՝ անոր քաղաքավա-
րութիւն մը գործել ուզած ատեն : Ուտի բոլոր այն խրոխտ ան-
ձանց նման որոնք իրենց գործած պակասութիւնը կ'զգան՝ սկսաւ
իւր շրջագայութիւնը շարունակել առանց խօսք մ'ընելու՝ երբ թու-
ղութիւն խնդրելը կամ հատուցում մ'ընելը լեզուին վրայ կը
պտտէր :

Ժիլպէր ևս խօսք մը չլսաւ . վարդենիին ճիւղը նետեց և բա-
հը ձեռք առաւ . բայց իւր բնաւորութեան մէջ խրոխտութիւնը
խորամանկութեան հետ զոյգ կ'ընթանար . ծուցաւ անշուշտ աշխա-
տելու բայց նաև Անտրէին հեռանալն ալ դիտելու համար՝ որ
ծառուղոյ մը ծայրէն դառնալու ատեն չկրցաւ ինքզինքը բռնել և
ետևը դարձաւ : Կին էր :

Ժիլպէր անոր այս տկարութիւնը բաւական սեպեց , և ինքնիրեն
ըսաւ թէ այս նոր վէրին մէջ ինքը տարեր էր յաղթանակը :

— Ինձի չափ զօրաւոր չէ , ըսաւ մտովի ; ես անոր վրայ պիտի
տիրեմ : Իւր գեղեցկութեանը , անուանը և հետզհետէ աւելցող
հարստութեանը համար փքացած՝ կ'անարդէ իմ սէրս զոր թերևս
կը գուշակէ , և այս կերպով աւելի իղձ կ'ազդէ խեղճ դործաւո-
րին՝ որ դողալով իրեն կը նայի : Ո՛հ , մարդու մ'անարժան եղող
այն դողին , այս սարսուռին , ո՛հ , ինձի գործել տուած վա-
տութեանց , բոլոր ասոնց փոխարէնը օր մը պիտի հատուցանէ : Բայց
այսօրուան պալով , բաւական գործ կատարեցի , յարեց , թշնամին
յաղթեցի . . . : Ես որ աւելի տկար վարուելու էի , քանի որ կը
սիրեմ , ես տասն անգամ աւելի զօրաւոր վարուեցայ :

Այս խօսքը դարձեալ կրկնեց վայրենի ուրախութեամբ մը , և
ջլաձիգ ձեռքը ճակտին տանելով , ուրկէ պեղեցիկ սև մազերը վեր-
առաւ , բահը ածուին մէջ խրեց ուժով մը , նոճիներուն և պեղ-
ձերուն ցանկին մէջէն այծեամի մը պէս խոյացաւ , ապակիէ ծած-
կոցներով կոցուած սուսկերու թառուտի մը մէջէն հովի մը նման
անցաւ՝ հակառակ իւր կատաղի արշաւանքին անոնց և ոչ միոյն դպչե-

լով, և իւր գծած անկիւնագծին ծայրը կեցաւ այն ճամբան դառնալու համար որուն Անտրէ շրջանակի ձեռով մը կը հետեւէր :

Հոն արդարեւ տեսաւ որ Անտրէ մտախոհ և նկուն կը յառաջանայ, գեղանի անցերը խոնարհած, դոյզն ինչ խոնաւ և անշարժ ձեռքը իւր թրթուուն զոգեստին վրայ մեղմիկ կախուած . Թիլպէր թանձրանիտ նշդարուոյն ետեւը պահուած՝ անոր երկու անգամ հառաչելը լսեց՝ այնպէս որ զողցես ինքնիրեն կը խօսէր : Աւերջապէս այնքան ծուռերուն մօտէն անցաւ որ Թիլպէր ձեռքը երկնցնելով կրնար Անտրէի ձեռքին դպչիլ, ինչպէս որ խօլական, յիմարական տենդ մը իրեն կը խրատէր ընեւր :

Բայց ատելութեան նմանող կամքով մը յօնքը պուստեց, և կարկամաւ ձեռքը սրտին վրայ դնելով,

— Դարձեալ վառութիւն ըրի, ըսաւ մտովի :

Ասլա ջած ձայնով յարեց,

— Սակայն ո՛րքան ալ դեղանի է :

Թիլպէր թերևս իւր նկատման մէջ երկար ատեն մնար, ըստ որում ծառուղին երկայն էր և մէջ տեղէն ճամբաներ ունէր՝ որոցմէ անճարակ մը կրնար ելնել, և դիպուածն ալ այնպէս գէշ եղաւ Թիլպէրի՝ որ իրօք ձախ կողմի առաջին կողմանակն ճամբէն անճարակին մէկը դուրս ելաւ, այսինքն այն կանաչադարդ ծառերու թառտտին դիմացը ուր Թիլպէր պահուեր էր :

Այն անճարակը մեթոտաւոր և կանոնաւոր ընթացքով մը կը քայլէր . գլուխը բարձր բռնած էր, գլխարկը ալ թևին ներքև և ձախ ձեռքը սուրին վրայ : Սամուրագոյն կզաքիսի մուշտակով եղերեալ թաւշէ զգեստ մը հաղեր էր, իւր դեղեցիկ սրունքը երկընցնելով կը քայլէր, և աղնուազգի մը նման սրունքին վարի մասը բարձր էր :

Այն աղնուականը յառաջ դալու ասին Անտրէն տեսաւ, և անշուշտ նորանի աղջկան կերպարանքն իրեն հաճոյ թուեցաւ, ինչու որ քայլերը կրկնապատկեց ճամբան խոտորնակի կտրելով, Անտրէն հետեւած գծին հասնելու և կարելի եղածին չափ շուտով անոր առջևը կտրեւր համար :

Թիլպէր այն անձը տեսնելով, ակամայ ճիչ մ'արձակեց և ո՛ր

սորդին ձեռքէն խուսող կեռնեխի մը նման աղտորներուն ներքէնն փախաւ :

Անճարակին հնարքն յաջողեցաւ . անշուշտ սովորաբար այս րանը կ'ընէր . երեք վայրկեան չեղած Անտրէն առաջ անցաւ , որմէ բաւական հեռի կը գտնուէր երեք վայրկեան առաջ :

Անտրէ այն քայլափոխը լսելով քիչ մը մէկդի քաշուեցաւ որպէս զի մարդն անցնի . երբ անցաւ՝ անոր կողմը նայեցաւ :

Ազնուականն ևս սաստիկ ուշադրութեամբ կը նայէր , մինչև անհամ կեցաւ աղէկ մը տեսնելու համար , և տեսնելէն ետք դառնալով :

— Ա՛հ , օրիորդ , ըսաւ սիրուն ձայնով մը , կ'աղաչեմ , ո՛ր կը վազես այդպէս արագ :

Անտրէ այն ձայնն առնելուն պէս զլուխը վեր առաւ , և ետևը իրմէ երեսուն քայլ հեռի պահապան զօրաց երկու պաշտօնակալ տեսաւ որ ծանթ կը քայլէին . իրեն խօսքն ուղղողին հազած կզաքիսէ մուշտակին ներքև կասողոյտ ժապաւէնը տեսաւ , և այս անակնկալ հանդիպումին ու շնորհալի լինդիջումին համար տժգունելով և ահաբեկելով :

— Արքայն , ըսաւ սաստիկ ծռելով :

— Օրիորդ . . . , պատասխանեց Լուի Ժե մօտենալով , աչքերս այնքան աղէկ շեն տեսներ որ ստիպուած եմ անունդ հարցընելու :

— Օրիորդ տը Գավէրնէյ ; մի՞թէնց նորասի աղջիկը այնքան ամշնալով և դողալով որ հազիւ ըսածը լսուեցաւ :

— Ա՛հ , բարեբաստիկ ուղևորութիւն մը կ'ընես Գրիանծնի մէջ ; օրիորդ , ըսաւ թագաւորը :

— Նորին արքայազն բարձրութեան տիկին իշխանուհւոյն քովը կ'երթայի որ ինձ կ'սպասէ , պատասխանեց Անտրէ հետզհետէ դողը աւելնալով :

— Օրիորդ , ես զքեզ անոր քով կը տանիմ , պատասխանեց Լուի Ժե . ինչու որ իբրև դիւղի դրացի այցելութիւն մը պիտի ընեմ հարսիս . հաճէ թեւ մանելու՝ քանի որ երկու քնիս ալ միեւնոյժ ճամբան պիտի երթանք :

Generated on 2016-09-07 11:02 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Անտրէ կարծեց թէ ամպի պէս բան մ'անցաւ աչքին վրայէն և մրկածուփ ալեօք իւր սիրտն իջաւ արեանն հետ : Արդարեւ խեղճ աղջկանն համար այսպիսի պատիւ մը , թագաւորին , ամենուն տէրն եղող վեհապետին թեւը , այնքան անակնկալ , այնքան անյուսալի փառք մը , շնորհ մը որմէ համայն արքունիք պիտի նախանձէր , երազի պէս բան մը կը թուէր իրեն :

Ուստի այնպիսի խորին և կրօնական երկիւղածութեամբ յարգանք մը մատուցց՝ որ թագաւորը կարծեց թէ հարկ է վերստին բարեւել : Երբ Լուի Ժ-Ե Լուի Ժ-Ի-ը յիշել կ'ուզէր՝ միշտ արարողական և քաղաքավարական պարագաներու մէջ էր : Նաև , մարդավարութեան այս աւանդութիւնները աւելի հինէն էին , Անրի Գ-ի օրէն մտացած էին :

Ուստի ձեռքը Անտրէի տուաւ , սա իւր հրատապ մատներուն ծայրը թագաւորին ձեռնոցին վրայ դրաւ , և երկուքն 'ի միասին շարունակեցին հովանոցին կողմն երթալ , ուր , ըսած էին թագաւորին , թէ տիկին իշխանուհին իւր ճարտարապետին և պարտիզպանայետին հետ պիտի գտնէք :

Կրնանք հաւաստել թէ Լուի Ժ-Ե որ շատ քայլերը չէր սիրեր՝ ամենէն երկայն ճամբան ընտրեց՝ Անտրէն փոքր Գրիանօն առաջնորդելու համար : Ետեէն քայլող երկու պաշտօնակալները Նորին Վեհափառութեան սխալը տեսան և գանդպտեցան , քնշու որ բարակ զգեստներ հագեր էին , և օդն ալ կը պաղէր :

Ուշ հասան , քնշու որ իշխանուհին յուսացուած տեղը չդտան : Մարի-Անդուանէզ նոր մեկներ էր , արքայորդին չսպասեցրնելու համար որ ժամը վեցէն եօթնի միջոցները կ'ախորժէր ընթրել :

Ուստի Նորին արքայազն Բարձրութիւնը ճիշդ ժամանակին հասաւ , և որովհետև արքայորդին կարի ճշդապահ ըլլալով արդէն սրահակին սեմին վրայ էր , աւելի շուտ ճաշարանն անցնելու համար երբ մատակարարը երևան ելնէր , իշխանուհին սենեկապան կնոջ մը ձեռքը նետեց կրկնօր , գնաց արքայորդւոյն թեւը մտաւ զուարթութեամբ և ճաշարանը տարաւ զան :

Սեղանը պատրաստուէր էր երկու մեծանուն կոչնականներուն համար :

Իւրաքանչիւրը սեղանին մէջ տեղը կը նստէր, բարձր կողմը բայ թողլով, ուր, քանի մ'անդամ թագաւորին յանկարծ վրայ գալուն պատճառաւ, մարդ չէր նստէր, նոյն իսկ հիւր ալ գսնուած լատեն :

Այն բարձր տեղը, թագաւորին սպասը իւր տփով բաւական մեծ տեղ մը կը բռնէր. բայց մատակարարը որ այն հիւրը հաշուի չէր գնէր՝ այն կողմէն կը ծառայէր սեղանին :

Իշխանուհւոյն աթոռին ետեւ, ծառաներուն անցուդարձին պէտք եղած միջոցէն անդին, տիկին տը Նօայլ կը կենար պիւրկ՝ սակայն ընթրիքի մ'ատեն հարկ եղած ամէն քաղցրութիւնը դէմքին վրայ ցոյց տալով :

Տիկին տը Նօայլի քով կ'ըլլային միւս տիկնայք՝ որոնք արքունեաց մէջ ունեցած իրենց դիրքովը Նոցին արքայազն Բարձրութեանց ընթրիքին ներկայ գտնուելու իրաւունքն ունէին կամ շնորհքին արժանի էին :

Շարաթը երեք անդամ տիկին տը Նօայլ Պ. արքայորդւոյն և տիկին իշխանուհւոյն հետ կ'ընթրէր : Բայց անոնց հետ չընթրած օրն ընթրիքին ալ ներկայ կը գտնուէր. և այս ալ բողոք մ'էր շարթուան եօթն օրէն չորսին եղած բացառութեան դէմ :

Տը Նօայլ դքսուհւոյն դիմացը, զոր իշխանուհին տիկին Արքունի սովորութիւն կ'անուանէր, Պ. տը Ռիշլիէօ դուքսը կը կենար դրեթէ միւսնոյն աստիճանաւ :

Նա ևս սաստիկ հոգ կը տանէր պատշաճութեանց. միայն թէ իւր ձեւերը ամենուն աչքէն կը վրիպէին՝ միշտ ամենակատարեալ վայելչութեան մը, և երբեմն ամենանորը հեղնութեան մը ներքեւ ծածկուած ըլլալուն պատճառաւ :

Խորհրդարանի առաջին անուականին և Նորին արքայզն Բարձրութեան տիկին արքայորդւոյն առաջին պատուոյ տիկնոջ մէջ եղած հակադրութենէն սա կը հեռուէր որ, տը Նօայլ դքսուհւոյն միշտ խօսքը կը հաւոնէր, և Պ. տը Ռիշլիէօ ալ միշտ խօսք կը գտնէր :

Մարաշախտը Եւրոպիոյ ամէն արքունիքները ուղևորած, և անոնց իւրաքանչիւրէն ամենէն աւելի իւր բնութեան յարմարած վայելուչ եղանակները քաղած էր, այնպէս որ, թէ ճաշակի և թէ

Generated on 2016-09-07 11:03 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-goo

պատշաճութեան մասին պակտութիւն մը չընելով, գիտէր բոլոր այն մանրավէպները՝ որոնք արքայազանց սեղանին և տիկին Տիւ պարիի ճաշին ատեն կրնային պատմուիլ :

Այն իրիկունը տեսաւ որ իշխանուհին ախորժակով կ'ուտէ և արքայորդին ալ կը լափէ : Մտածեց որ անոնք իւր խօսակցութեանը չսխալ մասնակցէին, և պէտք էր տիկին տը Նօայլը ժամ մը քաւարան ղրկել :

Ուստի փիլիսոփայութեան և թատրոնի վրայ սկսաւ խօսիլ, խօսակցութեան երկու նիւթ՝ որոց համար սաստիկ հակակրութիւն ունէր յարգելի դքսուհին :

Ֆէրնէյի փիլիսոփային մարդասիրական վերջին խանդերէն մին պատմեց, անուն մը՝ զոր արդէն Անրիօտէ հեղինակին կուտային, և երբ տեսաւ որ դքսուհւոյն հոգին բերանը եկաւ մտիկ ընելով, պատմութիւնը փոխեց և իբրև խորհրդարանի ազնուական՝ մանք պատմեց թագաւորին սովորական տիկին դերասանուհիները աւելի կամ նուազ գէշ խաղցնելու համար կրած շփոթութիւնը :

Իշխանուհին արուեստները կը սիրէր, մանաւանդ թատրոնը . Գլիդամնէսդրի կատարեալ հագուստ մը դտեր էր օրիորդ Ռօզուրի համար . ուստի ոչ միայն ներողամտութեամբ այլ և հաճութեամբ մտիկ ըրաւ Պ. տը Ռիշլիէօի խօսքը :

Այն ատեն խեղճ պատուոյ տիկինը հակառակ արքունի սովորութեանց աստիճանակին վրայէն շարժեցաւ, աղմկով քիթը սրբեց և գլուխը ցնցեց առանց մտքէն անցնելու այն փոշոյ ամպը՝ որ իւրաքանչիւր ցունցին ճակատը կը պատէր, ինչպէս որ իւրաքանչիւր մրրկալի հովին ձիւնեղէն ամպ մը ճերմակ լերան գազաթը կը պատէ :

Բայց միայն տիկին իշխանուհին զուարճացնելը բաւական չէր, պէտք էր նաև Պ. արքայորդւոյն հաճելի ըլլալ : Ուստի Ռիշլիէօ թատրոնի խօսքը թողուց, որուն համար Գաղղիոյ թաղին ժառանգորդը երբէք մեծ համակրութիւն մ'ունեցած չէր, և սկսաւ մարդասիրական փիլիսոփայութեան վրայ խօսիլ : Անգղիացոց մասին այն եռանդով խօսեցաւ զոր Ռուսօ Էտուար Պոմպոնի կուտայ իբր կինարար հոսանուտ :

Արդ, տիկին տը Նօայլ փիլիսոփաներուն չափ Անդղիա լիներն ալ կանարդէր :

Նոր դաղափար մը խոնջութիւն կը պատճառէր իրեն, և խոնջութիւն մ'ալ իւր բոլոր անձը կը դզրդէր: Տիկին տը Նօայլ որ կ'զգար թէ հինը պահելու համար ծնած էր, նոր դաղափարներուն դէմ կ'ոռնար՝ երեսնին գիտակով գոցուած շուներուն պէս :

Ռիշլիէօ այս խաղը խաղալով կրկին նպատակ ունէր. տիկին Արքունի Պատշաճութիւնը կը տանջէր, սրով զգալի հաճոյք մը կը պատճառէր իշխանուհւոյն, և հոսկէ հոնկէ առաքինական հանճարաբանութիւններ, մաթեմադիքական ճշմարտութիւններ կը գտնէր՝ զոր կարի զուարթութեամբ մտիկ կ'ընէր Պ. արքայորդին, ճշգրիտ իրաց այն սիրահար իշխանը :

Աքանչելի կերպով հաճելի կ'ըլլար Ռիշլիէօ, աչքով միշտ մէկ կը փնտռելով, որ կը յուսար թէ հոն է և չէր գտնէր, երբ սանդուխին ստորոտն արձակուած ձայն մը հնչուն կամարն հասաւ ուրիշ երկու ձայներէ կրկնուելով որոյ մին դրանդին և միւսը սանդուխին վրայէն էր :

— Թագաւորը :

Այս մողական բառը լսելուն պէս, տիկին տը Նօայլ պողպատէ զսպանակէ մը մղուածի պէս աստիճանակին վրայ ելաւ կանգնեցաւ : Ռիշլիէօ իւր սովորականին համեմատ ծանրութեամբ ոտք ելաւ, արքայորդին անձեռոցովը բերանը սրբեց արտորնօք և իւր անդը ոտքի վրայ կեցաւ, երեսը դրանը դարձուցած :

Իսկ տիկին իշխանուհին դէպ 'ի սանդուխը դնաց, աւելի շուտ Թագաւորին պատահելու և իւր տան մէջ պէտք եղած պատին անոր ընելու համար :



Generated on 2016-09-07 11:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արդ, տիկին տը Նօայլ փիլիսոփաներուն չափ Անդղիալիներն ալ կանարդէր :

Նոր դաղափար մը խոնջութիւն կը պատճառէր իրեն, և խոնջութիւն մ'ալ իւր բոլոր անձը կը դզրդէր: Տիկին տը Նօայլ որ կ'զգար թէ հինը պահելու համար ծնած էր, նոր դաղափարներուն դէմ կ'ոռնար՝ երեսնին գիտակով զոյգուած շուներուն պէս :

Ռիշլիէօ այս խաղը խաղալով կրկին նպատակ ունէր. տիկին Արքունի Պատշաճութիւնը կը տանջէր, սրով զգալի հաճոյք մը կը պատճառէր իշխանուհւոյն, և հոսկէ հոնկէ առաքինական հանճարաբանութիւններ, մաթեմադիքական ճշմարտութիւններ կը գտնէր՝ զոր կարի զուարթութեամբ մտիկ կ'ընէր Պ. արքայորդին, ճշգրիտ իրաց այն սիրահար իշխանը :

Աքանչելի կերպով հաճելի կ'ըլլար Ռիշլիէօ, աչքով միշտ մէկը կը փնտռելով, որ կը յուսար թէ հոն է և չէր գտնէր, երբ սանդուխին ստորոզան արձակուած ձայն մը հնչուն կամարն հասաւ ուրիշ երկու ձայներէ կրկնուելով որոյ մին դրանդին և միւսը սանդուխին վրայէն էր :

— Թագաւորը :

Այս մողական բառը լսելուն պէս, տիկին տը Նօայլ պողպատէ զսպանակէ մը մղուածի պէս աստիճանակին վրայ ելաւ կանգնեցաւ : Ռիշլիէօ իւր սովորականին համեմատ ծանրութեամբ ոտք ելաւ, արքայորդին անձեռոցովը բերանը սրբեց արտորնօք և իւր անդը ոտքի վրայ կեցաւ, երեսը դրանը դարձուցած :

Իսկ տիկին իշխանուհին դէպ 'ի սանդուխը դնաց, աւելի շուտ Թագաւորին պատահելու և իւր տան մէջ պէտք եղած պատին անոր ընելու համար :



ՂԲ

ԹԱԳՈՒՏԻՈՅՆ ՄԱՋՆԵՐԸ

Թագաւորը տակաւին օրիորդ Գալէրնէյի ձեռքէն բռնած էր գրանն առջև հասած ատեն, և միայն հոն հասնելով այնպիսի քաղցրութեամբ և երկայն կերպով բարևեց զան՝ որ Ռիշլիէօ ժամանակ ունեցաւ բարևը տեսնելու, անոր շնորհալի ձևին վրայ հիանալու, և ինքնիրեն հարցնելու թէ ո՞ր երջանիկ մահկանացուին ուղղուած էր:

Երկայն ատեն անդէտ չմնաց: Լաի Ժե իշխանուհւոյն թեկէն բռնեց որ ամեն բան տեսեր և շատ աղէկ ճանչցեր էր Անտրէն:

— Հարմնուկ, ըսաւ անոր, առանց ձեերու եկայ քու տունդ ընթրելու: Բոլոր պարտէզէն անցայ, և ճամբան օրիորդ սըր Գալէրնէյի հանդիպելով, աղաչեցի որ ինձի հետ ընկերակցի:

— Օրիորդ սըր Գալէրնէյ, միմեջեց Ռիշլիէօ այս անակնկալ հարուածէն գրեթէ յապուշ կրթած: Ճշմարիտ շատ բաղդաւոր եմ ես:

— Այնպէս որ ոչ միայն չպիտի սրգոզիմ օրիորդին որ ուշ մնացեր էր, պատասխանեց իշխանուհին շնորհալի եղանակաւ մը, այլ և շնորհակալ պիտի ըլլամ իրեն Ձեր Աեհափառութիւնը մեզի բերելուն համար:

Անտրէ, ծաղկանց փունջին դագաթը զարդարող դեղեցիկ կեռասներուն նման կարմրելով, առանց պատասխան տալու խոնարհեցաւ:

— Ա՛հ, արդարև դեղանի է, ըսաւ Ռիշլիէօ մտովի. և այն Գալէրնէյ չար ծերը արժածէն շատ քիչ գովեր է:

Թագաւորը Պ. արքայորդւոյն բարեն առնելով արդէն սեղանը նստեր էր: Իւր հաւին պէս լաւ ախորժակի տէր ըլլալով յանպատրաստից բերուած կերակուրներն ուսաւ ախօրժանօք ուտել:

որ մատակարարը գողցես հմայիւք դրեր էր անոր առջևը :

Սակայն թագաւորը կերակուր ուտելու ասեն որ թիկունքը գրանը գարձուցած էր , գողցես բան մը , կամ լաւ ևս մէկը կը փնտուէր :

Արդարեւ օրիորդ տը Գավէրնէյ որ բնաւ մենաշնորհ մը չէր վայելէր , տիկին իշխանուհւոյն քով իւր ունենալիք վիճակը տալուին որոշուած չըլլալով , օրիորդ տը Գավէրնէյը , ըսինք , ճաշարանը չէր մտեր , և թագաւորին բարեին փոխարէն խորին յարգանք մը մատուցանելով տիկին իշխանուհւոյն սենեակը դացեր էր , որ արդէն երկու երեք անգամ անոր ընթերցանութիւնը մտիկ ըրեր էր անկողին մտնելէն ետք :

Տիկին իշխանուհին հասկցաւ որ թագաւորը իւր գեղանի ուղեկիցը կը փնտուէր :

— Պարոն տը Գուանեի , ըսաւ թագաւորին ետեը կեցած պաշտօնակալի մը , օրիորդ տը Գավէրնէյը առ և բեր , կ'աղաչեմ : Տիկին տը Նօայլի թոյլտուութեամբ այս իրիկունն արքունի պատշաճութիւններէն կը շեղինք :

Պ. տը Գուանեի դուրս ելաւ , և վայրկեան մ'ետք Անտրէն ներս բերաւ , որ այսպիսի իրարու յաջորդող շնորհներէն բան մը չհասկընալով գողչոջուն ներս մտաւ :

— Օրիորդ հոն նստէ , ըսաւ իշխանուհին , տիկին տը Նօայլի մօտ :

Անտրէ երկչոտութեամբ աստիճանէն ելաւ . այնքան յուզուած էր որ յանդգնեցաւ միայն աստիճան մը պատուոյ տիկինէն վար նստելու :

Ուստի սա այնպիսի փայլակնացայտ ակնարկ մ'արձակեց որ խեղճ աղջիկը , գողցես ելեքտրական սաստիկ ցունց մը զգացածի պէս , չորս քայլ ընկրկեցաւ :

Լուի Ժե անոր կը նայէր և կը ժպտէր :

— Է՛հ , բայց , ըսաւ Ռիչիէօ մտովի , գրեթէ չարժէր որ մէջ մտնեմ , ամեն բան ինքնին կը քայլէ :

Թագաւորը ետեը դարձաւ այն ատեն և մարաջախտը տեսաւ , որ այն նայուածքին դէմ դնելու պատրաստուեր էր :

— Բարի լոյս , սլարոն դուքս , ըսաւ Լուի Ժե , տիկին տը Նօայլ գքսուհւոյն հետ աղէկ կը վարուին :

— Անհատաբար տէր , սրտասխանեց մարաջախտը , տիկին դքսու-
հին զիս միշտ գլուխ ցաւցնողի տեղ դնելու պատիւը կ'ընէ ինձ :

— Դու ալ Շանդրուի ճամբունի վրայ դացիր , դուքս :

— Ե՛ս , Անհատաբար տէր : Ճշմարիտ ոչ . այս մասին Ձեր Ան-
հատաբարութեան իմ ընտանեացս համար ունեցած բարեսիրութեամբ
կարի երջանիկ եմ :

Թագաւորը այս հարուածին չէր սպասեր , ծաղրելու կը պատ-
րաստուէր , առաջը կ'իյնային :

— Եւ ինչ ըրի , դուքս :

— Անհատաբար տէր , Ձեր Անհատաբարութիւնը իւր թեթեակի զօ-
րաց հրամանատարութիւնը Պ. ա'էկիւլտն դքսին տուաւ :

— Այո , ճշմարիտ է , դուքս :

— Եւ ասոր համար անշուշտ Ձեր Անհատաբարութիւնը մեծ հաստա-
տամտութիւն և հանճար բանեցուց . գրեթէ Պետական հարուած մ'է :

Ընթրիքն աւարտելու վրայ էր , թագաւորը պահ մը սպասեց և
սեղանէն ելաւ :

Խօսակցութիւնը կրնար զինքը շփոթել , բայց Ռիշլիէօ որոշեր էր
որսը չթողուլ : Ուստի երբ թագաւորը սկսաւ տիկին տը Նօայլի ,
իշխանուհոյն և օրիորդ տը Գալէրնէյի հետ խօսիլ , Ռիշլիէօ այն-
պիսի վարպետութեամբ մը մեքենայեց որ խօսակցութեան մէջը մտաւ ,
խօսակցութիւն մը զոր ուզած կէտը հասուցած էր :

— Անհատաբար տէր , ըսաւ , Ձեր Անհատաբարութիւնը գիտէ թէ
յաջողութիւնները մարդուս համարձակութիւն կուտան :

— Միթէ համարձակ ըլլալդ մեզ ըսելու համար կ'ըսես այդ :

— Ձեր Անհատաբարութեան շնորհ մը պիտի խնդրեմ , ինձ ար-
դէն ըրած շնորհէն ետք . իմ ազնիւ բարեկամներէս մին , Ձեր
Անհատաբարութեան նախնի ծառաներէն մին , թիկնապահ զօրաց մէջ
որդի մ'ունի : Երիտասարդը շատ արժանաւոր բայց աղքատ մէկն է :
Օգոստոսաբար իշխանուհիէ մը հարիւրապետութեան հրովարտակ ըն-
դունեցաւ , բայց զօրագունդը կը սքակսի իրեն :

— Իշխանուհին հարսս է , հարցուց թագաւորը , տիկին արքայ-
որդույն կողմը դառնալով :

— Այո , վեհապառ տէր , ըսաւ Ռիշլիէօ , և այն երիտասար-
դին հայրը Գալէրնէյ սեպուհ կը կոչուի :

Generated on 2016-09-07 11:29 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Հայրս . . . , դռչեց Անտրէ ահամայ , Փիլիպ . . . : Փիլիպին համար է որ զօրագունդ մը կը խնդրէք , պարոն դուքս :

. Այո , արքունի սովորութիւնները մոռնալուն համար ամշնալով Անտրէ քանի մը քայլ ընկրկեցաւ կարմրելով և ձեռներն իրար կցած :

Թագաւորը ետեւը դարձաւ դեղանի աղջկան կարմրութեանը և յուզմունք վրայ հիանալու համար . Ռիշլիէօի ալ նայեցաւ բարեխնամ նայուածքով մը , որմէ պալատականը հասկցաւ թէ իւր խնդիրը որքան հաճոյ եղեր էր՝ հայթայթած պատահութեան առթիւ :

— Արդարեւ , ըսաւ իշխանուհին , ազնիւ երկտասարդ մ'է , և ես խոստացեր էի իւր բազըր շինելու : Արքան թշուառ են իշխանները : Երբ Աստուած յօժարութիւն կուտայ իրենց՝ յիշողութիւննին կամ դատողութիւննին կ'առնէ իրենցմէ . պէտք չէ՞ որ մտածէի թէ այն երկտասարդը աղքատ է , միայն ուսնոց (épaulette) տալը բաւական չէ , այլ զօրագունդն ալ պէտք է տալ :

— Է՛՛՛ , տիկին , Ձեր Բարձրութիւնն լինչպէս պիտի գիտնար :

— Ո՛՛՛ , գիտէի , ըսաւ իշխանուհին աշխուժիւ և այնպիսի շարժումով մը , որ Անտրէի յուշն ածեց այն տունը որ կարի մերկ է անշուք՝ սակայն կարի երանաւէտ էր իւր մանկութեան ատենը . ա՛յո , գիտէի , և Պ . Փիլիպ ալ Գավէրնէյի աստիճան մը տալով կը կարծէի թէ ալ ընելիքս չէր մնացեր : Փիլիպ է անունը , այնպէս չէ՞ , օրիորդ :

— Այո , տիկին :

Թագաւորը բոլոր այն վեհ և անկեղծ դէմքերուն նայեցաւ . ապա աչքը Ռիշլիէօի վրայ կեցուց՝ որուն գիմաց վրայ ևս վեհանձնութեան փայլ մը կը ցոլար , և այս ալ անշուշտ իւր քովեւ եղող օգոստափառ իշխանուհոյն ազդեցութենէն էր :

— Ա՛՛՛ , դուքս , ըսաւ թագաւորը կիսաձայն , Լիւսիէնի հետ պիտի աւրուիմ :

Այա Անտրէի աշխուժիւ ,

— Օրիորդ , ըսէ որ ասով հաճոյք մը պիտի զղաս , յարեց :

— Ա՛՛՛ , վեհափառ տէր , ըսաւ Անտրէ ձեռներն իրար կցելով , կը պաղատիմ :

— Շնորհեցի, ըստ Լուի ԺԵ. ընտիր զօրադունդ մը դաիր այն խեղճ երիտասարդին, դուքս: այս մասին հարկ եղած դրամը ես պիտի տամ՝ եթէ արդէն վճարուած չէ և պաշտօնն ալ պարաս չէ:

Այս բարեգործութիւնը բոլոր ներկայ ելողներն ուրախացուց. անով թաղաւորը Անտրէի մէկ երկնային ժպիտը վայելեց, Ռիշ-լիէօ ալ այն գեղանի բերնին մէկ շնորհակալութիւնը, որմէ աւելի ևս պիտի պահանջէր՝ եթէ երիտասարդութեան ասենն ըլլար, փառասէր և աղահր ըլլալուն պատճառաւ:

Քանի մ'այցելուներ ալ հետզհետէ եկան: անոնց մէջ կը դանուէր տը Ռօհան կարգինալը որ, իշխանուհին Գրիանօն հաստատուելէ 'ի վեր, իւր մեծարանքը մատուցանելու կու պար անխոնջ:

Բոլոր այն իրիկունը թաղաւորը յարդանօք վարուեցաւ Ռիշլիէօի հետ և աղւոր խօսքեր ըրաւ անոր: Մինչև անգամ հետն առաւ Ռիշլիէօն իւր Գրիանօնն երթալու ասեն: Ծեր մարաջախաւը ուրախութեան սարսուռներով թաղաւորին հետեցաւ:

Մինչդեռ թաղաւորը դքսին և երկու պաշտօնակալաց հետ պաւլաւը սանող մթին ծառուղիներուն կը հասնէր, տիկին արքայորդին Անտրէին երթալու հրաման կու տար:

— Պէտք է որ այս աւետիսը դրով իմաց տաս Բարիզ, ըսեր էր իշխանուհին. կրնաս երթալ, օրիորդ:

Եւ կանչեղակիր սպասաւոր մ'ունենալով առջևէն, նորատի աղջիկը շէնքին առջև դանուող և հարիւր քայլ երկայնութիւն ունեցող միջոցէն կ'անցնէր՝ որ Գրիանօնը սպասաւորաց ընկարանէն կը զատէր:

Անտրէի առջևէն ալ, մացառէ մացառ, տերևներուն մէջէն ստուեր մը կ'ոսանուր, որ հրացայտ աչերով նորատի աղջկան իւրաքանչիւր շարժման կը հետեւէր. Ժիլպէրն էր:

Երբ Անտրէ դրանցն հասաւ և սկսաւ քարէ սանդուխէն վեր ելնել՝ ծառան Գրիանօնի նախասենեակները վերադարձաւ:

Այն ասեն Ժիլպէր ևս գաւիթը մանելով դողունի, ախոռներուն բակն հասաւ, և ելնարանի մը նման ցից սանդուխէ մը իւր վերնայարկը մաղլցից, որ շէնքերուն մէկ անկիւնը, Անտրէի սենեկին պատահաններուն դէմն էր:

Տեսաւ որ Անտրէ իրին օղնելու կոչեց տիկին տը Նօսայլի մէկ սենեկապան կինը , որուն սենեակն ալ նոյն նրբանցքը կը դանուէր ։ Բայց երբ այն աղջիկը Անտրէի սենեակը մտաւ , սլատուհանին վարազոյրները իբրև անթափանց քող վար ինկան երիտասարդին բուռն փափաքներուն և իւր մտածութեանց առարկային մէջ տեղը ։

Պալատը Պ. : տը Ռօհանէն ուրիշ մարդ չէր մնացեր , որ հետզհետէ քծինքը կ'աւելցնէր իշխանուհւոյն համար , թէպէտ նէ պազութեամբ կը վարուէր իրեն հետ ։

Եկեղեցականը վերջապէս վախցաւ որ անպատշաճութիւն մը կը գործէ ; մանաւանդ որ Պ. արքայորդւոյն ելնելն ալ տեսեր էր ։ Ուստի Նորին արքայազն Բարձրութենէն մեկնելու հրաման խնդրեց խորին և գորովալի յարգանքք ։

Երբ կարդինալը կառք կը մտնէր , իշխանուհւոյն մէկ սենեկապան կինը մօտեցաւ անոր , և զրեթէ կառքէն ներս մտաւ ։

— Ահաւասիկ , ըսաւ ։

Եւ մետաքսանման թղթի կտոր մը դրաւ անոր ձեռքը , որուն դպելով սարսուեցաւ կարդինալը ։

— Աւասիկ , ըսաւ աշխուժիւ այն սենեկապան կնոջ ձեռքը ծանր քսակ մը դնելով , որ պարպուած ատեն մեծկակ հատուցում մը կ'ըլլար ։

Կարդինալն առանց ժամանակ կորսնցնելու , կառավարին հրամայեց որ Բարիզ քէ կառքը և քահքին դուռն հասած ատեն նոր հրաման խնդրէ ։

Ճամբան մուտ կառքին մէջ շարունակ այն թղթին մէջինը շշափեց և համբուրեց սիրով արբշիւ սիրահարի մը պէս ։

Քաղաքագուռն հասածին պէս՝

— Սէն-Գլօտ փողոցը , ըսաւ ։

Քիչ մ'եսաք խորհրդաւոր բախէն կ'անցնէր և կը մտնէր այն սրահակը ուր կը կենար Քրից , այցելուները լռին եղանակաւ մուծող անձր ։

Պալատմօ քառորդ մը սպասեցնել տուաւ , վերջապէս եկաւ , և ուշանալուն պատճառ յառաջ բերաւ ժամանակին ուշ ըլլալը ; որով ներելի էր իրեն կարծել թէ ալ անկէ ետք ոչ ոք կուպար այցելութեան ։

Generated on 2016-09-07 11:30 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արդարև ժամը երեկոյեան տասնըմէկին մօտ էր :

— Ճշմարիտ է , պարոն սեպուհ , ըսաւ կարգինալը , և քեզ անհանդիստ ընելու համար ներում կը խնդրեմ : Բայց կը յիշէք որ որ մ'ինձ ըսիք թէ ինչ ինչ գաղտնիքներ ստուգելու համար . . .

— Այն օրը խօսած անձերնու մագերուն պէտք ունէի , ընդմիջեց Պալսամօ որ արդէն թղթին կոտորը տեսեր էր պարզամիտ եակեղեցականին ձեռքը :

— Ստուգիւ , պարոն սեպուհ :

— Բերած ես մագերը , տէր իմ : Շատ աղէկ :

— Ահաւասիկ : Բայց փորձէն ետք ինձ պիտի վերադարձընեն զանոնք :

— Եթէ փորձը կրակով չընեմ . . . այն ատեն . . .

— Անշուշտ , անշուշտ , ըսաւ կարգինալը . այն ատեն ուրիշ կրնամ ձեռք անցնել : Լուծումը պիտի ըսես ինձ :

— Այսօր :

— Անհամբեր եմ , դիտես :

— Նախ փորձելու է , տէր իմ :

Պալսամօ մագերն առաւ և արտորոնք Լօրէնցայի սենեակն ելաւ :

— Հիմա պիտի դիտնամ այս միապետութեան գաղտնիքը , կ'ըսէր ինքնիրեն երթալու ատեն : Աստուծոյ ծածուկ խորհուրդը պիտի գիտնամ :

Եւ պատին ասդիի կողմէն , գաղտնի դուռը դեռ չբացած՝ Լօրէնցան քնացուց : Նորատի կինը դորովպիսի գրկախառնութեամբ մը զինքն ընդունեց :

Պալսամօ մեծ դժուարութեամբ անոր թևերուն մէջէն ելաւ : Գժուարին է ըսել թէ խեղճ սեպուհին համար որն աւելի վշտալի էր , գեղանի Խտալուհույն արթնցած ատեն ըրած կշտամբանքը , թէ քուն եղած ատեն ցոյց տուած գորովը :

— Սիրելիդ իմ Լօրէնցա , ըսաւ անոր՝ թուղթը անոր ձեռքը դնելով , կրնաս ըսել ինձ թէ որով են այս մագերը :

Լօրէնցա առաւ մագերը և սրտին վրայ սեղմեց , ետքը ճակտին վրայ . թէպէտ երկու աչիւրն ալ բաց էին՝ սակայն քնոյն մէջ կտրծփովու ճակատովը կը տեսնէր :

— Ո՛հ , ըսաւ , ահանաւոր գլխէ մը գողցած են այս մազերը :

— Այնպէս չէ . . . : Երջանիկ գլուխ մը : Ըսէ :

— Կրնայ երջանիկ ըլլալ :

— Աղէկ նայէ , Լօրէնցա :

— Այո , կրնայ երջանիկ ըլլալ : տակաւին իւր կենաց ընթացքին վրայ ստուեր չկայ :

— Սակայն ամուսնացեալ է :

— Ո՛հ , ըրաւ Լօրէնցա քաղցր ժպիտով մը :

— Լաւ , ի՞նչ ըսել կ'ուզես , Լօրէնցա :

— Ամուսնացեալ է , սիրելիք իմ Պալսամօ , յարեցնորատի կէ-
նը , և սակայն . . .

— Եւ սակայն

— Եւ սակայն . . .

Լօրէնցա դարձեալ ժպտեցաւ :

— Ես ալ ամուսնացեալ եմ , ըսաւ :

— Անշուշտ :

— Եւ սակայն . . .

Պալսամօ խորին զարմանքով մը Լօրէնցային նայեցաւ . նորատի կնոջ քնոյն հակառակ՝ ամօթխած կարմրութիւն մը կը սարածուէր անոր դիմաց վրայ :

— Եւ սակայն , կրկնեց Պալսամօ : Աւարտէ խօսքդ :

Լօրէնցա վերստին իւր սիրողին պարանոցը փաթտուեցաւ , և ե-
րեսը կուրծքին վրայ պահեցաւ ,

— Եւ սակայն կոյս եմ , ըսաւ :

— Եւ այն կլինը , այն իշխանուհին , այն թագուհին , գոչեց
Պալսամօ , որքան որ ամուսնացեալ է : . . .

— Այն կլինը , այն իշխանուհին , այն թագուհին , կրկնեց Լօ-
րէնցա , ինծի չափ անբիծ , ինծի չափ կոյս է : ինչ ալ աւելի ան-
բիծ և կոյս , ինչու որ նէ չսիրէր ինծի պէս :

— Ո՛հ , անխուսափելի ճակատադիր , մրմնջեց Պալսամօ : Շնոր-
հակալ եմ , Լօրէնցա , դիտնալ ուզածս դիտայ :

Պալսամօ գրկեց զան , մազերը գրպանը դրաւ մեծ խնամքով , և
Լօրէնցաի սև մազերէն փունջ մը կտրելով ճրագով այրեց և ան-

նոր մոխիրը իշխանուհւոյն մազերուն թղթին մէջ դրաւ :

Ետքը վար իջաւ , և քայլելու ատեն նորասի կինն արթնցուց :
Եկեղեցականը բոլորովին անհամբեր՝ կ'սպասէր , կ'երկմտէր :

— Ի՞նչ եղաւ , սպարոն կոմս , ըսաւ :

— Ի՞նչը , տէր իմ :

— Պատգամը : . . .

— Պատգամն ըսաւ որ կրնաս յուսալ :

— Այնպէս ըսաւ , գոչեց կարողինալը այլ յայլմէ եղած :

— Ինչպէս որ կ'ուզես այնպէս եզրակացուր , տէր իմ . պատճառ
դամն ըսաւ որ այն կէնը իւր ամուսինը չսիրէր :

— Ո՛հ , ըրաւ Պ : տը Ռօհան սաստիկ ուրախութեամբ :

Իսկ դաղտնիքն իմանալու համար , ըսաւ Պալսամօ , հարկ եղաւ
մազերն այրել : ահաւասիկ անոնց աճիւնը՝ զոր խնամքով հաւաքե-
լով քեզ կը յանձնեմ խղճի մտօք՝ այնպէս որ զողջես իւրաքանչ-
իւր մասնիկը միլիոն մը կ'արժէ :

— Շնորհակալ եմ , սպարոն , շնորհակալ եմ , երբէք ըրածնե-
րուդ փոխարէնը չսիրի կարենամ հատուցանել :

— Անոր խօսքը չընենք , տէր իմ . միայն պատուէր մ'ունիմ
տալու : չըլլայ որ այն աճիւնները գինիի մէջ գնելով խմես , ինչ-
պէս որ սիրահարները երբէմն կ'ընեն . այս այնպիսի վտանգաւոր
համակրութիւն մը յառաջ կը բերէ՝ որ քու սէրդ անբժշկելի կ'ըլ-
լայ , մինչդեռ սիրուհւոյդ սիրան ալ կը պաղի :

— Ա՛հ : Աստուած չընէ որ այդպիսի բան մ'ընեմ , ըսաւ Ե-
կեղեցականը զրեթէ ահաբեկ : Մնաս բարեաւ , սպարոն կոմս , մնամ
բարեաւ :

Քսան վայրկեան ետք , Նորին Սրբազնութեան կառքը Բըդի-Շա-
նի փողոցին անկիւնը Պ : տը Ռիշլիէօի կառքին ճամբան կը կտրէր :
և քիչ մնաց որ զայն թաւալլոր պիտի ընէր՝ տան մը շինութեան
համար բացուած մեծ փոսի մը մէջ :

Երկու ազատորեար իրար ճանչցան :

— Է՛հ , իշխան , ըսաւ Ռիշլիէօ ժպիտով մը :

— Է՛հ , դո՛քս , պատասխանեց Պ . Լուի տը Ռօհան մատը բեր-
նին վրայ դնելով :

Եւ իրարու ներհակ կողմեր դպցին :

ՂԳ

Պ. ՏԸ ԹԻՍԵԼԻՔԻ ՆԻԳՕԼԻ ՅԱՐԳԸ ԿԸ ՃԱՆՁՆԱՅ

Պ. տը Ռիշլիէօ շիտակ Գօք-Հէուօն փողոցը, Պ. տը Գավէր-
նէյի փողոցիկ ապարանքը կ'երթար :

Կաղ սատանին հետ ունեցած մենաշնորհնուս շնորհիւ, որով
ամեն գոց տներ մտնելու դիւրութիւնն ունինք, Պ. տը Ռիշլիէօն
առաջ գիտնիք թէ սեպուհը, կրակարանին առջեւ տոները երկայն
երկաթներու վրայ դրած, որոց ներքեւ այրող փայտը մարելու վրայ
էր, Նիգօլին քարոզ կուտար երբէմն անոր կզակը շոյելով, ա-
ռանց դեռահաս աղջկան հետ և արհամարհոտ խոժոռութեանցը
ականջ կախելու :

Նիգօլ առանց շոյուելու պիտի զիջանէր քարոզը մտիկ ընելու և
կամ թէ առանց քարոզը մտիկ ընելու պիտի զիջանէր շոյուելու և
ահա այս կէտը չենք համարձակիր հաստատել :

Տիրոջ և սպասուհւոյն մէջ դարձած խօսակցութիւնը կարևոր
նիւթի մը վրայ էր, այսինքն թէ իրիկուան այն ատենները հնչակը
զարնուելուն պէս Նիգօլ չէր գար, թէ միշտ պարտէզին և ջերո-
ցին մէջ բան մ'ունէր, և այս երկու տեղերէն ուրիշ ամեն տեղ
շատ պէշ կը կատարէր իւր պաշտօնը :

Որուն Նիգօլ, յանկուցիչ և հեշտալի ձեերով կոտորուելով կը
պատասխանէր :

— Աւելի դէշ . . . ես հոս կը ձանձրանամ. ինձ խոստացան որ
օրիորդին հետ Գրիանօն պիտի երթայի :

Այս խօսքին վրայ Պ. տը Գավէրնէյ գլխարտութեամբ կարծե-
ր թէ պէտք էր անոր այտերն ու կզակը շոյել, անշուշտ անոր
տաղտուկը փարատելու համար :

Նիգօլ միշտ իւր խօսքը շարունակելով և բնաւ միտնարութիւն
մտիկ չընելով, իւր թշուառ վիճակը կ'ողբար :

— Այս այսպէս է , կ'ըսէր հեծելով , չորս պատի մէջ մնացեր եմ . տեսնուելու մէկը չունիմ , օգ չեմ առներ . զբօսնելու և ապագայ մը պատրաստելու յոյսն ունէի :

— Ի՞նչ էր այդ յոյսը , ըսաւ սեպուհը :

— Ի՞նչ պիտի ըլլայ , Գրիանօնը , պատասխանեց Նիդօլ , Գրիանօն , ուր մարդ կը տեսնէի , պերճութիւն կը տեսնէի , ուրիշներուն կը նայէի , ուրիշներն ալ ինձ կը նայէին :

— Օ՛ , օ՛ Նիդօլիկ , ըսաւ սեպուհը :

— Է՛հ , պարոն , կին մ'եմ , և ուրիշ կնոջ մը չափ արժէք ունիմ :

— Նզովից արմատ , ասիէ ալ անդին խօսք չըլլար , ըսաւ սեպուհը անլսելի կերպով : Անդանութիւն կայ , շարժում կայ : Ո՛հ , եթէ դեռահաս և հարուստ ըլլայի :

Եւ չկարենալով ինքզինքը զսպել՝ հիացական և ցանկական աչքով մը նայեցաւ այն թարմութեան , կորովին և գեղեցկութեան :

Նիդօլ կը մտախոհէր և երբէմ համբերութիւնը կը հատնէր :

— Օ՛ն , պառկեցէք , պարոն , կ'ըսէր , որպէս զի ես ալ երթամ պառկիմ :

— Խօսք մ'ալ ըսեմ , Նիդօլ :

Յանկարծ դրան զանդակը զարնելով Գավէրնէյ սարսուեցաւ և Նիդօլ ոստեց :

— Իրիկուան ժամը տասնևմէկուկէսին ո՞վ կրնայ ըլլալ , ըսաւ սեպուհը : Գնա նայէ , աղջիկս :

Նիդօլ զնայ բացաւ , այցելուին անունը հարցոյց , և փողոցին դուռը կիսաբաց թողուց :

Այն գերերջանիկ անցքէն , բակէն եկող ստուեր մը խոյս տուաւ , և բաւական աղմուկ հանելուն պատճառաւ մարաջախտը ետեւը դարձաւ , ըստ որում ինքն էր , և փախչողը տեսաւ :

Նիդօլ մարաջախտին առջևէն ինկաւ , ճրագը ձեռքը և ուրախութիւնը երեսին վրայ փոյլելով :

— Տես , տես , տես , ըսաւ մարաջախտը ժպտելով և անոր ետևէն սրահակը երթալով , այն անօրէն ծեր Գավէրնէյը միայն ալք ջլանը վրայ խօսեցաւ ինձ :

Generated on 2016-09-07 11:32 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գուքսն այն մարդոցմէն էր որ երկու անգամ նայելու պէտք չունին, տեսնելու և անթերի կերպով տեսնելու համար :

Խոյս սուռղ ստուերը Նիզօլը միտքը ձգեց . — Նիզօլն ալ ստուերը : Այս վերջնոյն գեղանի դիմաց վրայ գուշակեց ստուերին ինչու համար եկած ըլլալը , և անգամ մ'որ անոր նենդամիտնայուածքը , ճերմակ ակուաները և նրբաձև հասակը տեսեր էր , ալ անոր բնաւորութիւնն ու ճաշակը հասկցեր էր :

Նիզօլ , սիրտը քիչ մը բաղխելով , սրահակին գրանը մէջ ծանուցեր էր :

Պ. տը Ռիշլիէօ դուքսը :

Այս անունը մեծ տպաւորութիւն ընելու սահմանուած էր այն իրիկունը : Սեպուհին վրայ այնպիսի տպաւորութիւն մ'ըրաւ , որ թիկնաթուէն ելնելով շիտակ դուռը գնաց , լսածին չկարենալով հաւատալ :

Բայց տակաւին դուռը չհասած , նրբացքին թերաստուերին մէջ Պ. տը Ռիշլիէօն նշմարեց :

— Գուքսը . . . կակազեց :

— Բայց այո , սիրելի բարեկամ , նոյն ինքն դուքսն է , պատասխանեց Ռիշլիէօ ամենասիրուն ձայնովը : Ո՛հ , անցեալ օրուան այցելութենէն ետք այս բանիս կը զարմանաս : Լաւ , սակայն ասկէ աւելի ճշմարիտ բան չկրնար ըլլալ : Հիմա ձեռքդ տուր եթէ կը հաճիս :

— Պարոն դուքս , զիս բարեօք կը ընուս :

— Գու հանձարեղ չես , սիրելիդ իմ , ըսաւ ծեր մարաջախտը դաւազանն ու զլխարկը Նիզօլին տալով , թիկնաթուէն մէջ աւելի հանգիստնստելու համար . ապուշ կը դառնաս . կը բարբառնջիս . . . կ'երեւի թէ դիմացի մարդիկդ չես ճանչնար :

— Սակայն , դուքս , կարծեմ թէ , պատասխանեց Գավէրնէյ կարի յուզուած , անցած օրուան ըրած ընդունելութիւնդ այնքան նշանակական էր որ կարելի չէր խաբուիլ :

— Մտիկ ըրէ , ծեր բարեկամ , պատասխանեց Ռիշլիէօ , անցած օր դու դպրոցականի մը պէս վարուեցար , ես ալ վարժապետի մը պէս . միայն թաթը սպակաս էր : Խօսիլ կ'ուզես , բայց ես

Generated on 2016-09-07 11:33 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

այդ նեղութիւնը տալ չեմ ուզեր քեզի . թերևս անմիտ խօսք մ'ընես , ես ալ անմիտ խօսքով մը պատասխանեմ : Ուստի անցած օրէն այս օրը ցատկենք : Գիտես այս իրիկուն հոս ինչ ընելու եկած եմ :

— Շիտակը չգիտեմ :

— Քեզ կը բերեմ այն զօրագունդը՝ զոր երէկ չէ առջի օրը ինէ խնդրելու եկած էիր , և զոր թագաւորը տղուդ տուաւ : — Սա եղածներուն տարբերութիւնները գիտէ . երէկ չէ առջի օրը կէս-պաշտօնեայ էի , խնդիր մ'ընելն անիրաւութիւն էր . այսօր որ ինձ տրուած պաշտօնը մերժեցի և առջի Ռիշլիէօն եմ պարզապէս , անմիտ մէկը կ'ըլլայի խնդիր մը չընելով : Խնդրեցի , ստացայ , կը բերեմ :

— Գուքս , ճշմարիտ է ըսածդ , և . . . այս ըրած բարիքդ . . .

— Բարեկամական պարտաւորութեանս բնական մէկ հետևանքն է : Պաշտօնեայն կը մերժէր , Ռիշլիէօ կը խնդրէ և կուտայ :

— Ա՛հ , դուքս , զիս կը հիացընես , ուրեմն դու իմ ճշմարիտ քարեկամս ես :

— Այդ ալ խօսք է :

— Բայց թագաւորը , թագաւորը որ ինձ այսպիսի շնորհ մը կ'ընէ . . .

— Թագաւորն ըրածը չգիտէր , կամ թերևս շատ աղէկ գիտէ :

— Ինչ ըսել կ'ուզես :

— Ըսել կ'ուզեմ թէ թագաւորն անշուշտ այս միջոցին պատճառ մ'ունի տիկին Տիւպարիի անհաճոյ ըլլալու , և ահա աւելի այս պատճառին՝ քան թէ իմ ազդեցութեանս զօրութեամբ քեզի եղած շնորհը կ'ստանաս :

— Այնպէս կը կարծես :

— Հաւաստի եմ , և ես ալ իմ կողմէ կ'օգնեմ : Գիտես որ այն անզգամ կնոջն համար ինձ տրուած պաշտօնը մերժեցի :

— Այնպէս ըսին , բայց . . .

— Բայց չես հաւատար : Օ՛ն , համարձակ ըսէ :

— Այնպէս է , ինչ մեղքս պահեմ :

— Ըսել է որ զիս անխիղճ մէկը ճանչցեր ես , այնպէս չէ՞ :

— Աչ, այլ ըսել է որ քեզ նախապաշարմունքէ զերծ մէկը քանչցեր եմ :

— Սիրելիդ իմ, ևս կը ծերանամ, և գեղեցիկ կիները այն ատեն միայն կը սիրեմ երբ ինծի համար են . . . : Ասկէ զատ ուրիշ զաղափարներ ալ ունիմ . . . : Տղուդ դանք, ազնիւ տղայ մ'է :

— Շատ դէշ է Տիւպարիին հետ՝ որ տուեղ էր երբ անձարայ կութեամբ հոն եկեր էի :

— Գիտեմ, և ահա այս սպառնառաւ սպաշտօնեայ չեղայ :

— Ի՛նչ :

— Անշուշտ, բարեկամ :

— Տղուս անհաճոյ չըլլալուն համար պաշտօնը մերժեցիր :

— Եթէ այնպէս է ալ ըսէի՝ չսիտի հաւատայիր . բայց այնպէս չէ : Այն սպառնառաւ մերժեցի թէ Տիւպարեանց պահանջումները որ տղուդ աքսորմամբը կ'սկսէին՝ ամեն տեսակ այլանդակութիւններու սիտի յանդէին :

— Ուրեմն աւրուեցա՞ր անոնց հետ :

— Այո և ոչ . ինէ կը վախնան, ես ալ զանոնք կ'անարգեմ, բայց ալ գրգիռ մ'է :

— Գիւցազնական՝ բայց անխոհեմ գործ մ'է ըրածդ :

— Ինչո՞ւ :

— Կոմսուհին վարկ ունի :

— Բո՛ւհ, ըրաւ Ռիշլիէօ :

— Ինչպէս ալ կ'ըսես,

— Այնպիսի մարդու մը պէս կ'ըսեմ՝ որ կացութեան տկար կողմը կը տեսնէ, և պատերազմի դաշտը օդն հանելու համար ական հատանողը (mineur) պէտք եղած լաւ տեղը կը զետեղէ :

— Իրականութիւնը հիմա կը տեսնեմ. տղուս բարիք կ'ընես Տիւպարեանները քիչ մը կճելու համար :

— Շատ մը կճելու համար, և սրամտութիւնդ չսխալեցաւ այս մասին . տղադ հրալից զնտակի տեղ կը ծառայէ ինձ, անոր միջոցաւ կը բռնկցնեմ . . . : Բայց աղէկ միտքս ինկաւ, սեպուհ, միթէ արջիկ մ'ալ չունիս :

- Այո . . .
- Գեռաճան :
- Տասն և վեց տարու :
- Գեղեցիկ :
- Աստղկան նման :
- Դրիանոն կը բնակի , այնպէս չէ :
- Կը ճանչնան ուրեմն :
- Բոլոր իրիկունն անոր հետ անցուցի , և ժամ մը Թաղաւորին հետ անոր վրայ խօսեցայ :
- Թաղաւորին հետ , զոչեց սեպուհը կաս կարմիր կտրած :
- Նոյն ինքն Թաղաւորին հետ :
- Թաղաւորն աղջկանս վրայ , օրիորդ Անտրէ սը Գավէրնէյին վրայ խօսեցաւ :
- Զոր աչքով կ'ուտէ , պո , սիրելիդ իմ :
- Ա՛հ , իրա՛ն :
- Միթէ անհաճոյ կ'ըլլամ քեզ այս խօսքն ընելով :
- Ինձ . . . : Ոչ , բնաւ . . . Թաղաւորն ինձ մեծ պատիւ էրնէ աղջկանս նայելով . . . բայց . . .
- Բայց ինչ :
- Սա կայ որ Թաղաւորը . . .
- Գէշ բարբի տէր է , այս ըսել կ'ուզես :
- Աստուած չընէ որ Նորին Աւհափառութեան վրայ գէշ խօսիմ . նա իրաւունք ունի ուզած բարքն ունենալու :
- Ուրեմն ինչ կը նշանակէ այդ զարմանքը : Միթէ կարծել տալ կ'ուզես որ օրիորդ Անտրէ անթերի գեղեցկութիւն մը չունի , և թէ հետեւաբար Թաղաւորը սիրահարի աչքով չ'նայիր անոր :
- Գավէրնէյ պատասխան չտուաւ , միայն ուսերը վեր ըրաւ և մտախոհութեան մը մէջ ինկաւ , զոր անգութ Ռիշլիէօ խաղարկու աչք սկսաւ դիտել :
- Լա՛ն , ես կը գուշակեմ ըսելիքդ , եթէ մտքեդ անցածը ըսէիր , շարունակեց ծեր մարաջատը թիկնաթուր սեպուհին թիկնաթուին մօտեցնելով . պիտի ըսէիր թէ Թաղաւորը յուր ընկերութեան վարձուած է . . . գուհիկ մարդկան հետ կը տեսնուի՝ ինչպէս որ

Generated on 2016-09-07 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քորշրժնի* մէջ կ'ըսեն, և հետևաբար այս համեստ վարքով, զգաստ սիրով աղնիւ աղջկան չպիտինայի, և ամեն տեսակ շնորհներու և հրապոյրները այս դանկը աչքին չպիտի վարնէ . . . անոր որ միայն անսպարկեշտ խօսքերէն, լկտինայուածքներէն և քծնուչ հլներու հանճարաբանութիւններէն կ'ախորժի :

— Ստուգիւ դու մեծ մարդ մ'ես, դու քս :

— Ինչո՞ւ համար :

— Ինչու որ ճիշդ դու շակեցիր, ըսաւ Գավէրնէյ :

— Սակայն խոստովանէ, սեպուհ, շարունակեց Ռիչլիէօ, թէ ալ ժամանակն է որ մեր տէրը չտրիպէ վնգ, աղնուականքս, Գաղղիոյ թագաւորին զինակիցքս և ատենակալքս, այն փոսակ պալատականուհւոյ մը վատ և անարժան ձեռքը պագնելու. ժամանակն է ալ որ մեզ մեր առջի եղանակին դարձնէ, և Շաղօրուէն ետք՝ որ մարբիղուհի էր և դքսուհիներ յառաջ բերելու յասկութիւններ ունէր, Բօմբաստուրին իջնալով՝ որ հարկաժողովի մը աղջիկ և կին էր, ետքը Բօմբաստուրէն ալ Տիւպարիին իջնելով՝ որ պարզապէս ժանրդոն կը կոչուի, չըլլայ որ Տիւպարիէն ալ խոհանոցի Մարիդօրնի մը † կամ արտերու Կօղօնի ‡ մը իջնէ. այս մեզի համար մեծ նուաստութիւն մ'է, սեպուհ, այն ցնդած կնիկներուն գլուխ ծռելը մեծ նուաստութիւն մ'է մեզի համար՝ որ թագ մը կը կրենք մեր սաղաւարտին վրայ :

— Ո՛հ, ի՛նչ շիտակ կը խօսիս, մումուաց Գավէրնէյ, և ամեն մարդ չգիտէ թէ այս ընթացքով արքունիքը մարդ չմնայ :

— Երբ թագուհի չկայ՝ կին չկայ. երբ կին չկայ՝ պալատական չկայ. թագաւորը պչրուհի մը կը գործածէ, և ժողովուրդը գահին վրայ է՝ ՚ի Բարիզ կտաւագործ օրիորդ ժանէդ Վօպէրնիէէն քերիայացուած :

— Սակայն այս այսպէս է, և . . .

— Կը տեսնես, սեպուհ, ընդմիջեց մարաջախտը, շատ գեղեցիկ :

* Բարիզէն դուրս երբէմն գինետուններով քի թաղ մը :
† Գուանդոկի սպասուհի մը Տօն քիչօտի վէպին մէջ :
‡ Չարանոց բոց : Ծ. Թ.

Generated on 2016-09-07 11:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քիկ տեր մը պիտի ունենար այն հանճարեղ կինը որ այս միջոցիս Գաղղիոյ մէջ թագաւորել ուզէր . . .

— Անշուշտ, ըսաւ Գավէրնէյ որուն սիրտը կը բախէր, բայց դժբաղդաբար անոր պարագ չէ :

— Այն կինը, շարայարեց մարաջախտը, որ առանց այն պողոտայի կնիքներուն մոլութիւններն ունենալու՝ անոնց համարձակութիւնը, խելքը և գիտաւորութիւնը ունենար, այն կինը այնքան իւր պատիւն աւելցնէր՝ որ միապետութիւնը վերնալէն ետք իսկ անոր վրայ խօսէին : Գիտես որ աղջիկդ շատ խելացի է, սեպուհ :

— Շատ խելացի է, և մանաւանդ լաւ դաստղութիւն ունի :

— Շատ գեղեցիկ է :

— Այնպէս չէ՞ :

— Այնպիսի հրապուրելի գեղեցկութիւն մը որ կարի հաճոյ է առանց, այնպիսի կուսական և անբիծ գեղեցկութիւն մը որ պատկառանք կ'ազդէ նոյն իսկ կանանց . . . : Լաւ խնամք տանելու է այն գանձին, ծեր բարեկամս :

— Այնպիսի երանդեամբ մը կը խօսիս անոր վրայ . . .

— Ես, խենդի մը պէս սիրահարած եմ՝ անոր, և վաղը անոր հետ կ'ամուսնանայի՝ եթէ եօթսուն և չորս տարեկան չըլլայի, բայց հոն աղէկ է, այնպիսի գեղեցիկ ծաղիկ մը պէտք եղած վայելչութիւնները կը վայելէ . . . : Մտածէ անգամ մը, սեպուհ, այս իրիկուն առանձին իւր սենեակը գնաց, առանց սպասուհւոյ, առանց զինեալ ծառայի, միայն առջեւէն արքայորդւոյն մէկ ծառան ձեռքը կանդեղ մը, ծառայութեան պէս բան մ'է այս :

— Ինչ կրնամ ընել, դուքս, գիտես որ հարուստ չեմ :

— Հարուստ ըլլաս կամ չըլլաս, սիրելիս, աղջկանդ գէթ սպասուհի մը պէտք է :

Գավէրնէյ հառաչեց :

— Ես ալ գիտեմ որ պէտք է, կամ լաւ ևս պէտք էր, ըսաւ :

— Է՛հ, դու սպասուհի չունիս մի :

Սեպուհը պատասխան չտուաւ :

— Քիչ մ'աւազ հոս կեցող գեղանի աղջիկը ինչ էր, շարայարեց Ռիշլիէօ : Շիտակը, ինչ աղւոր աղջիկ էր :

— Այո , բայց . . .

— Բայց ինչ , սեպուհ :

— Զան չեմ կրնար զրկել Գրիանօն :

— Ինչու չէ : Ինչ կը թուի թէ , ընդհակառակը , շատ աղէկ կը յարմարի այն պաշտօնին : Անման սպասուհի մը կ'ըլլայ :

— Ուրեմն երեսը չնայեցար , դու քս :

— Ես : Աղկէ ուրիշ բան չըրի :

— Իրեն նայած ասենդ , շնամարեցիր իւր տարօրինակ նմանութիւնը . . .

— Որով հետ :

— Բանին հետ . . . : Գաիր նայիմ . . . : Նիզօլ , հոս եկուր :

Նիզօլ եկաւ . իբրև ճշմարիտ Մարդօն , դռնէն մտիկ ըրեր էր : Գուքսն անոր երկու ձեռներէն բռնեց , և նորատի աղջկան ծունդերը ծնգանցը մէջն առաւ , բայց սա անոր շուայտասէր և լիտի նայուածքը բնաւ բանի տեղ չդրաւ և չնեղուեցաւ :

— Այո , ըսաւ , այո , կը նմանի , ճշմարիտ է :

— Որով ըլլալը գիտես , և հետեաբար կը տեսնես որ անկարելի է մեր տանը վայելած շնորհը դիպուածին մէկ ձախորդութեանը գոհել : Միթէ հաճելի բան մ'է որ այս կարկտած գուլպաներով օրիորդ Նիզօլը Գաղզիոյ ամենէն ականաւոր տիկնոջ նմանի :

— Օ' , օ' , պատասխանեց Նիզօլ դքսին ծնգանցը մէջէն ելնելով , որպէս զի Պ. տը Գավէրնէյի ըրած նախատինքը աւելի լաւ կերպով հերքէ , միթէ ստոյգ է որ այս կարկտած գուլպաներով Նիզօլը ճիշդ այն ականաւոր տիկնոջ կը նմանի . . . : Այն ականաւոր տիկինը այսպէս կարկտած գուլպաներով Նիզօլին ցած ուսերը , վառվռուն աչերը , կլոր սրունքը և լեցուն թեւերն ունի : Միով բանիւ , պարօն սեպուհ , յարեց Նիզօլ բարկութեամբ խօսքն աւարտելով , եթէ իմ յարգս նուազեցնել կ'ուզէք՝ այն ալ կարծեմ միայն գուլպաներուս պատճառաւ է :

Նիզօլ բարկութենէն կաս կարմիր կտրեր էր , և հետեաբար հիանալի դեղեցկութիւն մ'աւեր էր :

Գուքսը վերատին անոր ձեռները սեղմեց , երկրորդ անգամ մ'ալ

անոր ծունդերը ծնդանցը մէջ բանտ'ց, ու քծնի և յուսադիր ճայնով մը :

— Սեպուհ, ըսաւ, արքունիքը Նիգօլի նմանող ստուգիւ չկայ, ես այնպէս կը կարծեմ: Իսկ այն ականաւոր կնոջ հետ ունեցած կեղծ նմանութեանը զալով, այնպէս մը կ'ընենք որ մէկուն անձնասիրութեանը չըպչիր . . . : Հիանալի խարտեաչ մազեր ունիս, օրիորդ Նիգօլ, բողբոջին կայսերացն յօնքեր և քիթ ունիս. քառորդ մը նսաէ հայելոյն առջև, և այս թերութիւնները, ըստ Պ. սեպուհի կարծեաց, կ'անհետանան: — Նիգօլ, աղջիկս, Գրիանօն երթալ կ'ուզէս:

— Ա՛հ, գոչեց Նիգօլ, և իւր սաստիկ տենչանքը այս մէկ միավանկին մէջ անսնուեցաւ:

— Ուրեմն Գրիանօն պիտի երթաս, սիրելիս, պիտի երթաս և հոն յարգ ու պատիւ պիտի ստանաս, առանց մէկու մը պատուոյն փնասելու որ և է բանի մը մէջ: Սեպուհ, վերջին խօսք մ'ալ ունիմ:

— Ըսէ, սիրելիդ իմ դուքս:

— Գնա, աղւոր աղջիկս, ըսաւ Ռիշլիէօ, և պահիկ մը մեղառանձին թող:

Նիգօլ դուրս ելաւ, դուքսը սեպուհին մօտեցաւ:

— Եթէ քեզ կ'ստիպեմ որ աղջկանդ սպասուհի մը ղրկես, ըսաւ, պատճառն այն է որ թաղաւորը պիտի հաւնի ըրածիդ: Նորին Վեհափառութիւնը թշուառութենէ կը խորշի, և սիրուն դէմքերէն չփախչիր: Միով բանիւ ես ըսածս զիտեմ:

— Թող Նիգօլ Գրիանօն երթայ, քանի որ կը կարծես թէ թագաւորը պիտի հաւնի ըրածիս, սպտասխանեց սեպուհը իրեն յատուկ ժպիտովը:

— Ուրեմն քանի որ թոյլտուութիւն կ'ընես, հետս կը տանիմ. կառքս կը նստի:

— Սակայն, տիկին արքայորդոյն հետ ունեցած նմանութիւնը . . . : Ասոր վրայ մտածել պէտք է, դուքս:

— Մտածեցի: Այն նմանութիւնը քառորդի մը մէջ կ'անհետանայ Ռաֆդէի ձեռաց ներքև: Ես քեզի խօսք կուտամ, . . . : Ուրեմն

Generated on 2016-09-07 12:21 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տի երկտող նամակ մը գրէ աղջկանդ անոր հասկցնելու համար թէ որքան կարևոր կը կարծես իրեն սպասուհի մ'ունենալը , և այն սպասուհին ալ Նիգօլն ըլլալը :

— Քու կարծիքդ այն է որ անսպասուհաւ Նիգօլն ըլլալու է :

— Իմ կարծիքս այնպէս է :

— Եւ Նիգօլէն ուրիշ մէկը . . . :

— Չպիտի կարենայ այն սլաշտօնը աղէկ կատարել . սպասուոյս վրայ , այնպէս կը կարծեմ :

— Ուրեմն հիմա կը գրեմ :

Եւ սեպուհը իսկոյն նամակ մը գրեց և զայն Ռիշլիէօի տուաւ :

— Պէտք եղած հրահանգը , դու քս :

— Ես կուտամ Նիգօլին : Խեղացի աղջիկ չէ :

Սեպուհը ժպտեցաւ :

— Ուրեմն ինչ կը վստահիս զան . . . այնպէս չէ , ըսաւ Ռիշլիէօ :

— Շիտակը , այդ քու գիտնալու բանդ է , դու քս . ուզեցիր կուտամ . ըրէ զան ինչ որ կ'ուզես :

— Օրիորդ , հետս եկուր և շուտ , ըսաւ դու քսն ոտք ելնելով :

Նիգօլ երկու անգամ ըսել չտուաւ այս խօսքը : Առանց իսկ սեպուհին հաւանութիւնն առնելու , հինգ վայրկենի մէջ զլեւտնեցը ժողվելով ծրար մ'ըրաւ , և այնպէս թեթեաքայլ որ կարծես թէ կը թռչէր՝ դքսին կառավարին քով վազեց :

Ռիշլիէօ այն ատեն մեկնելու հրամանն ինչրեց իւր բարեկամէն՝ որ իւր շնորհակալիքը վերստին կրկնեց՝ Փիլիպ աը Գավէլնէյի ըրած ծառայութեանն համար :

Անտրէի համար բան մը չըսաւ . ըսելէն աւելի էր :



ՂԴ

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒԹԻԻՒՆ

Այլ Նիզուլ հանդիստ չէր . Դավէրնէյէն ելնելով Բարիզ երթալը իրեն այնքան մեծ յաղթանակ չէր թուէր՝ որքան Բարիզէն ելնելով Դրիանոն երթալը :

Նիզուլ այնքան շնորհալի կերպով վարուեցաւ Պ. տը Ռիշլիէօի կառավարին հետ՝ որ հետևեալ օրը նոր սպասուհւոյն համբաւը Վերսայլի և Բարիզի ամեն կառանոցներուն և քիչ մը ազնուապետական եղող նախասենեակներուն մէջ տարածուեցաւ :

Երբ Հանսօլրի հովանոցն հասան՝ Պ. տը Ռիշլիէօ աղջկանը ձեռնէն բռնեց և նոյն իսկ ինքն առաջին դատիկոնն առաջնորդեց զան , ուր Ռաֆղէ իրեն կ'սպասէր , դքսին կողմէն խել մը նամակներ գրելով :

Պ. մարաշախտին աշխատութեանց մէջ , պատերազմը մեծ դեր ունենալուն պատճառաւ , Ռաֆղէ դէթ տեսական մասին , այնպիսի քաջ ռազմապէտ մ'եղեր էր որ՝ եթէ Բօլիպ և տը Փօլար ապետը ողջ ըլլային՝ կարի երջանիկ պիտի համարէին ինքզինքնին՝ ձեռք անցընելով պատերազմական ամրութեանց և հնարից վրայ գրուած այն ծանօթագրութիւններէն մին՝ որոցմէ ամեն շաբթու կը պրէր Ռաֆղէ :

Արդ , Ռաֆղէ միջերկրակամի մէջ Անպղիացոց պէմ պատերազմելու ծրագիր մը խմբագրելու վրայ էր՝ երբ մարաշախտը ներս մտաւ և ըսաւ ,

— Նայէ սա աղջկանը , Ռաֆղէ :

Ռաֆղէ նայեցաւ :

— Շատ սիրուն է , տէր իմ , ըսաւ շրթունքը կարի նշանակական կերպով շարժելով :

— Այո , բայց նմանութիւնը . . . Ռաֆղէ , իւր նմանութեան վրայ է խօսքս :

— Է՛՛՛՛ , ճշմարիտ է , ան՛՛՛ , նզովից արմատ :

— Ար նմանի , այնպէս չէ՛ :

— Տարօրինակ բան . անով բողբոլովին պիտի կործանի կամ բո-
լորովին պիտի շինուի :

— Նախ կը կործանի . բայց մենք կարգին կը դնենք . ինչպէս
որ կը տեսնես , Ռաֆիգէ , մազերը խարտեաշ են , բայց այս ալ մեծ
բան մը չէ , այնպէս չէ :

— Անցնելու է զանոնք , տէր իմ , ըսաւ Ռաֆիգէ որ սովորեր
էր սիրողը մտածածը լրացնելու , և շատ անգամ անոր տեղ մտա-
ծելու :

— Ձարդասենեակս եկուր , սողջիկ , ըսաւ մարաջախտը . պարոնը
որ ճարտար մէկն է , Գաղղիոյ ամենէն գեղեցիկ և ամենէն անձա-
նաչելի նաժիշտը պիտի ընէ քեզ :

Արդարեւ տասը վայրկեան ետք , Ռաֆիգէ բաղադրութեամբ մը ,
զոր մարաջախտը ամեն շարաթ կը դործածէր կեղծամին ներքեի
ճերմակ մազերը սևի ներկելու համար , պչրանք մը որ տակաւին
ցոյց տալ կ'ուզէր իրեն ծանօթ դոխհներուն մէջ , Ռաֆիգէ Նիդօլի
մոխրուպոյն խարտեաշ գեղեցիկ մազերը սև սաթի դոյն ներկեց . յե-
տոյ ճրագի մը բոցին մէջ սեցած կնգասեղ մ'աւանելով անոր թարձը
և խարտեաշ յօնքին քսեց . այս կերպով անոր զուարթ գէմքին այն-
պիսի մտապածին պայծառութիւն մը , անոր վառվառն և փայլուն
աչաղը այնպիսի բացավառ և մերթ նսեմ հուր մը տուաւ՝ որ կար-
ծես թէ մոկական ամանի մը մէջ պահուած պայ մը , զինքը կա-
խարդողին հրամանաւր դուրս ելաւ հոնկէ :

— Հիմա , աղւորիկս , ըսաւ Ռիշլիէօ՝ յասուշ կրթած Նիդօլին
ձեռքը հայելի մը տալով , տես ինչպէս աղւորցար և որքան չես
նմանիր քիչ մ'առաջուան Նիդօլին : Ա՛լ կործանելու վախ չունիս ,
այլ հարստանալու և մեծնալու :

— Ո՛հ , տէր իմ , գոչեց նորասի աղջիկը :

— Այո , և ասոր համար միայն իրարու խօսք հասկնալու է :

Նիդօլ կ'սկսէր կարմրիլ և առջևը նայիլ . խորամանկ աղջիկը
կը յուսար այնպիսի խօսքեր լսել՝ որոց ըսելու կերպը շատ աղէկ
դիտէր Պ. ար Ռիշլիէօ :

Գուքսն հասկցաւ և որ և է սխալ նշանակութեան մ'առաջքն
առնելու համար ,

— Նստէ սա թիկնաթուին մէջ, սիրելի աղջիկս, ըսաւ, Պ, Ռաֆիէին քով. ականջներդ աղէկ բաց և ըսածս մտիկ ըրէ . . . : Պ. Ռաֆիէ մեզի վեաս մը չունի, հոգ մի ըներ. ընդհակառակը իւր կարծիքը կ'ըսէ : Ականջդ ինծի է, այնպէս չէ :

— Այո, տէր իմ, կակաղեց Նիզօլ, ունայնամտութեամբ խաբուելուն վրայ ամնայով :

Պ. տը Ռիշլիէօի՝ Ռաֆիէի և Նիզօլին հետ ունեցած խօսակցութիւնը ժամէ մ'աւելի տևեց, որմէ ետք, դուքսը, ապարանքին սպասուհիներուն հետ պառկելու զրկեց աղջիկը :

Ռաֆիէ սկսաւ պատերազմական ծանօթագրութիւնները շարունակել, Պ. տը Ռիշլիէօ անկողին մտաւ զանազան նամակներ աչքէ անցնելէ ետք, որոնք իրեն կ'իմացնէին գաւառական ժողովներուն բանեցուցած հնարքները ընդդէմ Պ. տ'էկիւլօնի և նենգաւոր Տիւպարիի :

Հետևեալ առտուն, Պ. տը Ռիշլիէօի զինանիշ չունեցող կառքերէն մին Նիզօլը Գրիանօն տարաւ, վանդակապատին քով հանեց զան փոքրիկ ծրարովը և աներևոյթ եղաւ :

Նիզօլ մէկու մը հարցնելէն ետք՝ գնաց սպասաւորաց բնակարանին դուռը զարկաւ, ճակատը բարձր ազատ մտքով, յոյսը աչացը մէջ :

Առաւօտեան ժամը տասն էր : Անտրէարդէն ելած և հաղուած ըլլալով, հօրը կը գրէր՝ նախընթաց օրուան ուրախառիթ գէպքը զիսցնելու համար, որուն բանբերը, ինչպէս որ ըսինք, Պ. տը Ռիշլիէօ եղած էր :

Մեր ընթերցողներն անշուշտ մոռցած չեն թէ քսրէ դրանդ մը պարտէզներէն փոքր Գրիանօնի մատուռը կը տանի, և այն մատուրին զրանդէն ալ աջ կողմը սանդուխ մը առաջին յարկը կը հանէ, այսինքն պաշտօն ունեցող տիկնանց սենեակները, որոց շուրջը լուսաւոր երկայն նրբանցք մը կայ ծառուղիի մը նման :

Անտրէի սենեակը այն նրբանցքին մէջ ձախ կողմը առաջին սենեակն էր : Բաւական ընդարձակ էր, ախոռներուն մեծ բակին կողմը լաւ լուսաւորուած, և հոն կը մտնուէր փոքրիկ սենեկէ մը, որուն անկիւնները աջ ու ձախ կողմը հրկու խուցեր կային :

Այս սենեակը, որ անբաւական պիտի համարուի եթէ նկատողութեան առնուի փառաւոր արքունիքի մը սեղանակցաց սովորական ժխտորը, պանչելի մենախուց մ'իզած էր, իրրեւ առանձնարան ընդարձակ էր և սիրուն տեսք մ'ունէր՝ սլալաալին ամեն կողմը զանուղ աղմուկներէն՝ հեռի։ Հոն կրնար տպաստանիլ փառասէր հողի մը օրուան մէջ կրած նախասիրէքը կամ ունեցած սխալը ուրիշներէն ծածկելու համար։ Նոյնպէս հոն կրնար հանդիլ խոնարհ և մեղամաղձոտ հողի մը լուսթեան և առանձնութեան մէջ; այսինքն մեծութիւններէ հեռի։

Արդարեւ ոչ մեծութիւն կար, ոչ պարտք, ոչ ներկայացուիլ՝ անպամ մ'որ մարդ այն դրանդէն անցնէր և այն սանդուխէն ելնէր։ Մենաստանի մը հանդարտութիւնը և բանսի մը մէջ սրուած նիւթ թական ազատութիւնը կար հոն։ Պալաալին մէջ գերի՝ իրրեւ տէր կը մանէր ծառայից բնակարանին սենեակը։

Անտրէինին նման հեզ և խրոխտ հողի մը բոլոր այս մանր հաշիւներուն մէջ շահ մը կը գտնէր։ չէ թէ իւր մէկ փառասիրութիւնը չյաջողելով, կամ իւր մէկ մտահաճոյքը չկարենալով 'ի գործ դնել հոն կուգար հանդիլու, այլ Անտրէ աւելի հանդիստ կրնար մտածել իւր սենեկին նեղ քառակողմին (quadrilatère) մէջ՝ քան թէ Գրիանտնի պիւճազարդ սրահակներուն մէջ; այն քարերուն վրայ; որոց վրայէն իրկիւղ կարծուելու չափ երկչոտութեամբ կը քայլէր։

Հոնիլէ, այն աննշան անկիւնէն ուր ինքն իւր տեղն ըլլալը կ'զգար; նորատի աղջիկը ցերեկը իւր աչիբը շլայնող պիւճութեանց կրնայէր։ Իւր ծաղկանց մէջը, դաշնակի քով, շուրջը գերմաներէն գրքերով լեցուն, որոնք սրտով կարգացող անձանց կարի քաղցր ընկերներ են, Անտրէ չէր վախնար որ ճակատագիրը կրնար իրեն վիշտ մը տալ կամ ուրախութիւն մը իրմէ յափշտակել։

— Հոս, կ'ըսէր նորատի աղջիկը, երբ իրիկունները, իւր պաշտօնը կատարելէն ետք սենեակը կը դառնար լայն ծալքով գիշերուան զգեստն հաղնելու և հոգւովն ու թոքերով ազատօրէն շնչելու համար, մինչև մահուան օրս ունենալիքս հոս կայ։ Թերևս օր մը աւելի հարուստ ըլլամ, բայց երբէք աւելի աղքատ չպիտի ըլլամ. մենակեացներն զբօսյնելու համար անշուշտ ծաղիկներ, երբեք

ժշտութիւն և գրքի մը մէջէն գեղեցիկ կտոր մը կը գտնուի միշտ :

Անտրէ հրաման ունէր իւր սենեակը նախաճաշելու երբ ուզէր : Իրեն համար անդին շնորհ մ'էր այս : Այս կերպով մինչև կէսօր իւր սենեակը կրնար կենալ՝ եթէ տիկին արքայորդին զինքը կանչել չտար ընթերցանութեան մը կամ առաւօտեան շրջապայութեան մը համար : Այսպէս աղատ եղած ատեն , օգը գեղեցիկ օրերը առաւօտուն գիրքով մը ճամբայ կ'եղնէր և առանձին կ'անցնէր այն անտառներէն՝ որ Գրիֆոնէ պիտեղով Վէրսայլ կը հասնին . յիտոյ , երկու ժամ շրջապայելէ , խորհրդածելէ և մտախոհելէ ետք՝ նախաճաշելու կը գառնար , շատ անդամ ճամբուն վրայ ոչ պարհնի մը և ոչ պայիկի մը : ոչ մարդու մը և ոչ պալատին մէկ սպասաւորին պատահելով :

Տաքը կ'սխեւէր թանձրախիտ տերեւներուն մէջէն անցնիլ , բայց Անտրէի սենեակը շատ զով էր պատուհանէն և նրբանցքին դռնէն մտած ելած հովին պարճառաւ : Հնդկական կերպասով պատած փոքր բազմոց մը , նմանօրինակ չորս աթոռ , բոլորաձև ձեղունով ամբիժ անկողինը՝ որուն շուրջը կարասեաց կերպասէն վարադոյրներ կախուած էին , կրակարանին վրայ Չինական երկու անօթներ , պղնձէ ոսնէրով սեղան մը , ահա բոլոր ասոնցմէ կը բաղկանար այն փոքրիկ տիեզերքը՝ որուն սահմաններէն անդին չէր անցնէր Անտրէի բուրբ յոյսը և իղձը :

Արսէինք , որ նորատի ազջիկը իւր սենեակը նստած իւր հօրը նամակ գրելու վրայ էր՝ երբ նրբանցքին դրանը կամայ մը զարնուելով՝ ուշադրութիւնը հոն դարձուց :

Գրան բացուելը տեսնելով զլուխը վեր առաւ , և զարմացական տկար ճիւ մ'արձակեց , փոքրիկ նախասենեկին մէջ նիգօլիզուարթ գէմը տեսնելով :

Վ. Ե. Բ. Զ. Հ. Ի. Ն. Գ. Ե. Ռ. Բ. Գ. Հ. Ե. Տ. Ռ. Բ. Յ.

Generated on 2016-09-07 12:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0009387473 Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՅԱՆԿ ԳՒԽՈՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՅ



ԳՒՈՒԽ	ԵՐԷ
ՀԳ—Եղբայր և քոյր	3
ՀԳ—Ժիլպէրին նախասենեակը	15
ՀԵ—Խոտաքաղները	23
ՀԶ—Փիլիսոփայից ականատը	30
ՀԷ—Առակ	37
ՀԸ—Վեհափառ Լուի Ժե.ին առ 'ի չղոյէ լաւագունին դտածովը գոհ եղածը	51
ՀԹ—Թէ Լուի Ժե թագաւորը ինչպէս կ'աշխատէր իւր պաշտօնէին հետ	61
Ձ —Փոքր Դրիանօն.	70
ՁԱ—Դաւաճանութիւնը վերստին կ'սկսի	77
ՁԲ—Կախարդորսութիւն	87
ՁԳ—Թղթարերը	100
ՁԴ—Ոգեկոչութիւն	108
ՁԵ—Չայնը	120
ՁԵ—Աչքէ ելնել	127
ՁԷ—Պ. տ'ելիլլօն դուքս	135
ՁԸ—Թագաւորին պատառը	147
ՁԹ—Պ. տը Ռիշլիէօ դ.քսին նախասենեակները	156
Ղ —Հմայից լուծումը	167
ՂԱ—Պ. արքայորդւոյն սեղանի փոքր սպասը	174
ՂԲ—Թագուհւոյն մագերը	185
ՂԳ—Պ. տը Ռիշլիէօ Նիգօլի յարգը կը ճանչնայ	194
ՂԴ—Կերպարանափոխութիւն	205

ՎՐԻՊԱԿ

Երև	Տալ	Միտլ	Ռուսի
19	17	ուսեպհին	սեպուհին
26	2	circonsolation	circonvolution
91	2	garde-cue	garde-vue
94	17	չաւ	չայն
99	30	կէս	կէսը
107	7	իրեն	իրն
127	28		— Լաւ, ըսաւ թագաւորը, այս հրամանն անոր տար, դուքս
129	24	մն	մը
134	26	է	էր
143	17	աւրուելով	աւրուելով
143	30	կ'երթան	կ'երթաս
164	13	.	.
171	18	խորշամեալ	խորշոմեալ
176	32	պէտք	պէտք է

UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY



AA 000 938 747 3



